Նանա Իոսելիանի, Սոփիո Քերուլիա

# Արվեստ

## Ուսուցչի գիրք




Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, 2020 թվականին:

სულაკაურის გამომცემლობა

Արվեստ 8
Ուսուցչի գիրք
Թբիլիսի, 2020

Հեղինակներ՝ **Նանա Խոսելիանի, Սոփիո Քեբուրիա**

Խմբագիր՝ **Էլենե Բերիաշվիլի**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

© Սուլակաուրիի հրատարակչություն, 2020

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցե՝ Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-30-765-2

ART 8
Teacher’s Book

© Sulakauri Publishing, 2020
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

## Բովանդակություն


Ներածություն ....................................................................................................................5

Թեմատիկ բաժիններ ..........................................................................................................6

Ռեֆլեքսիա .......................................................................................................................7

Թվային աղբյուրներ և ռեսուրսներ .......................................................................................8

Գնահատում .......................................................................................................................9

Հանձնարարականներ .......................................................................................................12

Հիմնական աստիճանի չափորոշիչը .....................................................................................13

Տեղեկատու ......................................................................................................................25

Թեմատիկ բաժին 1. Հասարակությունը և արվեստը (16+2 ժամ) ...........................................26

Թեմատիկ միավորի մատրիցա .............................................................................................27

Առաջադրանքների մատրիցա 1/1(Դասեր 1-4) ......................................................................31

Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.......................37

Առաջադրանքների մատրիցա 1/2 (Դասեր 5-7).....................................................................40

Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար ...............45, 51

Առաջադրանքների մատրիցա 1/3 (Դասեր 8-12) ...................................................................53

Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.......................58

Առաջադրանքների մատրիցա 1/4 (Դասեր 13-15) .................................................................62

Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.......................74

Թեմատիկ միավոր 2. Մարդը արվեստում (18 + 2 ժամ) ..........................................................86

Թեմատիկ միավորի մատրիցա .............................................................................................87

Առաջադրանքների մատրիցա 2/1 (Դասեր 1-5) .....................................................................90

Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.......................97

Առաջադրանքների մատրիցա 2/2 (Դասեր 6-7) ............................................................................101
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................103
Առաջադրանքների մատրիցա 2/3 (Դասեր 8-10) ........................................................................106
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................110
Առաջադրանքների մատրիցա 2/4 (Դասեր 11-14) ......................................................................113
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................119
Առաջադրանքների մատրիցա 2/5 (Դաս 15)...............................................................................127
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................128
Առաջադրանքների մատրիցա 2/6 (Դաս 16) ..............................................................................131
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................133

Թեմատիկ միավոր 3. Միջավայրը և արվեստը (10 + 2 ժամ) .....................................................150
Թեմատիկ միավորի մատրիցա ....................................................................................................151
Առաջադրանքների մատրիցա 3/1 (Դաս 1-4) .............................................................................160
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար....................165
Առաջադրանքների մատրիցա 3/2 (Դաս 5-8) .............................................................................166
Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար ...................170
Ամփոփիչ թեստ ...........................................................................................................................175

Հավելված ....................................................................................................................................185
Բառարան ....................................................................................................................................219

# ՆԱԽԱԲԱՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձեզ ներկայացված դասագիրքը հիմնական աստիճանի VII դասարանի դասագրքի շարունակությունն է:

VIII դասարանի դասագիրքը կառուցված է գործնական աշխատանքի և համապատասխան տեսական նյութի ու պատմական տեղեկությունների տրամաբանական հերթագայության վրա: Մարդկության պատմական փորձի իմացությունը կօգնի աշակերտին.

- Տեսնելու իր ժամանակի նմանություններն ու տարբերությունները այլ դարաշրջանների հետ և հասկանալու իր դարաշրջանի առանձնահատկություններն ու շրջակա միջավայրի առանձնահատկությունները՝ այլ դարաշրջանների վերլուծության միջոցով:
- Այլ դարաշրջանների արվեստագետների ստեղծագործության վերլուծության միջոցով ճանաչել իրեն:

Առաջարկվող նյութը խորքային բնույթի է: Գործնական գործողությունները (այսուհետ՝ ակտիվությունները) և նախագծերը առաջարկված են ըստ աճող բարդության: Կարևոր տեղ է զբաղեցնում գիտելիքն աշակերտի ստեղծագործական գործունեության հետ կապելը:

Թեմատիկ միավորները հարմար հնարավորություն են ընձեռում աշակերտներին ցույց տալու, թե ինչն էր կարևոր այս կամ այն դարաշրջանում: Պատճառահետևանքային կապերի գիտակցումը աշակերտների մեջ զարգացնում է տրամաբանությունը: Յուրաքանչյուր թեմատիկ միավոր ներառում է տարբեր դարաշրջաններից վերցված հանգուցային օրինակներ, բայց որոշակի ժամանակահատվածներ ավելի մանրամասն և մանրակրկիտ են քննարկված, քան մյուսները:

## ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

VIII դասարանի դասագրքի հավաքածուն ընդգրկում է.

Ուսուցչի գիրք,

Աշակերտի գիրք:

**Ուսուցչի գիրք.**

- Բովանդակություն
- Ներածություն
- Կերպարվեստի և կիրառական արվեստի հիմնական աստիճանի չափորոշիչը
- Թեմատիկ միավորների և առաջադրանքների մատրիցաներ
- Հավելված (գնահատման սխեմաներ)
- Բառարան

## ԹԵՄԱՏԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Տեքստը թեմատիկորեն խմբավորված է գլուխներով:

Յուրաքանչյուր թեմատիկ միավորի սկզբում թվարկված են այն հիմնական հարցերը, որոնք ուսուցիչը կարող է օգտագործել ընտրովի՝ ելնելով դասի անհրաժեշտությունից: Թեման սպառվելու պահին աշակերտը կունենա գիտելիքով ամրապնդված պատասխան, ինչը նրանց մոտ կձևավորի կայուն պատկերացումներ աշխարհի վերաբերյալ:

Թեմատիկ միավորի շրջանակներում տեքստը բաժանված է դասերի (գլուխներ և ենթագլուխներ): Ուսուցիչը կարող է ինքնուրույն որոշել, թե ինչ ծավալի տեքստի ընթերցում հանձնարարի աշակերտներին, որտեղ ընդհատի, որտեղ տա հանգստանալու հնարավորություն, որ գլուխը հանձնարարի տանը կարդալու, որտեղ ներգրավի գործնական ակտիվություններ և այլն:

Քանի որ միևնույն հարցը կարող ենք դիտարկել տարբեր տեսանկյուններից, թեմատիկ միավորների միջև կապ է հաստատվում: Սա վերաբերում է ինչպես տեքստին, այնպես էլ առաջադրանքներին: Երբեմն մի թեմատիկ միավորի տեքստը կամ առաջադրանքը պարունակում է տեղեկատվություն, որը կօգնի աշակերտին այլ թեմատիկ միավորներով նախատեսված կայուն պատկերացումների ձևավորման հարցում:

Թեմաներն ընտրված են Ազգային չափորոշչի պահանջներին համապատասխան:

Դասագիրքը ներառում է 3 թեմա: Դրանք համապատասխանում են չափորոշչով նախատեսված 3 թեմատիկ բլոկներին, որոնք միմյանց տրամաբանական շարունակությունն են.

1. «Հասարակությունը և արվեստը» թեմատիկ միավորը դասագրքում ներկայացված է «Արվեստը հասարակության ծառայության մեջ» ուսումնական թեմայով:
2. «Մարդը արվեստում» թեմատիկ միավորը դասագրքում ներկայացված է «Մարդը տիեզերքի կենտրոնում» թեմայով:
3. «Շրջակա միջավայրը և արվեստը» թեմատիկ միավորը դասագրքում ներկայացված է «Աշխարհը մեր շուրջը» թեմայով:

Երեք թեմատիկ բլոկներից յուրաքանչյուրը ներառում է թեմատիկ միավորի մատրիցա, որում տրված են կոնկրետ միավորի հետ կապված ընդհանուր տեղեկություններ: Թեմատիկ միավորի մատրիցային կից տրված են առաջադրանքների մատրիցաներ, որտեղ տրված են որոշակի միավորի շրջանակներում ուսումնասիրվելիք հարցերի և դասերի, ինչպես նաև համալիր նախագծերի հետ կապված նպատակային, մանրամասն տեղեկություններ: Առաջադրանքների մատրիցաները (ըստ Աշակերտի գրքի) խմբավորված են մեկ ընդհանուր թեմայով միավորված դասերի մեջ: Ուսուցչի համար, որպես կողմնորոշիչ, առաջադրանքի յուրաքանչյուր մատրիցային կից տրված է դասերը միավորող թեմայի վերնագիր, որը չի արտացոլվում Աշակերտի գրքում. Օրինակ՝ 1-4 դասեր, միավորող թեմա՝ «Արվեստը՝ ժամանակի հայելի»: Առաջադրանքների մատրիցաներում դասերի համարակալումը և վերնագրերը համապատասխանում են Աշակերտի գրքում դասերի համարակալմանը և վերնագրերին:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐ

Դասագրքում գործնական ակտիվությունների քանակը և դրանց համար հաշվարկված ժամանակը գերազանցում է տարվա ընթացքում առարկայի համար հատկացված ժամերի սահմանաչափը: Բազմազան ակտիվություններից ուսուցիչը կարող է ընտրել որոշակի ակտիվություններ կամ բաշխել

ակտիվություններն՝ ըստ աշակերտների հնարավորությունների: Մի մասը կարող է հանձնարարել տանը ինքնուրույն կատարելու:

Յուրաքանչյուր առաջադրանքի ինքնուրույն կատարվելիք մասը աշակերտի կողմից դրված մեկ աղյուս է վերջնական նպատակին հասնելու համար:

Միատարր, բայց տարբեր տեսակի առաջադրանքների դասարանում բաշխումը օգտակար է այն առումով, որ աշակերտները, դիտարկելով միմյանց աշխատանքը, կգան եզրահանգման՝ նպատակին հնարավոր է հասնել տարբեր եղանակներով:

Սկսած առաջին գլխից՝ գործնական ակտիվությունները պլանավորված են այնպես, որ դրանցից յուրաքանչյուրը նպաստում է համալիր նախագծերի փուլային նախապատրաստմանը:

Յուրաքանչյուր գլխի վերջում աշակերտները կներկայացնեն վերջնական նախագիծ, որը կդառնա ամփոփիչ գնահատման առարկա: Շատ դեպքերում, ծրագրի շուրջ աշխատանքները պետք է ընթանան ընթացիկ գլուխը սովորելուն զուգահեռ:

Բոլոր նախագծերը ներառում են ինչպես ինքնուրույն, այնպես էլ խմբային կատարվելիք աշխատանք: Նախագծային աշխատանքի նման ձևը աշակերտների մոտ կզարգացնի խմբի առջև հաշվետվողականության զգացում, կսովորեցնի, իր մասնաբաժին աշխատանքը կատարելիս, հաշվի առնել խմբի շահերը և կենտրոնանալ ընդհանուր աշխատանքի արդյունքի վրա:

Դասագրքում առաջարկված նախագծերը ներառում են ճանաչողական, հետազոտական և ստեղծագործական գործունեություն. հետազոտություն, բանավեճ, ստեղծագործական աշխատանք և այլն: Յուրաքանչյուր նախագիծ նախատեսում է, որ այն այս կամ այն կերպ ներկայացվի հանրությանը (ցուցահանդես, գործողություն, շնորհանդես, զեկույց):

Նախագծերի վրա խմբային աշխատանքի ժամանակ գործառույթները խելամտորեն վերաբաշխելը տարբեր հնարավորություն ունեցող աշակերտներին հավասար վիճակի մեջ կդնի՝ կտա ուժեղ կողմերը դրսևորելու հնարավորություն և կզարգացնի թույլ կողմերը: Յուրաքանչյուր նախագծի ավարտին աշակերտները կգրեն ռեֆլեքսիա (ռեֆլեքսիայի հարցաշարը. Տե՛ս՝ հավելվածում):

## ՌԵՖԼԵՔՍԻԱ

Ինքնավերլուծությունը չափազանց օգտակար է, որպեսզի աշակերտը կարողանա օբյեկտիվորեն գնահատել իր ունակությունները, մտածել սեփական ստեղծագործական գործընթացի մասին, հասկանալ թույլ և ուժեղ կողմերը, նախանշել թույլ կողմերը բարելավելու ռազմավարություն, ավելի լավ ճանաչել ինքն իրեն: Դրա համար ցանկալի է, որ ուսուցիչը խնդրի աշակերտներին վարել ստեղծագործական օրագիր:

Նկարչական տետրում / նոթատետրում աշակերտը նկարում է, գրում, հավաքում. ուրվանկարներ, էսքիզներ, գաղափարներ, աշխատանքային պլան (ռազմավարություն, նյութ, փուլեր ...), հետազոտության արդյունքներ, արվեստի գործից ստացված տպավորություններ, գրի է առնում արվեստի գործի, դարաշրջանի և արվեստագետի մասին իր համար հետաքրքիր տեղեկություններ, ծագած հարցեր և դրանց պատասխաններ, լրացնում է արվեստի ստեղծագործության վերլուծության, մեկնաբանության և գնահատման հարցաթերթիկներ, տեխնիկայի և ընթացակարգերի նկարագրություն (արվեստագետի այսպես ասած «բաղադրատոմսերի» գրքույկ), տերմիններ և դրանց սահմանումներ, փորձերի նախնական ենթադրություններ և արդյունքներ, ռեֆլեքսիայի հարցաշարի պատասխաններ, փակցնում է իր աշխատությունների լուսանկարներ, գնահատման թերթեր և այլն: Այս նյութը կօգնի աշակերտին զարգացման և ինքնագնահատման հարցում:

## ԹՎԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Քանի որ վրացալեզու ինտերնետային տարածքը դեռ շատ սուղ է, և աշակերտները հարկադրված են տեղեկատվություն գտնել ոչ ակադեմիական հրատարակություններում, դասագիրքը, հնարավորության սահմաններում, ծանրաբեռնել ենք վստահելի, վրացական և օտարալեզու ակադեմիական գիտական աղբյուրների վրա հիմնվելով ձեռք բերված տեղեկություններով: Ուսուցչի գրքում նշված են վերստուգված ինտերնետային հղումներ, ինչից կարող են օգտվել ինչպես ուսուցիչը, այնպես էլ աշակերտները:

Թվային տեխնոլոգիաների և այլ ռեսուրսների օգտագործման առումով դասագրքում առաջարկված են բազմազան առաջադրանքներ՝ տեսանյութերի ցուցադրում, շնորհանդեսի պատրաստում, էլեկտրոնային պորտֆոլիոյի ստեղծում՝ անձնական և ընդհանուր դասարանական բլոգների տեսքով, թվային աշխատության ստեղծում, անիմացիայի ստեղծում և այլն: Պարբերաբար, յուրաքանչյուր թեմայի վերջում, Google Arts & Culture կայքում աշակերտները պետք է պատրաստեն փավորիտների ալբոմ (սեփական պատկերասրահ) հղումով.

https://artsandculture.google.com

Ցանկալի է, որ հենց առաջին դասին ուսուցիչը աշակերտներին հանձնարարի ստեղծել սեփական էլեկտրոնային պորտֆոլիո՝ կայքի կամ բլոգի տեսքով, որտեղ տարվա ընթացքում կտեղադրեն իրենց սեփական աշխատանքները (տեքստեր և աշխատանքների լուսանկարներ).

www.blogspot.com

www.wordpress.com

www.weebly.com

Ծանր ֆայլերը, ասենք, PowerPoint շնորհանդեսները և անիմացիաները, աշակերտները կարող են վերբեռնել կայքերում, ապա շնորհանդեսի հղումը նշեն իրենց և դասարանական բլոգներում:

Վեբկայքերի ցուցակ.

https://en.ppt-online.org

https://www.slideshare.net

Վրացալեզու ինտերակտիվ թեստեր ու քվիզներ տե՛ս՝

https://bit.ly/2Mi5SmT

Ձեր սեփական հավաքածուի կամ աշակերտների աշխատանքների վիրտուալ ցուցահանդեսային տարածքի ստեղծում.

https://www.artsteps.com

**Երաշխավորվող աղբյուրներ.**


- Ե. Հ. Գոմբրիչ, Արվեստի պատմություն, Լոգոս պրես, 2012
- Համաշխարհային արվեստ, Ն. Մաճարաշվիլի, Ն. Սիլագաձե, Մերիդիանի, 2010 թ.
- Արվեստի պատմություն (XVI-XVII դդ. Եվրոպա), Մ.Սթոքսթեղ, Մ.Վ.Քոթրեն, Թբիլիսիի Ապոլոն Քութաթելաձեի անվան արվեստի պետական ակադեմիա, 2018 թ.
- Արվեստի պատմություն (XVIII դարից մինչ օրս), Մ.Սթոքսթեղ, Մ.Վ.Քոթրեն, Թբիլիսիի Թբիլիսիի Ապոլոն Քութաթելաձեի անվան արվեստի պետական ակադեմիա, 2018 թ.
- Նինո Ճիճինաձե, Կերպարվեստի պատմության տեսադասախոսությունների ժամանակագրական շարք.

https://bit.ly/2XmtAEJ

- Արվեստագետների աշխատություններ ու դրանց մասին հոդվածներ, տե՛ս.

https://artchive.ru/artists

- Կերպարվեստի թվային շտեմարան.

https://www.wga.hu/

Առցանց դպրոցական հանրագիտարանային բառարանների ակտիվ հղումներ.

- Համաշխարհային մշակույթը և արվեստը.

http://www.nplg.gov.ge/saskolo/index.php?a=index&d=47

- Արվեստ, Համառոտ հանրագիտարանային բառարան, կազմող՝ Ն. Մաճարաշվիլի, Թբիլիսի, Մերիդիանի, 2004 թ.

http://www.nplg.gov.ge/saskolo/index.php?a=index&d=7

**Գնահատում**

Որոշող և զարգացնող գնահատման, ինչպես նաև ամբողջ ուսումնառության գործընթացի վերջնական նպատակն է աշակերտի, որպես անհատի՝

- Ստեղծագործական ներուժի բացահայտումը.
- Հուզական և հոգևոր զարգացումը.
- Սոցիալական հմտությունների ակտիվացումը.
- Գեղագիտական դաստիարակությունը.
- Ինքնուրույնության և պատասխանատվության բորբոքումը.
- Ուսման որակի համար հոգածությունը.
- Նախապես ունեցած գիտելիքի որոշումը.
- Նոր գիտելիքների բոլոր երեք կատեգորիաների (դեկլարատիվ, ընթացակարգային և պայմանի հետ կապված) յուրացման և հմտությունների ու կարողությունների օգտագործման ունակությունների մշտադիտարկումը.
- Աշակերտի կողմից ուժեղ և թույլ կողմերը պարզելու ունակությունը և ուսուցչի օգնությամբ, առաջընթացը խթանող քայլերի ձեռնարկումը:

VIII դասարանում կիրառվում են որոշող և զարգացնող գնահատումներ:

Միևնույն կայուն պատկերացումը ձևավորելու համար դասագրքում առաջարկվում են տարբեր բարդության մի քանի ակտիվություններ, որոնք ուսուցչին կտան տարբերակման հնարավորություն: Տարբեր ունակություններ ունեցող աշակերտներին պետք է հանձնարարել այնպիսի առաջադրանքի կատարում, որը նրանք կկարողանան հաղթահարել որոշակի ջանքերի և ուսուցչի օգնության արդյունքում: Կարևոր է, որ մրցակցություն կայանա ոչ թե աշակերտների միջև, այլ հենց աշակերտը մրցի ինքն իր հետ: Ուսուցչի կողմից դրված նպատակը պետք է համապատասխանի կոնկրետ աշակերտի հնարավորություններին: Առաջընթացից ստացված ուրախության զգացումը խթանում է աշակերտների ստեղծագործական հմտությունները, նրանց մոտիվացնելու լավագույն միջոց է: **Ուսուցիչը ուշադրությունը պետք է կենտրոնացնի աշակերտի առաջընթացի վրա, այլ ոչ թե՝ աշխատանքի կատարման մակարդակի:** Ամփոփիչ առաջադրանքների միջոցով ուսուցիչը և աշակերտը կարող են ստուգել և գնահատել աշակերտների կողմից դժվարությունների հաղթահարման գործոնը, նյութի յուրացման և ձեռք բերված ունակությունների որակը: Թեմայի հետ կապված բոլոր անհրաժեշտ մտածողական կամ ամփոփիչ հարցերը նույնպես կօգնեն ուսուցչին գնահատելու ձեռքբերումները:

Բացի ինքնագնահատումից, զարգացնող գնահատման արդյունավետ գործիք է հասակակիցների փոխադարձ գնահատումը: Ընկերոջ ուսման գործընթացը դիտելը կզարգացնի աշակերտի պատասխանատվությունը սեփական ուսանման գործընթացի նկատմամբ, կձևավորի սեփական նպատակի ըմբռնման և ինքնակարգավորման ունակություն: Սա մի տեսակ դերային խաղ է, երբ հետադարձ կապը տրվում է ոչ թե ուսուցչի, այլ հասակակցի կողմից: Փոխադարձ գնահատման ժամանակ աշակերտներն ընտելանում են քննադատական միտքը դրական, ճիշտ արտահայտելուն: Նրանց համար հասկանալի են դառնում գնահատման չափանիշները, ինչը մեկ այլ ժամանակ կօգնի նրանց օբյեկտիվորեն գնահատելու իրենց աշխատանքը: Բարձրացնում է մոտիվացիան, ոգևորությունն ու ներգրավվածությունը:

Դասագրքում նախատեսված են չափորոշչի արդյունքների երկու ուղղությունները, որոնց դասիչները կրկնվում են բոլոր երեք թեմատիկ միավորներում, ինչն ուսուցչին հնարավորություն է տալիս տարբեր թեմաների շրջանակներում մի քանի անգամ գնահատել յուրաքանչյուր աշակերտին՝ ըստ միևնույն դասիչի: Դասագրքում տրված են որոշակի առաջադրանքի հետ կապված ճշգրտված դասիչի պահանջներ:

Հավելվածում տրված են տարբեր տեսակի առաջադրանքների գնահատման չափանիշներ և գնահատման խորագրեր՝ աղյուսակներ: Պարզ է, որ ուսուցիչը չի գնահատում բոլոր առաջադրանքները: Նա ինքը կընտրի, թե որ առաջադրանքը գնահատի **որոշողով**, որը **զարգացնողով** և, որը համարի ուղղակի վարժություն:

*** Ուսուցիչը կարող է փոխել խորագրերի նկարագրիչների դեմքի նշանը և օգտագործել որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:**

Երբ սահմանափակ հնարավորություն ունեցող և հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտներին գնահատում ենք ըստ նույն առաջադրանքի, ինչով մյուսներին, միայն թե տարբեր՝ տարբերակված չափանիշներով, սա հաճախ աշակերտների կողմից անհարմար հարցեր է հարուցում: Ուստի անհրաժեշտ համարեցինք առաջադրանքի մի քանի տարբերակ առաջարկել: Ուսուցիչն ինքը կորոշի, թե որ տարբերակն առաջարկի հկկու աշակերտին, սհու աշակերտին: Ինչ վերաբերում է գնահատման սխեմաներին, դրանք փոփոխման հնարավորություն են տալիս: Որպեսզի հկկու և սհու աշակերտներն ունենան հաջող գնահատում ստանալու հավասար հնարավորություն, ուսուցիչը պետք է կիրառի համապատասխան ձևեր: Օրինակ՝ խոսքի խնդիրներ ունեցող աշակերտներին ուսուցիչը պետք է առաջարկի սեփական կարծիքը գրավոր արտահայտելու հնարավորություն: Սհու աշակերտին քննարկման մեջ ներգրավելու համար ուսուցիչը պետք է հարց տա՝ համաձա՞յն է արդյոք ընկերների կողմից արտահայտած կարծիքի հետ, կամ՝ ո՞ր ենթադրության հետ է համաձայն: Նման դեպքում աշակերտը առանց վախի և ամոթի զգացողության կներգրավվի քննարկման մեջ: Ուսուցիչը չպետքն է պահանջի ընդարձակ քննարկում, այլ տա սեփական, դրական կամ բացասական վերաբերմունք արտահայտելու հնարավորություն:

Սհու աշակերտի խնդրի առանձնահատկությունից ելնելով՝ տարբերակումը պետք է տեղի ունենա տարբեր ուղիներով՝ սհու աշակերտներին հանձնարարվի տեքստից դուրս գրել կարևոր տեղեկություններ՝ 2-3 նախադասության տեսքով, կարդալ տեքստի մի մասը, առաջադրանքը կատարելու համար ավել ժամանակ տրվի, հրահանգը պետք է տրվի քայլ առ քայլ, փուլերով, տրվի պարզեցված հրահանգ, առաջադրանքը կատարելիս նա զույգ կազմի մեկ այլ աշակերտի հետ, ում հետ նա իրենց զգում է հանգիստ և հարմարավետ: Ամփոփիչ թեստի փոխարեն հանձնարարվի գործնական աշխատանքի կատարում կամ ընդհակառակը: Գնահատվի ըստ պարզեցված չափանիշների:

**Քաղվածք Վրաստանի «Հավասարության պաշտպանության, խտրականության և այլ վարկաբեկող տարրերի սկզբունքների վերաբերյալ» օրենքից.**

«Խտրականություն է համարվում այնպիսի վերաբերմունքի կամ պայմանների ստեղծումը, որն անձին անբարենպաստ պայմանների մեջ է դնում նման պայմաններում գտնվող այլ անձանց համեմատ կամ հավասար վիճակի մեջ է դնում էապես անհավասար պայմաններ ունեցող անհատներին, բացառությամբ այն դեպքի, երբ նման վերաբերմունքը կամ պայմանների ստեղծումը ծառայում է հասարակական կարգը կամ բարոյականությունը պահպանելու համար օրենքով սահմանված նպատակին, ունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ օգտագործված միջոցները համաչափ են նման նպատակի հասնելու համար»:

«Խտրականություն չի համարվում որևէ տարբերություն, անընդունելիություն և առավելություն՝ սահմանված աշխատանքի, գործունեության կամ ոլորտի հետ կապված, որը հիմնվում է հատուկ պահանջների վրա»:

Անցումային տարիքում գտնվող դեռահասները հատկապես զգայուն են և սուր են ընդունում իրենց նկատմամբ վերաբերմունքի ցանկացած, թեկուզ ուրիշների կողմից աննկատ նրբերանգները, նույնիսկ այնպիսիները, ինչը նախկինում նորմ էր համարվում: Աշակերտների վարքի, արտահայտությունների կամ աշխատությունների մեկնաբանման ժամանակ ուսուցչից ակնկալվում է առանձնահատուկ զգուշություն, որպեսզի աշակերտների ըստ առաջադրանքների բաժանումը, դիտողությունը կամ նկատողությունը կամ ցանկացած այլ գնահատում չընկալվի որպես նվաստացուցիչ: Քանի որ արվեստը ճշգրիտ գիտություն չէ, բոլոր մարդիկ իրավունք ունեն արվեստի գործը գնահատելիս առաջնորդվել սեփական զգացմունքներով, տպավորություններով ու ճաշակով: Ցանկալի է, որ ուսուցիչը ուշադրությունը չկենտրոնացնի իր համար անընդունելի արտահայտության, սխալ գնահատման կամ աշխատության վրա: Ցանկացած դիտողություն սկսի հաճոյախոսությունից, որին հաջորդում է գործնական մեկնաբանությունը (օրինակ՝ շատ հետաքրքիր գաղափար է / աշխատանք է, բայց արդյոք ավելի լավ չէ՞ր լինի ...):

Դասարանում աշակերտների միջև հավասարության պահպանման և միմյանց նկատմամբ խտրական վերաբերմունքից խուսափելու համար ցանկալի է, որ ուսուցիչը պահպանի ճիշտ հավասարակշռությունը տարբեր հետաքրքրություն, ունակություն և հնարավորություններ ունեցող աշակերտներին առաջադրանքներ տալով, հարցումով, դասապրոցեսում նրանց ներգրավումն ապահովելու կամ գնահատելու ժամանակ: Ուսուցիչը պետք է աշակերտներին զգացնել տա, որ նրանցից յուրաքանչյուրը եզակի է հենց իր տվյալների, հայացքների և հմտությունների շնորհիվ և որպես դրա ապացույց վկայակոչի արվեստագետների ստեղծագործությունները:

Դասագրքում ներկայացած տարբեր դարաշրջանների, մշակույթների, հավատալիքների, սեռի և տարիքի արվեստագետների աշխատությունները վառ օրինակ են նրա, թե որքանով տարբեր ու եզակի է և այդ պատճառով գնահատելի է նրանցից յուրաքանչյուրի արարումը, ինչ սկզբունքով էլ այն կատարված լինի: Այս նյութի վրա հիմնվելով՝ ուսուցիչը կկարողանա պարբերաբար աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել այն փաստի վրա, որ մարդու կողմից ստեղծված աշխարհները հենց այն պատճառով են հետաքրքիր, բազմազան, անսպասելի և փոփոխական, որովհետև մենք իրարից տարբերվում ենք ըստ արտաքին տեսքի, բնավորության, տեսակետների և հետաքրքրությունների: Մեզանից յուրաքանչյուրը՝ կամա թե ակամա, մեր ներդրումն ենք անում այս աշխարհի զարգացման մեջ: Մեզանից է կախված՝ ինչպիսի միջավայրում ենք մենք ապրում: Շրջակա միջավայրի մասին հոգ տանելը պետք է սկսենք միմյանց մասին հոգ տանելուց:

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.

**Մոտիվացիա**

Ցանկալի է, որ ուսուցիչը պարբերաբար լուսանկարի դասարանը աշխատանքային գործընթացում և նրանց թույլտվությամբ վերբեռնի դրանք սեփական բլոգում: Այն խրախուսում է աշակերտներին ակտիվորեն ներգրավվել աշխատանքի մեջ և ստեղծել բարենպաստ միջավայր լուսանկար անելու համար: Նրանք հաճախ ցույց են տալիս բլոգը ծնողներին և հարազատներին և շատ են հպարտանում այնտեղ ներբեռնած սեփական աշխատություններով և աշխատանքի գործընթացում նկարահանած լուսանկարներով:

**Դասընթացի ընթացքի հետ կապված.**

Դասագրքում ներկայացված նյութը բաժանված է դասերի (գլուխներ և ենթագլուխներ): Ցանկալի է, որ ուսուցիչը դասագրքում տրված տեքստի որոշակի հատվածի ընթերցում աշակերտներին հանձնարարի որպես տնային առաջադրանք (ասենք՝ նշանային համակարգի սխեմայով): Հաջորդ դասին հարցերի միջոցով որոշի, թե ինչ են հասկացել աշակերտները կարդացած տեքստից, պատասխանի նրանց հարցերին: Այսպիսով, դասի ժամանակը լիովին կազատվի գործնական ակտիվությունների համար: Այս համակարգը վերաբերում է դասագրքի բոլոր մասերին: Ակտիվությունների նկարագրությունը տեղադրված է ինչպես անմիջապես ենթաբաժիններում, այնպես էլ յուրաքանչյուր թեմատիկ միավորի վերջում: Տեքստում ներգրավված են հարցեր և առաջադրանքներ, որոնք աշակերտների ուշադրությունը կկենտրոնացնեն հանգուցային տեղեկությունների վրա:

**Ժամանակի կազմակերպում.**

Ժամանակ խնայելու համար ցանկալի է աշակերտներին հանձնարարել տանը կարդալ դասագրքի տեքստը:

Դասի առաջին 5-10 րոպեն տրամադրվում է տեսական մասին, որը կարող է ներառել թեմայի քննարկում կամ աշակերտների հարցում, անցյալ նյութի կրկնություն, նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում, աշակերտների հարցերի պատասխաններ կամ կարճ քննարկումներ: Դասի հաջորդ մասը տրամադրվում է գործնական ակտիվության կատարմանը:

Ցանկալի է, մինչև դասը սկսվելը, Ուսուցիչը գրատախտակի վրա գրի ակտիվության կատարվելիք հրահանգների փուլերը, սովորելու տերմինները, քննարկման հարցեր և այլ պահանջվող տեղեկություններ:

**Ստեղծագործական օրագրի վարում.**

Ստեղծագործական օրագրում աշակերտը գրում է նոր տերմիններ, անուններ, նշում տնային առաջադրանքները, հաջորդ դասի համար բերվելիք նյութը, էքսկուրսիաների ժամանակ գրի է առնում տպավորությունները, անում ուրվանկարներ, գրանցում սեփական կարծիքները, առաջացած հարցերը, կատարում գրավոր առաջադրանքներ տվյալ թեմայի վերաբերյալ, գրում ամփոփիչ հարցերի պատասխաններ: Սա կօգնի աշակերտներին մտապահել և գնահատել իրենց տեսածը կամ սովորածը, կընտելացնի նրանց մտքերի գրավոր արտահայտման ու կազմակերպվածության:

**Նկարազարդումների հետ կապված.**

Քանի որ փոքր չափի նկարազարդումը դժվար է ընկալել, մենք նախընտրեցինք Աշակերտի դասագրքում մեծացնել դրանց չափը: Դա է պատճառը, որ մեծացել է մեկ դասի ծավալը՝ որոշ դասեր ներառում են 4 էջ: Ամենակարևորն այն է, որ այն ութերորդ դասարանցի աշակերտի համար լիովին հաղթահարելի է: Հետևաբար, դասի էջերի քանակը չպետք է վախեցնի ձեզ:

## Կերպարվեստի և կիրառական արվեստի հիմնական աստիճանի չափորոշիչը

**Ներածություն**

Կերպարվեստի և կիրառական արվեստի չափորոշիչը բաղկացած է հետևյալ մասերից՝

ա) Առարկայի ուսանում-ուսուցման նպատակները.

բ) Չափորոշչի արդյունքները և բովանդակությունը.

գ) Մեթոդական կողմնորոշիչներ.

դ) Գնահատում:

«Կերպարվեստ և կիրառական արվեստ» առարկայի շրջանակներում աշակերտը կուսումնասիրի արվեստը, ինչպես ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց: Նա աշխարհին ընկալում է, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, որը կարող է ստեղծագործաբար արտացոլել ստեղծագործություններում:

Ուսանում-ուսուցման գործընթացում աշակերտը կծանոթանա վրացական և համաշխարհային, հին և նոր արվեստի հայտնի նմուշների և ժողովրդական ստեղծագործությունների, դրանց ստեղծման և գնահատման տարբեր պատմական, մշակութային, սոցիալական և այլ համատեքստերի, կիետազոտի դրանց դերը հասարակության կյանքում:

Ուսանում-ուսուցման գործընթացում աշակերտը կմասնակցի տարբեր ստեղծագործական նախագծերի. կստեղծի տարբեր բնագավառների և ժանրերի աշխատություններ՝ գեղարվեստական պատկերավորման միջոցների, սկզբունքների, նյութի, տեխնիկայի օգտագործմամբ:

**ա) Առարկայի ուսանում-ուսուցման նպատակները**

Կերպարվեստի և կիրառական արվեստի ուսանում-ուսուցումը նպատակ է նախանշում.

- Աշակերտի մոտ հետաքրքրություն առաջացնել արվեստի նկատմամբ:
- Աշակերտը գիտակցի իր ստեղծագործական ներուժը, զարգացնի ինքնարտահայտման բազմազան ուղիների որոնման և կիրառման ունակություն:
- Աշակերտի մոտ զարգացնի արվեստի նմուշների, իր և այլոց ստեղծագործությունների մասին կոնկրետ կարծիք արտահայտելու, դատողության և մեկնաբանման ունակություն:
- Նպաստի աշակերտին ձևավորվել որպես սեփական աշխարհայացք և ակտիվ կենսական դիրքորոշում ունեցող անհատ՝ ազգային և համաշխարհային մշակույթին ծանոթանալու միջոցով:

Աշխատելով այս նպատակների վրա՝ Կերպարվեստը և կիրառական արվեստ առարկան իր ներդրումը կունենա Ազգային ուսումնական պլանի առաքելությամբ և նպատակներով նախատեսված կարողությունների և արժեքների զարգացման և ձևավորման մեջ:

**բ) Չափորոշչի արդյունքները և բովանդակությունը**

Չափորոշչի արդյունքները, հիմնվելով առարկայի հասկացությունների վրա, սահմանում են նպատակային կողմնորոշիչները և պատասխանում հարցին, թե ինչ պետք է կարողանա անել հիմնական աստիճանի աշակերտը Կերպարվեստի և կիրառական արվեստ առարկայի շրջանակներում:

**Չափորոշչի արդյունքները խմբավորված են երկու ուղղությամբ.**

**Ստեղծագործականություն և պրակտիկա.** ենթադրում է սեփական տպավորությունների և փորձառության հիման վրա գեղարվեստական գործերի ստեղծում, դրանց միջոցով սեփական գաղափարների, հույզերի և տրամադրությունների արտահայտում:

Ուսանում-ուսուցման գործընթացում աշակերտը պետք է օգտագործի հետևյալ նյութերը, գործիքները, գործընթացը, ընթացակարգը. մատիտ, պաստել, ֆլոմաստեր, գուաշ, ջրաներկ, տեմպերա, ակրիլ, տուշ, թանաք, ածուխ, սանգինա, գունավոր կավիճներ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, գործվածք, թել, պարան, մետաղալար, պլաստիլին, կավ, այլ նյութեր (ավանդական և ոչ ավանդական, բնական և արհեստական), վրձին, մկրատ, սոսինձ, ատաղձագործական, կավագործական, գործելու, կարի գործիքներ և այլն: Կտրել, սոսնձել, քերծում, կռում, ոլորում, մանում, ասեղնագործություն, հյուսում, կար, փայտափորագրում և այլն:

**Արվեստի ընկալումը համատեքստում.** ենթադրում է տարբեր ոլորտների, ժանրերի, դարաշրջանների / մշակույթների /ուղղությունների/ ոճի արվեստի գործերի վերլուծում, մեկնաբանություն և գնահատում:

**Չափորոշչի բովանդակությունը** սահմանում է, թե ինչ պետք է իմանա աշակերտը: Բովանդակությունը նկարագրվում է պարտադիր հասկացությունների, թեմատիկ միավորների տեսքով:

**Հասկացությունների** տեսքով սահմանվում է այն գիտելիքը, որին աշակերտը պետք է տիրապետի առարկայի շրջանակներում: Հասկացությունները արդյունքների հետ պետք է մշակվեն աշակերտի համար ծանոթ համատեքստերում: Այս համատեքստերը ներկայացված են **պարտադիր թեմատիկ միավորների** (VII-IX դասարաններում) և պարտադիր թեմաների (X դասարանում) տեսքով:

**Կայուն պատկերացումներ.** յուրաքանչյուր հասկացության հետ տրված են կայուն պատկերացումներ, որոնք սահմանազատում են հասկացության ծավալը և ճշգրտում, թե ինչ պետք է ըմբռնած լինի աստիճանի վերջում աշակերտը՝ կապված այս հասկացության հետ:

**Չափորոշչի արդյունքների դասիչների բացատրությունը.**

Հիմնական աստիճանում չափորոշչում տրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է դասիչ, որը ցույց է տալիս առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը. Օրինակ, **Կերպ.կիր.հիմն.1.**

«**Կերպ.կիր.**»՝ մատնանշում է «Կերպարվեստ և կիրառական արվեստ» առարկան:

«**Հիմն.**»՝ մատնանշում է հիմնական աստիճանը:

«**1**»՝ մատնացույց է անում չափորոշչի արդյունքի համարը:

| **Կերպարվեստի և կիրառական արվեստի չափորոշչի արդյունքները (VII-X դասարաններ)** | | |
|---|---|---|
| **Արդյունքների դասիչներ** | **Ուղղություն. Ստեղծագործականություն և պրակտիկա** | **Նպատակային հասկացություններ և հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ** |
| | **Աշակերտը պետք է կարողանա.** | |
| **Կերպ.կիր.հիմն.1.** | Արվեստի գործ ստեղծել ինքնարտահայտման համար: Նպատակին համապատասխան, կիրառել բազմաբնույթ ռազմավարություններ, գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ, տարբեր նյութեր և տեխնիկա՝ հասկանալով և ստեղծագործաբար: | Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները (**արդյունքներ 1, 2, 3, 4**)<br>• Մարդ արվեստի նմուշ ստեղծելու համար օգտագործում է արվեստի լեզուն, այսինքն՝ արվեստի տարրեր և սկզբունքներ:<br>• Կերպարվեստի լեզուն կիրառում ենք ոչ միայն աշխատություն ստեղծելիս, այլ նաև արվեստի նմուշների վերլուծության, մեկնաբանման և գնահատման ժամանակ: |

<table>
<tr><td>Կերպ.կիր.հիմն.2.</td><td>Աշխատություն ստեղծելիս նախանշել և լուծել ստեղծագործական խնդիր, նպատակին համապատասխան ընտրել գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ, նյութ, տեխնիկա, գեղարվեստական ոճ:</td><td rowspan="5">Կերպարվեստի տեխնիկան (արդյունքներ. 1, 2, 3, 4)<br>• Արվեստագետը նյութը և տեխնիկան ընտրում է գեղարվեստական մտահղացման, ստեղծագործական խնդրին համապատասխան:<br>• Մարդկության զարգացման հետ մեկտեղ զարգանում էին, փոխվում և առաջանում արվեստի նոր ձևեր, նյութեր և տեխնիկա:<br>Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը (արդյունքներ. 1, 2, 3, 4)<br>• Արվեստն առօրյա կյանքում տարբեր ձևերով է հանդիպում:<br>• Արվեստի գործերը ստեղծվում են տարբեր նպատակներով և նշանակմամբ:<br>• Արվեստի բնագավառների բաժանումը պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով կամ նշանակմամբ:<br>• Յուրաքանչյուր բնագավառին առավելապես բնորոշ է կերպարվեստի որևէ պատկերավորման միջոց կամ սկզբունք:<br>• Կերպարվեստը ժանրերի է բաժանվում ըստ արտացոլված բովանդակության:<br>• Արվեստի բնագավառներն ու ժանրերն ունեն իրենց զարգացման պատմությունը:<br>Տարբեր դարաշրջանների/մշակույթների/ հոսանքների/ոճերի արվեստներին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ (արդյունքներ. 1, 2, 3, 4)<br>• Բոլոր դարաշրջանների, մշակույթների, հոսանքների, ոճերի արվեստն ունի իր բնութագրիչները, որոնք պայմանավորված են տարբեր գործոններով:<br>• Արվեստում տեղի ունեցող փոփոխությունները (արվեստի նշանակումը, նրա նկատմամբ վերաբերմունքը, գեղարվեստական պատկերավորման միջոցները, սկզբունքները, տեխնիկան, նյութը, գործիքները, բնագավառները, ձևերը և այլն) անմիջական կապի մեջ են մարդկության պատմության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ (աշխարհայացք, տեխնիկական առաջընթաց, գլոբալացում և այլն):<br>• Տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստների ձևավորման մեջ մեծ դեր է կատարում փոխազդեցությունը:<br>• Արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների և մշակույթների մասին կարելի է շատ բան իմանալ:</td></tr>
<tr><td></td><td>Ուղղություն Արվեստի ընկալում համատեքստում</td></tr>
<tr><td></td><td>Աշակերտը պետք է կարողանա.</td></tr>
<tr><td>Կերպ.կիր.հիմն.3.</td><td>Արվեստի կոնկրետ նմուշ վերլուծել (գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ, դարաշրջան, ոճ, հոսանք, բնագավառ, ժանր, հեղինակ), մեկնաբանել և գնահատել:</td></tr>
<tr><td>Կերպ.կիր.հիմն.4.</td><td>Տարբեր դարաշրջանների, մշակույթների և ոճերի աշխատություններ ճանաչել և իրար հետ համեմատել պատմական, կրոնական, սոցիալական համատեքստի նախատեսմամբ:</td></tr>
</table>

**Հասկացություններ**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները**

**Կերպարվեստի տարրերը** (օրինակ, **գիծ**՝ տարբեր տեսակի, ուրվագիծ, նրբագիծ: Գույն՝ հիմնական և բաղադրյալ, սառը և տաք, հակադիր, հարակից, գույների աստիճանավորում, կիսատոներ, լուսաստվեր, լուսավորություն: **Ձև**՝ հարթ և ծավալային (երկրաչափական և բնության մեջ առկա, չափազանցված, ոճավորված և այլն): Կազմվածք: Ֆոն:

**Կերպարվեստի սկզբունքները** (օրինակ՝ կոմպոզիցիոն բաշխում, հավասարակշռություն, տարրերի կրկնություն, ռիթմ, հիմնականի ընդգծում, շեշտադրում, համաչափություն-անհամաչափություն, ստատիկա-դինամիկա, հակադրություն, մասշտաբ, հարաբերակցություն, համաչափություն / անհամաչափություն, հեռանկար (գծային, օդային, տարածական), դիտակետ, կոլորիտ):

**Կերպարվեստի բնագավառներ և ժանրեր (բնագավառներ**՝ օր., գեղանկարչություն (հաստոցային, մանրանկարչական, մոնումենտալ՝ որմնանկար, խճանկար, վիտրաժ, գրաֆիտ), գրաֆիկա (հաստոցային, տպագիր), քանդակ, դրոշմում, ճարտարապետություն, դիզայն, դեկորատիվ-կիրառական արվեստ և այլ: **Ժանրեր**. օր.՝ նատյուրմորտ, դիմանկար, բնանկար, կենցաղային, պատմական և այլն):

**Կերպարվեստի տեխնիկա** (օրինակ՝ գեղանկարչություն, գրաֆիկա և դրանց տեխնիկաները, ծեփակերտում, ապլիկացիա, կոլաժ, խճանկար, մոնոտիպ, մոդելավորում, կառուցքավորում, թվային տեխնոլոգիաներ):

**Տարբեր դարաշրջանների/մշակույթների/հոսանքների/ոճերի արվեստների** (օրինակ՝ նախապատմական, հին քաղաքակրթություններ, հնագույն դարաշրջան, միջնադար, Վերածնունդ, XVII-XIX դդ., մոդեռնիզմ, ժամանակակից արվեստ և այլն) **բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ:**

**Պարտադիր թեմատիկ միավորներ**

Հիմնական աստիճանում կերպարվեստի և կիրառական արվեստի ուսանում-ուսուցումը կիրականացվի հետևյալ կերպ.

- VII-IX դասարաններում ուսանում-ուսուցումն իրականացվելու է երեք հիմնական թեմատիկ միավորների շրջանակներում, յուրաքանչյուր դասարանում (VII, VIII, IX) աշակերտներին պետք է առաջարկենք բոլոր երեք թեմատիկ միավորներին համապատասխան նյութ:
- X դասարանում ուսանում-ուսուցումն իրականացվելու է հիմնական թեմատիկ միավորներից մեկում՝«Վրաստանի արվեստը համաշխարհային արվեստի կտրվածքում», որն ընդգրկում է 7 պարտադիր ուսումնական թեմա: Այս թեմաների համատեքստում դիտարկվում է համաշխարհային և Վրաստանի արվեստը հնագույն ժամանակներից մինչ այսօր:

**VII-IX դասարաններ.**

**Թեմատիկ միավոր. Շրջակա միջավայրը և արվեստը**

Առաջարկվող թեմաներ. Շրջակա միջավայրը՝ մարդու հետաքրքրության առարկա, Շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու վրա և մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, Արվեստը մեր շրջապատում (արվեստի բնագավառներ և ժանրեր), Տիեզերքի բազմազան արտացոլման ուղիները՝ ոճեր, հոսանքներ, գեղարվեստական պատկերավորման միջոցներ, Տեխնիկական առաջընթացի ազդեցությունը արվեստի վրա, Պատկերման նոր տարրերի որոնում:

**Թեմատիկ միավոր. Մարդը արվեստում**

Առաջարկվող թեմաներ. Մարդու պատկերումը և հավատալիքներ ու պատկերացումներ, Արվեստը՝ անհատական իրացման հնարավորություն, Ես՝ մշակույթի մաս, Ինքնարտահայտում, հույզեր, զգացմունքներ, գաղափարներ, հայացքներ, պատկերացումներ, Ինքնարտահայտման ժամանակակից ձևեր:

**Թեմատիկ միավոր. Հասարակությունը և արվեստը**

Առաջարկվող թեմաներ. Արվեստը՝ պատմական հիշողություն, ինչ և ինչպես է մեզ պատմում արվեստը, Մշակութային ժառանգություն, Կենցաղային և գեղագիտական նպատակ, Արվեստը անհրաժեշտություն, թե՞ շքեղություն, Արվեստը՝ ազդեցության միջոց (մոնումենտալ արվեստ, պաստառ, գովազդ, փողոցի նկարչություն, արվեստը՝ որպես գործողություն և այլն):

**X դասարան.**

**Թեմատիկ միավոր. Վրացական արվեստը համաշխարհային արվեստի կտրվածքում**

Ուսումնական թեմաներ.

1. Նախապատմական դարաշրջանի արվեստը,
2. Հին քաղաքակրթությունների արվեստը և բրոնզեդարյան Վրաստանը,
3. Հնագույն դարաշրջանի համաշխարհային և Վրաստանի արվեստը,
4. Միջնադարյան քրիստոնեական և իսլամական աշխարհի արվեստը և Վրաստանը,
5. Վերածննդի դարաշրջանը և ժամանակակից վրացական արվեստը,
6. XVII-XIX դդ. արվեստը և Վրաստանը,
7. Մոդեռնիզմը և ժամանակակից արվեստը աշխարհում և Վրաստանում:

**Աստիճանի հանգուցային հարցեր**

Աստիճանի հանգուցային հարցերը չափորոշչի հասկացությունները կապում են արդյունքների հետ:

- Ի՞նչ է արվեստը:
- Ինչո՞ւ են մարդիկ ստեղծում արվեստի նմուշներ:
- Ինչպե՞ս և ինչո՞ւ էր փոխվում արվեստի նպատակը:
- Ինչպե՞ս է արվեստը ազդում մարդու և հասարակության կյանքի վրա:
- Ինչպե՞ս են հասարակության պահանջներն ու հետաքրքրություններն ազդում արվեստի վրա:
- Ի՞նչ կարող ենք փոխանցել և հասկանալ արվեստի գործերի միջոցով:
- Ինչո՞ւ եմ սովորում Կերպարվեստ և կիրառական արվեստ առարկան:
- Ինչի՞ համար և ինչպե՞ս եմ օգտագործում կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման սկզբունքները, տեխնիկան, նյութերը և գործիքները:

**գ) Մեթոդական կողմնորոշիչներ**

Չափորոշչի այս մասում սահմանված են, թե ինչ սկզբունքների հիման վրա պետք է վարել ուսանում-ուսուցման գործընթացը: Ինչպես նաև՝ տրված են համառոտ հրահանգներ այն մասին, թե ինչպես պետք է պլանավորվի կոնկրետ ուսումնական միավորի՝ թեմայի ուսանում-ուսուցումը:

Կերպարվեստի և կիրառական արվեստի ուսանում-ուսուցումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների պահպանմամբ.

ա) Ուսանում- ուսուցումը պետք է նպաստի աշակերտի մոտիվացմանը և ներքին ջանքերի ակտիվացմանը:

բ) Ուսանում-ուսուցումը պետք է նպաստի գիտելիքների աստիճանական կառուցմանը՝ հիմնվելով նախապես ունեցած գիտելիքների վրա:

գ) Ուսանում-ուսուցումը պետք է նպաստի գիտելիքների փոխկապակցմանը և կազմակերպմանը:

դ) Ուսանում-ուսուցումը պետք է ապահովի ուսանման ռազմավարությունների տիրապետում (սովորել սովորել):

ե) Ուսանում-ուսուցումը պետք է ներառի գիտելիքների բոլոր երեք կատեգորիաները՝ դեկլարատիվ, ընթացակարգային և պայմանի հետ կապված:

Ուսանում- ուսուցման գործընթացում աշակերտից չի պահանջվում ստեղծել գեղարվեստական բարձրարժեք գործեր: Իրարից պետք է տարբերակվեն «ընդունակությունն» ու «ստեղծագործականությունը»: Ստեղծագործական աշխատանքը / արդյունքը ինքնարտահայտման,

ինքնաիրացման միջոց է, չնայած ավելի հաճախ, այս իմաստով, հենց ստեղծման գործընթացն է ավելի կարևոր, այսինքն՝ հետազոտության, բացահայտման, փորձարկման գործընթացը, որը մեծագույն արժեք ունի, և ոչ թե՝ արդյունքը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի ժամանակակից նյութերին, տեխնիկային, տեխնոլոգիային (ներառյալ թվային) և ընթացակարգին, որն աշակերտը կարող է ակտիվորեն օգտագործել ապագայում և ամենօրյա կյանքում:

Աշակերտը պետք է նաև տիրապետի ստեղծագործական և կազմակերպչական գործունեության պլանավորմանը և դրանց իրականացման ունակություններին՝ օգտագործելով մի շարք ռազմավարություններ, զարգանան նրա սոցիալական, հաղորդակցման և թիմային աշխատանքի ունակությունները:

Մշակութային ժառանգությանը ծանոթանալու նպատակով պետք է կազմակերպվեն էքսկուրսիաներ թանգարաններ և պատկերասրահներ, պատմական հուշարձաններ, հանդիպումներ արվեստի ականավոր գործիչների հետ և այլն: Աշակերտը պետք է մասնակցի դասարանական և դպրոցական ցուցահանդեսներին, ներկայացումներին, ակցիաների, տոնակատարությունների և այլ միջոցառումների: Պետք է օգնություն ցուցաբերի կրտսեր դասարանցիների տոնակատարությունների ձևավորմանը, գույքի նորոգմանը, դասարանի կազմակերպմանը և այլն:

Առարկայի արդյունքներից բացի, Ազգային ուսումնական պլանի նպատակներից ուսանում-ուսուցման և գնահատման նպատակակետ պետք է դառնան նաև հետևյալ համապիտանի ունակություններն ու արժեքները:

| | |
|---|---|
| Քննադատական մտածողություն | Փաստերի, պատկերացումների, կարծիքների քննադատական քննարկում և վերլուծություն:<br>Հարցերի ձևակերպում և դրանց պատասխանների որոնում:<br>Փաստարկված դատողություն, այսինքն ՝ սեփական կարծիքների հիմնավորում՝ բերելով համապատասխան փաստարկներ, օրինակներ:<br>Խելամիտ ընտրության կատարում և դրա (ընտրության) հիմնավորում: |
| Համագործակցություն | Աշխատանքի հավասար բաշխում և կատարում խմբային/թիմային աշխատանքի ժամանակ:<br>Խմբում/թիմում տարբեր գործառույթներ կատարելու պատրաստակամություն:<br>Տարբեր գաղափարների, տեսակետների կառուցողական քննարկում:<br>Ռեսուրսների, կարծիքների, գիտելիքների փոխանակում՝խնդիրները համատեղ լուծելու, որոշումները համատեղ կայացնելու նպատակով: |
| Էթիկա | Էթիկական նորմերի պահպանում:<br>Համերաշխության զգացում:<br>Ապրումակցում:<br>Տարբեր լինելու ընդունում:<br>Սեփական սոցիալական գործողությունների համար պատասխանատվության գիտակցում: |

| | |
|---|---|
| Հետազոտություն | Հետազոտական խնդրի, հետազոտական ընթացակարգերի, տվյալներ գտնելու ուղիների և հաշվառման ձևերի սահմանում, համապատասխան ռեսուրսների ընտրություն:<br>Հետազոտության իրականացում, տվյալների գրանցում և տարբեր ձևերով ներկայացում/կազմակերպում:<br>Տվյալների վերլուծում, փաստարկված դատողության հիման վրա եզրակացություններ անել, հետազոտության արդյունքների գնահատում:<br>Հետազոտական աշխատանքներ կատարելիս՝ ժամանակի էթիկայի և անվտանգության նորմերի պահպանում: |
| Սովորել սովորել, ինքնուրույն գործունեություն | Ակտիվության/առաջադրանքի արժեքի որոշում. աշակերտը պետք է տեսնի, թե ինչ է իրեն ավելացնելու ակտիվության կատարումը՝ ինչ անձնական կամ սոցիալական օգուտ կտա իրեն:<br>Ակտիվության/առաջադրանքի պլանավորում՝ հասկանալ պահանջները և որոշել այն կատարելու համար անհրաժեշտ գիտելիքները, որոշել աշխատանքը հաջող կատարելու չափանիշները, առանձնացնել իրականացվելիք աշխատանքի փուլերը, կանխատեսել, թե ինչն է ավելի հեշտ, ինչը՝դժվար, ինչի մեջ կունենա օգնության կարիք, պատշաճ կերպով ընտրել ռազմավարություններն աշխատանքի յուրաքանչյուր փուլի համար:<br>Ուսանման գործընթացի մշտադիտարկում՝ մտածել ուսումնական գործընթացի մասին, բացահայտել այն պայմաններն ու գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են առաջընթացը, համապատասխան միջոցներ ձեռնարկել առաջընթացին նպաստելու համար: Ինքնագնահատում՝ուժեղ և թույլ կողմերը պարզելու համար, թույլ կողմերը հզորացնելու համար ուղիների նախանշում:<br>Սոցիալ-հուզական կառավարում՝նվազագույնի հասցնել նյարդայնությունը, ըստ անհրաժեշտության՝ օգնություն խնդրել, ինքդ քո մեջ դժվարությունների հաղթահարման ռեսուրսներ գտնել:<br>Սխալների նկատմամբ դրական վերաբերմունք զարգացնել և այն որպես առաջխաղացման աղբյուր օգտագործել:<br>Առանձին գործունեության համար հատկացված ժամանակն արդյունավետ օգտագործել: |
| Պատասխանատվություն | Դպրոցական գործունեությունների մեջ (դպրոցական կյանքում) ստանձնած պարտավորությունները կատարել:<br>Աշխատանքը սահմանված ժամկետում ավարտել և հանձնել:<br>Կառավարել սեփական վարքը, պատասխանատվություն ստանձնել սեփական արարքների համար: |

| | |
|---|---|
| Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում | Ցանցային որոնում (օրինակ՝ տարբեր ժամանակների և մշակույթների արվեստի նմուշների, արվեստի ստեղծագործության և այլ. մասին տեղեկությունների հայթայթում՝ վերլուծության, մեկնաբանության և գնահատման միջոցով): Google Arts & Culture-ի միջոցով սեփական պատկերասրահի ստեղծում: Աշխատությունների ստեղծում, մշակում՝ համակարգչային նկարչական/գրաֆիկական ծրագրերի օգտագործմամբ: Կայքէջի/բլոգի ստեղծում և ուսումնառության գործընթացում իրականացված տարբեր նախագծերի տեղադրում կայքում/բլոգում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում (օրինակ՝ Word, PowerPoint)՝ ուսումնական նյութեր և տարբեր տեսակի էլեկտրոնային տեքստեր մշակելու համար: |
| Գրագիտություն | Բանավոր և գրավոր խոսքի միջոցով տեղեկատվություն ստանալու, մշակելու, հասկանալու, համակարգելու, վերլուծելու-մեկնաբանելու և ներկայացնելու-կիսվելու ունակություն: |

Ուսանման կարողությունները բարելավելու համար անհրաժեշտ է հոգ տանել մետակոգնիտային հմտությունների զարգացման մասին: Այս նպատակով ուսուցիչը պետք է պարբերաբար կատարի երեք տեսակի գործողություններ: Այս գործողություններն են.

**Ռազմավարությունների մոդելավորում.** Ուսուցիչը առաջադրանքը կատարում է աշակերտների հետ և առաջադրանքի կատարման ընթացքում «բարձրաձայն մտածում է» այն մասին, թե ինչպես կատարի այս գործունեությունը (օրինակ ՝ լավ ծանոթանալ պայմանին և դիտարկել, թե ինչ է այն պահանջում, պայմանն ունի՞ արդյոք կից նյութ և այլն):

**Նախորդող մետակոգնիտային դադար, այսինքն՝ առաջադրանքը կատարելուց առաջ մտածել և դատողություն անել կատարվելիք քայլերի մասին:** Այն բանից հետո, երբ աշակերտները կծանոթանան առաջադրանքի պայմանին, կատարել կտանք մետակոգնիտային տիպի այսպիսի առաջադրանք. նրանք խմբով պետք է որոշեն այն ուղին, որով կկատարեն առաջադրանքը, մասնավորապես՝ մանրամասնորեն նկարագրել առաջադրանքի կատարման փուլերը (ինչ են անելու, ինչից հետո և այլն), ինչպես նաև այն ռազմավարությունները, որոնք նրանք կօգտագործեն յուրաքանչյուր փուլում: Խմբերը պետք է ներկայացնեն իրենց աշխատանքները և դատողություն անեն ընտրված ուղու կամ ռազմավարության նպատակահարմարության մասին:

**Հետագա մետակոգնիտային դադար, այսինքն՝ հանձնարարությունից հետո մտածել և դատողություն անել կատարված քայլերի մասին:** Նրանից հետո, երբ աշակերտները որոշակի առաջադրանք կկատարեն, նրանք պետք է վերհիշեն և նկարագրեն անցած ուղին. ինչն ինչից հետո են արել, ինչն են դժվար արել կամ՝ ինչը հեշտ: Կատարված գործողությունները նկարագրելու հետևանքով աշակերտները կգիտակցեն այն փաստը, որ նպատակին հասնելու համար գոյություն ունեն տարբեր ուղիներ և եղանակներ, որոնց մասին պետք է մտորեն մինչև առաջադրանքը կատարելը (օպտիմալ որոշում կայացնելու համար): Մետակոգնիտային դադարը զարգացնում է աշակերտների սովորելու կարողությունները և բարձրացնում սովորելու գործունակությունը:

**Տարեկան ուսումնական ծրագրի և ուսումնական թեմայի կառուցման սկզբունքները**

Ազգային ուսումնական պլանի աստիճանային առարկայական չափորոշիչները սահմանում են պարտադիր առարկայական պահանջները (այն, ինչ պետք է կարողանա և ինչ պետք է իմանա աշակերտը): Դրանց հիման վրա պլանավորվում են տարեկան ծրագրերը, որոնք ցույց են տալիս չափորոշչի պահանջները իրացնելու ուղիները:

Տարեկան ծրագրերը պետք է պլանավորվեն ուսումնական պարտադիր թեմաների միջոցով: Ուսումնական թեման հանդիսանում է գործառնական համատեքստ, որը չափորոշչի մասերի ինտեգրված և փոխկապակցված ուսուցման հնարավորություն է տալիս: Քանի որ արդյունքները հանդիսանում են առարկայի դասավանդման երկարաժամկետ նպատակներ, **յուրաքանչյուր թեմայի շրջանակներում պետք է մշակվեն չափորոշչի բոլոր արդյունքները:** Ուստի ուսումնական թեմաների փոփոխմամբ կփոխվեն համատեքստերը, բայց չեն փոխվի սովորելու նպատակները, որոնք չափորոշչի արդյունքների տեսքով են ձևակերպված (արդյունքն ինքնին չի հանդիսանում անկախ ուսումնական միավորը՝ թեման):

**Ուսումնական թեմայի պլանավորման համար կիրառվում են հետևյալ բաղադրիչները.**

| |
|---|
| **Ուսումնական թեմա /թեմատիկ միավոր** |
| Ուսումնական թեման հանդիսանում է համատեքստ, որը չափորոշչի արդյունքները, նպատակային հասկացությունները կամ կոնկրետ հարցերը ինտեգրված և փոխկապակցված ուսուցանելու հնարավորություն է տալիս: Յուրաքանչյուր թեմայի շրջանակներում, հնարավորության սահմաններում, պետք է մշակվեն չափորոշչի բոլոր արդյունքները: |
| **Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ** |
| Թեմայի հետ կապված կայուն պատկերացումների գործառույթն է աշակերտի մոտ պատկերացում ստեղծել ուսումնասիրվող թեմայի ուրվագծերի մասին (թեմատիկ կայուն պատկերացումները որակապես տարբերվում են նպատակային հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներից): |
| **Արդյունքներ, նպատակային հասկացություններ և հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ** |
| Արդյունքները, նպատակային հասկացությունները և դրանց հետ կապված կայուն պատկերացումները պատասխանում են հարցին.<br>Ինչ երկարաժամկետ նպատակով ենք աշակերտին սովորեցնում թեման: |
| **Առարկայական հարցեր և ենթահասկացություններ** |
| Տարեկան թեմաների շրջանակներում առանձնացվում են առարկայական հարցերը: Առարկայական հարցերի ուսուցումը ինքնանպատակ չէ: Առարկայական հարցերի միջոցով սահմանվում է, թե կոնկրետ ինչի վրա պետք է աշխատի աշակերտը թեմայի շրջանակներում: Հիմնվելով հարցերի վրա՝ սահմանվում է նաև համալիր առաջադրանքի պայմանը, ինչն աշակերտին օգնում է հասկանալ նպատակային հասկացությունը և դրա  հետ կապված կայուն պատկերացումները: |
| **Համալիր առաջադրանք** |
| Համալիր/նախագծային առաջադրանքներն այնպիսի ակտիվություններ են, որոնց կատարումը պահանջում է տարբեր գիտելիքների ինտեգրված կիրառում գործառնական համատեքստերում: Համալիր առաջադրանքը (նրա հետ սերտորեն կապված կառուցվածքային միավորների հետ՝ հարց, ենթահասկացություն, հանգուցային հարց, գնահատման չափանիշ) թեմայի շրջանակներում կատարում է միջանկյալ նպատակի գործառույթ: |

| **Հանգուցային հարցեր** |
|---|
| Թեմատիկ հանգուցային հարցերը բխում են աստիճանային հանգուցային հարցերից և պատասխանում են հարցին. Ինչի՞ մասին պետք է մտածի աշակերտը համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Դրանց գործառույթն է. <br>• Ակտիվացնել աշակերտի ունեցած նախնական գիտելիքը, բորբոքել հետաքրքրասիրություն, խթանել նոր գիտելիքի ձեռքբերման ցանկություն: <br>• Ապահովել ուսումնական թեմայի արդյունքին միտված ուսանում-ուսուցում: <br>• Թեմայի ուսանում-ուսուցման գործընթացում միջանկյալ քայլեր/փուլեր սահմանել: <br>Հանգուցային հարցը հանդիսանում է կազմակերպիչ տարր, որը ուսումնական թեմայի շրջանակներում կատարում է դաս(եր)ի նպատակի դեր: |
| **Ակտիվություններ և ռեսուրսներ** |
| Թեմատիկ մատրիցայում ակտիվություններն ու ուսումնական ռեսուրսներն ընտրվում են, որպեսզի հեշտացվի աշակերտի աշխատանքը համալիր առաջադրանքի վրա, որի կատարումը թեմայի շրջանակներում ունի միջանկյալ նպատակի դեր: |
| **Գնահատման ստուգիչներ** |
| Գնահատման ստուգիչները բխում են չափորոշչի արդյունքներից և ցույց են տալիս, թե ինչ պետք է կարողանա աշակերտը կոնկրետ թեմայի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ ստուգիչները հանդիսանում են կոնկրետ թեմայի մեջ իրացված արդյունքներ: |

**Ինչպե՞ս է կառուցվում ուսումնական թեման:**

Ուսումնական թեման կառուցելու համար կարևորագույն կողմնորոշիչները չափորոշչի արդյունքներն են: Դրանք չափորոշչում պարտադիր տեսքով են սահմանված:

Միջանկյալ կարճաժամկետ նպատակի դեր պլանում կատարում են **համալիր առաջադրանքը** և դրա հետ սերտորեն կապված կառուցվածքային միավորները՝ **հարցը, ենթահասկացությունները, հանգուցային հարցերը և գնահատման ստուգիչները:**

Թեմայի շրջանակներում առանձնացվում են նաև **թեմատիկ կայուն պատկերացումներ:** Դրանց գործառույթն է աշակերտի մոտ պատկերացում կազմել ուսումնասիրվելիք թեմայի ուրվագծերի մասին:

**Ուսումնական թեմայի կառուցման քայլերը**

| |
|---|
| Քայլ 1. Թեմատիկ կայուն պատկերացումների սահմանում: |
| Քայլ 2. Թեմայի շրջանակներում մշակվելիք նպատակային հասկացություններին համապատասխան հարցերի/ենթահասկացությունների սահմանում: |
| Քայլ 3. Առարկայական հարցերին և նպատակային հասկացություններին համապատասխան համալիր առաջադրանքի/առաջադրանքների պայմանի սահմանում: |
| Քայլ 4. Համալիր առաջադրանքին համապատասխան հանգուցային հարց/հարցեր տալ և գնահատման չափանիշ ընտրել: |
| Քայլ 5. Ակտիվություններ և ռեսուրսներ ընտրել, որոնք աշակերտին կօգնեն կատարել համալիր առաջադրանքը: |

**դ) Գնահատում**

Դասարանական գնահատումը պետք է համապատասխանի Ազգային ուսումնական պլանի առաջին բաժնի 7-րդ գլխում սահմանված գնահատման սկզբունքներին, նպատակներին ու խնդիրներին:

Ուսանման որակի բարելավմանը նպաստելու համար առաջնահերթություն պետք է շնորհվի զարգացնող գնահատմանը, որն աշակերտին գնահատում է իր իսկ նախապես ունեցած գիտելիքի համեմատ, չափում է նրա անհատական առաջընթացը, ինչը նրան գիտելիքը աստիճանաբար կառուցելու հնարավորություն է տալիս:

Կարևոր է, որ աշակերտն ինքը ներգրավված լինի զարգացնող գնահատման գործընթացի մեջ: Ուսանման գործընթացի գնահատումը աշակերտի մոտ կմշակի ինքնուրույն սովորելու հմտություններ ու կարողություններ, կօգնի յուրացնել սովորելու ռազմավարությունները, հնարավորություն կտա գիտակցաբար նպաստելու սեփական առաջընթացին և հաջողությանը: Գնահատման մեջ ներգրավվելու հիմնական նպատակը հանդիսանում է աշակերտի կողմնորոշվելը ուսանման գործընթացի մեջ, ինչը նրան կսովորեցնի այս գործընթացները գիտակցված և ինքնուրույն կառավարել:

**Ամփոփիչ (զարգացնող և որոշող) գնահատում**

Ամփոփիչ գնահատման համար օգտագործվում են համալիր, համատեքստ ունեցող առաջադրանքներ, որոնց կատարումը պահանջում է չափորոշչով սահմանված գիտելիքի և կարողությունների ինտեգրված և գործառնական կիրառում: Այս առաջադրանքները գնահատելու համար օգտագործվում են գնահատման խորագրեր, այսինքն՝ չափանիշների ցանց:

Յուրաքանչյուր ուսումնական թեմա մշակելուց հետո աշակերտին հանձնարարվում է ամփոփիչ առաջադրանք ներկայացնել: Հետևաբար, ամփոփիչ առաջադրանքների նվազագույն քանակը տարվա ընթացքում համընկնում է պարտադիր ուսումնական թեմաների քանակին:

**Տիպիկ առաջադրանքներ ամփոփիչ գնահատման համար**

Ստորև առաջարկված է տիպիկ առաջադրանքների լայն ընտրություն: Ամփոփիչ գնահատման համար ուսուցիչը և/կամ աշակերտը կընտրեն առաջադրանքի ցանկալի տեսակը/տեսակները՝

- Գործնական աշխատանք՝ աշխատությունների ստեղծում.
- Ցուցահանդես.
- Նախագիծ.
- Զեկուցում-ռեֆերատ.

- Աշխատության ներկայացում.
- Որոշակի դարաշրջանի, արվեստի նմուշի վերլուծում.
- Մտածողական կարողությունների ստուգմանը միտված թեստ
- և այլն:

**Պահանջներ, որոնք պետք է բավարարի ամփոփիչ որոշող գնահատման համար հատկացված առաջադրանքը.**

- Առաջադրանքի յուրաքանչյուր տեսակին պետք է կից տրված լինի իր գնահատման ընդհանուր խորագիրը:
- Առաջադրանքի գնահատման խորագիրը, բացի գնահատման ստուգիչներից, պետք է հիմնվի Ազգային ուսումնական պլանի համապիտանի կարողությունների և արժեքների վրա:
- Ընդհանուր խորագիրը պետք է ճշգրտվի կոնկրետ առաջադրանքի պայմանի և անցած նյութի նախատեսմամբ:
- 10 միավորը պետք է բաշխվի խորագրի մեջ ներգրավված չափանիշների վրա:

**Գնահատման խորագրի հնարավոր ձև**

| | | |
|---|---|---|
| **Դասարան**<br>**Աշակերտի անուն, ազգանուն** | | |
| **Թեմա** | | |
| **Առաջադրանքի պայմանը** | | |
| **Գնահատման չափանիշներ** | **Միավորներ** | **Մեկնաբանություն** |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

**ՏԵՂԵԿԱՏՈՒ**

**Հիմնական տերմինները և դրանց բացատրությունը**

**Արվեստի բնագավառներն ու տեսակները**

**Նկարչություն.**

**Գեղանկարչություն.** մոնումենտալ գեղանկարչություն (որմնանկար, խճանկար), հաստոցային գեղանկարչություն, մանրանկարչություն, սրբապատկերագրություն:

**Գրաֆիկա.** հաստոցային գրաֆիկա, տպագիր գրաֆիկա:

**Քանդակագործություն** – տարբեր նյութերից պատկերի կերտման և հատման արվեստ:

**Քանդակի տեսակները.**

կլոր քանդակ, ռելիեֆ (հարթաքանդակ, բարձրաքանդակ):

**Ճարտարապետություն.** պաշտամունքային, պաշտպանական, վարչական, քաղաքացիական, ինդուստրիալ, հուշային, լանդշաֆտային:

**Դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառներ.** բոլոր բնագավառները, որոնք ստեղծում են դիզայնով առանձնացող կենցաղային նշանակության պատրաստվածք՝ կահույք, գործվածքներ, սպասք, գործիքներ, հագուստ, տարբեր տեսակի զարդեղեն և այլն:

**Կերպարվեստի ժանրերը**

**Դիմանկար** – մարդու կամ մարդկանց խմբի պատկեր

**Բնանկար** – շրջակա միջավայրի տեսարան

Մարինա – ծովի տեսարան

Վեդուտա – XVII դարի Վենետիկում հանրաճանաչ ուրբանային բնանկար

**Նատյուրմորտ – անշունչ առարկաներ պատկերող ժանր**

**Վինիտաս** – նատյուրմորտի տեսակ՝ ունայնություն ակնարկող ատրիբուտներով

**Կենցաղային** – ամենօրյա կենցաղն արտացոլող ժանր

Բոդեգոնես – XVII դարում հանրաճանաչ, պանդոկների և հասարակ մարդկանց ճաշելու տեսարաններ

**Պատմական** – պատմական անձանց և իրադարձություններ արտացոլող ժանր

Մարտանկարչական – ճակատամարտ արտացոլող ժանր

Կրոնական – կրոնական պատմություններ և կերպարներ արտացոլող ժանր

Դիցաբանական – դիցաբանական պատմություններ և կերպարներ արտացոլող ժանր

**Կերպարվեստի հիմնական տարրերը**

գիծ, գույն, ձև (հարթ և ծավալային), ֆոնի և պատկերի փոխհարաբերություն, լուսաստվեր, ֆակտուրա:

**Կերպարվեստի հիմնական սկզբունքները**

կոմպոզիցիա, հավասարակշռություն, համաչափություն-անհամաչափություն, շեշտադրում, ռիթմ, կոնտրաստ, հեռանկար (օդային, գծային), ռակուրս, ստատիկա-դինամիկա, ներդաշնակություն, համաչափություն / անհամաչափություն, մասշտաբ, զարդանախշ:

## Թեմատիկ բաժին 1. Հասարակությունը և արվեստը (16+2 ժամ)

***Թեմաների հաջորդականությունը Աշակերտի գրքում.***

Ուսումնական թեմա. Արվեստը հասարակության ծառայության մեջ....................................7

1. Ժամանակակից հասարակության մարտահրավերները ................................................8
2. Արվեստը քաղաքականության ծառայության մեջ ..........................................................10
3. Արվեստն ընդդեմ պատերազմի ..........................................................................18
4. Արվեստը սոցիալական խնդիրների մասին ....................................................................26
5. Արվեստը կրոնի ծառայության մեջ ..........................................................................34
6. Նոր պատկերավորման լեզու ..........................................................................40
7. Քրիստոնեական Վրաստանը ..........................................................................52
8. Իսլամական արվեստը ..........................................................................62
9. Նկարչություն ..........................................................................68
10. Պարսկական խեցեղենը ..........................................................................76
11. Արվեստը կրթության ծառայության մեջ (գեղագրություն)..............................................78
12. Մանրանկարչություն ..........................................................................80
13. Քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետություն .......................................90
14. Արևմտյան Եվրոպայի պաշտամունքային ճարտարապետություն ............................100
15. Կրոնական դեկոր ..........................................................................108

## ԹԵՄԱՏԻԿ ՄԻԱՎՈՐ 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

| **Թեմա՝ Արվեստագետը հասարակության ծառայության մեջ** | Ժամերի ենթադրյալ քանակը՝ 16 ժամ + 2 ժամ |
|---|---|
| **Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ** | |
| • Կերպարվեստը ոչ բառային հաղորդակցության ձևերից մեկն է:<br>• Արվեստի գործերի միջոցով մենք կարող ենք շատ բան իմանալ տարբեր դարաշրջանների և մշակույթների հասարակությունների մասին:<br>• Արվեստի ստեղծագործության արտաքին տեսքի վրա ազդում են պատմական իրավիճակը, քաղաքական կարգը, սոցիալական վիճակը, կրոնը և ավանդույթները:<br>• Արվեստը տարբեր դարաշրջաններում ծառայում է քաղաքականությանը, կրոնին և արտացոլում մարդկանց սոցիալական պահանջմունքները:<br>• Արվեստը գեղարվեստական լեզվով (պատկերավորման տարրերով ու սկզբունքներով) մեզ պատմում է, թե ինչպիսին էր հասարակությունն այս կամ այն դարաշրջանում:<br>• Պատմական դարաշրջանների փոփոխությունները փոխել են գեղարվեստական սկզբունքները, քանի որ ի հայտ են եկել նոր նյութեր, տեխնոլոգիաներ և ստեղծագործական գաղափարներ:<br>• Արվեստը կարևոր դեր ունի հասարակության կյանքում:<br>• Արվեստի գործի միջոցով կարող եմ փոխանցել իմ վերաբերմունքը ցանկացած իրադարձության նկատմամբ:<br>• Վաղ դարաշրջանների գեղարվեստական փորձի իմացությունը կօգնի ինձ կատարել իմ սեփական ստեղծագործական ընտրությունը: | |
| **Թեմատիկ միավորի շրջանակներում մշակվելիք թեմաներ և ենթաթեմաներ** | |
| 1. Քննարկել արվեստի գործը պատմական-կրոնական-սոցիալական համատեքստում<br>2. Կերպարվեստի ժանրերը (պատմական, մարտանկարչական, կրոնական, կենցաղային) և դրանց գաղափարական գործառույթը<br>3. Ագիտացիան և քարոզչությունն արվեստում<br>4. Դարաշրջանը (միջնադարը) և նրա արվեստի առանձնահատկությունները<br>5. Քրիստոնեական և իսլամական պաշտամունքային ճարտարապետությունը և դրա դեկորը | |

| Նպատակային հասկացություններ և դրանց հետ կապված կայուն պատկերացումներ | Հարց և ենթահարցեր | Հանգուցային հարց/հարցեր | Համալիր առաջադրանքներ (տեսակներ) |
|---|---|---|---|
| **Կերպարվեստի գեղարվեստական-պատկերավորման տարրերը և սկզբունքները.**<br>• Արվեստի գործ ստեղծելու համար մարդ օգտագործում է արվեստի լեզուն, այսինքն՝ կերպարվեստի տարրերը և սկզբունքները։<br>• Կերպարվեստի լեզուն մենք օգտագործում ենք ոչ միայն աշխատություն ստեղծելիս, այլև՝ արվեստի գործերի մասին տպավորություններ, գաղափարներ, կարծիքներ արտահայտելիս։<br><br>**Կերպարվեստի տեխնիկան.**<br>• Արվեստագետը նյութը և տեխնիկան ընտրում է՝ ըստ գեղարվեստական մտահղացման։<br>• Մարդկության զարգացման հետ միասին զարգանում, փոփոխվում և առաջանում էին արվեստի նոր ձևեր, նյութեր և տեխնիկա։<br><br>**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**<br>• Արվեստն առօրյա կյանքում հանդիպում է տարբեր տեսքով։<br>• Արվեստի գործերը ստեղծվում են տարբեր նպատակով և նշանակումով։<br>• Արվեստի բաժանումը բնագավառների պայմանավորում են օգտագործված նյութը, տեխնիկան կամ նպատակը։ | **Տարրեր**. (գույն. կոնտրաստային, գիծ, ֆոնի և պատկերի փոխհարաբերություն ը)։<br><br>**Սկզբունքներ.** (ստատիկա-դինամիկա, հակադրություն, կոլորիտ, շեշտադրում, զարդանախշ, անհամաչափություն, ներդաշնակություն)։<br><br>**Բնագավառներ**. նկարչություն, սրբանկարչություն, որմնանկարչություն, վիտրաժ, գրաֆիտ, մանրանկար, գրաֆիկա, քանդակ, լուսանկարչություն, թվային մեդիա։<br><br>**Ժանրեր.** պատմական, կրոնական, կենցաղային։<br><br>**Տեխնիկա**. նկարչություն, որմնանկարչություն, | • Ի՞նչ կարող ենք իմանալ տարբեր դարաշրջանների և մշակույթների հասարակությունների մասին արվեստի միջոցով։<br>• Ի՞նչ գործոններ են ազդում արվեստի գործի արտաքին տեսքի վրա։<br>• Ինչպիսի՞ գեղարվեստական միջոցներով է արվեստը մեզ պատմում պատմություն։<br>• Ինչի՞ն է ծառայում արվեստը տարբեր դարաշրջաններում։<br>• Ինչո՞վ է իրարից տարբերվում տարբեր ժամանակների հասարակությունների կողմից ստեղծված արվեստը։<br>• Ի՞նչ դեր ունի արվեստը հասարակության կյանքում։<br>• Ի՞նչ դեր է կատարում հասարակությունը արվեստի ձևավորման մեջ։<br>• Ինչպե՞ս կարող ենք արվեստի գործի միջոցով փոխանցել | **Հետազոտություն** (<u>ուսուցչի ընտրությամբ</u>).<br>• Տարբեր դարաշրջանների աշխատանքներ գտնել, թեմատիկորեն տեսակավորել, կազմակերպել՝ որպես թվային ալբոմ, պատրաստել զեկույց, ֆոտոռեպորտաժ։<br><br>**Աշխատության վերլուծություն** (<u>պարտադիր</u>)։<br>• Տարբեր դարաշրջանների միևնույն թեմայի շուրջ կատարված աշխատանքների համեմատական վերլուծություն, մեկնաբանություն և գնահատում։<br>• Դարաշրջանների, գեղարվեստական լեզվի համեմատական T գծապատկերների կազմում։<br><br>**Գործնական աշխատանք**. (<u>ուսուցչի ընտրությամբ</u>).<br>• Ագիտացիայի պաստառ<br>• Տեքստի նկարազարդում<br>• Դրոշմված ռելիեֆ<br>• Ծեփակերտում<br>• Գեղագրական աշխատություն<br>• Զարդանախշ (արաբեսկա)<br>• Ստեղծել որմնանկարի իմիտացիա |

| | | | |
|---|---|---|---|
| • Յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է կերպարվեստի որևէ պատկերավորման միջոց կամ եղանակ:<br>• Կերպարվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության:<br><br>**Տարբեր դարաշրջանների/մշակույթների /ուղղությունների/ոճերի արվեստին բնորոշ հատկություններ/ գեղարվեստական բնութագրիչներ.**<br>• Բոլոր դարաշրջանների, ուղղությունների, ոճերի արվեստն ունի իր առանձնահատկությունները, որը պայմանավորում են տարբեր գործոններ:<br>• Արվեստի ընթացող փոփոխությունները (արվեստի նպատակը, նրա նկատմամբ վերաբերմունքը, գեղարվեստական-պատկերավորման տարրերը, սկզբունքները, տեխնիկան, նյութը, գործիքները, բնագավառները, ձևերը և այլն) ուղղակիորեն առնչվում են մարդկության պատմության մեջ ընթացող փոփոխությունների հետ (աշխարհայացք, տեխնիկական առաջընթաց, համաշխարհայնացում և այլն):<br>• Տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստների ձևավորման մեջ մեծ դեր է կատարում փոխազդեցությունը: Արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների և մշակույթների մասին կարելի է շատ բան իմանալ: | ծեփակերտում, թվային մեդիա, լուսանկարչություն:<br><br>**Դարաշրջան/ մշակույթ/ ընթացք/ոճ և համապատասխան արվեստի նմուշներ**.<br>բազմազան, միջնադարյան իսլամական և քրիստոնեական արվեստ: | որևէ երևույթի նկատմամբ մեր վերաբերմունքը:<br>• Ինչո՞վ կարող է մեզ օգտակար լինել այսօր վաղ դարաշրջանների գեղարվեստական փորձի իմացությունը:<br>• Ինչպե՞ս են մարդիկ օգտագործում արվեստը ինքնարտահայտման համար: | • Ստեղծել վիտրաժի իմիտացիա<br><br>***Համալիր նախագծեր***.<br>• Գրավյալ տարածքներում ապրող հասակակիցներին աջակցող ակցիայի համար պաստառների ստեղծում:<br>Կամ<br>• Պաստառ. «Ես ուզում եմ փոխել:<br>• Արվեստի միջոցով պատանեկան սերնդի խնդիրների նկատմամբ դիրքորոշման արտահայտում (ուսուցչի ընտրությամբ):<br>• Աֆորիզմների թվային և տպագիր գիրք (նկարազարդում, գեղագրություն, գլխատառեր և շրջանակների ձևավորում զարդանախշով, ռելիեֆային կամ խճանկարային շապիկ): (Անհատական և խմբային աշխատանք) (պարտադիր)<br>• Նախագիծ «տաճար» (պարտադիր):<br>Բյուզանդական, վրացական, ռոմանական և գոթական տաճարների ճակատամասերի եռաչափ նմուշօրինակների ստեղծում և համապատասխան դեկորով ձևավորում (նյութ, ֆակտուրա, վիտրաժ, կարկոլ, զարդաքանդակ և այլն) |

| Գնահատման չափանիշներ թեմատիկ միավորի համար. «Արվեստը հասարակության ծառայության մեջ |
| --- |
| **Արվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**<br>**Կերպարվեստի տեխնիկա.**<br>• Ընտրում է արվեստի ցանկալի ձևը (օրինակ՝ պաստառ, մանրակաղապար և այլն), օգտագործում է համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրեր, սկզբունքներ, նյութեր և տեխնիկա՝ մտահղացումները, վերաբերմունքը այս կամ այն իրադարձության, փաստի նկատմամբ ավելի լավ փոխանցելու համար (**Կերպ.կիր. հիմն.1, 2 , 4**):<br>• Տարբեր գեղարվեստական ոճերով աշխատություն է ստեղծում է (օրինակ՝ սխեմատիկ, ոճավորված), մտահղացմանը համապատասխան ընտրում է գեղարվեստական միջոցներ, մեթոդներ, նյութեր, տեխնիկա (**Կերպ.կիր. հիմն.**1,2):<br>• Աշխատանքում օգտագործում է այն գեղարվեստական պատկերավորման սկզբունքները, որ կիրառում էին ընտրված դարաշրջանում կամ մշակույթում ՝ մարդկանց վրա ազդեցություն գործելու համար (մասշտաբ, համամասնություն, հակադրություն, հիմնականի տարանջատում և այլն) (**Կերպ.կիր. հիմն.1, 4**):<br><br>**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**<br>**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**<br>• Վերլուծում է որևէ դարաշրջանի կամ մշակույթի արվեստի գործը և դատողություն անում, թե դրա միջոցով ինչ տեղեկատվություն է ստացել (**Կերպ.կիր. հիմն.3**):<br>• Վերլուծում է հասարակության վրա արվեստի ներգործության ձևերը և գեղարվեստական արտահայտչականության սկզբունքները (**Կերպ.կիր. հիմն.3**, 4):<br>• Դատողություն է անում արվեստի մասին, որպես հասարակության ինքնարտահայտման միջոցի, բերում է մի քանի օրինակներ (**Կերպ.կիր. հիմն.3, 4**):<br>• Դատողություն է անում մշակույթի/մշակույթների կամ դարաշրջանների փոխազդեցության մասին՝ հիմնվելով մի քանի օրինակների վրա **Կերպ.կիր. հիմն.**4):<br>• Համեմատում է երկու դարաշրջան կամ մշակույթ ՝ ըստ հասարակության վրա ազդելու միջոցների (**Կերպ.կիր.հիմն.**4): |

| **Դասեր 1-4 Միավորող թեմա. Արվեստը՝ ժամանակի հայելի** | | |
|---|---|---|
| ***Հարց և ենթահասկացություններ*** | ***Հանգուցային հարց/հարցեր*** | ***Համալիր առաջադրանքներ*** |
| **Տարրեր**.<br>գիծ, գույն, ձև, ֆոնի և պատկերի փոխհարաբերությունը:<br><br>**Սկզբունքներ**. կոմպոզիցիոն բաշխում, հիմնականի տարանջատում, հակադրություն, հարաբերակցություն, մասշտաբ, դիտման կետ:<br><br>**Բնագավառներ**.<br>գրաֆիկա (հաստոցային, տպագիր), գրաֆիտ:<br><br>**Կերպարվեստի տեխնիկա**.<br>գրաֆիկա, թվային տեխնոլոգիաներ: | • Ինչպե՞ս է արվեստը արտացոլում քաղաքական իրավիճակը:<br>• Ո՞ր գեղարվեստական սկզբունքներով են նկարիչներն արտահայտում իրենց բողոքն ընդդեմ պատերազմի:<br>• Ի՞նչ տեղեկատվություն կարող եմ ստանալ արվեստի նմուշներով տարբեր ժամանակների և երկրների հասարակություններում պատերազմի նկատմամբ վերաբերմունքի մասին:<br>• Ինչպե՞ս է արվեստը ներգրավվում ագիտացիայի և քարոզչության մեջ:<br>• Ի՞նչ բովանդակության կոչեր են արտացոլում պաստառները:<br>• Պատկերավորման ի՞նչ այլ միջոցներ և մեթոդներ է օգտագործում ագիտացիոն պաստառը:<br>• Ի՞նչ եղանակներով է արվեստը ցույց տալիս հասարակության ցավոտ կողմերը:<br>• Ինչպե՞ս կարող է արվեստը փոխել իրավիճակը՝ ի շահ հասարակության:<br>• Ինչպե՞ս կարող եմ արվեստի միջոցով փոխանցել իմ վերաբերմունքը հասարակության խնդիրների նկատմամբ: | • Գրավյալ տարածքներում բնակվող հասակակիցներին աջակցող ակցիայի համար «Մենք խաղաղություն ենք ուզում» պաստառների ստեղծում:<br>• Նկարի, հավելվածի, լուսանկարչական մոնտաժի կամ թվային կոլաժի միջոցով դեռահաս սերնդի մարտահրավերների մասին պաստառի ստեղծում: |
| **1. *Ժամանակակից հասարակության մարտահրավերները***<br><br>Ներածական խոսք (դարաշրջանների համառոտ վերլուծություն նախապես ունեցած գիտելիքի ակտիվացման համար):<br><br>**Նախապատմական արվեստը** մեզ պատմում է, որ մարդու հիմնական հուզական տպավորությունը կապված է կենդանու հետ: Նախնադարյան մարդու համար կենդանին թե՛ մրցակից էր, թե՛ սնունդ: Նա ժամեր շարունակ դիտում էր որսը և նկարում քարանձավի պատերին: Այսպես մեզ է հասել Լասկոյի, Ալթամիրայի և այլ քարանձավների պալեոլիթի նկարչությունը: | | |

**Տասսիլին Աջջերի պատի նկարները** մեզ հայտնում են, որ մարդն արդեն ընտանիացրել է կենդանուն, հորինել որսորդական և գյուղատնտեսական գործիքներ և սահմանել կախարդական ծեսեր:

***Հին միջերկրածովյան արվեստը*** փառաբանում է թագավորին:

***Հին Եգիպտոսի արվեստը*** նվիրված է հանդերձյալ կյանքին: Նրա մշակույթի մասին մեզ պատմում են դամբարաններն ու հոգու հիշատակին նվիրված տաճարները:

***Հին հունական արվեստը*** մարմնավորում է ժողովրդավարական քաղաք-պետության քաղաքացու իդեալը:

***Հռոմինը***՝ ծառայում է Հանրապետության և կայսրության ռազմական շահերին: Հռոմի հասարակության մասին պատմում են. ակվեդուկները՝ ջրանցույցները, ամֆիթատրոնները, հաղթական կամարները, շքեղ առանձնատներն ու բաղնիքները:

**Միջնադարյան արվեստը** մեծ մասամբ կրոնական է: Միջնադարը պահպանել է ամրոցներ, տաճարներ, մզկիթներ:

***Վերածննդի դարաշրջանում*** հայտնվեցին մասնավոր անձանց շքեղ պալատներ, այսպես կոչված պալացցոներ:

***Բարոկկոն*** շրջակա միջավայրին ևս անդրադարձավ՝ և բնությունը պատկերեց գեղեցիկ էտած թփերով, շատրվաններով ու պուրակներով:

***Ոչ ժողովրդավարական, տոտալիտար պետություններում***, որտեղ կառավարությունը հիմնական պատվիրատուն է, ստեղծվում են վիթխարի, մոնումենտալ վարչական շենքեր:

Յուրաքանչյուր դարաշրջան առանձնանում է իր հստակ հետաքրքրություններով: Արվեստը, որպես ժամանակի հայելի, այդ հետաքրքրությունների արտահայտիչն է:

Արվեստը մերթ քաղաքականության, մերթ կրոնի, մերթ առևտրի, մերթ ժամանցի և հանգստի ծառայության մեջ է: Հասարակությունը ստեղծում է արվեստ, իսկ արվեստը ստեղծում է այն միջավայրը, որում ապրում է հասարակությունը:

• **Քննարկում**

Քննարկման նպատակն այն է, որ աշակերտները հասնեն եզրահանգման, որ.

Արվեստը հասարակության գաղափարական արձագանքն է ընթացիկ գործընթացներին:

Հասարակության աշխարհայացքն արտացոլվում է համաժամանակյա արվեստում, իսկ արվեստը ծառայում է այդ գաղափարների տարածմանն ու կայացմանը:

Քննարկման հարցեր.

- ✓ Ինչպիսի՞ն է այսօրվա հասարակությունը:
- ✓ Ինչպե՞ս եք հասկանում՝ «Արվեստը հասարակության հայելին է» արտահայտությունը:
- ✓ Ի՞նչն է որոշում գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունը:
- ✓ Ի՞նչ և ինչպե՞ս է արվեստը պատմում մեզ հասարակության և նրա խնդիրների մասին:
- ✓ Դիտի՛ր Լե Կորբյուզիեի և Ռոտկոյի տաճարները: Ի՞նչն է հուշում, որ դրանք 20-րդ դարի գործեր են:

* Բավական է աշակերտները նկատեն, որ Լե Կորբյուզիեի և Մարկ Ռոտկոյի տաճարներն ունեն անսովոր, ոչ ավանդական ձևեր:

✓ Ինչպե՞ս եք պատկերացնում Վրաստանի պաշտամունքային ճարտարապետությունը՝ ժամանակակից հայացքների, նյութերի ու տեխնոլոգիաների նախատեսմամբ:

* Ժամանակակից պաշտամունքային ճարտարապետության ներքին հարդարանքում թվային տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված տե՛ս տեսանյութը.

Թվային նախագծում Մոնրեալի Նոտր Դամ (Կանադա) բազիլիկում:

https://www.youtube.com/watch?v=FV3XdOda3zM

## 2. Արվեստը՝ քաղաքականության ծառայության մեջ

Աշակերտները պետք է հասկանան, թե ինչ կերպ է արվեստը ծառայում քաղաքականությանը:

Լինի դա արձան, ճարտարապետական կառույց, թե եղունգի չափ մետաղադրամ, ամեն ինչ կարող է ծառայել պետության շահերին:

Հաղթական կամարների և սյուների համար լրացուցիչ ցուցադրական նյութը աշակերտներին կցուցադրի Հռոմեական և Նապոլեոնյան կայսրությունների ընդհանուր նվաճողական ոգին (հռոմեական՝ Տիտոսի կամարները, Ադրիանի, Սեպտիմիոս Սևերոսի կամարները, Մարկուս Ավրելիուսի սյունը Հռոմում, Նապոլեոնի ժամանակվա. Փարիզի հաղթական կամարը, Կարուզելի կամարը, Սյունը Վանդոմի հրապարակում):

Երբ արվեստի պատվիրատուն պետությունն է, գոյություն ունեցող քաղաքական գաղափարները հաստատելու համար արվեստը տարբեր դարաշրջաններում օգտվում է միանման գեղարվեստական սկզբունքներից (կերպարների կեցվածքներ, ժեստեր և այլն: Համեմատելով Ֆիդիասի «Օլիմպիական Զևսի» արձանը և Էնգրի «Նապոլեոնի դիմանկարը», Նիկայի անտիկ քանդակը, Դելակրուայի «Ազատությունը բարիկադների վրա» և Մուխինայի «Բանվորն ու կոլտնտեսուհին» գործերում կեցվածքներն ու ժեստերը): Աշակերտները կհասկանան, որ այդ կեցվածքներն ու ժեստերը վաղուց հաստատված են և դարձել են կարծրատիպային:

**Ծանոթություն**.

«Առողջ մարմնում առողջ հոգի» արտահայտության հետ կապված հարցի մասին՝ «Այսօրվա հեռանկարից՝ որքանո՞վ ճիշտ ես համարում այս մոտեցումը», քննարկելիս, կարևոր է, որ աշակերտներն անեն եզրակացություն, որ հին Հունաստանի այս մոտեցումը վտանգ էր ստեղծում նրանց, ովքեր այս պահանջը չէին կարող բավարարել:

Աշակերտներին պետք է բացատրեք. որ այս քարոզչական կարգախոսը ծառայում էր քաղաքացիների մեջ կրթության և ֆիզիկական կատարելության ձգտման սերմանմանը, որպեսզի պատերազմում կամ օլիմպիական մրցումներում նրանք կարողանային պաշտպանել իրենց քաղաք-պոլիսի արժանապատվությունը: Այս կանխադրույթը սխալ պատկերացում է պարունակում: Պատմությունը ցույց է տվել, որ մարդկային բանականությունն ու վեհանձնությունը կախված չեն ֆիզիկական տվյալներից:

* Պերգամոնի զոհասեղանի լուսանկարում հաղթանակի աստվածուհի Նիկայի թևավոր կերպարը պատկերված է ռելիեֆի աջ եզրին, վեր բարձրացրած ձեռքով:

* Հաջորդ գլուխներում աշակերտները կվերադառնան արվեստում կեցվածքի և ժեստերի նշանակությանը, ենթատեքստին: Այս քննարկումը կօգնի աշակերտներին հաջորդ գլուխներում ավելի լավ հասկանալ դրանց իմաստը: Պատրաստվելով տարվա վերջին նախագծին («Հանդուրժող քաղաք»)՝ նրանք պետք է տարբեր դարաշրջաններ և մշակույթներ պատկերող «թաղամասում» տեղադրեն մեկ զգեստավորված կերպար: Կեցվածքի և ժեստերի կարևորության իմացությունը կօգնի աշակերտներին ստեղծել տիպիկ կերպար):

- **Դատողություն վահանակների, պաստառների շուրջ**

✓ Ինչո՞վ են տարբերվում ագիտացիոն պաստառները գովազդային պաստառներից:
✓ Ո՞վ է այս կոչի նպատակային լսարանը:
✓ Արդյոք դա կներգործի՞ դիտողի վրա:
✓ Ի՞նչ գեղարվեստական տարրեր ու սկզբունքներ է օգտագործել հեղինակը նպատակին հասնելու համար:
✓ Ի՞նչ է նշանակում ագիտացիա:
✓ Ի՞նչ է նշանակում քարոզչություն:

**Պատասխանները**.

Ագիտացիոն պաստառի նպատակն է հասարակությանը համոզել քաղաքական դիրքորոշման ճշտության մեջ, վերահսկել մարդկանց լայն զանգվածներին, նրանց դարձնել իրենց համախոհ: Այս դեպքում թիրախային լսարանը ընտրողն է:

Գովազդային պաստառի նպատակն է զանգվածների հավանությանը արժանացնել այս կամ այն առևտրային ապրանքը, մարդկանց վերածել այդ ապրանքների սպառողների, գնորդների:

Ագիտացիոն պաստառներում երևում է հետևյալ պատկերավորման սկզբունքների օգտագործումը. **ժեստեր** (առաջ մեկնած ձեռքով, առաջնորդի ժեստեր), **մասշտաբ** (խոշոր պատկերներ), **գույներ** (կոնտրաստային, հստակ, հեռվից հեշտությամբ տեսանելի), **ձև** (մեծ, ընդհանրացված, առանց մանրամասնելու, որպեսզի պատկերը հեռվից լավ ընկալվի), **տեքստի բովանդակությունը** (կոչ՝ կարճ, լակոնիկ, տարրողունակ, հասկանալի), **տեքստի չափը**՝ մեծ, հեռվից հեշտությամբ ընկալվող), **ռակուրսը**՝ առարկաների հեռանկարային կրճատումը (պատկերը տեսնում ենք ներքևից, այն վերևից է նայում մեզ, գերիշխող է մեր նկատմամբ);

**Ագիտացիա** – բանավոր, տպագիր կամ կերպարվեստի միջոցով հասարակության քաղաքական գիտակցության վրա ազդելու, ագիտատորի օգտին նրանց համոզելու փորձ:

**Քարոզչություն** – հասարակության հայացքների վրա բառացիորեն, կարգախոսով, կերպարվեստի միջոցներով գաղափարական ճնշում: Քարոզչությունը հասարակությանը տրամադրում է միայն քաղաքականապես շահավետ, ոչ լրիվ տեղեկատվություն:

- **Հետազոտություն.**

| | |
|---|---|
| Պաստառների արտահայտչականության սկզբունքների՝ կոնտրաստային և հարակից գույների և դրանց հատկությունների ուսումնասիրություն: Գունավոր անիվի կոնտրաստային զույգերի և հարակից գույների մասին դատողություն: Փորձ գույներով:<br><br>Գույների անիվ. https://copicmarkertutorials.com/wp-content/uploads/2015/08/complimentary-color-wheel.jpg<br><br>• **Պաստառների մակագրությունների և տառատեսակների առանձնահատկությունների ուսումնասիրություն:**<br><br>Աշակերտները դատողություն են անում պաստառի պահանջներին տառատեսակի համապատասխանության մասին:<br><br>* Հետազոտության նպատակն է, որ աշակերտները նկարազարդումների և սեփական փորձարկումների դիտարկման արդյունքում հայտնաբերեն նմանություններ (կոնտրաստային գույներ, խոշոր և ընդհանրացված ձևեր, խոշոր, հստակ տառատեսակով կատարած պարզ մակագրություն և այլն):<br>Դա անելու համար աշակերտները կարող են կտրել մի քանի տառ տարբեր գույների գունավոր թերթերից, ասենք, նարնջագույն տառեր (մեկը փոքր, մեկը մեծ) և դրանք հերթագայությամբ դնել հակադիր գույնի թերթի վրա (կապույտ), ապա հարակից գույնի թերթի (կարմիր կամ դեղին) վրա և քննարկել, թե որ ֆոնի վրա է տառը ավելի հստակ երևում, ո՞ր չափի (մեծ կամ փոքր) տառն է ավելի լավ երևում տվյալ գույնի ֆոնի վրա:<br><br>• **Գործնական աշխատանք.**<br>Լուսանկարե՛ք փողոցում փակցված պաստառները և վերբեռնե՛ք դրանք ձեր բլոգում: Կիսվե՛ք հավաքածուի էլեկտրոնային ալբոմով ընկերների հետ: Քննարկե՛ք, թե որն է ավելի մեծ ուշադրություն գրավում և պատկերավորման ինչ սկզբունքներով է հասնում այդ ազդեցությանը: (Անհատական աշխատանք, տնային առաջադրանք):<br><br>• Համակարգչային նկարչական ծրագրի միջոցով ստեղծի՛ր թվային պաստառ, որում կնախատեսես մակագրության չափը, գույնը, պատկերի և ֆոնի գույնի փոխհամաձայնեցումն այնպես, որպեսզի կարգախոսը հեռվից ընթերցվի: Վերբեռնի՛ր այն քո բլոգում և կիսվի՛ր ընկերներիդ հետ: (Անհատական աշխատանք)<br><br>**3. Արվեստն ընդդեմ պատերազմի**<br><br>• **Քննարկում.**<br>✓ Ի՞նչ է արտացոլում պատմական ժանրը:<br>✓ Ի՞նչ է արտացոլում մարտանկարչական ժանրը:<br>✓ Նկարազարդումներից ո՞րն է մարտանկարչական ժանրի:<br>✓ Պատերազմի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք են արտացոլում արվեստագետները:<br>✓ Դրանցից որում է երևում բողոք, և ո՞րն է պարզապես պատմում պատերազմի փաստի մասին: | |

- ✓ Ո՞ր ժամանակաշրջանի աշխատություններն են բողոք արտահայտում պատերազմի դեմ:
- ✓ Ի՞նչ գեղարվեստական միջոցներով են տարբերվում XIX-XX դարերի պատերազմի թեմայով ստեղծված գործերը նախորդ դարաշրջանների նույն թեմայով ստեղծված գործերից:
- ✓ Ի՞նչ գեղարվեստական միջոցներով և տեխնիկայով է Ֆրանցիսկո Գոյան շեշտադրումն անում համարձակ ապստամբի կերպարի վրա:
- ✓ Համեմատի՛ր Պիկասոյի «Կոտորած Կորեայում» գեղանկարչական կտավի հետ: Ի՞նչ գեղարվեստական եղանակներով է Պիկասոյի նկարը տարբերվում կամ նման Գոյայի աշխատանքին: Ո՞րն է առավելապես ազդել ձեզ վրա:
- ✓ Հիշի՛ր մի նկար, կինոնկար կամ գրական ստեղծագործություն, որը նվիրված է Ռուսաստան-Վրաստան պատերազմին (Աբխազիայի և Օսիայի): Ի՞նչ տպավորություն թողեց այն քո վրա:

**Պատասխաններ**.

- ✓ **Պատմական ժանրն** արտացոլում է պատմական փաստը, իսկ մարտանկարչականը՝ պատմական ժանրի ենթաժանր է, որն արտացոլում է ճակատամարտի, պատերազմական գործողությունների տեսարան:
- ✓ Դասագրքում բերված նկարազարդումներից մարտանկարչական ժանրին են պատկանում հետևյալ ստեղծագործությունները. Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհի ճակատամարտը, Պոմպեյի խճանկարը, մ.թ.ա I դ., Պաոլո Ուչելլո, Սան Ռոմանոյի ճակատամարտը, 1432 թ., Պարսկական մանրանկարը, XIII դ., Նիկո Փիրոսմանի, «Ռուս-ճապոնական պատերազմը», 1906 թ.:
- ✓ Տարբեր դարաշրջանների աշխատանքները ցույց են տալիս պատերազմի նկատմամբ տարբեր վերաբերմունք: Վաղ շրջանի աշխատանքները մեզ պատմում են պատերազմի փաստի մասին, փառաբանում ռազմական հաղթանակը, իսկ ուշ շրջանի գործերում երևում է պատերազմի նկատմամբ անհաշտ վերաբերմունք:
- ✓ Գեղարվեստական ստեղծագործության արտաքին տեսքի վրա ազդում է դարաշրջանի բնույթը: Պատմական դարաշրջանների փոփոխությունը փոխեց գեղարվեստական լեզուն, քանի որ ի հայտ եկան նոր ստեղծագործական գաղափարներ:
- ✓ Արվեստագետներն իրենց բողոքն են արտահայտում պատերազմի դեմ: Քսաներորդ դարի արվեստը, պատերազմը դատապարտելու համար, օգտագործում է գեղարվեստական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են դեֆորմացիան, չափազանցումը, մասշտաբների խախտումը և այլն:
- ✓ Ֆրանցիսկո Գոյան համարձակ մարտիկի պատկերի վրա մեր ուշադրությունը կենտրոնացնում է լուսավորումով, կեցվածքով, գույնով: Գոյայի աշխատանքում կոնտրաստային լուսավորությունը դրամատիկ էֆեկտ է ստեղծում, մինչդեռ Պաբլո Պիկասոյի աշխատություններում դեֆորմացիան արտացոլում է պատերազմի կործանարար հետևանքները:

<u>Լրացուցիչ ցուցադրական նյութ մարտանկարչական ժանրի համար.</u>
Քադեշի ճակատամարտը, ռելիեֆ, հին Եգիպտոս

https://editorial01.shutterstock.com/wm-preview-1500/5850732hz/13575f1c/art-archaeology-various-shutterstock-editorial-5850732hz.jpg

Լենկ Թեմուրի ճակատամարտը եգիպտացիների հետ, պարսկական մանրանկար, 1515 թ.
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/3/36/Behzad_timur_egyptian.jpg

Լեոնարդո դա Վինչիի կորած աշխատանքի «Անգիարի ճակատամարտ»-ի Ռուբենսի կատարած կրկնօրինակը, 1603 թ.
https://en.wikipedia.org/wiki/Battle_of_Anghiari#/media/File:Peter_Paul_Ruben's_copy_of_the_lost_Battle_of_Anghiari.jpg

Ջորջիո Վազարիի «Մարչիանոյի ճակատամարտը», 1570 թ.
https://bit.ly/3eG3eWT

Անրի Ռուսո, Պատերազմ. 1894 թ.
https://commons.wikimedia.org/wiki/File:Henri_Rousseau_-_La_guerre.jpg

**Ծանոթություն**. (Աշակերտի դասագիրք, էջ 22) Հայտնի ֆրանսիացի ճանապարհորդ և լուսանկարիչ Մարկ Ռիբուն մի լուսանկարով իր բացասական վերաբերմունքն է արտահայտել XX դարի 60-ական թվականներին Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմի նկատմամբ, որը հստակ ցույց է տալիս, թե ինչպես է պատերազմը ոչնչացնում ամենանուրբը, պահպանման կարիք ունեցողը՝ մանկությունը և ի դեմս նրա՝ ապագան:

Դասագրքում տրված հարցին «Ինչ եք կարծում, ի՞նչ է փոխել պատերազմը աֆղան երեխաների կյանքում»: Հավանական պատասխան. Այն, որ լուսանկարում պատկերված տղան խաղալիքի փոխարեն խաղում է զենքով, ցույց է տալիս, թե ինչպես է փոխել խաղաղ բնակչության կենցաղը, հետաքրքրությունները, հայացքները երկրի պատերազմական իրավիճակը:

Աշակերտները պետք է գան այն եզրակացության, որ ինչպես կերպարվեստը, այնպես էլ կիրառական արվեստը ակնթարթորեն և կտրուկ արձագանքում են երկրում ընթացող իրադարձություններին: Ցանկալի է, որ ուսուցիչը Աֆղանստանի պատմության հետ կապված նկարազարդումների մասին աշակերտների քննարկումը ուղղորդի՝ պատերազմը դատապարտելու ուղղությամբ և նրանց ուշադրությունը հրավիրի այն փաստի վրա, որ ինչպես պատերազմը երեխաների կյանքում խաղալիքները փոխարինեց մարտական զենքով, այնպես էլ այս ավերիչ երևույթը գորգերի նուրբ զարդանախշերը փոխեց մարտական տեխնիկայի և զենքի պատկերներով:

Մարկ Ռիբուի պատերազմի թեմայով ստեղծված այլ լուսանկարներ.
https://plohoy-zyalt.livejournal.com/380696.html
http://marcriboud.com/en/countries/afghanistan/

Լրացուցիչ ցուցադրական նյութ աֆղանական գորգերի համար.
հին.
https://bit.ly/3eJSXGF

ժամանակակից.
https://www.artsy.net/article/artsy-editorial-lessons-afghan-women-weave-modern-war-ancient-tradition

https://www.warrug.com/warrugs/styles.php?idr=286

https://n.pr/3eCYnTz

https://dygtyjqp7pi0m.cloudfront.net/i/26011/23356848_1.jpg?v=8D2DD7043A936E0

✓ **Գործնական աշխատանք. Թվային կոլաժ** (անհատական աշխատանք, տնային առաջադրանք) (տե՛ս՝ Աշակերտի դասագիրք, էջ 24)

Այս ակտիվության միջոցով աշակերտները կհասկանան, որ պատերազմի հետ կապված պատկերի դրվագը մեկ այլ թեկուզ ամենախաղաղ, հարմարավետ բնազավառ արտացոլող նկարի մեջ ընդգրկելը բոլորովին փոխում է աշխատանքի բովանդակությունը: Նրանք կսովորեն մշակել թվային պատկերներ, ինչը նրանց կօգնի կատարել համալիր ամփոփիչ առաջադրանքը:

**Թվային աշխատանքի կատարում և վերբեռնում համացանց.**
Համակարգչային նկարչության ծրագիր **Paint**-ում ստեղծի՛ր կոլաժ:

1. Ընտրի՛ր ցանկացած գեղանկարչական գործ, որն արտացոլում է հանգիստ, հարմարավետ միջավայր:
2. Որպես երկրորդ աշխատանք, օգտագործի՛ր Վասիլի Վերեշչագինի «Պատերազմի ապոթեոզը» նկարի դետալը գանգերով (հղում. https://en.wikipedia.org/wiki/The_Apotheosis_of_War#/media/File:Apotheosis.jpg): **(Free form selection)** գործառույթով նկարից կտրիր-հանի՛ր գանգերի կույտը:
3. Քո կտրած-հանած դետալը պահի՛ր **(Copy)** գործառույթով:
4. Նոր պատուհանում բացի՛ր առաջին նկարը և **(Paste)** գործառույթով ցանկալի տեղում նրա վրա տեղադրի՛ր կտրած-հանած և պահած մանրամասը: Որպեսզի պատկերից հանես սպիտակ ֆոնը, սեղմի՛ր թափանցիկ ընտրություն **(Transparent selection)** գործառույթը:
5. Քո կոլաժի համար մտածի՛ր վերնագիր:
6. Կոլաժով կիսվի՛ր ընկերներիդ հետ:
7. Քննարկե՛ք, թե ինչ բովանդակություն է ձեռք բերել բնօրինակը՝ ինչ իմաստ է արտահայտում, ինչ զգացողություն է առաջացնում: Մտածե՛ք, թե ուրիշ ինչ թեմայով կարող եք կոլաժի տեխնիկայով աշխատանք ստեղծել: Կիսվե՛ք իրար հետ կոլաժը համակարգչային ծրագրում հավաքելիս ստացված փորձով: Հավաքե՛ք միմյանց գործերն ընդհանուր էլեկտրոնային ալբոմում: Թղթային տարբերակները կարող եք օգտագործել «Մենք ուզում ենք խաղաղություն» ակցիայի ժամանակ:

**Տնային առաջադրանքների այլ տարբերակներ**.

- Գտի՛ր տարբեր պատմական ժամանակահատվածներում պատերազմի թեմայով ստեղծված գեղանկարչական աշխատանքներ։
- Պատերազմի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք են արտացոլում արվեստագետները։ Ո՞ր ժամանակահատվածի աշխատանքներն են արտահայտում բողոք պատերազմի դեմ։ Գրավոր ձևակերպի՛ր՝ պատերազմի նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք են արտահայտում արվեստագետները։ Ո՞ր ժամանակաշրջանի աշխատանքներն են բողոք արտահայտում պատերազմի դեմ։

Կամ.

- Գտի՛ր ժամանակակից վրացի նկարիչ Գագոշայի 2008 թվականի պատերազմի թեմայով ստեղծված գրաֆիտը։ Ո՞ր նկարչի գործն է այն հիշեցնում քեզ։ (Պաբլո Պիկասոյի «Գերնիկան»)։ Գեղարվեստական ո՞ր եղանակներով է նկարիչն արտահայտել իր բողոքը։

**4. Արվեստը սոցիալական խնդիրների վերաբերյալ**

**Ծանոթություն**.

Բրեյգելի «Կույրերը» աշխատանքի շուրջ քննարկման ժամանակ, աշակերտները ֆիզիկական կուրությունը չհամարեն թերություն, արատավորություն, ուստի, կուրությունը պետք է քննարկեն միայն փոխաբերաբար։ Առավել ևս, որ Ավետարանում ըստ Մատթեոսի կարդում ենք (15, 14). «Թողե՛ք նրանց հանգիստ. նրանք կույր են, կույրերի առաջնորդներ են։ Եվ եթե կույրերը կույրերին առաջնորդեն, նրանք կխփալվեն, և երկուսն էլ կընկնեն փոսը ... Քրիստոսը նկատի ունի փարիսեցիներին, այլ ոչ թե՝ ֆիզիկապես տեսողական խնդիր ունեցող մարդկանց։

- **Քննարկում.**

✓ Ի՞նչ է գրոտեսկը, ծաղրանկարը, երգիծանքը։ Ի՞նչ է նշանակում չափազանցությունը նկարչության մեջ։ (Պատասխանները տե՛ս. Աշակերտի դասագիրք, էջ 27)

✓ Ժամանակակից կյանքում հանդիպե՞լ ես գրոտեսկի կամ ծաղրանկարի (օրինակ՝ թերթերում)։

✓ Ինչ ես կարծում, արդի հասարակությունը հաղթահարե՞լ է նմանատիպ խնդիրները, թե դրանք դեռ արդիական են։

✓ Ո՞րն է արվեստի գործառույթը մարդկանց առօրյա կյանքում։

✓ Ինչպե՞ս կարող է արվեստագետը մասնակցել մարդկանց սոցիալական խնդիրների լուծմանը։

✓ Ինչպե՞ս կարող է արվեստը իր ներդրումն անել բնապահպանական խնդիրների լուծման հարցում։

* Դասին վերաբերող տարբեր բնագավառների և ժանրերի նկարազարդումները քննարկելիս՝ ցանկալի է, որ աշակերտները ուշադրություն դարձնեն ստեղծագործություններում օգտագործված գեղարվեստական տարրերին և սկզբունքներին։ Ինչպես նաև՝ ենթադրություններ արտահայտեն, թե ինչ հնարավոր տեխնիկայով է կատարված այս կամ այն աշխատանքը։ Օրինակ՝ Միթիիլայի ավանդական նկարչության վերաբերյալ կարող է տրվել հարց. «Ի՞նչ առանձնահատկություն է տարբերում Միթիիլյան ավանդական նկարչությունից»։

| | |
|---|---|
| **Պատասխան**. վառ, շլացնող գույներ, հստակ ուրվագծեր, կոմպոզիցիան ամբողջությամբ լրացնում է և՛ նկարի տարածքը, և՛ ֆոնը, և՛ պատկերները ամբողջությամբ լցված են զարդապատկերային նկարով: Նյութը՝ բնական ներկեր:<br>Եվ<br>«Ինչպե՞ս կբնութագրեք Պավել Կուչինսկու ստեղծագործությունները՝ դրանցում օգտագործված գեղարվեստական տարրերի և սկզբունքների տեսանկյունից»:<br>**Պատասխան**. Չնայած նրան, որ Կուչինսկու ստեղծագործություններում օգտագործվում է լուսաստվեր, ծավալ, հեռանկար, տոնային աստիճանավորում, դրանք միևնույն է պաստառային են: Աշխատանքները կատարվում են գունավոր մատիտներով:<br><br>✓ **Քննարկում.**<br><br>Ժամանակակից հասարակության սոցիալական խնդիրներին նվիրված ստեղծագործությունների քննարկում:<br>**Քննարկման հարցեր**.<br>✓ Ի՞նչ դրական և բացասական կողմեր ունի սոցիալական ցանցերի ակտիվ օգտագործումը:<br>✓ Քեզ ինչո՞ւմ է օգնում և ինչո՞ւմ խանգարում սոցիալական ցանցերից օգտվելը:<br>✓ Ի՞նչ գործառույթ ունի արվեստը երկրի, հասարակության, առանձին մարդու կյանքում:<br>✓ Ինչի՞ն պետք է ծառայի արվեստը, ինչի՞ն պետք է ծառայի արվեստագետը՝ իր ստեղծագործական հետաքրքրություններին, թե՞ հասարակության պահանջներին:<br>✓ Որքանո՞վ կարող է արվեստը փոխել հասարակության կյանքի պայմանները:<br><br><u>Ռեսուրսներ արվեստի ստեղծագործություններում արտացոլված հասարակության սոցիալական խնդիրների մասին խոսելու համար.</u><br>Լեհ նկարիչ Պավել Կուչինսկիի երգիծական աշխատություններ.<br>https://bit.ly/3odlFWg<br><br>Իլյա Ռեպին «Բուռլակները Վոլգայում», 1873 թ.<br>https://bit.ly/3dnj99r<br><br>Վասիլի Պերով «Տրոյկա», 1866 թ..<br>https://arts-dnevnik.ru/hudozhniki-peredvizhniki/<br><br>Ալեքսանդր Մրևլիշվիլի, «Գյուղի դատարանը», 1893 թ.<br>https://bit.ly/2XHxfvK<br><br>Ալեքսանդր Մրևլիշվիլի, «Ցածր ցանկապատը» https://burusi.files.wordpress.com/2009/10/p10301891.jpg<br><br>Նիկո Փիրոսմանի, «Անզավակ հարուստը և աղքատ կինը երեխաներով»<br>https://bit.ly/3clsEVt | |

Բենսկի, 2019 թ.
https://anticap.files.wordpress.com/2010/08/spare_change.jpg
https://bit.ly/3clFB1D

**Գործնական աշխատանք**. (Տնային առաջադրանքներ)

- Նկարի՛ր զրոտեսկային տեսարան դպրոցական կյանքից: (Անհատական աշխատանք)
- **Նկար**. Ստեղծի՛ր ստեղծագործություն, որում կարտահայտես քո վերաբերմունքը ժամանակակից խնդիրների նկատմամբ: Ինքդ որոշի՛ր, թե որ բնագավառը, ժանրը, նյութը և տեխնիկան կհամապատասխանի քո ասելիքին: (Անհատական աշխատանք)
- **Ֆոտոռեպորտաժ**. Պատրաստի՛ր տեսախցիկը և նկարահանի՛ր այն, ինչը քեզ համար ոչ ճիշտ է, այն, ինչին ցանկանում ես, որ ուրիշներն ուշադրություն դարձնեն: Լուսանկարներին կցի՛ր մակագրություններ: Քո և ընկերներիդ լուսանկարները վերբեռնե՛ք ընդհանուր ալբոմում և հրապարակե՛ք սոցիալական ցանցում: (Անհատական աշխատանք)

**Մեթոդաբանական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.**
**Համալիր առաջադրանք** 1.
**Պաստառ մատաղ սերնդի մարտահրավերների մասին, որը ստեղծվել է նկարչության, հավելվածի, ֆոտոմոնտաժի կամ թվային կոլաժի միջոցով:**

<u>**Առաջադրանքի պայմանը.**</u>
Կիսվե՛ք իրար հետ՝ ի՞նչն է ձեզ անհանգստացնում, ի՞նչը կցանկանայիք փոխել կամ բարելավել, որպեսզի ավելի լավ սովորեք, ավելի ապահով զգաք ձեզ, կարողանաք զարգացնել սեփական կարողությունները և ուղղորդել ձեր գործունեությունը՝ ի շահ հասարակության:

- Որոշե՛ք, թե ով է ձեր կոչի թիրախային լսարանը:
- Կետերով գրե՛ք ձեր առաջարկությունները:
- Կոչերը ձևակերպե՛ք կարճ կարգախոսների տեսքով:
- Իրար մեջ բաժանե՛ք կարգախոսները:
- Որոշե՛ք գրության չափը և գույնը:
- Որոշե՛ք պատկերի և մակագրության գույնի, չափի և մասշտաբի համապատասխանեցումը:
- Որոշե՛ք պատկերի և մակագրության համապատասխանեցումը ֆոնին:
- Ի՞նչ եղանակներ կդարձնեն քո կոչն ավելի արդյունավետ.
  խայտաբղե՞տ, թե՞ երկու կամ երեք գույներով լուծված,
  հակադիր, թե՞ հարակից գույներ,
  երկար, մանրամասն բացատրությո՞ւն, թե՞ կարճ կարգախոս:
  Նույն չափի ֆորմատների վրա նկարե՛ք ագիտացիոն պաստառներ:

- Կարգախոսները գրե՛ք մեծ և հստակ տառերով (տառատեսակով):
- Պաստառները փակցրե՛ք նախապես սահմանված տարածքներում՝ համաձայնեցված դպրոցի տնօրինության հետ:

**Համալիր առաջադրանք 2.**
**Օկուպացված տարածքներում ապրող հասակակիցներին աջակցող ակցիայի համար պաստառներ ստեղծել.**

**Նյութ.**
Խոշոր չափի ֆորմատներ
Հաստ նշիչներ
Քանոններ
Հասարակ մատիտներ
Սոսինձ
Ներկեր
Վրձիններ
Լրացուցիչ նյութերը աշակերտները կընտրեն ըստ իրենց մտահղացման:

**Հանձնարարության պայմանները.**
Մտածեք, թե ինչով կարող եք արտահայտել ձեր աջակցությունը դժվար պայմաններում ապրող ձեր հասակակիցներին:

Աշակերտները կպլանավորեն միջոցառում, որին հրավիրված մասնակիցներին նախապես, պաստառների միջոցով կտեղեկացնեն, թե ինչին է նվիրված միջոցառումը, ինչ է պահանջվում միջոցառմանը եկած հասարակությունից:
Դա անելու համար աշակերտները պետք է պլանավորեն, թե ինչպես կարող են աջակցել իրենց հասակակիցներին. ընտրեն որոշակի դպրոց, որոշեն, թե որ տեսակի օգնությունը կուրախացնի այդ երեխաներին (օր.՝ կարող են հավաքվել հետաքրքիր ընթերցանության կամ արվեստի գրքեր, ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ նյութեր, հուշանվերներ և այլն):

Պաստառները պետք է պատրաստվեն և ցուցադրվեն միջոցառումից մեկ շաբաթ առաջ: Պաստառները կարող են լինել.
1. **Տեղեկատվական**. հրավիրում է և տեղեկացնում այցելուներին, թե որտեղ, երբ և ինչ բովանդակության միջոցառում տեղի կունենա:
2. **Առկա իրավիճակն արտացոլող**. տեղեկացնում է այցելուներին, թե ովքեր և ինչու ունեն աջակցության կարիք:
3. **Ագիտացիոն կոչ պարունակող.** ապագա դիտողին կամ մասնակցին կոչ է անում որոշակի գործողությունների (օրինակ՝ «Սիրելի գիրքդ նվիրի՛ր անծանոթ բարեկամին»):

Աշակերտները կկազմակերպեն ակցիա, որի ժամանակ տեղեկատվական և ագիտացիոն կոչեր պարունակող, իրենց ձեռքով պատրաստված պաստառների միջոցով կներգրավեն կամավորների, կծանոթացնեն խնդիրը և նրանց մասնակցությամբ կիրականացնեն իրենց մտահղացումը:

**Ռեսուրսներ.**

Տեսադաս Գոյայի «1808 թվականի մայիսի 3» ստեղծագործության մասին, հեղինակ՝ Աննա Կլդիաշվիլի.
https://www.youtube.com/watch?v=2R9C9Bbw-eQ&fbclid=IwAR0R-xel53qzAe5ZyirpArthTHTb5UvbECdXHcswB2ADxagDha2H-WzKuEk

Մարտանկարչական ժանր.
https://www.reddit.com/r/BattlePaintings/

**Պաստառներ.**

Քարոզչական, տարբեր երկրների.
https://www.smashingmagazine.com/2010/06/100-years-of-propaganda-the-good-the-bad-and-the-ugly/

Խորհրդային. http://www.ekaterinburg.arbitr.ru/node/17386

Չինական. https://chineseposters.net/gallery/

Նացիստական. https://www.bytwerk.com/gpa/posters2.htm

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական տարրեր և սկզբունքներ**

**Կերպարվեստի տեխնիկա**

- Ընտրում է և պաստառի համար օգտագործում համապատասխան գեղարվեստական-պատկերավորման տարրեր, սկզբունքներ (մասշտաբ, համամասնություն, հակադրություն, հիմնականի տարանջատում և այլն), նյութեր և տեխնիկա՝ այս կամ այն երևույթի, փաստի նկատմամբ իր մտահղացումը, վերաբերմունքն ավելի լավ փոխանցելու համար (**Կերպ.կիր.հիմն.1, 2, 4**):

**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Վերլուծում է հասարակության վրա արվեստի ազդեցության ձևերն ու գեղարվեստական պատկերավորման սկզբունքները (**Կերպ.կիր.հիմն.3, 4**):
- Արվեստի մասին դատողություն է անում, որպես հասարակության ինքնարտահայտման միջոցի, բերում է մի քանի օրինակներ (**Կերպ.կիր.հիմն.3, 4**):
- Համեմատում է երկու դարաշրջան կամ մշակույթ՝ ըստ հասարակության վրա ազդելու միջոցների (**Կերպ.կիր.հիմն**.4):

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքների գնահատման վերաբերյալ.**

1. Օկուպացված տարածքներում բնակվող հասակակիցների աջակցության համար պաստառների ստեղծում:
2. Ստեղծե՛ք ձեր սերնդի մարտահրավերների մասին պաստառ նկարչության, ապլիկացիայի, լուսանկարչական մոնտաժի կամ թվային կոլաժի սկզբունքով:

* Երկու աշխատանքներն էլ կգնահատվեն 10 միավորով.

- Աշխատության մեջ երևում է ստեղծագործական մոտեցում և ինքնատիպ մտածողություն: (2 միավոր)
- Պատկերավորման տարրերն ու սկզբունքներն ընտրված են ըստ մտահղացման (վառ, հակադիր, ինտենսիվ գույներ, մեծ տառատեսակ և այլն) և հասնում է ցանկալի արդյունքի: (2 միավոր)
- Պահպանված է տեքստի, պատկերի և դատարկ տարածության հարաբերակցությունը: (1 միավոր)
- Նյութն ընտրված է մտահղացմանը համապատասխան: (1 միավոր)
- Գաղափարը փոխանցված է հստակ և հակիրճ: (1 միավոր)
- Ծախսված է առավելագույն ջանք: (2 միավոր)
- Պահպանված է ժամանակի սահմանաչափը: (1 միավոր)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ /2

<table>
<tr><td colspan="3">Դասեր 5 - 7 Միավորող թեմա. Արվեստը և կրոնը</td></tr>
<tr><td>Հարցեր և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Տարրեր.<br>գիծ, գույն, ձև, ֆոն<br><br>Սկզբունքներ<br>համամասնություն, մասշտաբ, ռակուրս<br><br>Բնագավառներ.<br>նկարչություն (որմնանկար, սրբանկարչություն)<br><br>Ժանրեր.<br>կրոնական<br><br>Կերպարվեստի տեխնիկա.<br>որմնանկար<br><br>Դարաշրջան, ոճ, ուղղություն.<br>Միջնադարյան Բյուզանդիա և Վրաստան</td><td>• Ի՞նչ կարող էր տեղի ունենալ արվեստում այնպիսի հզոր պատմամշակութային-կրոնական շրջադարձի արդյունքում, ինչպիսին քրիստոնեական կրոնի առաջացումն է:<br>• Ինչո՞ւ անհրաժեշտ եղավ քրիստոնյաներին խորհրդանշական լեզու մշակել:<br>• Ի՞նչ խորհրդանիշներ ենք օգտագործում ժամանակակից կյանքում:<br>• Ի՞նչ է նշանակում պայմանական պատկերավորման լեզու և ինչո՞վ է այն տարբերվում ռեալիստականից:<br>• Ինչո՞վ են իրարից տարբերվում սրբապատկերն ու նկարը:<br>• Ի՞նչ տարբերություն կա հնագույն և քրիստոնեական արվեստի բնութագրիչների միջև:<br>• Որո՞նք էին միջնադարյան քրիստոնեական արվեստի հիմնական գեղարվեստական առանձնահատկությունները և ի՞նչն է պայմանավորել դրանք:</td><td rowspan="2">Համեմատական վերլուծություն<br>Ըստ 4 կետերի իրար հետ համեմատի՛ր տրված ստեղծագործությունները.<br>1. Արվեստի ո՞ր բնագավառի և ժանրի նմուշներ են ներկայացված: Որո՞նք են նրանց ընդհանուր և տարբերակիչ նշանները: Պատկերավորման ո՞ր տարրերն ու սկզբունքներն են դրանցում կիրառված՝ իմաստն ու գաղափարն արտահայտելու համար:<br>2. Դրանցից ո՞րն է կատարված սրբանկարչության կանոնիկայի նախատեսմամբ և ո՞րն է ռեալիստական:<br>3. Դատողությո՛ւն արա, թե ինչը պայմանավորեց տարբերությունը նմուշների միջև: Հիմնավորի՛ր քո տեսակետը:<br>4. Արտահայտի՛ր սեփական վերաբերմունքդ՝ ո՞րն ես ավելի հավանում և ինչո՞ւ:</td></tr>
<tr><td colspan="2">4. Արվեստը կրոնի ծառայության մեջ (քրիստոնեական աշխարհը)<br>Դասագրքի այս գլխի նպատակն է, որ աշակերտները հասկանան, թե որքանով սերտ կապ ունեն արվեստը և կրոնը: Հասարակության հավատալիքը արտացոլվում է արվեստում, և արվեստը կարևոր դեր ունի այդ կրոնական համոզմունքների տարածման և հաստատման գործում: Կրոնական պատմությունները անսպառ աղբյուր են բոլոր ժամանակների արվեստագետների համար՝ գաղափարներ, թեմաներ, արտահայտման նոր սկզբունքներ և ձևեր որոնելու համար, մինչդեռ կրոնի համար տեսանելի պատմությունները հավատքի հաստատման և տարածման, նրա գաղափարախոսության, իշխանության հաստատման միջոց են:<br>Աշակերտները կուսումնասիրեն տարբեր դարաշրջաններում (հնագույն և քրիստոնեական միջնադարում) տարբեր գեղարվեստական սկզբունքների զարգացման պատմական-կրոնական պատճառները և կկարողանան նույնականացնել դարաշրջանի արվեստի գործերը: Բացի այդ, կտիրապետեն պայմանական գեղարվեստական տեխնիկային:<br>Աշակերտները կուսումնասիրեն կրոնական ժանրի գործեր: Իրական կյանքում տաճար մտնելիս նրանք կկարողանան ճանաչել որմնանկարների կամ սրբապատկերների սյուժեն:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **Ներածություն.**<br>Ի՞նչ է նշանակում կրոն:<br>Պալեոլիթի դարաշրջանի մարդը, որը բացի գազաններից, վախենում էր ամպրոպներից, փոթորիկներից և այլ բնական երևույթներից, սկսեց կախարդական ծեսեր կատարել՝ պաշտպանվելու և հաջող որսի համար, սկսեց մոգական ծիսակատարություններ անել: Այսպես ձևավորվեցին գերբնական ուժերին հաճոյանալու համար տարբեր պաշտամունքային ծիսակարգերը, սակայն դա դեռ կրոն չէր: Ուրեմն ի՞նչ է նշանակում կրոն:<br>Ուսուցիչը գրատախտակին գրում է աշակերտների թվարկածը, ամենայն հավանականությամբ դրանք կլինեն՝ հավատի առարկա (Աստված կամ աստվածներ), վարդապետություն, Սուրբ գիրք (առասպելներ, Աստվածաշունչ, Ղուրան, Թալմուդ և այլն), շենք (տաճար, եկեղեցի, մզկիթ, ժողովարան և այլն), պաշտամունքի ծառայող (քուրմ, քահանա, ռաբբի և այլն):<br>Դրանից հետո ուսուցիչը աշակերտներին խնդրում է դասագրքում կարդալ կրոնի սահմանումը (առաջին պարբերություն, որտեղ դավանանքի սահմանումը տրվում է պարզեցված, տարիքին համապատասխան եղանակով) և համեմատում գրատախտակի վրա գրված իրենց արած ենթադրությունների հետ:<br><br>• **Քննարկում (դասարանական ակտիվություն).**<br><br>Հարցեր քննարկման համար.<br>✓ Ի՞նչ գիտեք քրիստոնեության առաջացման, տարածման և հաստատման մասին:<br>✓ Ի՞նչ հետևեց Հռոմեական կայսրության փլուզմանը:<br>✓ Ի՞նչ կարող էր տեղի ունենալ արվեստի մեջ պատմամշակութային-կրոնական այսպիսի հզոր բեկման արդյունքում:<br>✓ Պատկերավորման ի՞նչ տարրերից և սկզբունքներից է օգտվում պատկերավորման լեզուն:<br>✓ Դրանցից ո՞րն է օգտագործում հնագույն դարաշրջանը (ռեալիստական): Քրիստոնեական սրբանկարչությունը և որմնանկարը (պայմանական):<br>✓ Ինչպե՞ս է կոչվում կերպարվեստում առասպելներ արտացոլող ժանրը: (Դիցաբանական)<br><br>**5. Պատկերավորման նոր լեզու**<br><br>**Նախապես ունեցած գիտելիքի ակտիվացում.**<br><br>✓ Ի՞նչ գիտեք Հին Հունաստանի և Հռոմի առասպելների մասին:<br>✓ Ինչպե՞ս է կոչվում առասպելների ժանրը կերպարվեստում: (Դիցաբանական)<br><br>Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս դիցաբանական ժանրի մի քանի նկար և խնդրում է նրանց վերհիշել իրենց ծանոթ առասպելական կերպարներ:<br>✓ Հիշե՛ք պատկերավորման ի՞նչ տարրերից և սկզբունքներից է օգտվում պատկերավորման լեզուն: | |

**Պատասխան**.

Պատկերավորման տարրերն են. գիծ, գույն, ձև, ծավալ, լուսաստվեր, երանգ, ֆակտուրա, ֆոնի և պատկերի փոխհարաբերություն:

Պատկերավորման սկզբունքներն են՝ հավասարակշռություն, համաչափություն/անհամաչափություն, ստատիկա/դինամիկա, համամասնություն/անհամամասնություն, մասշտաբ, հեռանկար, ներդաշնակություն, հակադրություն, ռիթմ, զարդանախշ:
Ուսուցիչը դրանք երկու շարքով գրում է գրատախտակի վրա:
Ուսուցիչն աշակերտներին կներկայացնի, թե տարբեր դարաշրջանների արվեստը պատկերավորման ինչ տարրերից և սկզբունքներից է օգտվում:
Աշակերտները կհամեմատեն հնագույն և քրիստոնեական պատկերավորման լեզուները:

<u>Լրացուցիչ ցուցադրական նյութ դիցաբանական ժանրի համար.</u>
Սանդրո Բոտիչելլի, «Վեներայի ծնունդը», 1484-1486, Վերածնունդ
https://en.wikipedia.org/wiki/The_Birth_of_Venus#/media/File:Sandro_Botticelli_-_La_nascita_di_Venere_-_Google_Art_Project_-_edited.jpg

Պիտեր Պաուլ Ռուբենս, «Պերսևսը և Անդրոմեդան», 1622 թ., Բարոկկո
https://bit.ly/3eFb68s

Նիկոլա Պուսսեն «Պառնաս», 1632 թ., կլասիցիզմ
https://en.wikipedia.org/wiki/Parnassus_(Poussin)#/media/File:El_Parnaso_(Poussin).jpg

Գյուստավ Մորո, «Հեսոիդն ու մուսան», 1864 թ., սիմվոլիզմ
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/c/c4/Oedipus_and_the_Sphinx_1864.jpg

Օդիլոն Ռեդոն, «Երաժշտություն Պեգասի վրա», 1900 թ., սիմվոլիզմ
https://commons.wikimedia.org/wiki/File:Odilon_Redon_002.jpg

Անտիկ դարաշրջանի դիցաբանությունը հիմք է դրել եվրոպական մշակույթին: Միջնադարից հետո, սկսած Վերածննդի դարաշրջանից, հունական դիցաբանությունը եվրոպական մշակույթի բաղկացուցիչ մասն է: Տարբեր բնագավառների արվեստագետներ մինչև այժմ դիմում են առասպելներին:

Աշակերտները որոշում են, թե գրատախտակին գրված պատկերավորման տարրերից ու սկզբունքներից, որոնք են նրանք տեսել տրված նկարազարդումներում: Ուսուցիչը նշիչով ընդգծում է համապատասխան տարրերն ու սկզբունքները (ծավալ, լույս, ստվեր, տոնային աստիճանավորում: Համամասնություն, հեռանկար / հակառակ հեռանկար և այլն):

* <u>Ծանոթություն</u>. Աշակերտների հետ դեռ խոսք չի եղել հակառակ հեռանկարի մասին: Այդ մասին ընդարձակ և խորը կխոսենք մեկ այլ գլխում, բայց հնարավոր է, որ աշակերտներին նախօրոք տեղեկացնենք այս մեթոդի առկայության մասին և օրինակներով ցույց տանք, որ, ի տարբերություն ուղիղ հեռանկարի, հակառակ հեռանկարի դեպքում առարկաները խորքում ոչ թե փոքրանում են, այլ լայնանում: Դիտման կետը ենթադրվում է պատկերից դուրս (դիտող), այլ ոչ թե՝ պատկերի հարթության վրա: (Տե՛ս Աշակերտի գիրք, էջ 42, էջ 277)

| | |
|---|---|
| Ցուցադրական նյութ հռոմեական կատակոմբների նկարչության նմուշներով.<br>http://www.vatican.va/roman_curia/pontifical_commissions/archeo/inglese/documents/rc_com_archeo_doc_20011010_cataccrist_en.html<br><br>https://holidaygid.ru/wp-content/uploads/2014/08/sconosciuto.jpg<br><br>https://i.pinimg.com/originals/ea/8b/d2/ea8bd2f592e1f113920c3cac7c2aaeaf.jpg<br><br>https://planetofhotels.com/sites/default/files/attracrions/katakomby_priscilly.jpg<br><br>Սան Վիտալե եկեղեցու խճանկար, VI դ., Ռավեննա.<br><br>https://i.pinimg.com/originals/e5/98/b8/e598b82b24f0f1af2b2151cc40ea7e97.jpg<br><br>* Ցուցում՝ կապված այս հղման հետ. Գառը նաև Քրիստոսի խորհրդանիշն է: Գառը այն անմեղ զոհին է մարմնավորում, որին Քրիստոսը մարդկային հոգիների փրկության համար զոհաբերեց:<br><br>**Հարց.**<br>Ի՞նչ ազդեցություն է ունեցել հնագույն արվեստը վաղ քրիստոնեական արվեստի վրա: Եթե չլիներ կցագրությունը, ինչպե՞ս կտարբերեիր, թե որն է հնագույն աստծո՝ Հերմեսի արձանը, և ո՞րը՝ Քրիստոսի:<br><br>Այս հարցին պատասխանելու համար, բացի դասագրքի նկարազարդումներից, ցանկալի է աշակերտները դիտեն հին և նախաքրիստոնեական արվեստի նմանատիպ պատկերներով լրացուցիչ նկարագրական նյութեր.<br><br>Հունական հնագույն Կուրոս, այսպես կոչված «Մոսխոֆորոսի» արձանը (հորթ կրողի)՝ որպես մեկ այլ հեթանոսական օրինակ.<br>https://en.wikipedia.org/wiki/Moschophoros#/media/File:ACMA_Moschophoros.jpg<br><br>Գալա Պլացիդայի դամբարանի խճանկար, «Քրիստոսը բարի հովիվ», V դ., Ռավեննա (որպես ևս մեկ քրիստոնեական նմուշ)<br>https://bit.ly/2TZbJlk<br><br>**Պատասխան.**<br>Աշակերտները կդիտեն և կբացահայտեն, որ հեթանոսական հին կերպարները մերկ են, իսկ Քրիստոսը հագնված է: Նրանք կհասկանան, որ մի կողմից՝ նախաքրիստոնեական արվեստում արտահայտվում է հեթանոսական արվեստի ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ քրիստոնեությունը շուտով կհաղթահարի այդ ազդեցությունը և կզարգացնի նոր պատկերավորման լեզու:<br><br>**Հարց.**<br>✓ Ի՞նչ կարող է նշանակել հովվի հետ Քրիստոսին համեմատելու փոխաբերությունը:<br><br>**Պատասխան.**<br>Այս փոխաբերության մեջ ենթադրվում է, որ Քրիստոսը, ինչպես լավ հովիվը, հոգ է տանում իր հետևորդների մասին («Ես լավ հովիվ եմ. լավ հովիվն իր կյանքն է տալիս ոչխարների համար»: Ավետարան ըստ Հովհաննեսի, 10:11) | |

- **Քննարկում խորհրդանիշների թեմայի շուրջ.**
  - ✓ Ինչո՞ւ քրիստոնյաներին անհրաժեշտ եղավ խորհրդանշական լեզու մշակել:
  - ✓ Ի՞նչ խորհրդանիշներ ենք օգտագործում ժամանակակից կյանքում:
  - ✓ Ինչո՞ւ պետք է իմանանք խորհրդանշանների պատկերավորման լեզուն:
  - ✓ Որևէ տեղ տեսե՞լ ես նման կամ այլ խորհրդանիշներ:

Աշակերտները հնարավոր է վերհիշեն առօրյայում իրենց հանդիպած խորհրդանիշները, ինչպիսիք են ճանապարհային նշանները և այլն: Նրանք կհասկանան, որ խորհրդանիշներն իմանալն այսօր էական է մեր իսկ անվտանգության համար: Հեթանոսական Հռոմում նույնպես հալածված քրիստոնյաները խորհրդանիշների միջոցով էին միմյանց տեղեկացնում, որ այս կամ այն վայրը իրենց համար անվտանգ էր:

**Հարց.**

- ✓ Ինչպե՞ս է կոչվում կերպարվեստում քրիստոնեական հերոսներին և տեսարանները արտացոլող ժանրը: (կրոնական)
- ✓ Ի՞նչ է նշանակում սրբանկարչություն:

**Պատասխան.**

Քրիստոնեական արվեստում ձևավորվում են կրոնական աշխարհայացքին համապատասխան նոր կանոններ: Պատկերավորման այս կանոնների հավաքածուն կոչվում է **սրբանկարչություն** (հուն. սրբապատկեր, պատկեր նկարել): Սրբապատկերը ոչ թե մեկ արվեստագետի, այլ Քրիստոսի ուսմունքի, աստվածաբանների կողմից կազմված և եկեղեցու կողմից օրինականացված աշխարհայացքի գեղարվեստական ձևի մեջ ընդգրկում է ենթադրում: Սրբապատկերում պատկերված սուրբը ոչ թե մեր կողքին քայլող հարևանն է, ծանոթը կամ հարազատը, այլ մարդ է այն կատարյալ տեսքով, ինչպիսին Աստված է նախատեսել: Սրբապատկերում պատկերն ստվերներ չունի, քանի որ ինքն է ճառագում աստվածային լույսը, ինքն է լույսի աղբյուրը: Սրբապատկերը պետք է մեզ ցույց տա երկրայինից բարձրացածը և հավերժականը: Ճիշտ դրանով է նա տարբերվում և՛ առօրյա ժանրի նկարից, և՛ որոշակի անձի դիմանկարից: Քրիստոնեական սրբանկարչությունը սահմանում է սյուժետային կոմպոզիցիաների կրճատված և ընդարձակ խմբագրումներ, Քրիստոսի և սրբերի պատկերների արտաքին նշաններ, հագուստի գույներ, կեցվածքներ և հատկություններ: Ժեստերն արտահայտում են օրհնություն, աղոթք, աղաչանք, ափսոսանք: Առանց դրա դուք չեք կարող ճանաչել սրբին, չէ՞ որ դա դիմանկար չէ, Քրիստոսի և սրբերի արտաքինը ոչ մի տեղ նկարագրված չէ: Սրբանկարիչները բնորդի հետ չէին աշխատում, կենդանի մոդելին դիտելով չէին նկարում: Ոչ այսերկրյայի, երկնայինի, աստվածայինի փոխանցման համար սրբանկարիչը ձգտում է անտեսել մարմնականը, և դրա փոխարեն՝ ընդգծել հոգևորը:

- **Առաջադրանք.**

Դիտի՛ր նկարազարդումները և դատողությո՛ւն արա ստեղծագործություններում կիրառած գեղարվեստական սկզբունքների մասին.

<u>Ցուցադրական նյութի հղումներ.</u>
Սուրբ Սոֆիա, խճանկար, IX դ.
http://phanthi.vn/images/image/H6_resize%282%29.jpg

| | |
|---|---|
| Մենոլոգիայի ձեռագրի մանրանկար, X դ.<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/b/b1/Menologion_of_Basil_001.jpg<br><br>Հոսիոյի Ղուկասի եկեղեցի, Ս.Մարկոս, խճանկար, XI դ.<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/9/97/Hosios_Loukas_%28narthex%29_-_Ceiling%2C_2nd_arch_%28S.Mark%29_02.jpg<br><br>Հոսիոյի Ղուկասի եկեղեցի, «Ոտնլվա» XI դ.<br>https://enacademic.com/pictures/enwiki/79/Osios_Loukas_1.jpg<br><br>Փղի հին ռելիեֆ, Խաչելություն, XI դ.<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/59/CLUNY-Ivoire_crucifixion_Venise_1.JPG<br><br>Օխրիդա, «Ավետում», XIV դ.-ի սրբապատկեր<br>https://i.pinimg.com/originals/2a/a4/18/2aa41861f8a85a76fe4c63f4a8e8d8cd.jpg<br><br>**Պատասխան.**<br>Աշակերտները կդիտեն նկարազարդումները և կբացահայտեն դրանցում օգտագործվող պատկերավորման տարրերն ու սկզբունքները. ձևը փոխանցված է ոչ թե ծավալով, լուսաստվերով և տոնային աստիճանավորմամբ, այլ գծերով, ֆոնը վերացական է (հաճախ ոսկեգույն), խախտված են ֆիգուրների համամասնությունները, խախտված է դրանց մասշտաբային հարաբերակցությունը ֆոնի վրա գտնվող շենքերի հետ, խախտված է հեռանկարը:<br><br>Ուսուցիչն այլ գույնի նշիչով/կավիճով ընդգծում է գրատախտակի վրա գրված, համապատասխան պատկերավորման տարրերն ու սկզբունքները (գիծ, հարթային ձևը, ֆոնի և պատկերի փոխկապակցվածությունը, համաչափություն, անհամաչափություն, հակադարձ հեռանկար*, մասշտաբի խառնում):<br>Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ամփոփել իրենց դիտարկումների արդյունքները. Ի՞նչ է պայմանական պատկերավորման լեզուն և ինչո՞վ է այն տարբերվում իրատեսական լեզվից:<br>* Հակադարձ հեռանկարին վերաբերող տեղեկատվություն, տե՛ս՝ Աշակերտի գիրք, էջ 277:<br><br>• **Գործնական ակտիվություն**. (խմբային)<br>Բաժանվե՛ք խմբերի, մտածե՛ք և նկարե՛ք ձեր դպրոցի առարկայական կաբինետների խորհրդանշանները:<br><br>• **Տնային առաջադրանք.** (ուսուցչի ընտրությամբ)<br><br>Պարզ, պայմանական պատկերներով նկարի՛ր գրական ստեղծագործության մի քանի նկարազարդումներ: Դատողություն արա, թե ի՞նչ տարրերով ես կատարել աշխատանքը: Ի՞նչ սկզբունքներ ես օգտագործել: Քո նկարած սյուժեն հասկանալի՞ է ընկերներիդ համար:<br><br>• **Ստեղծագործության վերլուծություն**. (Աշակերտի դասագիրք, էջ 44-45 դասարանական, բանավոր) | |

Առաջադրանքի պայմանը.
Քննարկի՛ր ստեղծագործությունը՝ համաձայն հետևյալ կետերի.
1. Նկարագրություն (նկարագրի՛ր այն, ինչ տեսնում ես)
2. Վերլուծություն (ինչպիսին են ստեղծագործության մեջ օգտագործված տարրերն ու սկզբունքները)
3. Մեկնաբանություն (ինչում է ստեղծագործության հիմնական գաղափարը)
4. Գնահատում (ինչու է այս աշխատությունն արժեքավոր)

**Ցուցումներ համալիր առաջադրանքի համար.**

• ***Համեմատական վերլուծություն***. (անհատական, գրավոր առաջադրանք)
Առաջադրանքի պայմանը.
Օգտագործի՛ր տրված նկարազարդումները և համեմատի՛ր տրված աշխատանքներն ըստ 4 կետերի.
1. Արվեստի ո՞ր ոլորտի ու ժանրի նմուշներ են ներկայացված:
Որո՞նք են դրանց ընդհանուր և տարբերակիչ գեղարվեստական առանձնահատկությունները:
Պատկերավորման ի՞նչ տարրեր ու սկզբունքներ են օգտագործվում դրանց մեջ իմաստն ու գաղափարն արտահայտելու համար:
2. Դրանցից ո՞րն է կատարված սրբանկարչության կանոնիկայի նախատեսմամբ և որը՝ ռեալիստական սկզբունքներով:
3. Դատողությո՛ւն արա, թե ինչն է պայմանավորել նմուշների տարբերությունը: Հիմնավորի՛ր քո կարծիքը:
4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն ես ավելի հավանում և ինչո՞ւ:

Համեմատության համար նշենք, որ ուսուցիչը կարող է աշակերտներին տալ միևնույն թեմայով ստեղծված բյուզանդական և վերածննդյան ցանկացած «զույգ»: Երկու տարբեր հնարավոր տարբերակների համար տե՛ս՝ Աշակերտի դասագրքում (էջ 44-47), ստորև տրված հղումով և հավելվածում:
* Ամփոփիչ գրավորի համար ուսուցիչը պետք է գունավոր տպի հավելվածի համապատասխան էջերը:

- Աշակերտները համեմատում են հռոմեական որմնանկարները քրիստոնեական սրբապատկերների և որմնանկարների հետ:
- Աշակերտները համեմատում են միևնույն սյուժեով կատարված միջնադարյան քրիստոնեական սրբապատկերներն ու որմնանկարները Վերածննդի դարաշրջանի հաստոցային գեղանկարչության և որմնանկարային նմուշների հետ:

Ցուցադրական նյութի հղումներ.



VI դ., Սինա լեռան Սուրբ Եկատերինա վանք, մոմանկար
http://community.fansshare.com/pic110/w/baptismal-font-at-st-bartholomew-s-church--li--ge/1200/28676_encaustic_virgin.jpg



Վլադիմիրի սրբապատկեր, XII դ., տեմպերա
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/1/14/Vladimirskaya_ikona.jpg



Սրբապատկերագիր, Ֆեոֆան Գրեկ, «Դոնի Տիրամայրը», XIV դ.,տեմպերա
https://i.pinimg.com/originals/2b/3f/ea/2b3fea204914868986291e680d2dc6b0.jpg



Ռաֆայել Սանտի, XV-XVI դ., յուղաներկ
https://i.pinimg.com/originals/04/73/a0/0473a04abff4f1474a5f56873cb9450f.jpg



Ռաֆայել Սանտի, Կաուպերի Տիրամայրը, XV-XVI դ., յուղաներկ
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/a/af/Raphael_-_The_Small_Cowper_Madonna_-_Google_Art_Project.jpg



Պիտեր Պաուլ Ռուբենս, XVII դ., յուղաներկ
https://bit.ly/2TZ2YaL


Քրիստոս Պանտոկրատոր (ամենակալ), Սինա լեռ, VI դ., մոմանկար
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/4/4a/Spas_vsederzhitel_sinay.jpg


Քրիստոս Պանտոկրատոր, Կիպրոս, XII դ., տեմպերա
https://i.pinimg.com/originals/0e/4d/63/0e4d634c8bce8d4e5ee091cf23315db0.jpg


Ջովաննի Բելլինի, XV-XVI դ., յուղաներկ
https://bit.ly/2XPDMVl


Ռաֆայել Սանտի, XVI դ., յուղաներկ
https://tr.wikipedia.org/wiki/Kutsayan_%C4%B0sa_(Rafael)#/media/Dosya:CristoRaffaello.jpg

- **Գործնական առաջադրանք** (անհատական)

Նկարի՛ր 2-3 պատկերով երկու կոմպոզիցիա. մեկը ռեալիստական, մյուսը՝ պայմանական պատկերավորման սկզբունքներով:
1. Առարկաների միջև պահպանի՛ր մասշտաբային հարաբերակցությունը: Լուսաստվերով և տոնային աստիճանավորմամբ փոխանցի՛ր առարկաների ծավալը:
2. Առարկաների միջև խախտի՛ր մասշտաբային հարաբերակցությունը: Առարկաների ձևը փոխանցի՛ր հարթ, ուրվագծերի միջոցով:

- **Տնային աշխատանք.**

Հնագույն դարաշրջանի և միջնադարյան քրիստոնեական արվեստի բնութագրական հատկանիշների համեմատական T սխեմայի կազմում.

Կազմի՛ր հնագույն և քրիստոնեական արվեստի սկզբունքային տարբերությունների, պատկերավորման տարրերի և սկզբունքների աղյուսակ: Հաջորդ դասերին շարունակի՛ր լրացնել սխեման:

Սխեմայի լրացված, ենթադրյալ նմուշ.

| **Հնագույն շրջանի արվեստ** | **Միջնադարյան քրիստոնեական արվեստ** |
|---|---|
| Պոլիթեիզմ կամ բազմաստվածություն | Մոնոթեիզմ կամ միաստվածություն |
| Հոգու և մարմնի հավասար կարևորություն | Հոգևորության առավելություն երկրայինի նկատմամբ |
| Արվեստի ստեղծագործությունների պատվիրատու հիմնականում ազնվականների խավն է: | Արվեստի ստեղծագործության պատվիրատուն հինականում եկեղեցին է: |
| Երկրային, մարմնական | Երկնային, աստվածային |
| Իրականությունն արտացոլող ռեալիստական պատկերավորման սկզբունքներ.<br>• Լուսաստվեր, տոնային աստիճանավորումով փոխանցված ծավալային ձևեր<br>• Իրական ֆոն<br>• Ճիշտ համամասնություններ<br>• Ճիշտ մասշտաբային հավասարակշռություն մարդկանց պատկերների և ճարտարապետական և բնական ֆոնի միջև<br>• Գծային հեռանկարի նշաններ | Սրբանկարչությամբ սահմանված խորհրդանշական, պայմանական պատկերավորման լեզու.<br>• Գծերով փոխանցված հարթ ձևեր<br>• Պայմանական ֆոն (հաճախ ոսկեգույն)<br>• Խախտված համամասնություններ<br>• Մարդկանց պատկերների միջև խախտված մասշտաբները աստվածային հիերարխիա են փոխանցում: Ֆոնի վրա կառույցներն ու բնապատկերը պայմանական են<br>• Հետադարձ հեռանկար |
| Կլոր քանդակների առատություն | Կլոր քանդակ ստեղծվում է միայն արևմտաքրիստոնեական երկրներում: IX դարից արևելաքրիստոնեական երկրներում քանդակը միայն ռելիեֆի տեսքով է շարունակում գոյությունը պահպանել: |
| Հռոմում խճանկարը հատակի (հազվադեպ՝ պատի) փոքր տարածքներ էր զբաղեցնում: | Բյուզանդիայում խճանկարը տաճարների ինտերիերի ամենանշանակալի խորհրդանշական տեղերն է զբաղեցնում և մոնումենտալ պաշտամունքային արվեստի է վերածվում: |

## 6. Քրիստոնեական Վրաստան

**Հարցեր.**

- ✓ Ի՞նչ է նշանակում որմնանակար (թաց ծեփի վրա տեմպերայի ներկերով կատարված, մոնումենտալ նկարչության տեխնիկաներից մեկը):
- ✓ Հիշի՛ր, թե որ տաճար ես այցելել:
- ✓ Ինչո՞վ է դա առանձնահատուկ:
- ✓ Այն զարդարվա՞ծ է որմնանկարներով:
- ✓ Ի՞նչ է պատկերված որմնանկարներում:
- ✓ Հասկանո՞ւմ ես դրանց բովանդակությունը:

**Պատասխաններ**.

Դասագրքի (էջ 54) տրված հարցին. Մանուկ Հիսուսի կողմ հրեշտակապետերի պարզած ձեռքերում խաչի պատկերով գնդեր են: Գտի՛ր խաչի այսպիսի պատկերի նշանակությունը: Ինչի՞ խորհրդանիշ է բլրի վրա վեր խոյացված խաչը:
Ի՞նչ է մեզ տեղեկացնում հրեշտապակետերի այս ժեստը և դեմքի վշտալի արտահայտությունը: Աշակերտները պետք է տեսնեն, որ գնդի մեջ խաչը պատկերված է եռանկյան վրա, ինչը Գողգոթայի խորհրդանիշն է:

**Լրացուցիչ տեղեկություններ Պալեոլոգոսյան Վերածննդի մասին.**

Պալեոլոգոսները Բյուզանդիայի վերջին և ամենաերկար կառավարած իշխանական արքայական տոհմն է, որը ղեկավարում է կայսրությունը 2 դար՝ 1261 թվականից մինչև Կոստանդնուպոլսի անկումը: Պալեոլոգոսների կառավարման ժամանակաշրջանը համընկնում է բյուզանդական մշակույթի վերջին վերելքի հետ, որը հայտնի է Պալեոլոգական Վերածնունդ անվանումով: Քանի որ այդ ժամանակ Արևմտյան Վրաստանը սերտ կապեր էր պահպանում Բյուզանդիայի հետ, Արևմտյան Վրաստանում մոնումենտալ գեղանկարչության մի շարք հուշարձաններ կիսում են այս վերելքի միտումը: Ըստ վրացական և հունական արձանագրությունների, Սամեգրելոյի իշխանի՝ Վամեղ Դադիանիի (1384-1396) հրամանով Ծալենջիխայի տաճարը զարդանկարել է Կոստանդնուպոլսից հրավիրված նկարիչ Կիր Մանուել Եվգենիկոսը: Այս որմնանկարները XIV դարի վերջին Կոստանդնուպոլսի դպրոցի միակ նմուշներն են, որոնք ճշգրիտ թվագրվել և ստորագրվել են նկարչի կողմից:

**Գործնական առաջադրանք**

- **Դրոշմաքանդակ ռելիեֆի ընդօրինակում** (տե՛ս դասագրքում (էջ 58-59) (դասարանական, զույգերով).

Աշակերտները կկարողանան դրոշմաքանդակ ռելիեֆի ընդօրինակման սկզբունքով՝ պատրաստել դեկորատիվ շրջանակ որմնանկարի ընդօրինակմամբ ստեղծված աշխատության համար: Բացի այդ, նրանք կկարողանան այս գործնական ակտիվության ընթացքում ձեռք բերված փորձը, գիտելիքները և հմտությունները օգտագործել հետևյալ գլուխներում (ասենք, աֆորիզմների գիրք պատրաստելիս (Գլուխ՝ Արվեստը կրթության ծառայության մեջ)՝ արդեն կիմանան գրքի համար ինչպես պատրաստեն դրոշմաքանդակ կազմի իմիտացիա):

- **Սրբապատկերների վերարտադրանկարի ձևավորում.**

* Սրբապատկերի վերատադրանկարի ձևավորման առաջադրանք դասագրքում չկա, քանի որ դա լրացուցիչ ակտիվություն է, որը պետք է իրականացվի ուսուցչի ցանկության համաձայն:

**Նյութ**.
Սրբապատկերի փոքր վերարտադրություն, ստվարաթուղթ, մկրատ, պվա սոսինձ, վրձին, գուաշի ներկ (այդ թվում, ոսկեգույն), լուցկի կամ երկար բռնակով կրակայրիչ՝ եզրերը այրելու համար:

Բարակ թղթի վրա տպված սրբապատկերների վերարտադրությունը հեշտությամբ մաշվում և ճմրթվում է:
Ժամանակակից վրացի նկարիչ Քեթևան Մատաբելին այսպիսի եղանակ է մտածել՝ տարբեր չափերի հաստ ստվարաթղթի կտորները սոսնձում է իրար («հնեցման» նպատակով կարելի է նույնիսկ փոքր-ինչ այրել եզրերը): Ստվարաթղթի կտորները ծածկում է ներկի շերտով, ոսկեգույն ներկով տալիս է մաշված փայլի էֆեկտ, իսկ վերևից կպցնում է թղթե սրբապատկերը:
Մտածե՛ք ձեր մեթոդի մասին, և դուք նույնպես կերկարաձգեք վերարտադրության կյանքը:
Սրբապատկերի ետին կողմից կախիչ ամրացրո՛ւ կամ պատրաստի՛ր տակդիր:


Քեթևան Մատաբելիի աշխատանքը

- **Առաջադրանք.** թվային ալբոմ

Միջնադարյան վրացական տաճարների և եկեղեցիների, դրանց նկարազարդման լուսնկարչական արձանագրում և թվային ալբոմի ստեղծում:
Ինտերնետային տարածքում սակավ տեղեկատվություն կա վրացական որմնանկարների մասին, լուսանկարները նույնպես փոքր քանակությամբ են:
Վրաստանում հնարավոր չէ գտնել բնակավայր, որտեղ կառուցված չլինի գոնե մեկ փոքրիկ եկեղեցի: Որոշ եկեղեցիներ ավերակների են վերածված, որոշները լավ պահպանված են, որոշները՝ զարդանկարված, որոշները՝ սպիտակ գույնով վերաներկված: Դրանցից յուրաքանչյուրը, ինչ վիճակում էլ լինի այն, մեր պատմությունն է, մեր գանձարանը:

Մի՛ զլանա, պահպանի՛ր դրանց տեսքը պատմության համար՝ լուսանկարում արտացոլի՛ր քո մոտակայքում գտնվող հին թե նոր, կանգուն թե խոնարհված եկեղեցին և նրա զարդանկարները: Լուսանկարի՛ր եկեղեցու ինտերիերը և էքստերիերը: Ստեղծի՛ր վրացական տաճարների և դրանց զարդանկարների թվային պատկերասրահ և ինտերնետային տարածքում տարածի՛ր լուսանկարները՝ համառոտ նկարագրությամբ:

* Այս առաջադրանքը կատարելու համար ցանկալի է կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա եկեղեցի: Կարելի է էքսկուրսիա կազմակերպել ավելի ուշ, երբ աշակերտները կուսումնասիրեն քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետությունը:

* Թվային ալբոմ ստեղծելու համար, բացի լուսանկարելուց, աշակերտները էքսկուրսիայի ընթացքում պետք է լրացնեն ձևաթուղթ.

*Էքսկուրսիային լրացվելիք ձևաթուղթը տե՛ս հավելվածում (ցանկալի է ուրվանկարներ անելու համար հատկացված վանդակները մինչև տպելը մեծացվեն):

## Ցուցումներ համալիր առաջադրանքի համար

**Պատրաստել տեմպերա և նկարել որմնանկարի ընդօրինակում**

Այս առաջադրանքը կատարելու համար աշակերտները պետք է ծանոթանան «Սուրբ Ծննդյան» սյուժեին և ընտրեն դրվագներից մեկը: Հնարավոր է նաև գտնել և ընտրել աստվածաշնչյան ցանկացած այլ պատմություն և նկարել այդ պատմությունը պատկերող տեսարաններից մեկը:

Առաջադրանքի խնդիրն է աշխատանքը կատարել՝ հաշվի առնելով միջնադարյան որմնանկարների բնորոշ առանձնահատկությունները (հարթություն, պայմանականություն և այլն):

Ճիշտ է, աշխատանքի չափը ընտրելու են հենց աշակերտները, նախընտրելի է, որ այն լինի ոչ պակաս, քան A3 ձևաչափը: Եթե նախնական էսքիզները արվեն համեմատաբար փոքր թղթի վրա, աշակերտները կկարողանան դրանք տեղափոխել ավելի մեծ ֆորմատի վրա՝ ցանցի միջոցով.

Էսքիզի վրա, հասարակ մատիտով, պետք է թույլ նկարել հավասար քառակուսիների բաժանված ցանց: Նմանատիպ ցանց (հաշվի առնելով մասշտաբը) կնկարվի նաև նախապես պատրաստված մեծ չափի ստվարաթղթի վրա: Էսքիզի ուրվագծային պատկերի վանդակներում հայտնված հատվածները կարտանկարվեն մեծ ֆորմատի վրա, համապատասխան վանդակներում:

Որպեսզի ստվարաթղթի վրա կատարված աշխատանքին որմնանկարի կազմվածք տրվի, ստվարաթուղթը պետք է նախապես նախաներկել կավճի փոշու և ջրախառն պվա սոսնձի խառնուրդով (տե՛ս բաղադրատոմսը Աշակերտի գրքում):

Եթե աշխատանքը կատարվում է գիպսաստվարաթղթի վրա, գիպսաստվարաթղթի կտորի մի կողմից պետք է հանվի թղթի շերտը: Դրա համար թաց թղթի շերտը մատներով, սպունգով կամ հղկաթղթով գիպսի շերտից այնպես պետք է հանվի, որպեսզի մակերևույթը չքերծվի: Սակայն, քերծվածքները կարող են ստեղծագործությանը հնառճի ազդեցություն հաղորդել:

(Տե՛ս «Տեմպերայի» բաղադրատոմսը Աշակերտի դասագրքում (էջ 60-61):

**Առաջադրանքի պայմանները.**

1. Գիպսաստվարաթղթի կտորի կամ հատուկ լուծույթով նախաներկած ստվարաթղթի վրա նկարե՛ք «Սուրբ Ծննդյան» թեմայով կոմպոզիցիա, որը կստեղծի որմնանկարչության տեխնիկայի տպավորություն:

Հաշվի՛ առ միջնադարյան որմնանկարչության պատկերավորման առանձնահատկությունները (հարթություն, գծայնություն, պայմանականություն, հետադարձ հեռանկար և այլն):

2. Փորձի՛ր մեկ նկար նկարել թաց մակերեսի վրա (fresco):
3. Մյուսը չորացած նախաներկի վրա (secco) և համեմատի՛ր ստացված արդյունքները:

*Ուսուցիչը կարող է սահմանափակ հնարավորություն ունեցող աշակերտներին առաջարկել որևէ պարզ որմնանկարի պատճեն կամ նրա ընդօրինակում նկարել։

**Ռեսուրսներ.**

Ամփոփիչ զրավորի համար.

*Երկու նկարազարդումները դրվեն էկրանի վրա կողք-կողքի, կամ տպվեն-հանվեն գունավոր (հղումները՝ տե՛ս մատրիցայից հետո).

«Եգիպտոսի կարոտը»

Սյուժեն. Հովսեփին հայտնվում է մի հրեշտակ և զգուշացնում նրան, որ Հերովդես թագավորից նորածին Հիսուսին վտանգ է սպառնում։ Ուստի, նրանք անհապաղ պետք է փախչեին Եգիպտոս, ժամանակավորապես, մինչև վտանգն անցներ։ Հովսեփն այդպես էլ վարվեց։ Ընտանիքը մեկնեց Եգիպտոս։ Երբ նրանք հասան Եգիպտոս, հեթանոսական տաճարներում կուռքերը ընկան։ (Պատմության մասին մանրամասն տեղեկություններ՝ տե՛ս՝http://orthodoxy.ge/tserili/zosime/2_13-23.htm)

Նմուշներ համեմատելու համար.

Դուչանո, Կոսովո (Սերբիա), XIV դարի որմնանկար

https://cdn11.bigcommerce.com/s-30c33/images/stencil/1280x1280/products/2926/3004/Egypt__00452.1449092264.jpg?c=2&imbypass=on

և.

Վիտտորե Կարպաչչո, հաստոցային գեղանկարչություն, 1515 թ.

https://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/Vittore_Carpaccio_-_Fuga_in_Egitto_%28Washington%29.jpg

Երկրորդ տարբերակ.

«Մուտքը Երուսաղեմ»

Սյուժեն. Հիսուս Քրիստոսը հաճախ քայլում էր Երուսաղեմում, բայց Ղազարոսի Հարությունից հետո, որպես մահը պարտության մատնողի, մարդիկ Նրան դիմավորեցին հանդիսավոր բացականչություններով և երգերով։ Նրա ոտքերի առջև ծառի ճյուղեր էին փռում, հանում իրենց զգեստներն ու նրա ոտքերի տակ փռում։

(Պատմության մասին ավելին տե՛ս ՝ http://www.orthodoxy.ge/tserili/zosime/21_1-17.htm

Համեմատելու նմուշներ.

Խճանկար, Պալատինա կապելլեա, Պալերմո, Սիցիլիա, XII դ. https://img.over-blog-kiwi.com/0/97/67/31/20170409/ob_4c0b5d_2088750508.jpg

և.

Հանս Հոլբեյն (Ավագ), 1501 թ.

https://sammlung.staedelmuseum.de/images/2709/hans-holbein-d-ae-entry-jerusalem-hm17--thumb-xl.jpg

Լրացուցիչ ռեսուրսներ.

Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012 թ.

https://bit.ly/2TZ3R3d

| | |
|---|---|
| Կիտի Մաչաբելի, X-XII դդ. կերպարվեստը. http://www.bu.org.ge/x1135?lang=geo<br>Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010:<br>Նինո Խունդաձե, Վրաց նկարչության զարգացման մասին…:<br>https://naec.ge/uploads/postData/Jurnal/N14/NAEC-Journal-14-8.pdf<br>Վրաստանի եկեղեցիների ու վանքերի, նրանց նկարչության մասին.<br>http://saunje.ge/index.php?option=com_content&view=article&id=11&Itemid=3&lang=ru | |

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները**

**Կերպարվեստի տեխնիկան**

- Ստեղծագործության մեջ կիրառում է այն գեղարվեստական պատկերավորման սկզբունքները, որ կիրառում էին ընտրված դարաշրջանում և մշակույթում (ձև, գույն, գիծ, մասշտաբ, համամասնություն և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1, 4):**
- Աշխատություն է ստեղծում տարբեր գեղարվեստական ոճերում (օրինակ՝ սխեմատիկ, ոճավորված, ծավալային ), մտահղացմանը համապատասխան ընտրում է գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ, նյութ, տեխնիկա **(Կերպ.կիր.հիմն.1,2):**

**Կերպարվեստի բնագավառներ ու ժանրեր**

**Տարբեր դարաշրջանների/հոսանքների/ոճերի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Վերլուծում է որևէ դարաշրջանի կամ մշակույթի արվեստի նմուշ և դատողություն անում, թե ինչ տեղեկություն է ստացել դրա միջոցով **(Կերպ.կիր.հիմն.3):**
- Վերլուծում է հասարակության վրա արվեստի ներգործության ձևերը և գեղարվեստական պատկերավորման սկզբունքները **(Կերպ.կիր.հիմն.3, 4):**
- Դատողություն է անում արվեստի, որպես հասարակության ինքնարտահատման միջոցի մասին, բերում է մի քանի օրինակներ **(Կերպ.կիր.հիմն.3, 4):**
- Դատողություն է անում դարաշրջանների փոխազդեցության մասին՝ մի քանի օրինակների հիման վրա **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Համեմատում է երկու դարաշրջաններ կամ մշակույթներ՝ ըստ հասարակության վրա ներգործելու տարրերի **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքների գնահատման մասին.**

**Որմնանկարի իմիտացիայի ստեղծում** (10 միավոր).

- Կոմպոզիցիայի բովանդակությունը համապատասխանում է պայմանին (2 միավոր):
- Նկատի է ունեցել միջնադարյան որմնանկարի պատկերավորման առանձնահատկությունները (հարթայնություն, գծայնություն, պայմանականություն և այլն)(3 միավոր):
- Իր ձեռքով է պատրաստել ներկերը (2 միավոր):
- Մտածված և ստեղծագործաբար է կիրառել որմնանկարի տեխնիկան (3 միավոր):

**Համեմատական վերլուծություն.**

- Աշակերտը տարբերում է և վերլուծում տարբեր դարաշրջանների արվեստին բնորոշ նշանները, անվանում է դրանք հարուցող պատճառները, քննարկում է դրանք կրոնական/մշակութային համատեքստում:

*(Հավելվածում տրված է համեմատական վերլուծության գնահատման երեք տարբեր ձև: Ուսուցիչը կարող է ինքն ընտրել որևէ մեկը:)

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 1/3

<table>
<tr><td colspan="3">Դասեր 8-12  Միավորող թեմաներ. Իսլամական արվեստը, Արվեստը կրթության համար:</td></tr>
<tr><td>Հարցեր և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Տարրեր.<br>գիծ, գույն, ձև, ֆոնի և պատկերի փախհարաբերությունը:<br>Համամասնություններ.<br>կոմպոզիցիոն բաշխում, կոնտրաստ, հարաբերակցություն, մասշտաբ, զարդանախշ:<br>Բնագավառներ.<br>նկարչություն (գրաֆիկա, մանրանկար):<br>Կերպարվեստի տեխնիկա.<br>թվային տեխնոլոգիաներ:</td><td>• Ո՞ր գործոններն են սահմանել իսլամական արվեստի առանձնահատկությունները:<br>• Ո՞րն է հիմնարար տարբերությունը քրիստոնեական և իսլամական տաճարների ներքին հարդարման միջև:<br>• Որո՞նք են միջնադարյան քրիստոնեական և իսլամական նկարչության նմանություններն ու տարբերությունները:<br>• Ի՞նչ դեր ունի արվեստը կրթության ծառայության մեջ:</td><td rowspan="2">Աֆորիզմների գրքի ստեղծում<br>(թղթային և թվային տարբերակ)</td></tr>
<tr><td colspan="2">Պատասխաններ հանգուցային հարցերին.<br>✓ Իսլամական արվեստի առանձնահատկությունները սահմանել են կրոնական դոգմաները:<br>✓ Իսլամական պաշտամունքային կառույցների ինտերիերը, ի տարբերություն քրիստոնեականի, զարդարված չէ որմնանկարներով և սրբապատկերներով:<br>✓ Քրիստոնեական և իսլամական նկարչությունների նմանությունները արտահայտվում են պայմանական պատկերավորման լեզվով, իսկ տարբերությունը քրիստոնեականի պարզության և խստության  և իսլամականի զարդարուն, դեկորատիվ բնույթի մեջ է:<br>✓ Արվեստը բառին, գաղափարին տալիս է տեսանելի տեսք և այդպիսով տարածում գաղափարները պատկերավորման սկզբունքներով:<br><br>8 -9 Իսլամական արվեստը, Իսլամի նկարչությունը<br><br>Այս գլխում աշակերտները կծանոթանան իսլամական արվեստին, կիմանան, թե ինչպիսի ուղիներ է գտնում արվեստը կրոնական արգելքների պայմաններում, կծանոթանան զարդանախշերի տեսակներին: Հաջորդ գլխում այս գիտելիքները կօգնեն նրանց տեսնել բյուզանդական արվեստի վրա իսլամի ազդեցության նշանները:<br><br>Հարց.<br>✓ Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներ են հաստատվել իսլամական արվեստում:<br>✓ Ո՞ր բնագավառներն են առաջատար դարձել իսլամական արվեստում և ինչո՞ւ:<br>✓ Ի՞նչ արգելք է սահմանել իսլամական կրոնը կերպարվեստում:<br>✓ Ո՞ր կրոնական արգելքը խթան հանդիսացավ պարսկական խեցեգործության տեխնոլոգիայի և դիզայնի զարգացմանը:<br>✓ Ո՞ր դեպքերում է խախտվում մարդկանց և այլ կենդանի արարածների պատկերման արգելքը:</td></tr>
</table>

- ✓ Ի՞նչ է արաբեսկը, և ինչո՞ւմ է արտահայտվում զարդանախշի այս տեսակի առանձնահատկությունը:
- ✓ Ի՞նչ է մանրանկարը, և ո՞րն է դրա առանձնահատկությունը:
- ✓ Որո՞նք են Ջումա մզկիթի ներքին հարդարանքի առանձնահատկությունները: Ինչո՞ւ է Թբիլիսիի մզկիթը համարվում առանձնահատուկ աշխարհի այլ մզկիթների շրջանում:

**Պատասխան դասագրքում տրված Ջումա մզկիթի վերաբերյալ հարցին**.

- ✓ Դասագրքում տրված լուսանկարում չի երևում, որ Թբիլիսիի Ջումա մզկիթում կա երկու միհրաբ: Թբիլիսիի մզկիթն այն հազվադեպ դեպքն է, երբ իսլամի երկու հակառակ ճյուղերի ներկայացուցիչները՝ սուննիները և շիաները, միասին են աղոթում:
- ✓ Ցանկալի է, որ ուսուցիչը աշակերտներին մատնանշի վիրացալեզու հետևյալ հղումները, որոնցից աշակերտները ամբողջական տեղեկատվություն կստանան Ջումա մզկիթի պատմության և առանձնահատուկ լինելու մասին:

<u>Հղումներ Թբիլիսիի Ջումա մզկիթի մասին տեղեկություններ գտնելու համար.</u>
http://www.ttimes.ge/archives/64098
https://sputnik-georgia.com/columnists/20160824/233070903.html

**Դասագրքում տրված առաջադրանքի հուշում**. Դիտի՛ր Անչիսխատիի եկեղեցու դարպասները և գտի՛ր իսլամական ճարտարապետության նշաններ: Աշակերտները պետք է նշեն.
ա) նետաձև կամար,
բ) նետաձև որմնախորշ,
գ) աղյուսի դեկորատիվ շարվածք:

**Դասագրքում տրված հարցին**՝ Քրիստոնեական եկեղեցական համալիրի ո՞ր կառույցն է համապատասխանում իսլամական մինարեին, և ի՞նչ գործառույթ ունի այն:
**Պատասխանն է**. Զանգակատունը: Զանգակատնից զանգերի ղողանջով հավատացյալներին կանչում են պատարագի:

- ✓ **Գործնական աշխատանք** (զույգերով):

Դեկորատիվ սալիկ (ջնարակված սալիկի իմիտացիա).
Միագույն պլաստիլինի բարակ շերտով ծածկված ստվարաթղթի ուղղանկյուն կամ ութանկյուն կտորի վրա մեկ այլ գույնի պլաստիլինով դեկորատիվ (զարդանախշային կամ պատմվածքի թեմաներով) ռելիեֆային աշխատանքի կատարում:

- ✓ **Գործնական աշխատանք «Արաբեսկ»** (Աշակերտի դասագիրք, էջ 66-67)

Միևնույն ձևի և չափի զարդանախշերով նկարազարդված երկրաչափական պատկերներով խճանկարային պանո հավաքել:

Նյութ.
բարակ ստվարաթուղթ,
քանոն, կարկին, մկրատ,
մատիտ, սև նշիչ,
ֆլոմաստեր, գունավոր մատիտներ կամ ներկեր (աշակերտի ընտրությամբ),
մեծ չափի ֆորմատ,
սոսինձ:

Առաջադրանքի պայմանները.

Խմբերի բաժանված աշակերտները իրար մեջ կբաժանեն ապագա զարդանախշի ուղղանկյուն ձևերը: Յուրաքանչյուր խմբի բոլոր անդամները կաշխատեն նույն ձևի և չափի «սալիկների» վրա: Յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն կգծի, կձևի և կզարդանկարի խմբի կողմից ընտրված ութանկյունաձև մի քանի տարբերակ:

Զնարակված սալիկների նման պատրաստ «սալիկներով» խմբերը մեծ ֆորմատների վրա կհավաքեն արաբեսկներ, ինչի համար միանման սալիկներն այնպես կդասավորեն, որ ձևերը միմյանց դիպչեն անկյուններով կամ կողմերով: Արդյունքում պետք է ստացվի կոկիկ, սիմետրիկ արաբեսկ:

Սահմանափակ հնարավորություն ունեցող աշակերտներին, նրանց ունակությունների նախատեսմամբ, հնարավոր է հանձնարարվի միայն ձևերը կտրել-հանել կամ արդեն կտրած-հանած ձևերը նկարազարդել կամ մասնակցել արաբեսկի հավաքման գործընթացին:

Ութանկյուն ձևերի կառուցման նմուշ.



- ✓ **Համեմատական վերլուծություն** (դասարանական, խմբային) (տե՛ս՝ Աշակերտի դասագիրք, էջ 74-75):
- ✓ Աշակերտները իրար հետ կհամեմատեն հունական քանդակի հռոմեական պատճենը և պարսկական մանրանկարները:

Վերլուծության նմուշ.

Այս աշխատությունները իրարից բաժանում է գրեթե 20 դար: Չնայած դրան՝ դրանք շատ նման են իրար: Հնագույն քանդակում և պարսկական մանրանկարում կանայք նույն կեցվածքով են կանգնած: Հնագույն նմուշը կլոր քանդակ է (նրա շուրջ կարող ես պտտվել բոլոր կողմերից): Երկրորդ օրինակը՝ գունավոր մանրանկար է, իսկ երրորդը՝ գրաֆիկական նկար: Պարսիկ մանրանկարիչները չեն փորձում երկչափ հարթության վրա ստեղծել եռաչափ ծավալի պատրանք: Նրանք չեն օգտագործում լուսաստվեր և տոնային աստիճանավորում: Նրանց նկարները դեկորատիվ են: Հիմնական պատկերավորման տարրը գիծն է (հոսուն, ճկուն): Գծերն անհավասար հաստության են, ինչը բազմազանություն է բերում նկարի մեջ: Գունավոր մանրանկարների վրա վառ գունավոր բծերը աշխուժանում են զարդանկարային մոտիվներով:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին խոսել ֆոնի և լրացուցիչ մանրամասների մասին:

- ✓ Աշակերտները կհամեմատեն մանրանկարների հետ Անրի Մատիսի նկարը և դատողություն կանեն դրանց նմանությունների ու տարբերությունների մասին:

**Վերլուծության նմուշ**.

Չնայած պարսիկ մանրանկարիչները և Անրի Մատիսը տարբեր ժամանակներից և մշակույթներից են, նրանց աշխատանքները շատ նման են միմյանց: Անրի Մատիսի նկարում հստակորեն նկատվում է արևելյան նկարչությամբ հրապուրվելը. հարթայնությունը, ծավալների, լուսաստվերի, հեռանկարի անտեսումը, զարդանախշերի և մանրամասերի առատությունը, վառ գույները և այլն:

**10. Իսլամի խեցեղենը (Տանը ընթերցելու նյութ)**

- ✓ **Տնային աշխատանք**.

Միանգամյա օգտագործման ափսեի գեղագրական մակագրությամբ (մեջբերում, արտասանություն, բանաստեղծության տող և այլն) և նկարով ձևավորում:

**11-12 Արվեստը կրթության ծառայության մեջ (գեղագրություն): Մանրանկար**

Նախքան թեման ուսումնասիրելը, ուսուցիչը կարող է աշակերտներին ուղղել հետևյալ հարցերը.

- ✓ Ինչ եք կարծում, ո՞րն է արվեստի դերը կրթության ծառայության մեջ:
- ✓ Ի՞նչ ձևով է արվեստը ծառայում կրթությանը:
- ✓ Ինչո՞ւ է անհրաժեշտ գիրքը նկարազարդել:

**Քննարկում**.

- ✓ Համեմատի՛ր Ռոսանոյի օրենսգրքի և Սան Ապոլինար Նուովոյի եկեղեցու «Խորհրդավոր ընթրիք» խճանկարները: Որոշի՛ր, թե ինչ նկատի ունեն այս դրվագի սրբանկարչության կանոնները (զույգերով, դասարանական):

**Պատասխան**. Ճիշտ է, առաջին նկարազարդումը ձեռագրի մանրանկար է, իսկ երկրորդը՝ խճանկար, երկուսն էլ կատարված են նույն ժամանակահատվածում՝ VI դարում: Սրբանկարչության կանոնիկան ենթադրում է հերոսների խիստ կոմպոզիցիոն բաշխում. Քրիստոսը պատկերված է ձախ եզրին: Սպիտակ հագուստով առաքյալները տեղավորված են սեղանի շուրջ կիսաշրջանով: Քրիստոսի կազմվածքն առանձնանում է չափով, հագուստի գույնով և լուսապսակով: Երկու տեղում էլ առաքյալների միատարր դեմքերը տարբերվում են միայն մազերի գույնով և սանրվածքով, ինչը վկայում է նրանց տարիքային տարբերության մասին: Սեղանի վրա ձուկ է դրված: (Ուսուցիչը կարող է աշակերտներին հարցնել, թե ինչ է խորհրդանշում ձուկը: (Քրիստոսին))

- ✓ Դիտի՛ր Ռոսանոյի օրենսգրքի երկրորդ մանրանկարը և XV դարի անհայտ գերմանացի նկարչի գեղանկարչական կտավում «Ոտնլվա» արտացոլող կոմպոզիցիաները և դատողությո՛ւն արա տարբերությունների մասին (անհատական, տնային առաջադրանքներ):

**Պատասխան**. Ռոսանոյի օրենսգրքի երկրորդ մանրանկարը կատարված է պայմանական գեղարվեստական սկզբունքներով՝ հարթ և գծային: Ֆոնը չեզոք է, մանուշակագույն (կայսերական, աստվածային): Շրջապատը չի ակնարկվում: Անհայտ գերմանացի նկարչի գեղանկարչական կտավի վրա կոմպոզիցիան համեմատաբար իրատեսական է, հերոսների կեցվածքներն ու շարժումներն ավելի բնական են, առաքյալների դեմքերի արտահայտությունները և հագուստը տարբերվում է միմյանցից: Գործողությունը տեղի է ունենում գծային հեռանկարով փոխանցված ինտերիերում, որտեղ մենք տեսնում ենք բազմաթիվ մանրամասեր (ապակեպատ պատուհաններ, պատի պահարան, կահույք և սպասք, բաց դռան մեջ երևում է սանդուղք): Հագուստի ծալքերը (ծալազարդումը) ներկայացված են լուսաստվերով և տոնային աստիճանավորմամբ:

Այս պատկերագրական տարբերության հիմնական պատճառն այն է, որ ստեղծագործություններին իրարից բաժանում է տասը դար:

- ✓ Ո՞րն է տարբերությունը որմնանկարի և մանրանկարի միջև:

**Պատասխան**. Մանրանկարը փոքր չափի պատկեր է: Այն զարդարում է ձեռագիր գիրքը, իսկ որմնանկարը նկարվում է պատի վրա և պատկանում է մոնումենտալ նկարչությանը:

**Հետազոտություն**.

- ✓ Քանի՞ գիր կա աշխարհում: (անհատական, տնային աշխատանք)

Գտի՛ր տեղեկություններ տարբեր ժամանակների և ժողովուրդների գրերի մասին:
Հավաքի՛ր գրերի նմուշներ և ստեղծի՛ր էլեկտրոնային ալբոմ:
Համեմատի՛ր տարբեր երկրների գեղագրության նմուշներ:
Ընտրի՛ր գրերից մեկը:
Ուսումնասիրի՛ր նրա պատմությունը և ներկայացրո՛ւ հետազոտության արդյունքները ընկերներիդ:

**Գործնական աշխատանք**

- ✓ **Կարմիր գիրք `« Վրաստանի ֆլորան և ֆաունան» (խմբային աշխատանք)**

Գտե՛ք Վրաստանի բուսական և կենդանական աշխարհի Կարմիր գիրքը:
Ծանոթացե՛ք հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների տեսակների:
Ընտրե՛ք և իրար մեջ բաժանե՛ք մեկական տեսակ:

Հավասար չափի թերթիկների վրա յուրաքանչյուրդ նկարե՛ք ձեր տեսակները:
Գեղեցիկ գեղագրով գրե՛ք նրանց վրացական և լատինական անունները:
Կցե՛ք համառոտ տեղեկություններ ընտրված տեսակների մասին:
Նկարները էջակալե՛ք որպես գիրք կամ պատշաճ կերպով ձևավորված նկարները ցուցադրե՛ք դպրոցի միջանցքում, որպեսզի մյուս աշակերտները կարողանան ծանոթանալ դրանց:

✓ **Գլխագիր** (անհատական):

Զարդանախշով ձևավորված անուն ազգանվան սկզբնատառեր նկարել:

* Ցանկալի է, որ ուսուցիչը աշակերտներին հիշեցնի, որ զարդանախշը կարող է լինել օրգանական կամ բնական, բուսական, երկրաչափական, խառը, նրանց առաջարկի գտնել տարբեր երկրներին բնորոշ զարդանախշերի տեսակներ, որպեսզի աշակերտները կարողանան տեղեկացված ընտրություն կատարել: Բացի այդ, աշակերտները կարող են մտածել տառը ձևավորելու իրենց սկզբունքը (որը կարող է ընդհանրապես զարդանախշ չունենալ):
(Մանրամասն հրահանգների համար տե՛ս Աշակերտի դասագիրք, էջ 87)

*https://www.facebook.com/watch/?v=2270897236304200

✓ **Ցուցահանդես**.
Ցանկալի է, «Հասարակություն և արվեստ» բաժնի վերջում ցուցահանդես կազմակերպվի:
Աշակերտները կմտածեն հայեցակարգ և ցուցահանդեսի վերնագիր, որը համապատասխանում է իրենց ներկայացրած աշխատանքներին: Ցուցահանդեսին աշակերտները կներկայացնեն «Հասարակություն և արվեստ» բաժնի շրջանակներում պատրաստված աշխատությունները.
Խճանկարի, որմնանկարի իմիտացիայով նկարված կոմպոզիցիա Սուրբ Ծննդյան թեմայով: «Վիտրաժի իմիտացիա», խմբային աշխատություն «Շոթա Ռուսթավելի աֆորիզմներ», խմբերի կողմից պատրաստված արաբեսկների պանոներ, գլխագիր տառեր, գեղագրական աշխատություններ: Պաստառներ նախագծի համար. «Ես ուզում եմ փոխել ...» և այլն:

Յուրաքանչյուր աշակերտ ընտրում է թեմաներից մեկը անցած նյութից և ներկայացնում գրավոր զեկույց, որը պետք է ներառի հետազոտություն, վերլուծություն և թեմայի վերաբերյալ իր սեփական կարծիքը:

**Ցուցումներ համալիր առաջադրանքի համար.**

Վրացական գլխագիր տառերի դիզայնի հղումներ.
*https://www.facebook.com/watch/?v=2270897236304200
*https://bit.ly/2TY7EOq

| | |
|---|---|
| **Աֆորիզմների գիրք** (Աշակերտի դասագիրք, էջ 88)<br>(թղթային և թվային տարբերակ)<br>(անհատական և խմբային աշխատանք)<br><br>**<u>Նյութ.</u>**<br><br>«Ընձենավորից» դուրս գրված Շոթա Ռուսթավելիի աֆորիզմները,<br>հասարակ և գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ, գեղագրական գրիչ, բարակ վրձին,<br>թանաք, տուշ, ջրաներկ կամ գուաշի ներկեր,<br>նկարչական թերթեր, բարակ ստվարաթղթի թերթեր,<br>համակարգիչ, սկաներ, գունավոր տպիչ,<br>թղթե ամրակներ, սոսինձ,<br>մախաթ, հաստ կարի ասեղներ,<br>մետաքսի կամ կանեփի թել։<br><br>Աշակերտների կողմից հավասար չափի թերթերի վրա, անհատապես, գեղեցիկ գեղագրությամբ գրված և զարդանախշերով կամ բովանդակությանը համապատասխան նկարով ձևավորված աֆորիզմներով էջակազմի համատեղ գրքի թղթային և էլեկտրոնային տարբերակ։<br>* Ուսուցիչը նախապես կխոսի աշակերտների հետ և ունեցած գիտելիքներն ակտիվացնելու համար կհարցնի, թե արվեստի որ բնագավառին է պատկանում գրքերի ձևավորման արվեստը (գրաֆիկային)։ Ուսուցիչն աշակերտներին կհարցնի, թե ինչպես է կոչվում ձեռագիր գրքի նկարներով զարդարելու արվեստը (մանրանկարչություն)։<br>* Աշակերտները պետք է նախապես որոշեն թերթերի և տեքստի գույնը։ Աշակերտները պետք է քննարկեն և իրենք որոշեն տեքստի գույնը տարբերվի՞ թերթի (կոնտրաստային և հստակ ընկալելի) գույնից, թե՞ լինի հարակից գույնի։<br><br>* Աշակերտները պետք է նախապես որոշեն տառերի և զարդանախշերի չափերը, մասշտաբը, թերթի վրա տեքստի կոմպոզիցիոն բաշխումը, տեքստի և դրա զարդարանքի հարաբերակցությունը։ Աշակերտները պետք է մտածեն, թե ինչպիսի զարդանախշ կսազի իրենց աշխատանքին (բուսական, երկրաչափական կամ խառը)։ Ուսուցիչը կարող է աշակերտներին հիշեցնել, որ զարդանախշը ստացվում է որոշակի ձևերի ռիթմիկ կրկնությամբ (սակայն, սա ևս պարտադիր պայման չէ առաջադրանքի համար)։<br><br>Գրքի էլեկտրոնային տարբերակը հանդիսանում է աշակերտների համակարգչում բեռնված աշխատությունների մեկ փաստաթղթով կազմակերպված ֆայլ։ Գրքի թղթային տարբերակը նույն աշխատությունների տպած-հանած և էջակապած մի քանի օրինակ է։ Ցանկալի է, որ յուրաքանչյուր օրինակ ունենա նկարազարդարված կամ թեմայի համապատասխան նկարով ձևավորված կազմ։<br>• Սիու և հիկնու աշակերտների ունակությունների նախատեսմամբ, նրանք կարող են ստանձնել ընկերների նկարները համակարգչում ներբեռնումը և հաջորդաբար դասավորումը, տպած զարդանախշերի գունավորումը, էջադրվելիք գրքերի կարգավորումը և այլն։ | |

Ցանկալի է կազմակերպել ցուցահանդես, որտեղ աշակերտները կներկայացնեն գեղագրորեն զարդարված «աֆորիզմների գիրք», գրքի համար նկարված անհատական աշխատանքներ և էսքիզներ: Ինչպես նաև սեփական գեղագրական աշխատանքներն ու կատարած հետազոտության արդյունքները:
Գրքերի էջադրման նմուշներ.







Ռելիեֆային կազմ.

- ✓ Աֆորիզմների գրքի կազմը գրքի էջերից մի փոքր ավելի բարձր և լայն պետք է լինի:
- ✓ Նկատի՛ ունեցեք նաև գրքի հաստությունը:
- ✓ Կազմի համար հատկացված ստվարաթղթի վրա մատիտով նկարի՛ր ռելիեֆի ուրվանկար:
- ✓ Գծերի երկայնքով հաստ թել սոսնձի՛ր: Թելով կազմի վրա սոսնձի՛ր թուղթ, անձեռոցիկի պատառ կամ գործվածքի կտոր:
- ✓ Գունավորի՛ր կազմը և վրան գրի՛ր վերնագիրը:

Հեշտացված տարբերակ.

Տպված և ձևավորված նկարները կարող են փակցվել նկարչության տետրի թերթերի վրա և ձևավորել տետրի կազմը:

**Ռեսուրսներ.**

Իսլամական ճարտարապետություն.
https://bit.ly/2zRY4FH

Թբիլիսիի Ջումա մզկիթը.
http://www.ttimes.ge/archives/64098
https://sputnik-georgia.com/columnists/20160824/233070903.html

Մզկիթներ Սամցխե-Ջավախեթիում.
http://liberali.ge/articles/view/24435/samtskhejavakhetis-uchinari-mechetebi

Բազմազգ Թբիլիսին.
https://bit.ly/2AuPQDm

Կորդոբայի մզկիթը, Իսպանիա, VIII դ.
https://www.youtube.com/watch?v=Q3etLlvo1v4
Աշխարհի 10 գեղեցկագույն մզկիթներ.
https://reginfo.ge/offload/item/870-msoplios-10-ulamazesi-mecheti
Մանրանկարչություն.
Աթոս, XIII դ.
http://cp14.nevsepic.com.ua/216/21571/thumbs/1389947398-zastavka-k-evangeliyu-ot-ioanna.jpg
Աթոս, XIII դ.
http://cp14.nevsepic.com.ua/216/21571/1389947409-zastavka-k-evangeliyu-ot-luki.jpg
Ռոսանոյի օրենսգիրքը, VI դ.
http://www.chicercate.net/wp-content/uploads/2015/03/3.-Chi-cercate.jpg
https://siviaggia.files.wordpress.com/2015/12/02-codice-purpureo-di-rossano_patrimonio-unesco-2015.jpg
https://bit.ly/2TY8yKN
https://live.staticflickr.com/3729/11531705415_3ff2ff23b0_b.jpg
http://www.unesco.org/new/fileadmin/MULTIMEDIA/HQ/CI/CI/images/mow/italy_codex_purpureus_rossanensis_5.jpg
Ռաբուլայի Ավետարանը, VI դ.
https://i.pinimg.com/originals/48/b1/ff/48b1ff536d274f07d5d48033a7de8f5f.jpg
https://i.pinimg.com/originals/4b/d2/db/4bd2db2bdc2ca423a6b3c1f9fefb2bcd.jpg
http://warfare.tk/6-10/Rabbula_Gospel-4r.jpg
https://i.pinimg.com/originals/55/b2/a2/55b2a2aae6768e11fe7d7123eb66e3cf.jpg
Խաչելություն և Հարություն.
https://pbs.twimg.com/media/DQ7NVKMWkAAQO05.jpg
Համբարձում.
https://live.staticflickr.com/8452/8018452391_a5b0c56d73_b.jpg
Սուրբ Հոգու կերպարանափոխություն.
https://pbs.twimg.com/media/DXS7OZmW4AEuoUc.jpg
Դիոսկորիդներ.
https://content.wdl.org/10690/service/thumbnail/1431370005/1024x1024/1/3.jpg
https://content.wdl.org/10690/service/thumbnail/1431370005/1024x1024/1/45.jpg
https://content.wdl.org/10690/service/thumbnail/1431370005/1024x1024/1/55.jpg
https://content.wdl.org/10690/service/thumbnail/1431370005/1024x1024/1/233.jpg
Կենդանիներ և թռչուններ.
https://66.media.tumblr.com/45e9f58fa7a325b4dbe426a9ac10d891/tumblr_mub49dKQGq1qbityio9_1280.jpg
https://i.pinimg.com/originals/e3/57/56/e357566fa4bd398f0d3d4f2906b04d98.png
https://ff-65a4.kxcdn.com/assets/uploads/OriginalDocs_old/512/greek-dioscorides-facsimile-edition-11.jpg
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/7/79/ViennaDioscoridesEndpaperPeacock.jpg
Ստորև տրված հղումով կարող եք տեսնել Դիոսկորիդի բարձր ռեզոլյուցիա ունեցող լուսանկարներ.
https://www.wdl.org/ru/item/10690/view/1/1/

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները**
**Կերպարվեստի տեխնիկա**

- Ստեղծում է դեկորատիվ աշխատություն համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրերի, սկզբունքների, նյութերի ու տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2,4):**

**Կերպարվեստի բնագավառներ և ժանրեր**
**Տարբեր դարաշրջանների/հոսանքների/ոճերի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Վերլուծում է որևէ դարաշրջանի կամ մշակույթի արվեստի նմուշ և դատողություն է անում, թե ինչ տեղեկություն է ստացել նրա միջոցով **(Կերպ.կիր.հիմն.3):**
- Դատողություն է անում մշակույթի/մշակույթների կամ դարաշրջանների փոխազդեցության մասին մի քանի օրինակի հիման վրա **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Համեմատում է երկու դարաշրջանները և մշակույթները՝ ըստ հասարակության վրա ներգործելու տարրերի **(Կերպ.կիր.հիմն.4).**

**Լրացուցիչ տեղեկություններ՝ կապված համալիր առաջադրանքների գնահատման հետ.**

**Արաբեսկ**
**Կերպ.կիր.հիմն.1.2.**

- Առաջադրանքի ինքնուրույն կատարվելիք մասը կատարեց առաջադրանքի պայմանի և ընդհանուր խնդրի նախատեսմամբ (0 – 3 միավոր):
- Ութանկյուն ձևը կառուցված է ճիշտ, համաչափ է (0 – 3 միավոր):
- Ութանկյուն սալիկը ձևավորված է նկարազարդումով կամ/և զարդանախշով (0 – 3 միավոր):
- Աշակերտն ակտիվորեն մասնակցում էր համատեղ գործունեությանը (0 – 1 միավոր):

**Աֆորիզմների գիրք.**
**Կերպ.կիր.հիմն.1.2.**

- Գեղագրական մակագրությունը կոկիկ է (0 – 3 միավոր):
- Աշխատությունը ձևավորված է նկարազարդումով և/կամ զարդանախշով (0 – 3 միավոր):
- Գիրքը էջադրված է և ունի շապիկ (0 – 3 միավոր):
- Ակտիվորեն մասնակցում էր առաջադրանքի համատեղ կատարման մասին (0 – 1 միավոր):
- Ընդհանուր աշխատությունը համապատասխանում է առաջադրանքի պայմանին:

**Ցուցահանդես.**
**Կերպ.կիր.հիմն.1.2.3.4.**

- Աշակերտը ցուցահանդեսին ներկայացրեց մի քանի առաջադրանք:
- Աշխատությունները համապատասխանում են ցուցահանդեսի հայեցակարգին:
- Աշխատությունները ցուցադրված են կարգավորված:
- Գրավոր զեկուցումը գրված է ճիշտ, ներառում է նկարազարդումներ կամ ուրվանկարներ, հետազոտության, վերլուծության և աշակերտի կարծիքների տարրեր:
- Աշակերտն ակտիվորեն ներգրավված էր ցուցադրության նախապատրաստման գործընթացի մեջ:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 1/4

<table>
<tr><td colspan="3">Դասեր 13-15 Միավորող թեմա. Քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետություն</td></tr>
<tr><td>Հարցեր և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Կերպարվեստի տարրեր.<br>ձև<br>Կերպարվեստի սկզբունքներ.<br>համամասնություն,<br>ստատիկա/դինամիկա,<br>ներդաշնակություն,<br>համաչափություն/անհամաչափություն<br>Բնագավառներ.<br>պաշտամունքային ճարտարապետություն<br>ռելիեֆային քանդակ<br><br>Ժանրեր.<br>կրոնական<br><br>Կերպարվեստի տեխնիկա.<br>վիտրաժ<br>Դարաշրջան, ոճ, հոսանք.<br>միջնադարյան ճարտարապետություն<br>Բյուզանդիա, Վրաստան, ռոմանական, գոթիկա</td><td><ul><li>Ի՞նչ ազդեցություն ունի ծեսը պաշտամունքային շենքի նախագծման վրա:</li><li>Ինչո՞վ են տարբերվում իրարից միջնադարյան արևելյան և արևմտյան քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետությունը:</li><li>Ո՞րն է տարբերությունը ռոմանական և գոթական ճարտարապետության միջև, և ի՞նչն է դրա պատճառը:</li><li>Ինչպիսի՞ն են դրանց ճարտարապետական զանգվածների կազմակերպման առանձնահատկությունները: Լուսավորությո՞ւնը: Համամասնություննե՞րը: Դեկո՞րը:</li><li>Ի՞նչ ազդեցություն է գործում ռոմանական և գոթական պաշտամունքային շենքերի տեսքը մարդու տրամադրության վրա:</li><li>Որո՞նք էին միջնադարյան քրիստոնեական արվեստի հիմնական առանձնահատկությունները: Ի՞նչն էր պայմանավորել դրանք:</li></ul></td><td rowspan="2">1. Նախագիծ «Տաճար»<br><br>Բյուզանդական, վրացական, ռոմանական և գոթական տաճարների ճակատամասերի մոդելների ստեղծում և ձևավորում համապատասխան դեկորով (կարկըլներ, վիտրաժներ, դրոշմաքանդակ և այլն)</td></tr>
<tr><td colspan="2">Պատասխաններ հանգուցային հարցերին.<ul><li>Միջնադարյան քրիստոնեական արվեստի հիմնական առանձնահատկությունները պայմանավորված էին դոգմատիկ մտածողությամբ: Գաղափարը կայանում էր հոգևորությունն առաջ քաշելու մեջ: Դա ցույց տալու և մարմնավորից սահմանազատելու համար, պատկերավորման լեզուն օգնության բերեց պայմանական գեղարվեստական սկզբունքներ:</li><li>Վաղ քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետությունը (բյուզանդական և ռոմանական) կրում է նմանատիպ նշաններ, բայց արդեն XII դարից արևմտաեվրոպական ճարտարապետությունը զարգանում էր այլ ճանապարհով: Եթե ռոմանական տաճարները խիստ են, պարզ, մոնոլիտ, ժլատ դեկորներով և աղոտ լուսավորված (այդ պատճառով այն աղոթողի վրա ճնշող է գործում), գոթականը՝ ուղղահայաց վեր ձգտումով, առատ դեկորով և տոնական լուսավորությամբ աղոթողի համար հանդիսավոր միջավայր է ստեղծում:</li></ul></td></tr>
</table>

**13. Քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետություն**

- **Հարցեր քննարկման համար.**
  - ✓ Ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել ճարտարապետությունը քրիստոնեական դարաշրջանում:
  - ✓ Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան հռոմեական և քրիստոնեական բազիլիկների միջև:
  - ✓ Ինչո՞վ են տարբերվում հեթանոսական և քրիստոնեական ծեսերը:
  - ✓ Ինչո՞ւ քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն հռչակելուց հետո նոր պաշտամունքային կառույցներ կառուցելու անհրաժեշտություն առաջացավ:
  - ✓ Ի՞նչն է պայմանավորել հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքային շենքերի տարբերությունը:

**Պատասխաններ**.

- Հնագույն դարաշրջանի տաճարներում զոհաբերություններ չեն կատարվել: Տաճարում կանգնեցված էր աստվածության արձանը, որի համար պահվում էր զոհաբերված նվերը: Զոհաբերված կենդանիները տապակում էին կրակի վրա, և եթե բոցը հրդեհ չառաջացներ, գոնե տաճարը կմրոտեր: Տաճարներ մուտքը միայն քուրմերին էր թույլատրվում, իսկ մարդիկ կանգնած էին բաց երկնքի տակ կազմակերպված զոհասեղանի մոտ:
- Գաղտնի աղոթելը քրիստոնյաներին ընտելացրել է հավաքվել առանձնացված, փակ տարածքներում: Մոմավառության կարգը մութ կատակոմբներից է գալիս: Հռոմեական աշխարհիկ բազիլիկը կարող էր տեղավորել շատ մարդկանց: Ուստի քրիստոնյաներն այն ընտրեցին որպես իրենց աղոթելու կառույց, միայն թե ավելացրին խորան և օժանդակ պահոցներ:

- **Կոստանդնուպոլսի (Ստամբուլ) Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթի համեմատությունը նախորդ գմբեթի (Հռոմեական պանթեոնի) հետ.**

- Ի՞նչ դեր են կատարում առագաստները:

**Պատասխան**. Հռոմի պանթեոնի գմբեթը ամբողջովին կանգնած է գլանի վրա, որի բոլոր կետերն ունեն ամուր հենակ: Սուրբ Սոֆիայի տաճարը պետք է պահեին միայն կամարների չորս կետերը: Կամարների միջև եղած դատարկությունը լցվեց առագաստներով, որոնք վերաբաշխեցին գմբեթի ծանրությունը:




https://civitavecchia.portmobility.it/sites/default/files/pantheon_sezione.jpg
https://i.pinimg.com/originals/bf/3e/cf/bf3ecfd6fc676208c8f0df644cc49bb8.jpg

**Գործնական աշխատանք.**

- Ստվարաթղթի կտորով բազիլիկի մանրակաղապարի կառուցքավորում (խմբային, դասարանական):

- Գմբեթի կառուցքավորում (խմբային, դասարանական).
  Բաժանվե՛ք խմբերի: Մտածե՛ք, թե ինչպես և ցանկացած ձեզ համար հարմար նյութով պատրաստե՛ք գմբեթի մանրակաղապար կամ կառուցվածք, որը հենվում է առագաստների վրա: Մտածե՛ք ինչպես փոխադրեք գմբեթի տակի քառակուսին շրջանի:

 https://i.pinimg.com/originals/35/f8/5a/35f85a96752f6fa27b909904cff3a7b8.jpg

Գմբեթի մանրակաղապարի ենթադրյալ տարբերակներ տարբեր նյութերով.
ստվարաթուղթ, պապիե-մաշե, լուցկու հատիկ, պլաստիլին, ձողիկներ (առանց սոսնձի իրար մեջ նստեցնելով) և այլն:

http://www.roostereggs.org/images/dome_proto/2015%20dome%2001.jpg
https://i.pinimg.com/originals/74/05/0e/74050e58f67fa29ff508032e90eabe13.jpg
https://geodesicdome.files.wordpress.com/2011/01/0110111611.jpg
https://cdn.instructables.com/FNZ/QAX1/GPA5SGK2/FNZQAX1GPA5SGK2.LARGE.jpg?auto=webp&width=1024&height=1024&fit=bounds
https://cdn.instructables.com/FBS/BSTU/IDZSI3V6/FBSBSTUIDZSI3V6.LARGE.jpg?auto=webp&&frame=1&width=1024&height=1024&fit=bounds
https://cdn.instructables.com/FQ7/8KBK/IE08O5X0/FQ78KBKIE08O5X0.LARGE.jpg?auto=webp&&frame=1&width=1024&fit=bounds

**Հարցեր.**

- Ինչպիսի՞ն են վրացական տաճարների համամասնությունները:
- Ինչպիսի՞ն է վրացական տաճարների ճակատային դեկորը:
- Ինչպե՞ս են ճարտարապետները հարմարեցրել տաճարի ձևերն ու զանգվածները շրջակա միջավայրին:

**Պատասխան**.

- Բոլնիսիի բազիլիկը (V դ.) դեռևս խուլ և չմասնատված պատերով, լայնքով ձգված, նստած համամասնություններով և ռելիեֆային դեկորի սակավությամբ է բնութագրվում: Բոլնիսիի Սիոնիի բոլոր երեք նավերը գտնվում են մեկ երկլանջ տանիքի տակ: Լույսը թափանցում է կողային նավերի պատուհաններից: Ինչ եք կարծում, նման լուսավորությունը բավարա՞ր է ինտերիերի համար: (Հավանական ճիշտ պատասխան. Քանի որ կենտրոնական նավը չունի սեփական լույսի աղբյուրը և լուսավորված է միայն կողմնային նավերի պատուհաններից թափանցած երկրորդային լուսավորումով, այն մութ է):
- Բազիլիկի երկայնական մարմինը ինքնին պահանջում է, որ աղոթողը մտնի արևմուտքից, եկեղեցու ամբողջ տարածքը ամբողջությամբ տեսնի և ուղղվի դեպի արևելքում գտնվող խորան: Բոլնիսիի Սիոնում արևմտյան դուռը կտրված էր ուշ, հակառակ դեպքում հյուսիսից կամ հարավից ներս մտնողը ստիպված էր երկու կողմ էլ նայել, որ տեսներ ինտերիերի մասերը:

<u>Հղումներ ցուցադրական օրինակների համար.</u>

Բոլնիսիի Սիոնիի ճակատամասերը.
https://cdn2.img.sputnik-georgia.com/images/24480/21/244802175.jpg

https://cdn1.img.sputnik-georgia.com/images/24480/21/244802170.jpg

Բոլնիսիի Սիոնիի հատակագիծը.
http://kannelura.info/dr/1448_01.jpg

Անչիսխատիի բազիլիկը.
http://www.ambioni.ge/files/anchisxati-1.jpg

Օթխթա եկեղեցին.
http://www.amigo.ge/saunjegallery/albums/userpics/10002/beridze2_032-copy_289729.jpg
https://commons.wikimedia.org/wiki/File:Plan_of_eastern_wall_of_Otkhta.svg

http://photos1.blogger.com/blogger/5935/2977/1600/otxta%2024.jpg

Պարխալի
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/53/Parxalis_monasteri.jpg

Բյուզանդական արվեստը, Սուրբ Սոֆիա տաճարը (Նինո Ճիճինաձե, դրվագ դասախոսությունների շարքից)
https://www.youtube.com/watch?v=pIceq2iUrdE&list=PL7508D327F04BE157&index=29

- **Գործնական առաջադրանք.** Հատակագծերի «ընթերցում» (խմբային, դասարանական) (Աշակերտի դասագիրք, էջ 90-95)

*Հատակագծի ընթերցումը պետք է հաջող համարվի, եթե աշակերտը ճիշտ է նշել՝ կառույցը բազիլիկի տեսակին է պատկանում, թե գմբեթայինի, որտեղ են կամարը, օժանդակ պահոցները, նավը, գմբեթը, հենասյուները, մուտքը, դարպասը և պատուհանները:

Հատակագծերն ընթերցելիս՝ ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին խնդրի հատակագծի վրա գտնել ընթերցված տեղը համապատասխան կառույցի ճակատամասի վրա:

<u>Լրացուցիչ ցուցադրական նյութ հատակագծեր ընթերցելու համար.</u>

Խաշմիի Երրորդությունը



https://bit.ly/3dnSGZE

Հին Շուամթան



https://www.amigo.ge/saunjegallery/albums/userpics/10002/beridze2_032-copy_288229.jpg

PowerPoint շնորհանդես, Վրաստանի տաճարների տեսարաններ, կտրվածքներ, հատակագծեր.
https://ppt-online.org/46427

- **Համեմատական վերլուծություն**

Բյուզանդական և վրացական պաշտամունքային ճարտարապետության նմուշների համեմատական վերլուծություն

- Համեմատի՛ր Սան Ապոլլինար Նուովոյի և Բոլնիսիի Սիոնիի բազիլիկների ճարտարապետությունը:
- Սան Վիտալեի և Մցխեթայի ճարտարապետությունը:

Աշակերտները պետք է ուշադրություն դարձնեն շենքերի համամասնություններին, ծանրաշարժությանը/ ճկունությանը, ճարտարապետական զանգվածների բաշխմանը, կռահեն ինտերիերի լուսավորության բնույթը:

Սան Ապոլլինարե Նուովոյի բազիլիկի էքստերիերը (արտաքին տեսարանը) բաժանված է կիսաշրջանաձև, կամարակապ պատուհանների կանոնավոր ռիթմով: Աբսիդի նիստերով պատը բնութագրվում է ծանրաշարժ համամասնություններով: Բոլնիսիի բազիլիկը նույնպես ծանրաշարժ է: Մի քանի փոքր պատուհանները բավարար չեն արտաքին տեսքը թեթևացնելու համար: Միակ բանը, որն օգնում է Բոլնիսիի Սիոնի բազիլիկին, քարի տարբեր տոնայնությունների և գույների դասավորությունն է: Այս պատկերային տեսքը տեսողականորեն թեթևացնում է կառույցը: Արտաքին տեսքին նայելիս՝ մենք կարող ենք ենթադրել ներքին լուսավորության որակը: Սան Ապոլլինարե Նուովոյի բազիլիկը կարող է Բոլնիսի բազիլիկի համեմատ շատ ավելի լուսավոր ինտերիեր ունենա:

Սան Վիտալեն շատ ավելի ծանրաշարժ է թվում, քան Մցխեթայի խաչը: Սան Վիտալեի նիստերը լայն են: Նրա կարծես վեր ձգված ուսերի վրա (տաճարի իրանը) ցածր պարանոց (տաճարի թմբուկ) է դրված: Մցխեթայի Խաչի արտաքին զանգվածները լեռնային բյուրեղի են նման, քանի որ դրանք միմյանց նկատմամբ համաչափ են: Նիստերը կարծես աճում են իրարից, իսկ գմբեթը մարմնի իսկական պսակն է:

## 14. Արևմտյան Եվրոպայի քրիստոնեական ճարտարապետությունը

**Հարցեր**.
- Ի՞նչն է պայմանավորել ռոմանական ճարտարապետության տեսքը, և ինչո՞ւ է ռոմանական պաշտամունքային ճարտարապետությունը մեզ հիշեցնում պաշտպանական ամրոց:
- Ի՞նչն է սահմանել հռոմեական դարաշրջանի անունը:
- Ինչպիսի՞ն կարող է լինել ժամանակակից տաճարը այսօրվա շինանյութերի և տեխնոլոգիաների նախատեսմամբ:
- Ինչպե՞ս կարելի է օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները տաճարի ինտերիերը զարդարելու համար:

**Պատասխան**.
- VI-X դարերը «Մութ դարեր» են կոչել, որովհետև Արևմտյան Եվրոպայում Ժողովուրդների մեծ զաղթը հողերի բաժանման համար անվերջանալի պատերազմներով էր ընթանում: Տարածքները պահպանելու համար ֆեոդալները դիմացկուն ամրոցներ պետք է կառուցեին: XI-XII դարերի արևմտաեվրոպական պաշտամունքային ճարտարապետությունը հենց այս պաշտպանական կառույցի տեսքն է կրում (աշտարակներ, խուլ պատեր, դիտակետերի նման կտրված նեղ պատուհաններ):

*Ժամանակակից պաշտամունքային ճարտարապետության ներքին հարդարանքում թվային տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ տե՛ս տեսանյութ:
Թվային պրոյեկցիա Մոնրեալի Նոտր Դամի (Կանադա) բազիլիկում.
https://www.youtube.com/watch?v=FV3XdOda3zM

**Ցուցադրական նյութ ռոմանական տաճարային դեկորի համար.**
Օտյունի տաճարի տիմպանը՝ քանդակազարդ ճակատամասը: XII դար, Ֆրանսիա

https://c8.alamy.com/comp/D9KB6F/last-judgement-tympanum-by-gislebertus-circa-1130-ad-in-westfaade-D9KB6F.jpg

Մուասակիի Սուրբ Պիեռ տաճարի ֆրիզ, XII դ.

https://lh4.googleusercontent.com/-2ERF55Dfiiw/UvQFzY1eQ1I/AAAAAAAAPlI/2l0TCoGAtjw/s1280/588.JPG

Մուասակիի Սուրբ Պիեռ տաճար, Երեմիա մարգարե, XII դ.
https://66.media.tumblr.com/tumblr_lr7vqyh1fx1r0pas8o1_1280.jpg

Մուասակիի Սուրբ Պիեռ տաճար, Սուրբ Պողոս,XII դ.
https://bit.ly/2XnxCww
https://upload.wikimedia.org/wikipedia/commons/f/fd/Moissac_-_Abbaye_Saint-Pierre_-_Porche_-_Portail_-_J%C3%A9r%C3%A9mie.JPG
https://commons.wikimedia.org/wiki/File:Moissac_-_Abbaye_Saint-Pierre_-_Porche_de_l%27%C3%A9glise_-_Portail_Sud_-_Trumeau_-4.JPG
https://commons.wikimedia.org/wiki/Category:Porche_de_Moissac

Սամսոնը և Դալիլան՝ Օլնեի տաճարի խոյակ, Ֆրանսիա XII դ.
https://www.akg-images.com/Docs/AKG/Media/TR3_WATERMARKED/c/4/a/5/AKG3005792.jpg

Սանտյագո դե Կոմպոստելայի դարպասի խոյակ, Իսպանիա, XII դ.
http://ep00.epimg.net/cultura/imagenes/2009/12/20/album/1261263602_910215_0000000001_album_normal.jpg

Շովինի Սուրբ Պիեռ տաճարի խոյակ, Ֆրանսիա, XII դ.
https://i.pinimg.com/originals/b3/d9/d6/b3d9d61d56fb472b5f3a5357d86cf222.jpg

XI-XII դարերի Սեն Ֆուա եկեղեցու (Ֆրանսիա) «Դաժան դատաստան» կոմպոզիցիայի դետալ
https://i.ytimg.com/vi/L6SfO03oejM/maxresdefault.jpg

## 15. Կրոնական դեկոր (գոթիկա)

✓ **Դատողությու՛ն արա.**

- Ի՞նչ տարբերություն կա ռոմանական և գոթական տաճարների միջև:
- Ի՞նչն է պայմանավորել այդ տարբերությունը:
- Դու ո՞ր համամասնություններն ես հավանում ավելի շատ:
- Համաձա՞յն ես Վերածննդի շրջանի հետազոտողների հետ, ովքեր ճարտարապետության ֆրանսիական ոճը հիշատակեցին որպես բարբարոսային:

- Վերանայի՛ր X-XI դարերի վրացական ճարտարապետության նմուշները (Օթխթա եկեղեցի, Պարխալի, Ալավերդի): Կարո՞ղ ենք ասել, որ գոթիկայի  երկարեցված համամասնությունների նկատմամբ ձգտումը Վրաստանում ավելի շուտ է ի հայտ եկել, քան Եվրոպայում: Ինչպիսի՞ն են X-XI դարերի եվրոպական պաշտամունքային ճարտարապետության համամասնությունները:
- Ի՞նչ նոր բնագավառ ավելացավ մոնումենտալ նկարչությանը գոթիկայի ժամանակաշրջանում: (վիտրաժ)

**Պատասխանները տե՛ս ստորև** (ռոմանական և գոթական արվեստի համեմատությամբ **T** սխեմայում)

**Ցուցադրական նյութ.**

XX դարի վիտրաժ.

Անրի Մատիս (Ֆրանսիա), XX դ.

https://artsy-media-uploads.s3.amazonaws.com/CLN9_eiBXXLreZRJEd9Zuw%2F8130788144_044bebf3f2_o.jpg

Լե Կորբուզյե, Ռոնշանի մատուռը (Ֆրանսիա), XX դ.

https://i.pinimg.com/originals/76/4b/7a/764b7a6b55fae4e8a0265eb05524f028.jpg

Մարկ Շագալ, տարբեր երկրների տաճարների վիտրաժներ, XX դ.

https://www.dailyartmagazine.com/chagalls-stained-windows/

 https://mimiberlin.com/sigmar-polke-in-the-grossmunster-cathedral/#jp-carousel-23954

2009 թվականից Զիգմար Պոլկեի կողմից կատարված վիտրաժները Շվեյցարիայի քաղաք Ցյուրիխ էլ ավելի շատ զբոսաշրջիկների իր կողմ ձգեցին: Գրոսմյունստերի պատուհաններն այստեղ կիսաթանկարժեք ակների բարակ տաշվածքով հավաքած պատուհաններն են զարդարում:

XX դարի ամերիկացի արվեստագետ, մոդեռն  ոճի ներկայացուցիչ Լուիս Կոմֆորտ Տիֆանին ճիշտ վիտրաժային գիշերալամպերով է հայտնի դարձել:



Լուիս Կոմֆորտ Տիֆանիի գիշերալամպեր, XX դ.

https://www.christies.com/features/Tiffany-lamps-10-things-you-need-to-know-9542-3.aspx

*Վիտրաժի տեխնիկայի մասին.

Կապարի միջնորմերով ստեղծվում են նկարի ուրվագծերը և շրջանակը: Միջնորմերում համապատասխան ձև ունեցող ապակյա կտորտանք են ամրացվում: Այս տեխնիկայով գոթական տաճարում երբեմն գրեթե 20 մետր բարձրության պատուհաններն էին ապակեպատվում:

- ***Համեմատական վերլուծություն.***

Ռոմանական և գոթական արվեստի համեմատական **T** սխեմա.

Սխեմայի ենթադրյալ նմուշ.

| **Ռոմանական արվեստ** | **Գոթիկա** |
|---|---|
| Շարունակում է Հին Հռոմի ճարտարապետական ավանդույթները | Ստեղծում է նոր, մինչև այդ պահը անհայտ գեղագիտություն * |
| Հողանցված համամասնություններ | Ուղղահայաց երկարեցված համամասնություններ |
| Ճարտարապետության մեջ՝ զանգվածային, ծանր, պինդ չմասնատված պատ, մեջընդմեջ միայն ճարտարապետական դեկորով (պատուհան, որմնախորշ, կամար...) | Ճակատամաս, որի թեթև, ժանյականման քանդակային դեկորի այն կողմում որմը չի երևում |
| Երբեմն օգտագործվում են կոպիտ համամասնություններ ունեցող որմնահեցեր | Բարձր որմնահեցերը զարդարված են արկբուտաններով՝ քարե կիսակամարներով («թռչող կամարներով») |
| Ճարտարապետական մասերը հստակ առանձնացված են | Ճարտարապետական մասերը «խճճվում են» իրար մեջ |
| Կիսաշրջանաձև կամար | Նետաձև կամար (հնարավոր է, արաբական ազդեցություն) |
| Կիսաշրջանաձև պորտալ (առաստաղ) | Նետաձև պորտալ, ուղղաձիգ ճակտոնով |

| | |
|---|---|
| Քիչ քանակությամբ փոքր չափի պատուհաններով թույլ լուսավորված ինտերիերը վախեցնում է աստվածային պատժով | Շատ լայն, բարձր վիտրաժով պատուհաններ, առատորեն լուսավորված ինտերիերը հույս տվող, թողություն տվող միջավայր է ստեղծում |
| Պորտալի գլխին փոքրիկ շրջանաձև պատուհան, այսպես կոչված «վարդակ» | Պորտալի գլխին հսկայական շրջանաձև «վարդակ» |
| Խիստ, խոժոռադեմ, ծանրաշարժ | «Պչրասեր», «Ճախրող», «շարժուն» |
| Ստատիկ | Դինամիկ |
| Ֆիգուրներն «անմարմին», փայտացած, անհամաչափ, երկարեցված, հարթ, պայմանական | Ֆիգուրներն աստիճանաբար դառնում են ավելի ռեալիստական, «մարմին ունեցող», երկրային, ուղղվում են համամասնությունները |
| Ֆիգուրների միջև խախտված մասշտաբներն արտահայտում են երկնային հիերարխիան | Ֆիգուրների միջև մասշտաբը կրկին խախտված է |

*Էսթետիկա – Փիլիսոփայության թեքում, որը քննարկում է գեղեցիկի, գեղեցկության էությունը

**Գործնական առաջադրանքներ.**

- **Տաճարի ընդհանուր ուրվանկար պատրաստել** (անհատական):

- **Կարկոլների կերտում** (դասարանական, անհատական)

Ազատություն տո՛ւր հումորիդ ու երևակայությանդ և պլաստիլինով ծեփակերտի՛ր կարկոլի գրոտեսկային պատկեր:

Նկատի՛ ունեցիր.

- Գրոտեսկը ենթադրում է ծաղրելու նպատակով պատկերի առանձին մասերի չափազանցում:
- Կարկոլը ջրհորդան խողովակի դեկոր է: Այն պետք է ունենա բացվածք, որտեղից հոսելու է ջուրը: Այս բացվածքի գործառույթը բերանը կկատարի, քիթը, թե ականջը, դա քո վճռելիքն է:



Պլաստիլինով պատրաստած կարկոլների նմուշներ.
https://pbs.twimg.com/media/DEnpHpDXoAEY4dB?format=jpg&name=small
https://pbs.twimg.com/media/DEnpHpBXsAUjLWf.jpg

- Վիտրաժի իմիտացիայի ստեղծում (մի քանի տարբերակ) և գոթական տաճարի նկարած ճակատամասի մեջ տեղադրում։

*Աշակերտները կարող են ստեղծել ինչպես համաչափ, այնպես էլ անհամաչափ, ինչպես պատկերային, այնպես էլ աբստրակտ վիտրաժ։ Կլոր, համաչափ պատկերը կարող է կառուցվել Մանդալայի սկզբունքով, ինչպես նաև շառավղաձև։

Վիտրաժի համար վարդակ պատուհանի կաղապարի պատրաստում (խմբային կամ անհատական, դասարանային)

**Նյութ.**
Պլաստիլին
Պլաստմասսայե տախտակ
Գիպս
Ջուր
Հեղուկ օճառ
Մեկանգամյա օգտագործման բաժակ
Գդալ
Վրձին

- Դիտի՛ր գոթական տաճարների վարդակ պատուհանների զարդանախշը։
- Նկարի՛ր և ծեփակերտի՛ր զարդանախշի որևէ բաղադրիչ զարդ։
- Պլաստիլինի մոդելը տեղադրի՛ր պլասմասսայե տախտակի վրա։
- Մոդելի վրա և նրա շուրջը տախտակի վրա վրձինով հեղուկ օճառ քսի՛ր։
- 1/2 բաժակ ջրի մեջ լցրո՛ւ մի քանի գդալ գիպս։ Զգուշորեն խառնի՛ր լուծույթը, որ ստանաս թթվասերի թանձրության զանգված։
- Տախտակին ամրացված մանրամասը ամբողջությամբ ծածկի՛ր գիպսի հաստ շերտով։
- Սպասի՛ր, մինչև գիպսը չորանա և հանի՛ր պլաստիլինի մոդելը։
- Գիպսե կաղապարով զարդանախշի մանրամասեր ձուլելու համար պատրաստի՛ր գիպսի հեղուկ լուծույթ։ Կաղապարի ներսից քսի՛ր հեղուկ օճառ և կաղապարի մեջ լցրո՛ւ գիպսի լուծույթը։ Մանրամասը կաղապարից հանի՛ր միայն այն ժամանակ, երբ մինչև վերջ կչորանա։ Յուրաքանչյուր նոր մանրամասի համար պատրաստի՛ր գիպսի նոր լուծույթ։
- Այս եղանակով պատրաստի՛ր մի քանի նույնական մանրամաս և հավաքի՛ր մեկ ամբողջական շրջանաձև զարդանախշ։

Վիտրաժի պատրաստում

Տարբերակ I:

**Նյութ**.

Թուղթ

Նշիչներ

Ապակու կտոր

Հեղուկ սոսինձ պվա

Բարակ մետաղալարեր

Գուաշ

Վրձին

Փուլեր.

- Թղթի վրա նկարի՛ր նետաձև պատուհանի կամ վարդակ պատուհանի պարզ ուրվագծային նկար:
- Գունավորի՛ր նշիչներով:
- Վրայից դի՛ր ապակի:
- Մետաղալարը թաթախի՛ր սոսնձի մեջ և դի՛ր մետաղալարը ուրվագծերի երկայանքով: Սպասի՛ր մինչև սոսինձը չորանա:
- Գունավորի՛ր մետաղալարերի միջև ընկած հատվածները ցանկալի գույնի նշիչով կամ գուաշով:

Տարբերակ II.

Նյութ.

Թուղթ

Հասարակ մատիտ

Մագաղաթի թափանցիկ թուղթ

Նշիչներ

Թղթի չոր սոսինձ

Մկրատ

Գուաշ

Փուլեր.

- Երկու հաստ թղթի կտորներից ձևի՛ր նետաձև պատուհանի կամ վարդակի շրջանի նման ձև:
- Դրանցից մեկի վրա գուաշով նկարի՛ր պատի իմիտացիա (քարե կամ աղյուսե շարվածք) և գուաշով գունավորի՛ր:
- Մինչև «պատը» չորանա, ձևած պատուհանի վրա նկարի՛ր ուրվագծային նկար:
- Գունավորի՛ր նշիչներով:
- Զարդանկարած «պատուհանի» վրա տեղադրի՛ր թափանցիկ մագաղաթյա թուղթ: Նկատի՛ ունեցիր, որ մագաղաթի կտորը չափով նկարից մեծ պետք է լինի:
- Մագաղաթի տակից կերևա նկարը:

- Արտանկարի՛ր պատուհանի նկարը մագաղաթի վրա և գունավորի՛ր տարածքները ցանկալի գույներով:
- Ուրվագծերի վրայով անցի՛ր սև նշիչով:
- Արդեն չորացրած «պատի» մաքուր կողմում կտրված պատուհանի եզրերին քսի՛ր թղթի չոր սոսինձ:
- Վրայից դի՛ր մագաղաթի կտորն այնպես, որ նկարը ճշգրտորեն նստի պատուհանի բացվածքի մեջ:
- Մագաղաթի եզրերին կրկին սոսինձ քսի՛ր:
- Վրայից դի՛ր երկրորդ թուղթն այնպես, որ բացվածքը կրկին համապատասխանցնես նկարին:
- Ձեռքով սեղմի՛ր, որպեսզի շերտերը լավ կպչեն իրար:

-  https://bit.ly/2XmGFhy

Տարբերակ III:

Համակարգչի հին, ոչ պիտանի խտասկավառակին (CD) արծաթագույն կողմից փակցրու՛ կպչուն ժապավեն: Հանի՛ր կպչուն ժապավենը: Նրան կկպչի և հետը դուրս կգա սկավառակի արծաթագույն թաղանթը: Կստանաս թափանցիկ շրջանի նման ձև, որը կարող ես օգտագործել վարդակ պատուհան պատրաստելու համար:
Տեսահրահանգը տե՛ս. https://www.youtube.com/watch?v=bGzj9Ue6e3M

Աշխատության կազմակերպման սկզբունքը.

Ստեղծի՛ր վիտրաժի իմիտացիա՝ գոթական ոճի նետաձև պատուհանի կամ շրջանաձև վարդակ պատուհանի ձևով: Առանձին մեծ չափի ֆորմատի վրա նկարի՛ր գոթական տաճարի ճակատամաս, կտրիր-հանի՛ր վիտրաժի տեղերը և հետևից փակցրու՛ քո վիտրաժը ճակատամասի նկարի վրա:

 https://i.pinimg.com/originals/d5/6d/92/d56d92a7f5d5e8e411e097281128ad1f.jpg

Այլ տարբերակի տեսակոնստրուկցիա.
https://www.youtube.com/watch?v=vt6_CAoBkfI

Գոթական վարդակ պատուհանների ձևվածքներ.


https://www.shutterstock.com/image-vector/gothic-rosette-window-pattern-vector-illustration-427719193


https://www.shutterstock.com/image-vector/gothic-rosette-window-pattern-vector-black-352124489



https://www.shutterstock.com/image-illustration/template-drawing-medieval-round-ornament-stained-1567588027

**Հանձնարարականներ համալիր առաջադրանքի համար.**

Նախագիծ. «Տաճար» (Աշակերտի դասագիրք, էջ115)

Ստվարաթղթով բյուզանդական, վրացական և գոթական տաճարների ճակատամասերի, եռաչափ մոդելների ստեղծում և ձևավորում համապատասխան դեկորով (նյութի կազմվածք, կարկոյներ, վիտրաժ, դրոշմաքանդակ և այլն )

Նյութ.
- Հաստ ստվարաթուղթ
- Թափանցիկ մագաղաթյա թուղթ
- Նշիչներ
- Ջրաներկ, գուաշ
- Սոսինձ
- Թուղթ կտրող դանակ, մկրատ

1. Գտի՛ր տարբեր դարաշրջանների պաշտամունքային կառույցներ: Դիտարկի՛ր դրանց առանձնահատկությունները:
Ընտրի՛ր որևէ մեկը:
Գտի՛ր տեղեկություններ և գրի՛ր կարճ զեկույց քո ընտրած տաճարի մասին
(դարաշրջան, երկիր, նպատակակետ, ոճ, համառոտ պատմություն):

| | |
|---|---|
| 2. Գրի՛ր, թե ինչու ես ընտրել այս տաճարը, ինչ կա դրա պատմության կամ ճարտարապետության մեջ քեզ համար հետաքրքիր:<br>3. Ստվարաթղթի հաստ կտորով պատրաստի՛ր ընտրված տաճարի ճակատամասի մանրակաղապար: Հաստ ստվարաթղթի վրա նկարի՛ր և կտրիր-հանի՛ր պաշտամունքային շինության ճակատամասը:<br>Կտրիր-հանի՛ր պատուհանները:<br>Պատի մշակվածքի իմիտացիայի համար (քարի կամ աղյուսի շարվածք) գունավորի՛ր ստվարաթուղթը ավազախառն գուաշով:<br>Տաճարի ճակատամասին համապատասխան դեկոր ընտրի՛ր (զարդանախշային, ռելիեֆային, քանդակագործական, վիտրաժ և այլն):<br>Մինչև «պատը» չորանա, կտրած-հանած «պատուհանի» դարձերեսին դի՛ր մագաղաթի թափանցիկ թուղթ: Նկատի՛ ունեցիր, որ մագաղաթի կտորը չափով պետք է պատուհանից մեծ լինի:<br>Արտանկարի՛ր պատուհանի ուրվագիծը մագաղաթի վրա, նկարի՛ր և գունավորի՛ր վիտրաժը, ուրվագծերի վրայով անցկացրո՛ւ սև խոշոր նշիչ:<br>Սոսնձի՛ր պատրաստած վիտրաժներն ամեն մեկն իր պատուհանին:<br>   https://i.pinimg.com/originals/17/95/24/179524c54ac0f490be3043dcb44cc387.jpg | |
| **Ռեսուրսներ.**<br>**Միջնադարյան վրացական պաշտամունքային ճարտարապետություն.**<br>http://www.dzeglebi.ge/dzeglebi/sakulto_nagebobebihtml.html<br>http://saunje.ge/index.php?option=com_content&view=article&id=11&Itemid=3&lang=ru<br>Հատակագծեր ընթերցման համար. Նաթելա Ճաբուա, Քրիստոնեական տաճարի ճարտարապետական տեսակները միջնադարյան Վրաստանում.<br>http://dspace.nplg.gov.ge/bitstream/1234/11509/1/Arqiteqturuli_tipebi.pdf<br>*Հատակագծի ընթերցումը հաջող պետք է համարվի, եթե աշակերտը ճիշտ է մատնանշել, թե բազիլիկի տեսակին է հատկացվում, թե գմբեթայինին, որտեղ են աբսիդը, օժանդակ պահոցները, նավը, գմբեթը, հիմնասյուները, մուտքը, դարպասը և պատուհանները:<br>Հղում քրիստոնեական տաճարի ճարտարապետական մասերի աստվածաբանական խորհրդանիշների մասին. Քեթևան Աբաշիձե, Քրիստոնեական տաճարի ճարտարապետական դեմքը.<br>http://www.orthodoxy.ge/sakhli/qristianuli_tadzari.htm<br>Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե: «Մերիդիանի», Թբ., 2010:<br>**Բյուզանդիայի և Արևմտյան Եվրոպայի ճարտարապետությունը.**<br>Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012<br>https://bit.ly/2TZ3R3d | |

Բյուզանդական ճարտարապետության նմուշներ.
https://www.gettyimages.ca/photos/byzantine-architecture?mediatype=photography&phrase=byzantine%20architecture&sort=mostpopular

Ռոմանական ճարտարապետություն.
https://www.gettyimages.ca/photos/romanesque-architecture?mediatype=photography&phrase=romanesque%20architecture&sort=mostpopular

Գոթական ճարտարապետություն.
https://www.gettyimages.ca/photos/gothic-architecture?mediatype=photography&phrase=gothic%20architecture&sort=mostpopular

Կարկոլներ.
https://artsandculture.google.com/exhibit/gargoyles-and-grotesques/dwIyM3GPNKfqLA
https://www.gettyimages.ca/photos/gargoyles?phrase=gargoyles&sort=mostpopular#license

Վիտրաժ.
https://www.gettyimages.ca/photos/gothic-stained-glass-window?phrase=gothic%20stained%20glass%20window&sort=mostpopular#license

**Ամփոփիչ գրավորի տպելու ձևաթուղթ** (ամբողջությամբ տե՛ս հավելվածում).

Համեմատական վերլուծություն.

Դասարան. VIII Աշակերտ ________________ Ամսաթիվ, ամիս, տարեթիվ ________

Առաջադրանքի պայմանը

Օգտվի՛ր տրված նկարազարդումներից և ըստ 4 կետերի, իրար հետ համեմատի՛ր տրված ստեղծագործությունները:

1. Արվեստի ո՞ր բնագավառի նմուշ է ներկայացված: Որոշի՛ր արվեստի նմուշների ընդհանուր և տարբերակիչ գեղարվեստական նշանները: Ո՞ր պատկերավորման տարրերն ու պատկերավորման սկզբունքներն են օգտագործված դրանցում:

2. Ըստ բնութագրիչների, հատկացրո՛ւ նմուշները արվեստի պատմության որոշակի ժամանակահատվածի: Հիմնավորի՛ր քո տեսակետը:

3. Դատողությու՛ն արա՝ ի՞նչն է պայմանավորել նմուշների միջև ոճական տարբերություն: Հիմնավորի՛ր քո տեսակետը:

4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն ես ավելի հավանում և ինչո՞ւ:

| | |
|---|---|
|  ք. Շարտրի Նոտր Դամի մայր տաճար, Ֆրանսիա, XII դարի միջին տարիներ |  ք. Նաումբուրգի մայր տաճար, Գերմանիա, XIII դարի միջին տարիներ |

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**
**Կերպարվեստի տեխնիկա**

- Ընտրում է արվեստի ցանկալի ձևը (օրինակ, մանրակաղապար և այլ), օգտագործում է համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրեր, սկզբունքներ, նյութեր և տեխնիկա՝ սեփական մտահղացումն ավելի լավ փոխանցելու համար (**Կերպ.կիր.հիմն.1, 2, 4**):
- Աշխատության մեջ կիրառում է այն գեղարվեստական պատկերավորման սկզբունքները, որոնք ընտրված դարաշրջանում կամ մշակույթում էին կիրառում՝ մարդկանց վրա ներգործելու համար (ձև, մասշտաբ, համամասնություն, զարդանախշ և այլ.) (**Կերպ.կիր.հիմն.**1, 4):

**Կերպարվեստի բնագավառներ և ժանրեր**
**Տարբեր դարաշրջանների/հոսանքների/ ոճերի արվեստի բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Վերլուծում է որևէ դարաշրջանի կամ մշակույթի արվեստի նմուշը և դատողություն է անում, թե ինչ տեղեկություն է ստացել դրա միջոցով (**Կերպ.կիր.հիմն.3**):
- Վերլուծում է հասարակության վրա արվեստի ներգործության ձևերը և գեղարվեստական պատկերավորման սկզբունքները (**Կերպ.կիր.հիմն.3, 4**):
- Դատողություն է անում արվեստի, որպես հասարակության ինքնարտահայտման միջոցի մասին, բերում է մի քանի օրինակ (**Կերպ.կիր.հիմն.3, 4**):
- Դատողություն է անում մշակույթի/մշակույթների կամ դարաշրջանների փոխազդեցության մասին՝ մի քանի օրինակների հիման վրա (**Կերպ.կիր.հիմն.4**):
- Համեմատում է երկու դարաշրջաններ կամ մշակույթներ՝ ըստ հասարակության վրա ներգործելու տարրերի (**Կերպ.կիր.հիմն.4**):

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքի գնահատման մասին.**

**Նախագիծ «Տաճար» մանրակաղապար**

- Մանրակաղապարը նախատեսում է տաճարի տեսակի յուրահատկությունը (օրինակ՝ նավեր, գմբեթ, դեկոր...):
- Աշխատանքը կատարված է ստեղծագործաբար, կոկիկ, նյութն ընտրված է մտահղացմանը համապատասխան, պահպանված են ժամկետները:
- Աշխատությանը կցված է համառոտ զեկուցում:

*Մանրակաղապարի գնահատման սխեման՝ տե՛ս հավելվածում:

## ԹԵՄԱՏԻԿ ՄԻԱՎՈՐ 2. ՄԱՐԴԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

***Գլուխների հաջորդականությունը Աշակերտի գրքում.***


Ուսումնական թեմա. Մարդը տիեզերքի կենտրոնում ........117

1. Մարդ հումանիստը ........118
2. Ո՞վ է վերադարձրել մարդուն ծավալը: ........122
3. Մարդը Վերածննդի դարաշրջանի քանդակում ........128
4. Բարձր Վերածնունդ ........134
5. Ավարտի սկիզբը ........146
6. Մարդը Հյուսիսային Եվրոպայի Վերածննդում ........156
7. Արվեստն ընդդեմ անխոհեմության ........162
8. Զգացմունք և հույզ ........170
9. Բնավորություն և դիմախաղ ........180
10. Հոգեբանական դիմանկար ........184
11. Կամերային և հանդիսավոր դիմանկար ........196
12. Բարոկկոյի դարաշրջանի մարդը ........210
13. Խմբակային դիմանկար ........214
14. Ինքնադիմանկար ........224
15. Մարդու կեցությունը ........236
16. Ինչ է մեզ պատմում հագուստը ........250

**Թեմա. Մարդը տիեզերքի կենտրոնում** **Ժամերի ենթադրյալ քանակ. 18 + 2 ժամ**

**Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ**

- Պատկերավորման տարրերի և սկզբունքների օգնությամբ մարդիկ արտահայտում են գաղափարներ, զգացմունքներ, հույզեր:
- Տարբեր դարաշրջաններում մարդը տարբեր աշխարհայացք ուներ, և դա արվեստագետները մեզ են փոխանցում իրենց ժամանակվա գեղարվեստական լեզվով և ոճով:
- Տարբեր դարաշրջանների արվեստագետները մարդու շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունքի, արտաքինի, գաղափարների, ապրումների, բնավորության, հետաքրքրությունների, նրա սոցիալական վիճակի, բնակման միջավայրի և առօրյա կյանքի փոխանցման համար զարգացրել են տարբեր գեղարվեստական սկզբունքներ:
- Մարդու արտաքին և ներքին բնութագրիչների/հատկանիշների փոխանցումը հնարավոր է բազմազան պատկերավորման տարրերով և սկզբունքներով:

**Թեմատիկ միավորի շրջանակներում մշակվելիք թեմաներ և ենթաթեմաներ.**

1. Մարդու պատկերը տարբեր դարաշրջաններում
2. Մարդու համամասնությունները
3. Ներաշխարհի արտացոլման ճանապարհները
4. Դիմանկարի տեսակները
5. Կենցաղային ժանր
6. Հագուստ

| Նպատակային հասկացություններ և դրանց հետ կապված կայուն պատկերացումներ. | Հարց և ենթահասկացություններ | Հանգուցային հարց/հարցեր | Համալիր առաջադրանքներ (տեսակներ). |
|---|---|---|---|
| **Կերպարվեստի գեղարվեստական-պատկերավորման տարրերը և սկզբունքները.**<br>• Արվեստի գործ ստեղծելու համար մարդ օգտագործում է արվեստի լեզուն, այսինքն՝ կերպարվեստի տարրերը և սկզբունքները:<br>• Կերպարվեստի լեզուն մենք օգտագործում ենք ոչ միայն աշխատություն ստեղծելիս, այլ՝ արվեստի գործերի մասին տպավորություններ, գաղափարներ, կարծիքներ արտահայտելիս:<br>**Կերպարվեստի տեխնիկան**.<br>• Արվեստագետը նյութը և տեխնիկան ընտրում է՝ ըստ գեղարվեստական մտահղացման:<br>• Մարդկության զարգացման հետ միասին զարգանում, փոփոխվում և առաջանում էին արվեստի նոր ձևեր, նյութեր և տեխնիկա: | **Տարրեր.**<br>ձև, ծավալ, լուսաստվեր, տոն, ֆոնի և պատկերի փոխհարաբերություն ը<br><br>**Սկզբունքներ.**<br>հավասարակշռություն, համաչափություն, ստատիկա/դինամիկա, համամասնություն, մասշտաբ, հեռանկար<br>**Բնագավառներ**.<br>նկարչություն, | • Ինչպե՞ս են մարդիկ արվեստն օգտագործում ինքնարտահայտման համար:<br>• Ինչպե՞ս էին արտացոլում տարբեր դարաշրջանների արվեստում մարդուն:<br>• Ինչպե՞ս են ժամանակի ընթացքում փոխվել պատկերավորման սկզբունքները՝ մարդու շրջապատող աշխարհի նկատմամբ | **Գործնական աշխատանք**<br><u>(Ուսուցչի ընտրությամբ).</u><br><br>• **Վարժություններ.** տոնային աստիճանավորում և ծավալ մատիտով և ներկով<br>• Միքելանջելոյի «Պիետա» քանդակի ուրվանկար անել<br><br>**Համեմատական վերլուծություն և հետազոտություն** |

| | | | |
|---|---|---|---|
| **Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**.<br>• Արվեստն առօրյա կյանքում հանդիպում է տարբեր տեսքով:<br>• Արվեստի գործերը ստեղծվում են տարբեր նպատակով և նշանակումով:<br>• Արվեստի՝ բնագավառների բաժանումը պայմանավորում են օգտագործված նյութը, տեխնիկան կամ նպատակը:<br>• Յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է կերպարվեստի որևէ պատկերավորման միջոց կամ եղանակ:<br>• Կերպարվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության:<br><br>**Տարբեր դարաշրջանների/մշակույթների /ուղղությունների/ոճերի արվեստին բնորոշ հատկություններ/ գեղարվեստական բնութագրիչներ.**<br>• Բոլոր դարաշրջանների, ուղղությունների, ոճերի արվեստն ունի իր առանձնահատկությունները, որը պայմանավորում են տարբեր գործոններ:<br>• Արվեստի ընթացող փոփոխությունները (արվեստի նպատակը, նրա նկատմամբ վերաբերմունքը, գեղարվեստական-պատկերավորման տարրերը, սկզբունքները, տեխնիկան, նյութը, գործիքները, բնագավառները, ձևերը և այլն ուղղակիորեն առնչվում են մարդկության պատմության մեջ ընթացող փոփոխությունների հետ (աշխարհայացք, տեխնիկական առաջընթաց, համաշխարհայնացում և այլն):<br>• Տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստների ձևավորման մեջ մեծ դեր են կատարում փոխադարձ ազդեցությունը: Արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների և մշակույթների մասին կարելի է շատ բան իմանալ: | գրաֆիկա, քանդակագործություն, լուսանկարչություն<br><br>**Ժանրեր**<br>դիմանկար, կենցաղային<br><br>**Տեխնիկա.**<br>նկարչություն, քանդակագործություն, թվային մեդիա<br><br>**Դարաշրջան / մշակույթ / հոսանք /ոճ և համապատասխան արվեստի նմուշներ**<br>Վերածննդի դարաշրջան Բարոկկո | վերաբերմունքի, արտաքինի, գաղափարների, ապրումների, բնավորության, հետաքրքրությունների, նրա սոցիալական վիճակի, բնակման միջավայրի և առօրյա կյանքի փոխացման համար:<br>• Ինչպե՞ս կարող եմ պակերավորման տարրերն ու սկզբունքներն օգտագործել իմ գաղափարների, ապրումների, բնավորության, հետաքրքրությունների, սոցիալական վիճակի բնակման միջավայրի և առօրյա կյանքի փոխանցման համար: | • Համամասնությունների ուսումնասիրում և մարդու պատկեր նկարել:<br>• Պլաստիլինով մարդու պատկեր կերտել հակադիրքի կեցվածքում:<br>• Գրոտեսկային քանդակ:<br>• Ընկերոջ դիմանկար (<u>աշխատանք զույգերով</u>):<br><br>**Համալիր նախագծեր**<br><br>• Հաշվետվություն (պարտադիր)<br>• Անիմացիա<br>• Եռապատկեր<br>• Ընկերոջ դիմանկարը<br>• Ինքնադիմանկար (պարտադիր)<br>• Լուսանկարչական դիմանկար<br>• Ավտոմատ դիմանկար<br>• Բանավեճ (պարտադիր). «Կին արվեստագետները պետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչ տղամարդիկ»:<br>• Պատմական տարազով տիկնիկի պատրաստում (պարտադիր)<br>• Ռեպորտաժ:<br>XX-XXI դարերի երեխաների կենցաղն ու նորաձևությունը: |

| Գնահատման չափանիշներ թեմատիկ միավորի համար. «Մարդը տիեզերքի կենտրոնում» |
|---|
| **Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**<br>**Կերպարվեստի տեխնիկա.**<br>• Պատկերում է մարդուն համապատասխան պատկերավորման տարրերի և սկզբունքների (ծավալ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ֆակտուրա, համամասնություն, մանրամաս և այլ), տարբեր նյութերի և տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2)**։<br>• Աշխատության մեջ (օրինակ՝ դիմանկարում) գաղափար ու տրամադրություն և զգացմունք փոխանցելու համար կիրառում է մեկ կամ մի քանի գեղարվեստական պատկերավորման տարրեր, սկզբունքներ (լուսաստվեր, տոնային աստիճանավորում, կոնտրաստ, կոմպոզիցիոն բաշխում, շեշտադրում, մանրամաս, կեցվածք, ժեստ, դիմախաղ և այլն) (**Կերպ.կիր.հիմն.1**)։<br>• Վերլուծում է դիմանկարում օգտագործված գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները և դատողություն է անում, թե ինչ էր ցանկանում փոխանցել հեղինակը դրանց միջոցով (արտաքին, բնավորություն, սոցիալական կարգավիճակ և այլն) (**Կերպ.կիր.հիմն.3**)։<br><br>**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**<br>**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**<br>• Աշխատության մեջ սեփական մտահղացումը, գաղափարը փոխանցելու համար ընտրում է կերպարվեստի բնագավառ, ժանր, գեղարվեստական սկզբունքներ, նյութ, տեխնիկա և դատողություն է անում կերպարվեստի, որպես ինքնարտահայտման միջոցի մասին **(Կերպ.կիր.հիմն.2,3)**։<br>• Մեկ կամ մի քանի արվեստի նմուշի հիման վրա դատողություն է անում, թե ինչպես էին արտացոլում մարդկանց ներաշխարհը տարբեր ժամանակներում **(Կերպ.կիր.հիմն.3,4)**։<br>• Քննարկում է դիմանկարի կամ կենցաղային ժանրի առաջացման պատճառները **(Կերպ.կիր.հիմն.4)**։<br>• Վերլուծում է մի քանի արվեստագետների ստեղծագործություն և դատողություն է անում, թե արտացոլվել է արդյոք, և ինչ ձևով է արտացոլվել նրանց աշխատության մեջ այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք **(Կերպ.կիր.հիմն.3,4)**։<br>• Համեմատում է որևէ երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործություններ (դիմանկարի, կենցաղային ժանրի), դատողություն է անում նմանությունների, տարբերությունների, առանձնահատկությունների մասին **(Կերպ.կիր.հիմն.4)**։ |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/1

<table>
<tr><td colspan="3">Դասեր 1-5    Միավորող թեմա. Վերածննդի դարաշրջանի մարդը</td></tr>
<tr><td>Հարց և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Տարրեր.<br>գիծ (նրբագիծ, խաչաձև նրբագծում), ձև, ծավալ, լուսաստվեր (ցոլք, սեփական ստվեր, ընկած ստվեր), տոն (և նրա աստիճանավորումը)<br><br>Սկզբունքներ.<br>համամասնություն, մասշտաբ, հեռանկար<br><br>Բնագավառներ.<br>նկարչություն, քանդակագործություն<br><br>Ժանրեր.<br>տարբեր<br><br>Կերպարվեստի տեխնիկա.<br>մատիտ, ջրաներկ, գուաշ<br><br>Դարաշրջան/ոճ/հոսանք<br>Վերածննդի դարաշրջան</td><td>• Ինչպե՞ս է արվեստում արտացոլվում պատկերացումը մարդու մասին:<br>• Ինչպե՞ս փոխվեց վերաբերմունքը մարդու նկատմամբ Վերածննդի դարաշրջանում:<br>• Ի՞նչ է ենթադրում վերածննդյան հումանիզմը:<br>• Ինչո՞վ է տարբերվում սրբանկարչության պայմանական գեղարվեստական լեզուն վերածննդյանից:<br>• Ինչի՞ մասին են խոսում գետնին ընկած ստվերը, լուսապսակը կամ դրանց բացակայությունը:<br>• Ինչպե՞ս փոխանցեմ մարդու պատկերը և արտաքինը ռեալիստական գեղարվեստական սկզբունքներով (ծավալային, լուսաստվերի, տոնային աստիճանավորման և համամասնությունների պահպանմամբ):</td><td rowspan="2">• Հետազոտություն և զեկուցում թեմայի մասին, թե ինչպե՞ս է մարդը ցուցադրված Վերածննդի դարաշրջանի որևէ արվեստագետի մեկ ստեղծագործության մեջ: (պարտադիր)<br><br>• Անիմացիա (ինքնուրույն կամ զույգով աշխատանք)</td></tr>
<tr><td colspan="2">✓ Մարդ հումանիստը<br>• Քննարկում<br><br>Քննարկման հարցեր<br>✓ Ինչպե՞ս է արվեստում արտացոլվում պատկերացումը մարդու մասին:<br>✓ Ինչպիսի՞ն է մարդու հնագույն իդեալը:<br>✓ Ինչո՞ւ անհետացավ մարդը միջնադարյան կերպարվեստից:<br>✓ Վերածննդի դարաշրջանում ինչպե՞ս փոխվեց վերաբերմունքը մարդու հանդեպ:<br>✓ Ի՞նչ ընդհանուր բան ունեն հնագույն ու Վերածննդի հերոսի դեմքերը:</td></tr>
</table>

- ✓ Ինչպիսի՞ մարդկային իդեալ է հաստատվել Վերածննդի դարաշրջանում:
- ✓ Ի՞նչ է նշանակում Վերածննդի հումանիզմը:
- ✓ Ինչո՞վ է տարբերվում սրբանկարչության պայմանական գեղարվեստական լեզուն վերածննդյանից:
- ✓ Ինչի՞ մասին են խոսում գետնին ընկած ստվերը, լուսապսակը կամ դրանց բացակայությունը:

**Քննարկման հարցերի պատասխաններ**.

- ✓ Տարբեր դարաշրջաններում ձևավորվում են մարդկային տարբեր իդեալներ: Արվեստն արտացոլում է այս իդեալը:
- ✓ Հնագույն շրջանում որպես իդեալ է հաստատվում ֆիզիկապես և հոգեպես հավասարապես զարգացած անձը՝ փիլիսոփան, մարզիկը, հերոսը, հայրենի քաղաք-պոլիսի պաշտպանը:
- ✓ Միջնադարյան սրբանկարչությունը պատկերում է կրոնական գործիչների, սրբերի: Եթե աշխարհիկ անձնավորություն է ներկայացվում, նա պատվիրատու է (կտիտոր) և ներկայացված է որպես աղերսող, աղոթող, հավատացյալ:
- ✓ Վերածննդի դարաշրջանում մարդու նկատմամբ հետաքրքրությունը վերադառնում է: Մարդը տիեզերքի կենտրոնում է, որպես Աստծո լավագույն արարում:
- ✓ Հնագույն և Վերածննդի հերոսների դեմքերի մեջ ընդհանուր է հավատը մարդու մտավոր, ստեղծագործական և ինտելեկտուալ ունակությունների հանդեպ:
- ✓ Վերածնունդը հաստատում է հետազոտողի, գիտնականի, ինքնավստահ, ամենակարող մարդու իդեալը:
- ✓ Վերածննդյան հումանիզմը ենթադրում հնագույն մշակութային ժառանգության ուսումնասիրության հիման վրա ստացած կրթության զարգացում, համաժամանակյա մարդու և նրա շրջապատող երկրային աշխարհի հետազոտում:
- ✓ Սրբանկարչության պայմանական գեղարվեստական լեզուն ներկայացնում է կրոնական գաղափարներն իրենց աստվածային իմաստով: Դա անելու համար նա անտեսում է երկրային, ծավալային, ռեալիստական գեղարվեստական սկզբունքները (լուսաստվեր, տոնային աստիճանավորում, առարկաների միջև մասշտաբային հարաբերակցություն, ճիշտ համամասնություններ և այլն), և փոխարենը օգտագործում է ձևի հարթ, գծային մշակումը, որպես ֆոն՝ մեկուսացված, ոչ իրական (հաճախ ոսկեգույն) գույներ, անհամամասնություն, առարկաների միջև մասշտաբային հարաբերակցության խախտում, հակադարձ հեռանկար: Վերածննդի դարաշրջանը վերականգնում է հնագույն ռեալիստական գեղարվեստական լեզուն և զարգացնում է այն (օգտագործում է ճիշտ համամասնություններ, անատոմիական ճշգրտություն, գծային և օդային հեռանկար, առարկաների միջև լայնամասշտաբ հարաբերակցություն և այլն):
- ✓ Գետնին ընկած ստվերը հերոսի երկրայինության ազդարարն է, իսկ դրա բացակայությունը՝ աստվածային լույսով ճառագայթման: Լուսապսակը հենց այս աստվածային լույսի նշանն է, և դրա բացակայությունը վկայում է մարդու երկրային բնույթի մասին:

- **Ո՞վ վերադարձրեց մարդուն ծավալը:**

- **Դատողություն.**

Հիշի՛ր բյուզանդական պատկերավորման նշանները և բնութագրի՛ր Դուչչոյի «Մաեստան:

**Պատասխան**.

Ոսկեգույն ֆոնի վրա համաչափ տեղադրված գործիչները «անկշիռ» են, «անմարմին» և հարթային: Ձևը փոխանցվում է անկյունային գծերով: Այս կոշտությունը մեղմացնում է միայն Տիրամոր ուրվագիծը: Մարիամի պատկերը մասշտաբով գերազանցում է մնացածներին: Բոլոր դեմքերը միանման, դիմախաղն ու ժեստերը՝ ոչինչ չասող, պայմանական են:

**Հարց.**

Ուշադիր նայի՛ր Ջոտտոյի որմնանկարների պատկերներին: Ունե՞ն արդյոք նրանք ընկած ստվերներ: Դասագրքում վերանայի՛ր միջնադարյան սրբապատկերները, որմնանկարները և խճանկարները: Դիտի՛ր, թե արդյոք պատկերներն ունե՞ն ընկած ստվերներ:

**Առաջադրանք**.

Դիտի՛ր հաջորդ դասերի նկարազարդումները: Երբվանի՞ց է հայտնվում գետնին ընկած ստվերը: Ուշադիր նայի՛ր Ջոտտոյի որմնանկարների հագուստի ծալքերը: Ինչպե՞ս է փոխանցվում ծալազարդումը՝ գծերո՞վ, թե՞ լուսաստվերով և տոնային աստիճանավորմամբ: Որտե՞ղ է ամենալուսավորված տեղը: Որտե՞ղ են առավել ստվերոտ տեղերը: Ուրեմն, որտեղի՞ց է ընկնում նրանց վրա լույսը:

**Գործնական ակտիվություններ**.

- **Վարժություն մատիտով՝ տարբեր ուղղությունների և մգության նրբագծեր նկարելու համար** (ինքնուրույն աշխատանք).

Աշակերտները կվարժեն իրենց ձեռքը մատիտով տարբեր ուղղությունների և մգության նրբագծեր նկարելու մեջ (նրանք նաև կծանոթանան խաչաձև նրբագծման սկզբունքին):



- ✓ **Գունդ մատիտով** (ինքնուրույն աշխատանք).

Աշակերտներն արագ շարժումով շրջան են գծում: Անհրաժեշտ չէ շրջանի ձևը ուրվագծային գծով իդեալականի հասցնել: Այս թերությունը ավելի ուշ կուղղվի նրբագծմամբ: Շրջանի վրա թույլ կնշեն այն տեղը, որի վրա նրանց երևակայության մեջ ընկնում է լույսը և համապատասխանաբար պետք է ամենալուսավորը լինի: Այդ հատվածը կթողնեն սպիտակ: Սեղանի վրա ընկած ստվերը կընկնի հակառակ կողմի վրա:

Աշակերտները թեթև կնրբագծեն ամենամութ հատվածը և ընկած ստվերի տեղը: Այնուհետև աստիճանաբար կմգեցնեն գունդը՝ տոնային աստիճանավորման կիրառմամբ: Նրբագծելու ժամանակ հենց նրբագծերով էլ կուղղեն գնդի ձևը:

Աշակերտները պետք է նկատի ունենան, որ նկարում առավելագույն մգության կարելի է հասնել երկու եղանակով.

- ✓ Կամաց-կամաց, շերտ առ շերտ՝ թեթև նրբագծերով մգեցնել: Այս դեպքում առարկայի ծավալին կհասնեն տոնայնության հավասար աստիճանավորմամբ:
- ✓ Հենց սկզբից, մատիտը սեղմելով, առավելագույն մգության նրբագծերով նկարել, իսկ հաջորդ՝ բաց գույները, յուրաքանչյուր հաջորդ հատվածը մատիտին համեմատաբար պակաս սեղմելով նկարել:

Այս դեպքում տոնային աստիճանավորումը կոպիտ, սուր, գուցե նույնիսկ անկյունային ստացվի:





http://podg-kursy.ru/images/stories/fruit/untitled-37.jpg

✓ **Ծավալային գունդ ջրաներկով (ինքնուրույն աշխատանք).**

Աշակերտները կծածկեն գունդը ջրաներկի մեկ գույնի ներկով: Գույնը թաց սպունգով բացացնելու մեթոդով գնդին ծավալային ձև կտան:

Ջրաներկով կանեն տոնային աստիճանավորման սխեմա.




https://watercoloraffair.com/wp-content/uploads/2019/02/watercolor-skin-tone.jpg

• Աշակերտները ձեռքը կվարժեն ջրաներկով գույնի տարբեր մգության երանգ նկարելու մեջ: Ուշադիր կդիտեն գույների անիվը: Ամբողջությամբ, հավասար ուժգնությամբ կգունավորեն թերթի երկար շերտը մեկ գույնի ներկով: Տեսողականորեն կնշեն այն հատվածը, որի վրա լույս է ընկնում, և որը համեմատաբար բաց երանգ պետք է ունենա: Մաքուր ջրի մեջ թրջած վրձնով կմաքրեն նշված հատվածը: Պետք է փորձեն հավասարաչափ և աստիճանաբար մուգ երանգը փոխել բաց երանգով:

✓ Գույնը բացացնելու տվյալ մեթոդը ենթադրում է մաքուր ջրի մեջ թրջած վրձնով նկարից ջրաներկի մաքրում:

✓ **Տոնային աստիճանավորում գուաշով** (ինքնուրույն աշխատանք).

Աշակերտները գուաշի ներկերով գունդ կնկարեն: Լվացման մեթոդի փոխարեն, գույնը բացացնելու համար գուաշի ներկը պետք է խառնեն սպիտակ գույնի ներկի հետ:

 

https://encrypted-tbn0.gstatic.com/images?q=tbn%3AANd9GcRJFU9jZDxcshWwag5jCTpytSa2KvRJ82b9EcpVGmQsz6BwFwQh

- ✓ **Ծալազարդում մատիտով.** (ինքնուրույն աշխատանք)

Հասարակ մատիտով, նրբագծերով և խաչաձև նրբագծերի միջոցով աշակերտները կնկարեն ծալազարդ: Գործվածքը փռե՛ք սեղանի վրա կամ պատից այնպես կախե՛ք, որ մի քանի ծալք առաջանա: Աշակերտները հասարակ մատիտով կնկարեն ծալազարդ: Նրանք ուշադրություն պետք է դարձնեն լուսաստվերին և տոնային աստիճանավորմանը:



https://i.pinimg.com/originals/95/2f/e2/952fe22fa5de31798b43beff3346b5d8.jpg



https://i.pinimg.com/originals/e5/cb/69/e5cb69da2c1f45e5e28cdc6050e1a92b.jpg

- ✓ **Ծալազարդում ջրաներկով.** (ինքնուրույն աշխատանք)

Աշակերտները պետք է ծալազարդ նկարեն ջրաներկով կամ գուաշի ներկով: Պետք է նկատի ունենան, որ ջրաներկը որքան ջրալի է, այնքան ավելի բաց է և թափանցիկ:

Ջրաներկով դրված մուգ ինտենսիվ գույնի բիծը կարող ենք բացացնել՝ մաքուր ջրի մեջ թրջած վրձնով կամ սպունգով: Գուաշի ներկը բացացնելու համար նրան պետք է խառնեն սպիտակ ներկ:

Ջոտտո Բոնդոնե, «Սուրբ Հովակիմի երազը», որմնանկարի դետալ Սկրովենյի կապելլա, Պադուա
https://bit.ly/2XNKlrF

Ջրաներկով կատարած ծալազարդի նմուշ.
https://bit.ly/2MhUckb
Գուաշով կատարած ծալազարդի նմուշ.
https://bit.ly/2TVvzO7

✓ **Մարդը Վերածննդի դարաշրջանի քանդակում**

**Նախապես ունեցած գիտելիքի ակտիվացում.**

Ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին հիշեցնի հնագույն շրջանի արվեստի ժամանակաշրջանները և դրանց բնութագրիչները՝ մարդու մարմնի անատոմիայի և համամասնությունների հետազոտության առումով:

Հնագույն շրջանի արվեստի ժամանակաշրջանները
Արխաիկ – մ.թ.ա. VIII-V դդ.
Կլասիկա – մ.թ.ա. V-IV դդ.
Հելլենիզմ – մ.թ.ա. IV դարի II կեսից մինչև մ.թ.ա. I դարը

- **Համեմատական վերլուծություն** (զրավոր զեկուցում).

✓ Համեմատի՛ր աստվածաշնչյան Դավիթ թագավորի ռոմանական ռելիեֆները և վերածննդյան քանդակները:
✓ Ինչպե՞ս պատկերացրին և բնութագրեցին քանդակագործները հերոս պատանուն:
✓ Ի՞նչ ատրիբուտներով են առանձնանում ռոմանական և վերածննդյան քանդակները:
✓ Կարծիք արտահայտի՛ր՝ աստվածաշնչյան Դավիթի ո՞ր կողմից ցուցադրմանն են ծառայում այս ատրիբուտները:

**Վերլուծության նմուշ.**

Միջնադարյան ռոմանական ռելիեֆներում աստվածաշնչյան Դավիթ թագավորը ներկայացված է տավիղով, որպես սաղմոսներ կատարող և Աստծուն փառաբանող: Սաղմոսների հեղինակի տավիղն ընդգծում է Դավիթ թագավորի Աստծուն փառաբանող կողմը: Այս ատրիբուտը համապատասխանում է կրոնական գաղափարների հաստատման ցանկություն:

| | |
|---|---|
| Ռոմանական քանդակներում անատոմիական ճշգրտությունն անտեսված է, համամասնությունները խախտված են, ծավալները փոխանցված են պայմանականորեն, հարթ, գծերի միջոցով։ Վերածննդյան Դավիթները ներկայացված են, որպես մարտնչող, Գողիաթին պարտության մատնող հերոսներ։ Նրանց ատրիբուտները (պարսատիկ, թուր) մարտահրավերները հաղթահարելու կարողություն ունեցող, հաղթական հերոսի կերպար են հաստատում, ինչը համապատասխանում է վերածննդյան դարաշրջանի գաղափարներին։<br><br>Վերածննդյան դարաշրջանում Դավիթը հաղթանակած է, նա հաղթեց Գողիաթին։ Վերածննդի քանդակներում երևում է հնագույն արվեստի ազդեցությունը. դրանց ձևերը ծավալային են, համաչափ և անատոմիական առումով ճիշտ պատկերված, կերպարները կանգնած են կոնտրապոստի (մեկ ոտքի վրա հենված ֆիգուր) կեցվածքով՝ հունական դասական քանդակների նման։ Հունական դասական նախշերը նշաձող էին Վերածննդի դարաշրջանի նկարիչների համար։<br>Աշակերտները պետք է գան այն եզրակացության, որ աստվածաշնչյան Դավիթ թագավորի քանդակներն ավել ընդհանրություն ունեն հունական դասական ժամանակվա Պրաքսիտելեսի սատիրայի արձանների հետ, քան հռոմեական ռելիեֆների, չնայած հռոմեական ռելիեֆներում պատկերված է նույն կերպարը՝ Դավիթ թագավորը։<br><br>**Գործնական առաջադրանք.**<br>✓ **Հեծյալի ֆիգուր պլաստիլինով**<br><u>Նյութ.</u><br>պլաստիլին<br>փափուկ, առաձգական մետաղալար<br>փայտի փոքր կտոր կամ տախտակ (տակդիրի համար)<br>մեխեր և մուրճ՝ հիմնակմախքն ամրացնելու համար<br>պլաստիլինի դանակ<br>1. Մետաղալարով պատրաստի՛ր հիմնակմախք (կմախք) և հիմնակմախքն ամրացրո՛ւ տակդիրի վրա։<br>2. Պլաստիլինով կամ կավով կոպիտ պատի՛ր հիմնակմախքը։<br>3. Մատներով և պլաստիլինի դանակով մշակի՛ր մանրամասերը։<br><br><u>Փուլային լուսանկարչական հրահանգ.</u><br>1. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/384598bcba14ac7cc25999b550c1eb4e.jpg<br>2. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/f5700a3f6cdd4db9ec88adbcadd153bf.jpg<br>3. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/f9171e3f522ad94c9e368e32aa8c69a9.jpg<br>4. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/7d34ec0dcd53bc5ba7b44450652ea1f9.jpg<br>5. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/5332a31040d3a2f77259ed92ac9d0ad2.jpg<br>6. http://dekormyhome.ru/wp-content/uploads/2019/07/a5343a732592c71dda88f28980807aed.jpg | |

- ✓ **Մարդու ֆիգուր կոնտրապոստի կեցվածքով.**

Նյութ.
պլաստիլին, փափուկ, առաձգական մետաղալար
փայտի փոքր կտոր կամ տախտակ (տակդիրի համար)
մեխեր և մուրճ՝ հիմնակմախքն ամրացնելու համար
պլաստիլինի դանակ

* Պլաստիլինով պատրաստած մարդու ֆիգուրը կարող է օգտագործվել հաջորդ համալիր աշխատություններում՝ «Պատմական հագուստով տիկնիկի» և «Հանդուրժող քաղաքի մանրակաղապարի» ձևավորման համար։



- ✓ Ոլորած մետաղալարով պատրաստի՛ր հիմնակմախք։ Փորձի՛ր հենց սկզբից հաշվարկել մարմնի ճիշտ համամասնությունները։
- ✓ Հիմնակմախքը ոտնաթաթերով միացրո՛ւ տակդիրին, ինչի համար նախապես պատրաստի՛ր կավի, հաստ ստվարաթղթի կամ փայտի մի փոքր կտոր։
- ✓ Կանգնեցրո՛ւ հիմնակմախքը ցանկալի կեցվածքով։
- ✓ Մետաղալարի մարմնին և վերջույթներին պլաստիլին կպցրո՛ւ։
- ✓ Ֆիգուրի համար գլուխ պատրաստի՛ր։
- ✓ Մարդու անատոմիական կառուցվածքին համապատասխան մարմնին ավելացրո՛ւ պլաստիլինի փոքր-փոքր կտորներ և վերջույթներ։
- ✓ Մատներով և պլաստիլինի դանակով հղկի՛ր ֆիգուրը։

| | |
|---|---|
| ✓ **Բարձր Վերածնունդ**<br><br>**Պատասխան դասագրքում տրված հարցին** (Այս հարցերը ծառայում են նախորդ տարի ստացած նախապես ունեցած գիտելիքի ակտիվացմանը)<br><br>• Ինչի՞ ֆոնին է Մազաչչոն տեղադրել «Երրորդության» հերոսներին:<br>• Ո՞ր դարաշրջանից է «փոխառված» այս կառույցը:<br>• Ի՞նչ է այն իրենից ներկայացնում:<br>• Ի՞նչ սկզբունքներով է Մազաչչոն ստեղծում տարածքի պատրանք:<br><br>**Պատասխան.**<br><br>✓ Մազաչչոյի «Երրորդություն» որմնանկարի հերոսները ներկայացված են կամարի ֆոնի վրա:<br>✓ Այս ճարտարապետական թեման վերցված է հնագույն դարաշրջանից: Հիշե՛ք հռոմեական հաղթական կամարները (Ադրիանոսի, Կոստանդիանոսի, Տիտոսի, Սեպտիմիոսի, Սևերոսի ...): Արվեստագետը դիմում է անտիկ դարաշրջանի պատկերին, ինչն ամբողջությամբ հատկանշական է Վերածննդի դարաշրջանի համար:<br>✓ Տարածքի պատրանքը ստեղծվում է գծային հեռանկարի միջոցով (կամարների կեսոնները խորքում փոքրանում են):<br><br>✓ **Համեմատական վերլուծություն.**<br>Աշակերտները բանավոր կհամեմատեն.<br>Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա»-ի և Ռաֆայել Սանտիի «Մադալենա Դոնիի» դիմանկարները:<br><br>**Վերլուծություն նմուշ**.<br>Ռաֆայելի «Մադալենա Դոնիի» կեցվածքը ճիշտ նույնպիսին է, ինչ Լեոնարդ դա Վինչիի «Մոնա Լիզայինը», բայց Ռաֆայելը նպատակ ունի ոչ միայն արտաքին նմանությունը փոխանցել, այլև արտացոլել երևելի մարդու կարգավիճակը: Ռաֆայելի բնորդը զուգված է, նա կրում է շքեղ հագուստ, զարդեր: Բայց նրա դեմքի արտահայտությունը ոչինչ չի ասում: Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզան» կրում է պարզ, մուգ գույնի զգեստ, զարդեր չի կրում, փոխարենը՝ երկիմաստ դեմքի արտահայտության, խորհրդավոր ժպիտի պատճառով տեսնում ենք, որ նա ինչ-որ բանի մասին է մտածում, տեսանելի է նրա ներքին աշխարհը: | |

«Մաղալենա Դոնիի դիմանկարի» կոլորիտը բազմազան է, մինչդեռ «Մոնա Լիզայինը» մոնոխրոմ է, միապաղաղ, կարծես Լեոնարդոն կանխամտածված չի օգտագործում գույներ, որ շեղի մեր ուշադրությունը և կենտրոնանում է միայն գլխավորի՝ կնոջ դեմքի արտահայտության վրա:
Բացի այդ, «Մաղալենա Դոնիի դիմանկարում» բոլոր պատկերները հստակ են, մինչդեռ «Մոնա Լիզայում» կատարվում է Լեոնարդոյի «սֆումատոյով» կամ պատկերները մշուշոտ են, ինչը ստեղծում է տարածության, օդի ռեալիստական տպավորություն:

✓ **Համեմատական T սխեմա (ինքնուրույն աշխատանք)**

Դարաշրջանի արվեստի պատկերավորման լեզվի բնութագրիչների (բյուզանդական և վերածննդյան գեղանկարչության առանձնահատկությունների) համեմատում և համեմատական սխեմայի լրացում:

*Սխեմայի լրացումը կարելի է շարունակել հաջորդ դասերին:

Դարաշրջանների պատկերավորման լեզվի բնութագրիչների համեմատական T սխեմայի ենթադրյալ նմուշ.

| **Բյուզանդական** | **Վերածննդի դարաշրջան** |
|---|---|
| Արվեստը զարգանում է եկեղեցիների ու վանքերի ընդերքում և ծառայում է կրոնական գաղափարների հաստատմանը: | Արվեստը զարգանում է մասնավոր մեցենատների պալատներում: Եկեղեցին արվեստի պատվիրատուներից մեկն է: |
| Դոգմատիկ | Հումանիստական, գիտական |
| Հոգևորի առավելություն մարմնականի նկատմամբ: | Հավատք՝ մարդու մտավոր, ստեղծագործական և ֆիզիկական հնարավորություններում: |
| Երկրային կյանքի իմաստը գայթակղությունների դեմ պայքարն է: | Երկրային կյանքի իմաստը անձնական կատարելագործումն է հնագույն գիտության ուսումնասիրման ճանապարհով: |
| Մարդը մեղավոր է: | Մարդն արժանապատիվ, ինքնավստահ հետազոտող է և արարող: |
| Սրբանկարչությամբ օրինականացված խորհրդանշական, պայմանական պատկերավորման լեզու: | Երկրային աշխարհի ռեալիստորեն արտացոլման սկզբունքներ: |
| Պայմանական ֆոն (հաճախ ոսկեգույն):<br>Ֆոնի վրա կառույցներն ու բնապատկերը նույնպես պայմանական են: | Ռեալիստական ֆոն (քաղաքի կամ բնական բնանկար): |

| | |
|---|---|
| Մարդկանց պատկերների միջև խախտված մասշտաբները փոխանցում են աստվածային հիերարխիան: | Պահպանված է ճիշտ մասշտաբային հավասարակշռությունը մարդկանց պատկերների և ճարտարապետական կամ բնական ֆոների միջև: |
| Խախտված են համամասնությունները: | Ճիշտ համամասնություններ: |
| Ֆիգուրները անատոմիական առումով մշակված չեն: | Ֆիգուրները անատոմիական առումով մշակված են: |
| Կեցվածքները փայտացած են: | Կեցվածքները բնական են: Օգտագործվում է հնագույն կոնտրապոստը՝ հակադիրքը: |
| Ձևերը հարթ են, փոխանցված են գծերով: Լուսաստվերը և տոնային աստիճանավորումն անտեսված է: | Եռաչափ ծավալները փոխանցված են լուսաստվերի և տոնային աստիճանավորման միջոցով: |
| Օգտագործված է հետադարձ հեռանկարը և խախտվում է ռակուրսը (դիտակետ): | Օգտագործվում է գծային և օդային հեռանկար: |
| Ուրվապատկերում փակված տեղային գունավոր բծեր: Գույներին տրվում է խորհրդանշական ծանրաբեռնում: | Կոմպոզիցիայում հավասար բաշխված գունավոր բծեր՝ հարստացված տոնային աստիճանավորմամբ: |
| Արվեստագետն անանուն է: | Արվեստագետների անունները հայտնի են: |
| Նյութը՝ մոմանկարչություն, տեմպերա, փայտ: | Տեմպերա, յուղաներկ, կտավ, փայտ |

✓ **Նկարազարդումների ժամանակագրական դասավորում** (Աշակերտի գիրք, էջ 144-145) (խմբային աշխատանք).

Նկարազարդումների դասավորում էջում.

| | |
|---|---|
| 1. Դոմենիկ Գիրլանդայո, 1480, Վերածննդի դարաշրջան | 3. Ջոտտո դի Բոնդոնե, 1305 թ. |
| 2. Բյուզանդական խճանկար, Սանտա Մարիա Նովելլայի մայր տաճար, Մոնրեալե, Պալերմո, Սիցիլիա, Իտալիա, 1180-ական թվականներ | 4. Ջակոպո Տինտորետտո, 1533-66 թվականների միջև: Մաներիզմ |

Ստեղծագործություններում օգտագործված գեղարվեստական սկզբունքների համաձայն, աշակերտները ժամանակագրորեն կամ ստեղծման ժամանակին համապատասխան, պետք է հաջորդաբար դասավորեն «Խորհրդավոր ընթրիքն» արտացոլող, մոնումենտալ նկարչության չորս նմուշ:

<u>Ճիշտ պատասխան.</u> 2, 3, 1, 4.

*Ավետարանում «Խորհրդավոր ընթրիքի» դրվագի համար տե՛ս, Մատթեոս, 26. 1-35, Մարկոս, 14. 1-31, Ղուկաս, 22. 1-38:

| | |
|---|---|
| ✓ **Համեմատական վերլուծություն** (Աշակերտի գիրք, էջ 144-145) (խմբային աշխատանք).<br>Աշակերտները պետք է համեմատեն իրար հետ «Խորհրդավոր ընթրիքի» կոմպոզիցիաները<br><br><u>Հուշումներ</u>.<br>Դիտի՛ր «Խորհրդավոր ընթրիքը» պատկերող ստեղծագործությունները և ձևակերպի՛ր Վերածննդի գեղանկարչությանը բնորոշ հատկանիշները: Համաչափ են կոմպոզիցիաները, թե՝ անհամաչափ: Ստատիկ, թե՝ դինամիկ: Հավասարակշռված, թե՝ անհավասարակշիռ: Լուսավորությունը հավասար է, թե կոնտրաստ հակադրված: Գույները ներդաշնակորեն արձագանքում են միմյանց, թե բծերից որևէ մեկը դուրս է ընկել ընդհանուր կոլորիտից և «ճչում է»: Պահպանվա՞ծ են արդյոք օդային և գծային հեռանկարները, առարկաների միջև մաշտաբային հարաբերակցությունը, անատոմիական ճշգրտությունն ու պատկերների համամասնությունները: Ծավալները փոխանցված են լուսաստվերով և տոնային աստիճանավորմամբ, թե՝ գծերով: Կարո՞ղ ես այս նշաններով ճանաչել ստեղծագործության կատարման դարաշրջանն ու ժամանակաշրջանը:<br><br>*Տե՛ս վերևում համեմատական T սխեմա<br><br>✓ **Հետազոտություն (տնային առաջադրանք)**<br>Տեղեկություններ գտի՛ր Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքի» մասին: Ի՞նչ ճակատագրի արժանացավ որմնանկարը հետագայում: Ի՞նչ ավանդազրույցներ են կապված նրա ստեղծման հետ:<br>Լեոնարդոյի փորձարկումների պատճառով ներկը շուտով սկսեց թափվել: Վերականգնման բազմաթիվ փորձերը միայն բացասական հետևանք տվեցին: Այսօր որմնանկարը զգալիորեն վնասված է և հնարավորինս պնդացած (բավական է ասել, որ ինչ-որ անմիտ վանականներ նույնիսկ դուռ են բացել և վնասել որմնանկարի ստորին մասը, իսկ Նապոլեոնի ժամանակ սեղանատունն օգտագործվում էր որպես ախոռ...):<br>Տե՛ս Գիորգի Խոշտարիայի հոդվածը Լեոնարդո դա Վինչիի մասին. https://bit.ly/2XRTkYz<br><br>✓ **Ավարտի սկիզբը**<br><br>✓ **Համեմատական վերլուծություն.**<br><br>Համեմատի՛ր Պոլիկլետոսի «Դորիֆորը» («Նիզակակիր», բարձր կլասիկա) և Միքելանջելոյի «Դավիթը»: Ի՞նչ նմանություն ես տեսնում:<br>Դիտի՛ր կոնտրապոստի՝ հակադիրքի կեցվածքը. ինչ ես կարծում, օգտագործե՞լ է արդյոք Միքելանջելոն հնագույն քանդակի խորը իմացություն: Հիմնավորի՛ր քո կարծիքը: | |

**Պատասխան.**
Վերածննդյան Դավիթը ներկայացված է որպես մարտնչող, Գողիաթին պարտության մատնող հերոս: Նրա ատրիբուտը (պարսատիկը) մարտահրավերներին դիմակայելու կարողություն ունեցող, հաղթական հերոսի կերպար է հաստատում, ինչը համապատասխանում է վերածննդյան դարաշրջանի հումանիստական գաղափարներին: Միքելանջելոյի Դավիթը հաղթանակած է, նա պարտության մատնեց Գողիաթին: Միքելանջելոյի քանդակում երևում է հնագույն արվեստի ազդեցությունը՝ ձևերը ծավալային են, համամասնորեն և անատոմիական առումով ճիշտ կազմակերպված, պատկերը կանգնած է հակադիրքի (մեկ ոտքի վրա հենված պատկեր) կեցվածքով՝ Հունաստանի դասական քանդակների նման (Պոլիկլետոսի «Դորիֆորը», Բարձր կլասիկա): Հունական դասական նմուշները Վերածննդի արվեստի համար չափանիշ էին:

- ✓ ***Համեմատի՛ր***
- Համեմատի՛ր միջնադարյան «Պիետան» Միքելանջելոյի կողմից նույն թեմայով ստեղծված քանդակի հետ:
  Դատողությո՛ւն արա տարբերությունների և դրանց պատճառների մասին (խմբային աշխատանք):

**Համեմատական վերլուծության նմուշ**
Միջին դարերի Նաումբուրգի գոթական «Պիետան» կատարված է պայմանական գեղարվեստական սկզբունքներով, խախտված է անատոմիական ճշգրտությունը: Կեցվածքը փայտացած է, ոչ բնական, տիկնիկի նման անհարմար: Համամասնությունները ձգված են, ձևերը չափազանցված: Քրիստոսի ողերն ընդգծված են, որպեսզի դիտողների ուշադրությունը կենտրոնացվի Քրիստոսի կողմից կրած տանջանքների վրա: Աստվածամոր և Քրիստոսի պատկերները իրար հետ կոմպոզիցիոն առումով օրգանապես չեն կապակցված: Ծալազարդումը ռիթմիկ է, կարգավորված: Միքելանջելոյի «Պիետան» կատարված է անատոմիայի և համամասնությունների գիտական իմացությամբ: Երկու պատկերները ներդաշնակորեն միանում են իրար, կարծես մեկ ամբողջություն լինեն: Կոմպոզիցիան վերածննդյան, կայուն եռանկյունի է ստեղծում: Դեմքերը հոյակապ, նրբագեղ արտաքին ունեցող մարդկանց են ներկայացնում: Ծալազարդումը բնական տպավորություն է ստեղծում:

<u>Լրացուցիչ ցուցադրական նյութ համեմատության համար (XIV-XV դարերի Պիետաներ).</u>
https://bit.ly/2ZZbdrc

https://bit.ly/2U0vpoP

- **Միքելանջելոյի «Պիետա» քանդակի ուրվանկար նկարել մատիտով** (ինքնուրույն աշխատանք)
- ✓ Գտի՛ր Միքելանջելոյի «Պիետա» քանդակի տարբեր ռակուրսներից նկարած նկարազարդումներ:
- ✓ Ընտրի՛ր որևէ մեկը: Հասարակ մատիտով նկարի՛ր դրա պատճենը:
- ✓ Ուշադրություն դարձրո՛ւ կեցվածքին և համամասնություններին:
- ✓ Փորձի՛ր Աստվածամոր թիկնոցի ծալազարդը փոխանցել տոնային աստիճանավորումով:



https://bit.ly/2XoFIW2

✓ **Համամասնությունների հետազոտում** (ինքնուրույն աշխատանք)։

Դիտի՛ր, չափի՛ր, թե քանի անգամ է գլուխը տեղավորվում «Վիտրուվյան մարդու» մարմնում։ Համամասնության սկզբունքը։
Համաձա՞յն ես Լեոնարդոյի համամասնություններին։
Համեմատի՛ր «Վիտրուվյան մարդու» համամասնությունները իրական մարդու համամասնությունների հետ։
Կազմի՛ր տարբեր դարաշրջանների նկարչության մեջ այդ ժամանակահատվածի համար բնութագրական համամասնությունների աղյուսակ։



✓ **Մարդու պատկեր նկարել համամասնությունների պահպանմամբ** (ինքնուրույն աշխատանք):

Դիտի՛ր մարդու համամասնությունների պայմանական սխեման: Սխեմատիկ պատկերն արտանկարի՛ր տետրիդ մեջ և նրան «մարմին» հաղորդի՛ր:

Երբ մարդը կանգնած ժամանակ հենվում է երկու ոտքի վրա, նրա ուսերը և կոնքը հորիզոնական, իրար զուգահեռ են տեղակայված (նկ. 1):

Կոնտրապոստի (հակադիրքի) կեցվածքում գտնվող մարդը հենվում է մեկ ոտքի վրա, իսկ երկրորդը՝ ազատ, հանգիստ վիճակում է: Նման կեցվածքում կոնքի և ուսերի գծերը հակառած անկյունով են թեքվում: (նկ. 2):





- ✓ **Մարդու պատկեր նկարել տարբեր կեցվածքով և շարժման մեջ** (տնային առաջադրանք).

(Տվյալ առաջադրանքը աշակերտներին կպատրաստի «Անիմացիա« համալիր առաջադրանքը կատարելու համար)

1. Մարդուն տարբեր դիրքերում հեշտ կնկարես, եթե հասկանաս նրա շարժման մեխանիզմները:
Դիտի՛ր նմուշը: Արտանկարի՛ր մարդու շարժման մի քանի սխեմատիկ օրինակներ. «Մարմի՛ն տուր», հագցրո՛ւ քո կողմից նկարված մարդուկներին: Հորինի՛ր շարժում կամ կեցվածք:
Քո ձեռքբերումը բարելավելու համար կատարի՛ր ընկերներից կամ ընտանիքիդ անդամների մի քանի ուրվանկար:
Մտածի՛ր սյուժե և նկարի՛ր բազմապատկեր կոմպոզիցիա:



- ✓ **Շարժվող մարդուկ** (տնային առաջադրանք)

(Տվյալ առաջադրանքը աշակերտներին կպատրաստի «Անիմացիա» համալիր առաջադրանքը կատարելու համար)

Կենդանացրո՛ւ խորհրդանիշը՝ նոթատետրի վերջին թերթի եզրին նկարի՛ր մարդուկ: Յուրաքանչյուր հաջորդ թերթիկի վրա նկարի՛ր մարդուկի շարժման հերթական փուլը:
Մարդուկին կենդանացնելու համար արագ շարժումով թերթի՛ր նոթատետրի էջերը:



Տեսահրահանգ.
https://bit.ly/2XSimXN

Նմուշներ.
https://bit.ly/2zHr6YR

**Հանձնարարականներ համալիր առաջադրանքի համար.**

- ✓ **Զեկուցում.** (Պարտադիր)

Անցկացրո՛ւ հետազոտություն և զեկուցում ներկայացրո՛ւ Վերածննդի դարաշրջանի որևէ արվեստագետի մեկ ստեղծագործության մասին:
Դիտի՛ր, թե ինչպես են պատկերները բաշխված կոմպոզիցիայի մեջ (համաչափ կամ անհամաչափ):
Մարդկանց կեցվածքները ստատիկ են, թե՞ դինամիկ:
Պատկերներն ունե՞ն արդյոք ստվեր, լուսապսակ, ծավալ:
Հեղինակն օգտագործո՞ւմ է լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ծավալ: Պատկերները համամասնական են, թե՞ անհամամասնական:
Պատկերը անատոմիական առումով հղկվա՞ծ է:
Նկարում պահպանվա՞ծ է արդյոք ծավալային հարաբերակցությունը:
Օգտագործվա՞ծ է արդյոք գծային և (կամ) օդային հեռանկար:
Դիտի՛ր և նկարագրի՛ր հերոսների զգեստներն ու միջավայրը:

Ենթադրյալ թեմաներ.

- ✓ Ջոտտոյի որմնանկար (որևէ),
- ✓ Անդրեա դել Կաստանյոյի «Խորհրդավոր ընթրիքը»,
- ✓ Գիրլանդայոյի «Խորհրդավոր ընթրիքը»,
- ✓ Ռաֆայելի «Մադոննան» (որևէ մեկը):
- ✓ Ռաֆայելի «Դիսպուտան»,
- ✓ Ռաֆայելի «Պառնասը»,
- ✓ Բոտիչչելիի «Մադոննան» (որևէ),
- ✓ Բոտիչչելիի «Գարունը»,
- ✓ Միքելանջելոյի «Մեդիչիների կապելլան»,
- ✓ Միքելանջելոյի «Մովսեսը»,
- ✓ Միքելանջելոյի «Պիետան» (որևէ),
- ✓ Միքելանջելոյի «Ստրուկները»
- ✓ Դոնատելլո «Մարիամ Մագթաղենացին»
- ✓ և այլն

- ✓ **Անիմացիա** (ինքնուրույն կամ զույգով աշխատանք).

Մեր ժամանակակից կյանքը լի է խորհրդանիշներով, որոնց վրա մարդու պայմանական պատկերներ են պատկերված: Գտի՛ր ճանապարհային կամ օլիմպիական խորհրդանիշներ մարդկային պատկերով:
Ընտրի՛ր պատկերներից մեկը, վերբեռնի՛ր անիմացիա ստեղծող համակարգչային ծրագրի մեջ https://multator.ru/draw/ և ստեղծի՛ր կարճ անիմացիա:



| | |
|---|---|
| Բարդ նմուշներ.<br>https://www.youtube.com/watch?v=9vbVnSCHv44&fbclid=IwAR248dLcbXF4SWZlpXszPRqhd7EHZ0hn10bHONfwyn6Q27Cy-r__n7BZs8c<br>https://www.youtube.com/watch?v=JQb5pbhDUzY&fbclid=IwAR3CmwWmKAj5vQjaw0EZca2oHA7dYmoADVdDJNy9yxUC8ee0U6EoOF6J5L8<br><br>Պարզ նմուշներ.<br>https://www.youtube.com/watch?v=tcOjNJABoJQ&fbclid=IwAR0iz4OXLqvgZW4Syo1Jd4fQCwx1ONmBCo-6m4pZjVOe--JOOaSeL_4ifAY<br>https://www.youtube.com/watch?v=3905GYvi_88&fbclid=IwAR0ZxgMsGQEZhpkRUjjPnTEOTU3wBFPQvkclIFrjz5sUEO5dQLxrEZATSwg | |
| **Ռեսուրսներ**<br><br>Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012<br>https://bit.ly/2TZ3R3d<br><br>Համաշխարհային արվեստ, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե: «Մերիդիանի», Թբ., 2010<br>Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպա), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթրեն, Թբ., 2018:<br><br>**Ինտերնետ-ռեսուրս.**<br>https://artsandculture.google.com/<br><br>Անիմացիա ստեղծելու ծրագիր. https://multator.ru/draw/<br>Կոնգրեսի գրադարանի նկարազարդումների հավաքածու. https://www.loc.gov/collections<br><br>Արվեստի առցանց պատկերասրահներ.<br>https://www.wga.hu/?fbclid=IwAR3OGQq-Cax9oDCQdvar4Gx2AhD7h66KWvDmjtKTSxaTzllFzmQcg5KenLs<br><br>https://library.artstor.org/?fbclid=IwAR1y7qrfGrf4KL-Dd6X1fZneUf2yFQsNUYucKOA4H4UI0vVc2kMlyGhZV1Q#/home<br><br>Հիմնակմախքի նմուշ՝ պլաստիլինով մարդու պատկեր կերտելու համար.<br>https://bit.ly/3eEVulj | |

**Գնահատման չափանիշներ**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**

**Կերպարվեստի տեխնիկա.**

- Պատկերում է մարդուն համապատասխան պատկերավորման տարրերի և սկզբունքների (ծավալ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, համամասնություն, կեցվածք, ժեստ, մանրամաս և այլն), տարբեր նյութերի և տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2)**:

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**

- Վերլուծում է մի քանի արվեստագետի ստեղծագործություն և դատողություն է անում, թե արտացոլվել է արդյոք, և ինչ ձևով է արտացոլվել նրանց աշխատության մեջ այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Համեմատում է որևէ երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործություններ (դիմանկարի, կենցաղային ժանրի), դատողություն է անում նմանությունների, տարբերությունների, առանձնահատկությունների մասին **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Զեկուցում** (Գնահատման ձևաթուղթը տե՛ս հավելվածում:)
**Կերպ.կիր.հիմն.3. Կերպ.կիր.հիմն.4.**
Արվեստի նմուշի հիման վրա դատողություն է անում, թե ինչպես էին պատկերում մարդկանց Վերածննդի դարաշրջանում:
Վերլուծում է արվեստագետի ստեղծագործությունը և դատողություն է անում, թե ինչպես է նրա աշխատության մեջ արտացոլվել դարաշրջանի ազդեցությունը:

- Վերլուծված են ստեղծագործության պատկերավորման սկզբունքները և տարրերը:
- Ստեղծագործությունը քննարկված է պատմամշակութային համատեքստում:
- Պատշաճ կերպով է կիրառում տերմինները:
- Լսարանի հետ կապ է հաստատում:

**Անիմացիա** (Գնահատման ձևաթուղթը տե՛ս հավելվածում:)

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/2

<table>
<tr><td colspan="3">Դասեր 6 - 7 Միավորող թեմա. Մարդը՝ բնության մաս</td></tr>
<tr><td>Հարց և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Տարրեր.<br>գիծ, գույն, ձև/դեֆորմացիա, կազմվածք, ֆոնի և պատկերի փոխհարաբերությունը<br><br>Սկզբունքներ.<br>համամասնություն/անհամամասնություն, մասշտաբ, հեռանկար, կոնտրաստ<br><br>Բնազավառներ.<br>հաստոցային նկարչություն<br><br>Ժանրեր.<br>կրոնական, դիմանկար<br><br>Դարաշրջան/ոճ/հոսանք<br>Հյուսիսային Եվրոպայի Վերածնունդը</td><td>• Ի՞նչ գործոններ են պայմանավորում մի դարաշրջանի տարբեր երկրների արվեստի ոճական տարբերությունները:<br>• Արվեստի ստեղծագործության մեջ ինչպե՞ս տեսնեմ այլ երկրի արվեստի ազդեցության նշաններ:<br>• Ի՞նչ կարող եմ իմանալ արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների մշակույթների մասին:<br>• Ի՞նչ նմանություն/տարբերություն կա իտալական և հյուսիսեվրոպական Վերածնունդների միջև, և ի՞նչն է դրա պատճառը:</td><td rowspan="2">Եռապատկեր.<br>քո կողմից ընտրված նյութով և սկզբունքով ստեղծի՛ր բարոյապաշտական եռապատկեր:</td></tr>
<tr><td colspan="2">✓ Մարդը Հյուսիսային Եվրոպայի Վերածննդում<br><br>Պատասխաններ հանգուցային հարցերին.<br>✓ Մեկ դարաշրջանի տարբեր երկրների արվեստի ոճական տարբերությունները պայմանավորում են պատմական իրավիճակը, կրոնական համատեքստը, աշխարհագրական դիրքը:<br>✓ Այս կամ այն երկրների արվեստի նշանների իմացությունն օգնում է մեզ ճանաչել դրանք այլ երկրի արվեստի գործերում և որոշել ազդեցությունը:<br>✓ Արվեստի միջոցով կարելի է շատ բան իմանալ տարբեր դարաշրջանների և մշակույթների մասին:<br>✓ Իտալիայի համար Վերածնունդը օրգանական երևույթ էր, քանի որ նա հնագույն մշակույթի անմիջական ժառանգորդն էր: Համաժամանակյա հյուսիսեվրոպական մշակույթը վերածնունդ անվանումով ենք հիշատակում Իտալիայից եկած ազդեցության պատճառով: Հյուսիսային եվրոպական Վերածննդի տեսքը պայմանավորել են բողոքական կրոնական հայացքները և տեղական ավանդույթները (բանահյուսություն, գոթիկա, կլիման և այլն)</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **Քննարկում.**<br>✓ Ինչպե՞ս են իտալացիները և հյուսեվրոպացիները պատկերել պատվիրատուին: Ո՞րն էր դրա պատճառը:<br>✓ Ինչպե՞ս է բարու և չարի հակադրությունը փոխանցված Ալբրեխտ Դյուրերի «Քրիստոսը ուսուցիչների միջև» ստեղծագործության մեջ:<br>✓ Կարո՞ղ ենք Բոսխի և Բրեյգելի ստեղծագործությունն անվանել «քարոզ»: Ի՞նչ են քարոզում դրանք:<br>✓ Եթե մենք ընդհանրացնենք ֆիզիկական կուրությունը և այն համարենք, որպես մտքի «կուրություն» (տգիտություն), ապա փոխաբերաբար ի՞նչ է մեզ ակնարկում Բրեյգելի «Կույրերը» աշխատությունը:<br>✓ Ի՞նչ ես կարծում, Բրեյգելի կերպարները կոնկրետ մարդիկ են, թե՞ ընդհանրացված, հավաքական դեմքեր:<br>✓ Դիտի՛ր Պիտեր Բրեյգելի «Մեծ ձկներն ուտում են փոքրերին» նկարը: Ի՞նչ իմաստ է ներհյուսել նկարիչն այս ստեղծագործության մեջ:<br>✓ Այս նկարներում ի՞նչ վերաբերմունք է նկատվում մարդու նկատմամբ:<br>✓ Ի՞նչ տեղեկություններ են տրամադրում այս նկարներն այն ժամանակաշրջանի մասին:<br><br>**Պատասխաններ.**<br>✓ Իտալական Վերածնունդը ներծծված էր աշխարհիկ ոգով: Իտալացիները պատվիրատուին պատկերում էին կրոնական գործիչների կողքին, մինչդեռ հյուսիսեվրոպացիները, մինչև Վերածննդի ազդեցությունն ավելի հզորանալը, պատվիրատուին ներկայացնում էին ավելի փոքր չափերով, որպես ակնածանքի նշան: Դրա պատճառը նրանց կրոնականությունն էր:<br>✓ Բարու և չարի հակադրությունը Դյուրերի «Քրիստոսը ուսուցիչների միջև» աշխատության մեջ փոխանցված են արտաքին նշանների հակադրությամբ. Քրիստոսը կատարյալ տեսք ունի, իսկ մնացածները կոպիտ են, գրոտեսկային:<br>✓ Բոսխի և Բրեյգելի ստեղծագործությունը կարող ենք պատկերավոր «քարոզ» անվանել, քանի որ դրանք ցույց են տալիս, թե որքան ծիծաղելի է թվում մարդը (անխոհեմ, ագահ, խաբեբա), երբ մեղք է գործում: Նրանք դիտողին բարոյականության կոչ են անում:<br>✓ Եթե մենք ընդհանրացնենք ֆիզիկական կուրությունը և այն դիտարկենք որպես մտքի «կուրություն» (անգիտություն), փոխաբերաբար Բրեյգելի «Կույրերը» մատնանշում են, որ տգիտությանը ողբերգական վախճան է սպասվում՝ մեկը մյուսին հետը կտանի անդունդ: Իրար խելքի ընկած տգետ մարդկանց ողբերգական ավարտ է սպասվում: | |

- ✓ Բրեյգելի կերպարները ոչ թե կոնկրետ մարդիկ են, այլ ընդհանրացված, տարբեր տիպաժների ընդհանրացված հավաքական մարդիկ։
- ✓ Պիտեր Բրեյգելի «Մեծ ձուկն ուտում է փոքր ձկներին» ակնարկում է, որ թույլին հաղթում է ուժեղը։
- ✓ Վերածննդի դարաշրջանի հյուսիսեվրոպական նկարիչների աշխատանքներում երևում է, որ նրանք մարդուն չեն համարում Աստծո լավագույն արարում։ Նրան համարում են բնության մի մաս։ Հաճախ բնությունը գեղեցիկ է, իսկ այս գեղեցիկ բնապատկերներում ներգրավված մեղսավոր կերպարները գրոտեսկային տեսք ունեն։
- ✓ Այս նկարները մեզ պատմում են այն ժամանակահատվածի մասին, երբ արվեստագետի հիմնական հետաքրքրությունը մարդու բարոյական կողմն էր։

- ✓ **Հետազոտություն և համեմատական վերլուծություն (ինքնուրույն աշխատանք).**

Տեղեկություններ գտնել Յան վան Էյքի (Գենտի խորան, «Վան դեր Պալեի Տիրամայրը» ... ) աշխատությունների մասին և համառոտ զեկուցում կազմել։

- ✓ **Արվեստն ընդդեմ անխոհեմության**

**Ծանոթություն.** Բրեյգելի «Կույրերը» աշխատանքի շուրջ քննարկման ժամանակ, կարևոր է, աշակերտները ֆիզիկական կուրությունը չհամարեն թերություն, արատավորություն, ուստի կուրությունը պետք է քննարկեն միայն փոխաբերաբար։ Առավել ևս, որ Մատթեոսի Ավետարանում կարդում ենք (15, 14). «Թողեք նրանց հանգիստ. Նրանք կույր են, կույրերի առաջնորդներ են։ Եվ եթե կույրերը կույրերին առաջնորդեն, նրանք կխախվեն և երկուսն էլ կընկնեն փոսը ... Քրիստոսը նկատի ունի փարիսեցիներին, այլ ոչ թե ֆիզիկապես տեսողական խնդիր ունեցող մարդկանց։

- ✓ **Տեղեկությունների որոնում և նկարագրում.**

Հիերոնիմոս Բոսխի եռապատկերները՝ «Ուղեղի վիրահատություն», «Աճպարարը», «Գլխի վիրահատություն», «Հիմարների նավը» և «Ծույլերի երկիրը» (համառոտ զեկուցում պատրաստել)։

- ✓ **Համեմատական վերլուծություն.**

Իտալական և հյուսիսեվրոպական նկարչության նմուշների.

- ✓ Յան վան Էյք, «Կանցլեր Ռոլենի Տիրամայրը» և Վան դեր Վայդենի «Սուրբ Ղուկասը նկարում է Կույսի դիմանկարը»:
- ✓ Պատվիրատուների պատկերները Ալբրեխտ Դյուրերի «Ողբ առ Քրիստոս» աշխատության և Գիրլանդայոյի որմնանկարներում:

- ✓ **Քննարկում (խմբային աշխատանք).**

Ո՞ր ժամանակահատվածին և երկրներին էր բնորոշ մասշտաբային հարաբերակցության այսպիսի խախտումը:
**Պատասխան**. Մասշտաբները խախտում էին Հին Եգիպտոսում և Միջագետքում՝ պատկերի սոցիալական և կրոնական կարգավիճակի փոխանցման համար: Խախտում էին սրբանկարչության մեջ և մինչև Վերածննդի դարաշրջանը՝ արվեստում կրոնական հիերարխիան ընդգծելու նպատակով:

- ✓ **Գործնական առաջադրանք**

**Գրոտեսկային քանդակ.**
Վերանայի՛ր Հիերոնիմուս Բոսխի նկարները: Ընտրի՛ր որևէ տարօրինակ արարած և կերտի՛ր նմանատիպ գրոտեսկային պատկեր՝ չափազանցված դիմագծերով և հեքիաթային տեսքով: Պատրաստ քանդակների համար պատրաստի՛ր պատշաճ կերպով ձևավորված պատվանդան:

Ստեղծե՛ք համատեղ քանդակագործական կոմպոզիցիա:

* Կերտված պատկերները կարող են օգտագործվել հաջորդ եզրափակիչ համալիր առաջադրանքի՝ «Հանդուրժող քաղաք» աշխատության մանրակաղապարի ձևավորման համար:

**Հանձնարականներ «Տրիպտիկոն՝ եռապատկեր» աշխատության համար**

Ստեղծի՛ր եռապատկեր քեզ հետաքրքիր ցանկացած թեմայով: Որպես թեմա կարող ես օգտագործել վրացական կամ հայկական առածներ, որևէ գրական ստեղծագործություն (առակներ) կամ մարդու այն թերությունները, որոնց հետ դու բախվել ես կյանքում:
Տպավորությունը սրելու համար դիմի՛ր գրոտեսկի:
Մտածի՛ր.

| | |
|---|---|
| ✓ Եռապատկերի ինչպիսի՞ ձևաչափը կսազի քո մտահղացմանը:<br>✓ Ո՞ր համակարգով կբաշխես սյուժեն/կոմպոզիցիան եռապատկերի մասերի վրա:<br>✓ Ի՞նչ նյութ եք օգտագործելու աշխատանքը պատրաստելու համար:<br>✓ Գեղարվեստական ո՞ր սկզբունքով կփոխանցես ասելիքդ: Կդիմե՞ս գրոտեսկի:<br>✓ Ինչպե՞ս կօգտագործես կերպարվեստի տարրերը (գիծ, գույն, ձև/դեֆորմացիա (չափազանցություն), ֆոնի և պատկերի փոխհարաբերություն, կազմվածք և այլն) և սկզբունքները (համաչափություն/անհամաչափություն, հավասարակշռություն, մասշտաբ, հեռանկար, համամասնություն/անհամամասնություն, հակադրություն, շեշտադրություն և այլն), որ քո մտահղացումը դիտողի համար պարզ ու հասկանալի լինի:<br>✓ Լրացրո՛ւ ռեֆլեքսիայի հարցաշար:<br><br>Եռապատկերի տարածված տեսակներ.<br><br>https://images.slideplayer.com/32/9974689/slides/slide_13.jpg | |
| **Ռեսուրսներ.**<br>https://www.wga.hu/index1.html<br><br>Յան վան Էյք.<br>https://www.gettyimages.ca/photos/jan-van-eyck?family=editorial&phrase=jan%20van%20eyck&sort=mostpopular#license<br>https://artsandculture.google.com/entity/jan-van-eyck/m0ck2w?categoryId=artist<br><br>Հիերոնիմուս Բոսխ.<br>https://www.gettyimages.ca/photos/hieronymus-bosch?phrase=hieronymus%20bosch&sort=mostpopular#license<br>https://artsandculture.google.com/entity/hieronymus-bosch/m0cdn_?categoryId=artist | |

«Երկրային վայելքների այգի.
https://archief.ntr.nl/tuinderlusten/en.html
Պիտեր Բրեյգել Ավագ.
https://www.gettyimages.ca/photos/pieter-brueghel-the-elder?phrase=pieter%20brueghel%20the%20elder&sort=mostpopular#license
https://artsandculture.google.com/entity/pieter-bruegel-the-elder/m0h6nl?categoryId=artist
Ռոջեր վան դեր Վայդեն
https://artsandculture.google.com/entity/rogier-van-der-weyden/m01bbhx
https://bit.ly/2RR91QI
Ալբրեխտ Դյուրեր.
https://artsandculture.google.com/entity/albrecht-d%C3%BCrer/m0z6n
https://www.gettyimages.ca/photos/albrecht-durer?family=editorial&phrase=albrecht%20durer&sort=mostpopular#license
Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012
https://bit.ly/2TZ3R3d

Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպա), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթերն, Թբ., 2018,
Համաշխարհային արվեստ, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010:

**Գնահատման չափանիշներ**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները**

**Կերպարվեստի տեխնիկա**

- Աշխատության մեջ սեփական մտահղացումը, գաղափարը փոխանցելու համար ընտրում է կերպարվեստի բնագավառ, ժանր, գեղարվեստական սկզբունքներ, նյութ և տեխնիկա ու դատողություն է անում կերպարվեստի, որպես ինքնարտահայտման միջոցի մասին (**Կերպ.կիր.հիմն.2,3**):
- Վերլուծում է աշխատության մեջ օգտագործված գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ և դատողություն է անում, թե ինչ էր ցանկանում փոխանցել հեղինակը դրանց միջոցով (**Կերպ.կիր.հիմն.3**):

**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Մեկ կամ մի քանի արվեստի նմուշի հիման վրա դատողություն է անում հեղինակի մտահղացման մասին (**Կերպ.կիր.հիմն.3,4**):
- Վերլուծում է որևէ արվեստագետի ստեղծագործություն և դատողություն է անում, արտացոլվե՞լ է արդյոք և ի՞նչ ձևով է արտացոլվել նրանց աշխատություններում այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք (**Կերպ.կիր.հիմն.3,4**):
- Համեմատում է որևէ երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործություններ, դատողություն է անում նմանությունների-տարբերությունների և դրանց առանձնահատկությունների մասին (**Կերպ.կիր.հիմն.4**):

**Հանձնարարականներ «Եռապատկեր» նախագծի գնահատման համար (առավ.՝ 10 միավոր)**

- Աշխատության մեջ արտացոլված սյուժեն համապատասխանում է ընտրված թեմային (2 միավոր):
- Սյուժեն եռապատկերի մասերի վրա տրամաբանորեն է բաշխված (2 միավոր):
- Աշակերտը ասելիքի ընդգծման համար գիտակցաբար է ընտրում և կիրառում պատկերավորման սկզբունքները (2 միավոր):
- Դատողություն է անում, թե ինչու է կիրառում առկա պատկերավորման սկզբունքները և տարրերը (2 միավոր):
- Սեփական աշխատությունը վերլուծելիս կիրառում է համապատասխան տերմիններ (2 միավոր):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/3

| **Դասեր 8-10 Միավորող թեմա. Մարդու ներքին աշխարհը** | | |
|---|---|---|
| **Հարց և ենթահասկացություններ** | **Հանգուցային հարց/հարցեր** | **Համալիր առաջադրանքներ** |
| **Տարրեր.**<br>լուսաստվեր, տոն<br><br>**Սկզբունքներ**<br>համաչափություն/անհամաչափություն,<br>ստատիկա/դինամիկա, կոնտրաստ<br><br>**Բնագավառներ.**<br>քանդակագործություն, նկարչություն<br><br>**Ժանրեր.**<br>դիմանկար<br><br>**Դարաշրջան/ոճ/հոսանք**<br>Հելլենիզմ, Հռոմ, Գոթիկա, Մաներիզմ, Բարոկկո | • Ինչպե՞ս էին պատկերում տարբեր դարաշրջանների արվեստում մարդու ներաշխարհը:<br>• Ժամանակի ընթացքում ինչպե՞ս են փոխվել պատկերավորման սկզբունքները՝ մարդու հույզերը, ապրումները, բնավորությունն արտացոլելու համար:<br>• Ի՞նչ է մեզ տեղեկացնում արվեստը անձի մասին:<br>• Ինչի՞ մասին են հուշում դիմախաղը, կեցվածքը, ժեստերը:<br>• Կարո՞ղ եմ պատկերավորման լեզուն օգտագործել իմ ապրումները, հույզերը, բնավորությունը փոխանցելու համար:<br>• Ի՞նչ պատկերավորման սկզբունքներ կօգնեն ինձ դիմանկարում անհատի ներաշխարհը փոխանցելու համար:<br>• Ինչպե՞ս են արվեստագետները պատկերում մարդու ներաշխարհը:<br>• Ի՞նչ գեղարվեստական տարրեր ու սկզբունքներ է զարգացրել մաներիզմը: | **Ընկերոջ դիմանկար.**<br>(պարտադիր)<br><br>Նկարի՛ր ընկերոջ դիմանկար:<br>Փորձի՛ր նկարում կեցվածքով և դեմքի արտահայտությամբ արտացոլել նրա բնավորությունը: |

- ✓ **Զգացմունք և հույզ**

**Քննարկում.**
- ✓ Վերհիշի՛ր՝ ի՞նչ է դիմախաղը:
- ✓ Ինչպիսի՞ ժեստեր և դիմախաղ ես կիրառում տարբեր հույզերի արտահայտման համար:
- ✓ Ինչո՞ւմ են քեզ օգնում կամ խանգարում ժեստերը:
- ✓ Ո՞ր դարաշրջանում/դարաշրջաններում չէր արտացոլվում դիմախաղը մարդկանց դեմքերին:

**Պատասխան.**
Դիմախաղը մարդու դեմքի արտահայտությունն է տարբեր հույզերի արտահայտման պահին: Այն չէր արտացոլվում նախապատմական, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Հին Հունաստանի վաղ և բարձր դասական դարաշրջանի արվեստներում և քրիստոնեական սրբանկարչության մեջ:
- ✓ Ինչպե՞ս էին արտացոլում տարբեր դարաշրջանների արվեստում մարդու ներաշխարհը:

**Պատասխան.** կեցվածքով, ժեստերով, դիմախաղով, դեմքի արտահայտությամբ:
- ✓ Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներ մշակեցին հելլենիզմի դարաշրջանի քանդակագործները մարդու զգացմունքը, հույզը և ներքին վիճակը ցույց տալու համար:

**Պատասխան.** Խորը ներս ընկած բոցաշունչ աչքերի կրքոտ հայացքի, բաց բերանի, խոժոռ հոնքերի, կնճռոտված ճակատի, զզզված մազերի և այլն:
- ✓ Ժամանակի ընթացքում ինչպե՞ս փոխվեցին պատկերավորման սկզբունքները՝ մարդու հույզերը, զգացմունքները, բնավորությունը փոխանցելու համար:

**Պատասխան.** Արվեստագետներն ավելի լավ ուսումնասիրեցին անատոմիան: Կատարելագործվեցին հույզերն արտացոլելու սկզբունքները:
- ✓ Ի՞նչն է ընդհանուր Հելլենիզմի և Բարոկկոյի դարաշրջանի արվեստների մեջ:

**Պատասխան.** Հելլենիզմի և Բարոկկոյի դարաշրջանի արվեստագետներին հետաքրքրում էր մարդու հույզերի փոխանցումը:
- ✓ Ի՞նչ է մեզ հայտնում արվեստը մարդու մասին:
- ✓ Ի՞նչի մասին են ակնարկում դիմախաղը, կեցվածքը, ժեստերը:
- ✓ Ինչպե՞ս կարող եմ օգտագործել պատկերավորման լեզուն՝ իմ զգացմունքները, հույզերը, բնավորությունը փոխանցելու համար:
- ✓ Ի՞նչ է պատկերում Լաոկոոնի արձանը:

**Պատասխան**. ցավ, տառապանք, կյանքի համար պայքար:

Լաոկոոնի առասպելը տե՛ս.
http://www.nplg.gov.ge/wikidict/index.php/%E1%83%9A%E1%83%90%E1%83%9D%E1%83%99%E1%83%9D%E1%83%9D%E1%83%9C%E1%83%98

- ✓ Ի՞նչ սկզբունքներով է փոխանցված Լաոկոոնի և նրա որդիների վիճակը:

**Պատասխան.** բարդ կեցվածքներ, դինամիկ շարժումներ, ջղաձգված մարմիններ, խճճված խոշոր ձևեր, դեմքի արտահայտություն:

- ✓ Ինչպե՞ս էին մեզ փոխանցում հյուսիսեվրոպացի նկարիչները մարդու ապրումները:

**Պատասխան.** կեցվածք, անկյունային ժեստիկուլյացիա, էքսպրեսիվ դիմախաղ:

- ✓ Միջնադարյան պայմանականությունից հետո, ի՞նչ նորություն բերեց գոթիկայի քանդակը: Բնութագրի՛ր Նաումբուրգի քանդակները:

**Պատասխան.** Նաումբուրգի մայր տաճարի քանդակների բնութագրում. Էկեհարտն իմաստուն և արժանապատիվ է, նրա կինը՝ Ուտան, հանգիստ է և մտածկոտ: Կոմս Դիտմարը վախկոտ է, Տիմոն՝ խռովկան, Զիցոն՝ ահեղ:

Մագդեբուրգի տաճարը քանդակների հետ կապված՝ առակ հիմար աղջիկների մասին, տե՛ս՝ Մատթեոսի Ավետարան, գլուխ *25*, հղումը.
http://www.orthodoxy.ge/tserili/kiknadze/mate.htm)

- ✓ Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներ ներմուծեց մաներիզմը մարդու ներքին վիճակը փոխանցելու համար:

**Պատասխան.** Վերև ուղղված վառվող հայացք, արցունքոտ աչքեր, բաց բերան, դեմքի վշտոտ արտահայտություն, էքսպրեսիվ ժեստեր, երկարեցված համամասնություններ, հուզիչ ֆոն և այլն:

- ✓ **Բնավորություն և դիմախաղ** (տանը ընթերցելու)

**Վերլուծություն (ինքնուրույն աշխատանք)**:

- ✓ Ինչպե՞ս են մեզ փոխանցում մարդու բնավորությունը Հռոմի վերիստական դիմանկարները:

**Պատասխան.** ռեալիստական դիմախաղով, դեմքի արտահայտությամբ:

Դիտի՛ր Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայելի և Ռեմբրանդտի ուրվանկարները:

- ✓ Ի՞նչ հույզ է արտահայտում յուրաքանչյուրը:
- ✓ Ի՞նչ սկզբունքով է դա արտահայտել նկարիչը:
- ✓ Ի՞նչ սկզբունքով է նա դիմանկարին ծավալ հաղորդել:
- ✓ Դիտի՛ր նրբագծերի ուղղությունը և դրանց ինտենսիվությունը:

**Գործնական ակտիվություն (ինքնուրույն աշխատանք):**
Ընտրի՛ր դրանցից որևէ մեկը և հասարակ, փափուկ մատիտով (2-4 B) նկարի՛ր պատճենը:

**Հոգեբանական դիմանկար**

- ✓ Որոշի՛ր՝ ո՞ր խառնվածքն են մարմնավորում կարմիր խալաթով Հովհաննես Ավետարանիչը, եկեղեցու բանալին ձեռքին Պետրոս առաքյալը, մութ ֆոնից կոնտրաստային լուսավորումով ընդգծված Պողոս Առաքյալը և սպիտակ թիկնոցով Մարկոս Ավետարանիչը:
- ✓ Ի՞նչ սկզբունքով է հոգեբանական դիմանկարը բնութագրում անհատին:
- ✓ Արվեստագետներն ինչպե՞ս են կիրառում կեցվածքը, դիմախաղը և ժեստերը՝ մարդու ներքին վիճակն արտացոլելու համար:

**Պատասխան.**
«Չորս առաքյալների» մեջ (Աշակերտի դասագիրք, էջ 184) հին հույն բժիշկ և փիլիսոփա Հիպոկրատի դասակարգմամբ, ցույց են տրված մարդու խառնվածքի բոլոր չորս բնավորությունները: Էներգետիկ սանգվինիկ (Հովհաննես Ավետարանիչ), անտարբեր ֆլեգմատիկ (Պետրոս Առաքյալ), փոթորկուն խոլերիկ (Մարկոս Ավետարանիչ), և ինքնամփոփ, մտածկոտ մելանխոլիկ (Պողոս Առաքյալ):

Լրացուցիչ տեղեկություններ Հիպոկրատի խառնվածքի տեսակների մասին.
«Խառնվածքի հայեցակարգը սկզբից առաջարկվել է Հիպոկրատի կողմից: Ըստ նրա՝ մարդու խառնվածքը կախված է օրգանիզմում առկա որևէ հեղուկի (արյուն – հուն. «սանգվիս», լորձ – հուն. «ֆլեգմա», լեղի – հուն. «քոլե» կամ սև լեղի – հուն. «մելան քոլե») ավելցուկից: Խառնվածքի տեսակները նույնպես բխում են այդ հեղուկների անվանումներից: Մասնավորապես, կան չորս հիմնական տիպեր՝ սանգվինիկ, խոլերիկ, ֆլեգմատիկ և մելանխոլիկ:
Սանգվինիկ խառնվածք. Զգացողություններն արագ են առաջանում և շուտով հանդարտվում են: Հիմնականում դրական է: Սանգվինիկը անհոգ է, լավատեսորեն տրամադրված և կյանքում ավելի դրական կողմերն է նկատում: Աշխույժ, շարժուն անձնավորություն է:
Խոլերիկ խառնվածք. Բնութագրվում է զգացմունքների ուժեղ գրգռվածությամբ: Նման մարդը հեշտությամբ բորբոքվում է, կարող է հուզիչ լինել, բայց, ի տարբերություն սանգվինիկի, բնութագրվում է ավելի հաստատուն և տևական զգացողություններով: Նա հաճախ դժգոհ է, հեշտությամբ զայրանում է:
Ֆլեգմատիկ խառնվածք. Այս տեսակի խառնվածքով մարդը հանգիստ է և անկեղծ: Նրան բնորոշ չէ աֆեկտը: Զգացողությունները նրա մոտ դանդաղ են առաջանում և չեն հասնում աֆեկտի: Փոխարենը, հաստատուն են և երկարատև:

| | |
|---|---|
| Ֆլեգմատիկին, ինչպես սանգվինիկին, բնորոշ են ավելի դրական հույզերը: Նրա շարժումները հանգիստ են և անշտապ: Մելանխոլիկ խառնվածք. Այն բնութագրվում է խորը և հզոր հույզերով: Մելանխոլիկը կարող է չարձագանքել բոլոր գրգռիչներին, բայց երբ նա արձագանքում է, նրա հույզը երկար է տևում: Սակայն, մելանխոլիկ տիպի մարդիկ ավելի քիչ են զգացմունքներ արտահայտում:<br>Յուրաքանչյուր խառնվածք ունի իր ուժեղ և թույլ կողմերը, բայց պետք է հիշել, որ խառնվածքն ինքնին չի կարող լինել ո՛չ լավ, ո՛չ վատ: Այն արտահայտվում է շարժման, գործողության մեջ, բայց չի որոշում ո՛չ անձի վարքի դրդապատճառը, ո՛չ նրա համոզմունքներն ու բարքերը:<br>Ճիշտ է, խառնվածքի տեսակը ժամանակի ընթացքում երբեմն փոխվում է, և մարդիկ՝ կախված դաստիարակությունից, մշակույթից, տարբեր կերպ են արտահայտում հույզերը, բայց մանկավարժը չպետք է փորձի փոխել երեխայի խառնվածքի տեսակը»:<br>*Տեղեկությունը վերցվել է համացանցային ռեսուրսից. Նինո Լաբարտղավա, Խառնվածքի տեսակները, http://mastsavlebeli.ge/?p=6969<br><br>*Անհրաժեշտ չէ անգիր անել խառնվածքների անվանումները:<br><br>✓ **Համեմատական վերլուծություն (խմբային դասարանական).**<br>Երեք նկարիչների՝ Տիցիանի, Էլ Գրեկոյի և Վելասկեսի, կողմից նկարված հոգևոր անձանց դիմանկարները:<br>✓ Ովքե՞ր են ներկայացված նկարներում: Նկարագրի՛ր յուրաքանչյուր նկարում ներկայացված անձին:<br>✓ Ի՞նչ պատկերացում կազմեցիր յուրաքանչյուրի մասին և ինչո՞ւ:<br>✓ Ի՞նչ մանրամասերով է մատնանշում նկարիչը հերոսի բնավորությունը:<br><br>Դիեգո Վելասկեսի և Ռեմբրանդտի դիմանկարները (տնային առաջադրանք):<br><br>✓ Դիտի՛ր, թե ինչպես է գեղանկարիչն օգտագործում լուսավորումը:<br>✓ Ի՞նչ էֆեկտի է հասնում այս սկզբունքով:<br>✓ Ինչի՞ն է հրավիրում մեր ուշադրությունը և ինչո՞ւ:<br>✓ Տեղեկություններ գտնի՛ր «Անառակ որդու վերադարձի» սյուժեի մասին:<br><br>Անառակ որդու առակը տե՛ս (Ավետարան ըստ Ղուկասի, 15:11-32). կամ.<br>https://bit.ly/2MjVQBS | |

**Գործնական աշխատանք (ինքնուրույն աշխատանք):**

- ✓ Դիտի՛ր դասագրքի նկարազարդումներում պատկերված մարդկանց ձեռքերը:
- ✓ Ի՞նչ են մեզ տեղեկացնում ժեստերը:
- ✓ Վարժվի՛ր ձեռքեր նկարելու մեջ:
- ✓ Օգտվի՛ր հայելուց և հասարակ մատիտի միջոցով նկարի՛ր քո ձեռքը:
- ✓ Ի՞նչ է մեզ տեղեկացնում դիմախաղը:

- ✓ **Ծեփակերտում.**

Երևակայությամբ մարդու դեմքի ծեփակերտում: Դիմագծերով և դեմքի արտահայտությամբ դիմանկարին բնավորության շնորհում:

- ✓ **Նկարչություն.**

Մարդու մի քանի տեսակ դեմք նկարել՝ դեմքի տարբեր արտահայտություններով. դիմագծերի տարբեր դիմախաղով մարդու տարբեր հույզերի արտահայտում:

**Հանձնարարականներ «Ընկերոջ դիմանկար» համալիր առաջադրանքի համար**

Մինչև աշակերտները սկսեն դիմանկար նկարել, վերանայե՛ք դասագրքում տրված օրինակները: Դիտարկե՛ք՝ ի՞նչ սկզբունքներով են արվեստագետները փոխանցում մարդու տրամադրությունը, հույզը, ներքին հոգեկան վիճակը, որ դեպքում ինչպիսի կեցվածքի, ժեստերի և դիմախաղի են դիմում:

Ցանկալի է դիմանկարն արվի որևէ դարաշրջանի կամ արվեստագետի ոճով (կեցվածք, հագուստ, ֆոն, ծալազարդում և այլն):
Նկարելիս ուշադրությո՛ւն դարձրեք ընկերոջ դեմքի արտահայտությանը և ձեռքերին:
Նախապես որոշե՛ք, թե ինչ նյութով եք պատրաստվում նկարել դիմանկարը՝ ներկերո՞վ, թե՞ հասարակ մատիտով:
Դիմանկարը մինչև գոտկատեղը կնկարեն, թե՞ կպատկերվի ամբողջ կազմվածքը:
Ի՞նչ չափսի թերթ անհրաժեշտ կլինի:
Թերթի ինչպիսի՞ ուղղություն կընտրեն՝ հորիզոնական, թե ուղղահայաց:
Նախքան նկարել սկսելը, մտածեն, թե որտեղ և ինչպես կտեղակայեն ընկերոջը, որի դիմանկարը պետք է նկարեն:
Պետք է նկատի ունենալ, որ դիմանկարը հապշտապ չի նկարվում: Որպեսզի ընկերը չհոգնի, նա պետք է իրեն հարմարավետ զգա:
Նայե՛ք ձեր ընկերոջը. ի՞նչ ռակուրսով եք նախընտրում նկարել նրան՝ դիմահայաց, երեք քառորդով, թե կիսադեմ:
Ի՞նչ միջավայրում կնկարեն դիմանկարը: Շրջակա միջավայրը կօգնի՞ ցուցաբերելու ընկերոջ բնավորությունը:

| | |
|---|---|
| Դեպի ո՞ւր կուղղեն ընկերոջ հայացքը, ո՞ր դեպքում դիմանկարը կլինի ավելի խոսուն:<br>Ուշադրություն դարձնեն նրա կեցվածքին և ձեռքերի տեղադրությանը:<br>Ուշադրություն դարձնեն ընկերոջ հագուստին:<br>Ինչ-որ մանրամաս կամ պարագաներ կավելացնե՞ն՝ ընկերոջ հատկանիշներն ավելի լավ ներկայացնելու համար:<br>Եթե դիմանկարը կատարեն ներկերով, ուշադրություն դարձնեն ընկերոջ հագուստի և ֆոնի գույնին:<br><br>**Քննարկում.**<br>Ինչո՞վ են տարբերվում հռոմեական և գոթական քանդակը: Ի՞նչ նորություն բերեց գոթիկայի քանդակը:<br>**Պատասխան.** Գոթական քանդակում աստիճանաբար հետաքրքրություն առաջացավ մարդու նկատմամբ: Շարտրի Նոտր Դամի քանդակները ևս գոթիկա են, բայց ավելի ուշ Նաումբուրգի և Մագդեբուրգի պատկերներն այլևս պայմանական, անհամաչափ և հարթ չեն: | |
| **Ռեսուրսներ.**<br>Վերածննդի շրջանի դիմանկարների հավաքածու.<br>https://bit.ly/2zPv5T4<br>Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012<br>https://bit.ly/2TZ3R3d<br><br>Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010:<br>Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպա), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթրեն, Թբ., 2018: | |

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**
**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

- Պատկերում է մարդուն համապատասխան պատկերավորման տարրերի և սկզբունքների (ծավալ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ֆակտուրա, համամասնություն, մանրամասն և այլ), տարբեր նյութերի և տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2):**
- Դիմանկարում տրամադրություն և հույզ փոխանցելու համար կիրառում է մեկ կամ մի քանի գեղարվեստական պատկերավորման տարր, սկզբունք (լուսաստվեր, տոնային աստիճանավորում, հակադրություն, կոմպոզիցիոն բաշխում, շեշտադրում, մանրամաս, կեցվածք, ժեստ, դիմախաղ և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1):**
- Վերլուծում է դիմանկարում օգտագործված գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ և դատողություն է անում, թե ինչ էր ուզում փոխանցել հեղինակը դրանց միջոցով (արտաքին, բնավորություն, սոցիալական կարգավիճակ և այլն) **(Կերպ.կիր.հիմն.3):**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**

- Դիմանկարում սեփական մտահղացումը, գաղափարը փոխանցելու համար ընտրում է կերպարվեստի բնագավառ, ժանր, գեղարվեստական սկզբունքներ, տարրեր և տեխնիկա և դատողություն է անում կերպարվեստի, որպես ինքնարտահայտման միջոցի մասին **(Կերպ.կիր.հիմն.2,3):**
- Մեկ կամ մի քանի արվեստի նմուշների հիման վրա դատողություն է անում, թե մարդիկ ինչպես էին արտացոլում ներաշխարհը տարբեր ժամանակներում **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Վերլուծում է մի քանի արվեստագետի ստեղծագործություն և դատողություն է անում, թե արտացոլվել է արդյոք, և ինչ ձևով է արտացոլվել նրանց աշխատության մեջ այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Համեմատում է որևէ դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի դիմանկարներ, դատողություն է անում նմանություն-տարբերությունների, առանձնահատկությունների մասին **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Լրացուցիչ տեղեկություն համալիր առաջադրանքի գնահատման մասին.**

**Ընկերոջ դիմանկար** (առավ.միավոր՝ 10):
Աշակերտը գիտակցված ընտրել է բնորդի կեցվածք (2 միավոր):
Պահպանել է համամասնությունները (2 միավոր):
Փոխանցել է բնորդի բնավորությունը (2 միավոր):
Նրբագծերով/տոնային աստիճանավորմամբ ակնարկել է լուսաստվեր, ծավալ, ֆոն (2 միավոր):
Ակնարկել է հագուստի և այլ մանրամասեր (2 միավոր):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/4

| Դասեր. 11-14 Միավորող թեմա. Դիմանկարների տեսակները | | |
|---|---|---|
| **Հարց և ենթահասկացություններ** | **Հանգուցային հարց/հարցեր** | **Համալիր առաջադրանքներ** |
| **Տարրեր.**<br>ծավալ, լուսաստվեր, տոն, ֆոնի և պատկերի փոխկախվածությունը:<br><br>**Սկզբունքներ**<br>համամասնություն, համաչափություն/անհամաչափություն, շեշտադրում, հակադրություն, ստատիկա/դինամիկա.<br><br>**Բնագավառներ.**<br>նկարչություն<br><br>**Ժանրեր.**<br>դիմանկարը և նրա տեսակները՝ հանդիսավոր, կամերային, խմբակային, ինքնադիմանկար:<br><br>**Կերպարվեստի տեխնիկա.**<br>նկարչություն, լուսանկարչություն:<br><br>**Դարաշրջան/ոճ/հոսանք.**<br>տարբեր<br>Վերածնունդ<br>Բարոկկո՝ ընդարձակ: | • Ի՞նչ պատճառներով են ստեղծում նկարիչները դիմանկարներ:<br>• Ինչպիսի՞ դիմանկարներ գոյություն ունեն:<br>• Ի՞նչ է պատմում դիմանկարը անհատի մասին:<br>• Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներից են օգտվում տարբեր դարաշրջանների արվեստագետները դիմանկարում անհատին բնութագրելու համար:<br>• Համեմատի՛ր հին ինքնադիմանկարները և ժամանակակից սելֆիները: Ի՞նչ նմանություն, տարբերություն կա նրանց միջև:<br>• Համեմատի՛ր տղամարդ և կին նկարիչների ինքնադիմանկարներ: Ի՞ նչ տարբերություն ես տեսնում: Ինչ ես կարծում, ի՞նչն է հարուցել այս տարբերությունը:<br>• Ինչպիսի՞ն են այսօր սելֆիների ամենատարածված տեսակները: | **Բանավեճ**<br>Կին արվեստագետները պետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչպիսի իրավունքներից օգտվում են տղամարդիկ (դասարանական ակտիվություն)<br><br>**«Լուսանկարչական դիմանկար»** (աշխատանք զույգով)<br>Սեփական լուսանկարչական ինքնադիմանկար, որը կցուցաբերի քո անհատականությունը: Գիտակցված կիրառի՛ր պատկերավորման սկզբունքներ ու տարրեր՝ գույն, ձև/դեֆորմացիա, գիծ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ֆոն, ռիթմ, մասշտաբ, համամասնություն/ անհամամասնություն, |

| | |
|---|---|
| ▪ **Հանդիսավոր և կամերային դիմանկարներ**<br><br>▪ **Քննարկում.** (դասարանական, խմբային, բանավոր)<br>▪ Ի՞նչ պատճառներով են ստեղծում նկարիչներն ինքնադիմանկարներ:<br><br>**Պատասխան.** Արվեստագետները դիմանկարները տարբեր պատճառներով են ստեղծում՝ որոշ նկարներ պատվերներ են մասնավոր անձից, ով ցանկանում է անմահացնել իրեն ապագա սերունդների համար: Երբեմն նկարիչը ցանկանում է փառաբանել կոնկրետ անհատի և մեծարել նրան, երբեմն արվեստագետը ցանկանում է փոխանցել մարդու ներաշխարհը)<br>▪ Ինչպիսի՞ դիմանկարներ գոյություն ունեն:<br>**Պատասխան.** կամերային, հանդիսավոր, հեծյալ, խմբակային, ինքնադիմանկար)<br>▪ Ի՞նչ է մեզ պատմում դիմանկարը անհատի մասին:<br>**Պատասխան.** Դիմանկարը մեզ պատմում է անհատի ծագման, սոցիալական կարգավիճակի, բնավորության մասին և այլն:<br>▪ Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներից են օգտվում տարբեր դարաշրջանների արվեստագետներն անհատին բնութագրելու համար:<br>**Պատասխան.** կեցվածք, ժեստեր, դիմախաղ, հագուստ, աքսեսուարներ, ֆոն և այլն:<br>Ի՞նչ նմանություն-տարբերություն կա հին ինքնադիմանկարների և ժամանակակից սելֆիների միջև:<br>▪ Կա՞ արդյոք տարբերություն տղամարդ և կին նկարիչների ինքնադիմանկարների միջև: Ինչ ես կարծում, ի՞նչն է հարուցել այս տարբերությունը:<br>**Պատասխան.** Տղամարդիկ պատկերված են առանց ատրիբուտների, իսկ կանայք միշտ ակնարկում են, որ իրենք նկարիչներ են՝ մոլբերտով, ներկապնակով, վրձիններով կամ նատյուրմորտով, որոնցով անուն են վաստակել: Կարծես դրանով ինքնահաստատվում են, որպես արվեստի մասնագիտության ներկայացուցիչներ, կարծես ցանկանում են հասարակությանն իրենց ներկայացնել որպես նկարիչներ: Դրա պատճառը հնարավոր է լինի այն, որ հասարակությունը նրանց լուրջ չէր ընկալում, նրանք այնպես գնահատված չէին, ինչպես տղամարդ արվեստագետները:<br>▪ Ինչպիսի՞ն են այսօր սելֆիների ամենատարածված տեսակները:<br><br>▪ **Ակտիվություն.** դիմանկարի տեսակը որոշել<br>Նկարազարդումներից որոշել հանդիսավոր և կամերային դիմանկարները:<br><br>▪ **Շնորհանդես.** (տնային առաջադրանք, աշխատանք զույգերով)<br>Ընկերներիդ հետ ընտրի՛ր որևէ զույգի դիմանկար: Գտե՛ք տեղեկություններ և պատրաստե՛ք զգեստավորված, բեմականացված շնորհանդես: | հակադրություն և այլն:<br><br>**Նկարի՛ր ինքնադիմանկար:**<br>(ինքնուրույն աշխատանք) |

* Զգեստավորված, բեմականացված շնորհանդեսը ենթադրում է, ըստ հնարավորինս, դիմանկարի միջավայրի վերակառուցքավորում ատրիբուտներով և հագուստով: Սա չի նշանակում, որ աշակերտները պետք է իրենց համար կարեն նման զգեստներ: Ցանկալի է, իրենց ձեռքով պատրաստեն գլխարկ, օձիք, թիքածալ կամ հագուստի որևէ այլ մանրամաս: Կարող են գրատախտակի վրա նկարել համապատասխան ֆոնի սխեմատիկ նկար, կամ տեղադրեն նման առարկաներ: 2-3 րոպեանոց շնորհանդեսի ժամանակ աշակերտներն ընկերներին պետք է պատմեն, թե ինչ են իմացել այս անձանց կամ արվեստագետի մասին:

- **Համամասնությունների հետազոտություն-խաղ.** (ինքնուրույն աշխատանք)

Մի քանի թերթ բաց գույներով բաժանի՛ր ցանկացած չափի հինգ մասերի: Առաջնորդվի՛ր Աշակերտի դասագրքում տրված (էջ. 208) Ալբրեխտ Դյուրերի համամասնությունների սխեմայով և յուրաքանչյուր մասի մեջ նկարի՛ր դեմքի համապատասխան հատված:

- **Համամասնությունների հետազոտություն-խաղ սելֆիի մասին.** (տնային առաջադրանք)

Սելֆի արա՛: Վերբեռնի՛ր Paint-ի ծրագրում քո լուսանկարը: Նշի՛ր լուսանկարը և խոշորացնելու և փոքրացնելու գործառույթով փոխի՛ր դեմքի համամասնությունները:

- **Համամասնություններով խաղ.** (խմբային դասարանական)

A4 թերթը երկայանակի կտրե՛ք 2-3 մասի:

Խաղացողները պետք է համաձայնեն, թե դեմքի քանի մաս կնկարվի յուրաքանչյուր թերթի վրա:

Խաղին մասնակցող յուրաքանչյուր անդամ թերթի վրա նկարում է (կիսադեմ) դեմքի մեկ հատված, ծալում է թերթն այնպես, որ հաջորդ խաղացողը չկարողանա տեսնել նախորդ հատվածում նկարված հատվածը:

Եվ փոխանցում է ծալված թերթն ընկերոջը, որը շարունակում է նկարել դեմքի հաջորդ հատվածը և, իր հերթին, ինքը նույնպես ծալված թերթը փոխանցում է հաջորդ խաղացողին:

Երբ թերթը կլրացվի, բացե՛ք ծալված մասերը և վայելե՛ք արդյունքը:

- **Վարժանք համաչափություն/անհամաչափության մասին.** (ինքնուրույն աշխատանք)

Ամսագրից կտրիր-հանի՛ր մարդու դեմք: Պատռի՛ր կամ մեջտեղից կիսի՛ր երկայնակի:

Յուրաքանչյուր կես փակցրո՛ւ առանձին թերթի վրա:

Առաջին թերթի վրա, համաչափության պահպանմամբ, հասարակ մատիտով ինքդ նկարի՛ր երկրորդ կեսը:

Երկրորդ թերթի վրա նույն եղանակով նկարի՛ր ոչ համաչափ դեմք:

- **Ստվարաթղթե ռելիեֆ.** (աշխատանք զույգերով)

Ստվարաթղթից պատրաստի՛ր բնահատուկ տիպաժի ռելիեֆային դիմանկար։
(հրահանգը տե՛ս դասագրքում)

- **Եռակի դիմանկար.** (ինքնուրույն աշխատանք)

Մի ֆորմատի վրա նկարի՛ր ընկերոջ եռակի դիմանկար՝ կիսադեմ, երեք քառորդում և դիմահայաց։

## Բարոկկոյի դարաշրջանի մարդը

- **Քննարկում.** (խմբային դասարանական աշխատանք)

Հակադիր կամ կոնտրաստային լուսավորության էֆեկտի մասին։

Դիտի՛ր իսպանացի կարավաջիստ Ֆրանցիսկո դե Սուրբարանի լուսավորման էֆեկտը։ Ի՞նչ տպավորություն է ստեղծում նման հակադրությունը։

Ցանկալի է, որ աշակերտները վերհիշեն հակադիր լուսավորման օրինակներ սեփական կենսական փորձից (ասենք, գիշերը խարույկի մոտ նստած ժամանակ), լապտերի լուսավորումը կամ կադրեր կինոֆիլմերից։ Կարևոր է հասկանալ, որ մթության և առկայծող լույսի հակադրությունը սաստկացնում է իրավիճակը, դրամատիկ էֆեկտ ստեղծում։

**Ծալազարդում տոնային աստիճանավորմամբ**

- Պատին ամրացրո՛ւ գործվածքի միագույն կտորն այնպես, որ վարագույրի նման ծալազարդման ծալքեր ունենա։
- Դիտի՛ր, թե ինչպես բաշխվեց լուսաստվերը գործվածքի ծալքերի վրա։
- Մատիտով լուսաստվեր փոխանցելու համար օգտագործի՛ր տարբեր մգության և ուղղության նրբագծեր։

https://i.pinimg.com/originals/96/23/b6/9623b6c9b4226babfc49031e770d8810.png
https://studref.com/htm/img/10/8074/40.png
http://podg-kursy.ru/images/stories/fruit/untitled-44.jpg

**Նկարի՛ր ծալազարդ ջրաներկով կամ գուաշի ներկով**

- Գուաշի ներկով տոնային աստիճանավորում փոխանցելու համար գույնը բացացնելու նպատակով նրան ավելացրո՛ւ սպիտակ, իսկ մգեցնելու համար՝ սև ներկ։
- Ջրաներկի դեպքում, տոնային աստիճանավորում փոխանցելու համար գույնը բացացնելու նպատակով, դիմի՛ր թաց վրձնով կամ սպունգով մաքրելու մեթոդին։

Գուաշով կամ ջրաներկով ծալազարդման նմուշ.
https://i.etsystatic.com/16916608/r/il/17c1a5/1453446575/il_fullxfull.1453446575_a5lh.jpg
https://paintingvalley.com/images/drapery-painting-22.jpg

- **Հակադիր կամ կոնտրաստային լուսավորությունը լուսանկարչության մեջ** (գունավոր և սև-սպիտակ լուսանկարներով). (ինքնուրույն աշխատանք)

Լուսանկարի՛ր ընկերոջդ կոնտրաստային լուսավորության մեջ:
Փորձի՛ր երեք եղանակ.
1. Ցերեկային լույսով, պատուհանի դիմաց, կիսադեմ:
2. Քո կողմից տեղադրված արհեստական լուսավորությամբ, կիսադեմ:
3. Մթության մեջ լապտերով կտրուկ լուսավորված, դիմահայաց:

Փորձի՛ր նույնը սև-սպիտակ պատկերով:

Լուսանկարները վերբեռնի՛ր թվային ալբոմի մեջ և համեմատի՛ր իրար հետ՝ ի՞նչ տարբերություն կա գունավոր և սև-սպիտակ պատկերների միջև:
Ինչպիսի՞ տրամադրություն է ստեղծում հակադիր լուսավորությունը:
Ի՞նչ ազդեցություն է տալիս նույն լուսավորությունը առանց գույնի՝ սև ու սպիտակ տոնայնության մեջ:

Նմուշներ.
https://c.stocksy.com/a/MRG700/z9/1731496.jpg?1578721164
https://c.stocksy.com/a/LRG700/z9/1731495.jpg?1580225636

- **Բարոկկոյի դարաշրջանի արվեստի բնութագրիչների հետազոտություն.** (խմբային դասարանական).

Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներով են ստեղծվում նկարում դինամիկայի, անհանգստության զգացողություններ:
(**Պատասխան**. բարդ շարժումները, կեցվածքը և ժեստերը, ծանրաբեռնված կոմպոզիցիան, հակադիր լուսավորումը, լուսաստվերի անհանգիստ խաղը:)

- **Դարաշրջանների համեմատական T սխեմա կազմել.** (ինքնուրույն աշխատանք)

Կազմի՛ր Վերածննդի և Բարոկկոյի դարաշրջանների արվեստի բնութագրիչների համեմատական աղյուսակ:

Սխեմայի ենթադրյալ նմուշ.

| Վերածննդի դարաշրջան | Բարոկկո |
|---|---|
| Մարդը սեփական ճակատագիրը և քաղաքի/երկրի պատմությունը առաջնորդողն է: | Ոչինչը կայուն չէ: Մարդը չի կարող վերահսկել և չի կարող վճռել ոչինչ: Ամեն ինչ փոփոխական է: Ժամանակն անողոք է: |
| Հանգստություն, ներդաշնակություն, հավասարակշռություն, հաստատունություն | Փոթորկուն, կրքերի բորբոքում, պայքար, հակամարտություն |
| Եռանկյուն կամ ֆրիզաձև համաչափ կոմպոզիցիա | Անկյունագծային, անհամաչափ կոմպոզիցիա |
| Ստատիկա | Դինամիկա |
| Հավասար լուսավորում | Հակադիր լուսավորում |
| Հանգիստ կեցվածք, հակադիրք | Բարդ կեցվածքներ |
| Առանց զգացմունք դեմքի արտահայտություն | Հուզական դեմքի արտահայտություններ |
| Պատկերի անոտոմիական կառուցում, դասական սկզբունքներ | Չափազանցված, մեծ չափի մկանուտ մարմիններ |

- **Խմբակային դիմանկար** (տնային ընթերցանության)
- **Քննարկում.**

Ի՞նչ են մեզ պատմում Բարոկկոյի դարաշրջանի խմբակային դիմանկարները մարդկանց գործունեության մասին:

**Պատասխան.** Դասագրքի տեքստի հիման վրա (հագուստ, ատրիբուտներ):

- **Հետազոտություն.** (ինքնուրույն աշխատանք)

Գտի՛ր Տիցիանի, Վելասկեսի, Գոյայի և Կլոդ Մոնեի ստեղծագործությունները **Google Arts & Culture** կայքէջից, մեծացրո՛ւ պատկերները և դիտի՛ր վրձնախազերը:

- **Խմբակային դիմանկար նկարել.** (ինքնուրույն աշխատանք)

Նկարի՛ր դասարանի կամ քո ընտանիքի խմբակային դիմանկար: Ինքդ որոշի՛ր, թե այն հանդիսավոր կլինի, թե կենցաղային ժանրի մթնոլորտով ջերմացված:

- **Ինքնադիմանկար**
- **Թվային ալբոմի ստեղծում.** (**Google Arts & Culture** կայքէջի ֆավորիտների ալբոմ). (տնային առաջադրանք)

Ստեղծի՛ր քեզ համար հետաքրքիր նկարիչների ինքնադիմանկարների թվային ալբոմ (կամ **Google Arts & Culture** կայք-էջում քո ֆավորիտների ալբոմ): Ծանոթացի՛ր նրանց կենսագրություններին: Կենսագրություններից դո՛ւրս գրիր քեզ համար հետաքրքիր տեղեկություններ:

- **Միկրո և մակրո աշխարհները մեկ դիմանկարում.** (կոլաժ, տնային առաջադրանք)

Ինչպիսի՞ն է քո ներքին և արտաքին աշխարհը։

Նկարի՛ր մարդու գլխի ուրվագիծ։ Ֆոնի վրա փակցրո՛ւ ամսագրերից և թերթերից կտրած-հանած այն պատկերներն ու բառերը, որոնք արտացոլում են քո շրջապատը, քո աշխարհը։

Ուրվանկարի ներսում փակցրո՛ւ այնպիսի պատկերներ ու բառեր, որոնք քո ներաշխարհին են արտացոլում՝ հետաքրքրություններն ու նախասիրությունները։

Ուրվանկարը խոշոր նշիչով եզրագծի՛ր։

- **Զգեստավորված սելֆի** վերածննդյան, բարոկկոյական և կլասիցիստական ոճով. (տնային առաջադրանք)

Ընտրի՛ր որևէ դիմանկար.

Մտածի՛ր և ստեղծի՛ր քո ձեռքի տակ եղած ռեսուրսով (քո իսկ հագուստը, գործվածքի կտորտանք, կաշնե, շալ, գլխարկ, ձեռնոց և այլն) նկարում պատկերված մարդու հագուստի նման հագուստ, ընդունի՛ր նույնպիսի կեցվածք, ինչպիսին ունի նկարում պատկերված մարդը և նկարի՛ր սելֆի։

- **Գործնական ակտիվություն ժամանակագրություն.** (աշխատանք զույգերով)

Գտի՛ր և դասավորի՛ր անվանի նկարիչների ինքնադիմանկարները ժամանակագրորեն։ Դրանց կցի՛ր քո կողմից գտնված տեղեկությունները։ Ալբոմով կիսվի՛ր ընկերներիդ հետ։ Հիշի՛ր, որ ալբոմը կարող ես շարունակաբար թարմացնել և հարստացնել։

**Հանձնարարականներ «Բանավեճ» համալիր առաջադրանքի համար.**

**Նախապատրաստական փուլ.**

Ընտրի՛ր մի քանի կին արվեստագետի։ Ծանոթացի՛ր նրանց կենսագրությանը։ Ուշադրությո՛ւն դարձրեք նրանց վաստակին և նրան, թե ինչ խոչընդոտներ են նրանք ստիպված եղել հաղթահարել, և ինչպես էին նրանք հաստատում իրենց տեղը։ Ցանկալի է պատկերացում ունենաք այն պատմական համատեքստի մասին, որում ապրում էր այս կամ այն արվեստագետը։

Քանի որ անհայտ է, թե որ դիրքորոշումը հարկադրված կլինի պաշտպանել խումբը, փաստարկներ կամ հիմնավորումներ պետք է պատրաստվեն երկու դեպքերի համար էլ։

**Կանոններ.**

Դերեր.

- Մոդերատոր – (վերահսկում է բանավեճի գործընթացը)։
- Ժամանակը վերահսկող – (վերահսկում է ժամանակի սահմանաչափը (1 րոպե))։

- Բանավեճի մասնակից – (հակառակ դիրքորոշում պաշտպանող երկու խումբ):
- Երեք դատավոր – (գնահատում են փաստարկների բազմազանությունը, տրամաբանականությունը, համոզչությունը, համագործակցությունը խմբի անդամների միջև, կոռեկտությունը խմբերի միջև, ամփոփում բանավեճի արդյունքները):
- Ունկնդիրներ – (նախապես համաձայնեցված ժեստերով արտահայտում են համաձայնություն կամ անհամաձայնություն՝ արտահայտված փաստարկների նկատմամբ):
- Խմբերի դիրքորոշումը որոշում է քվեարկությունը:
- Բանավեճը սկսում է այն խումբը, որը դրական դիրքորոշումն է պաշտպանելու: Խոսքի իրավունքը տրվում է նրան, ով դա պահանջում է ձեռք բարձրացնելով:
- Մոդերատորը հերթով խոսք է տալիս տարբեր դիրքորոշումների «խոսնակներին»:

Համոզիչ հիմնավորմամբ համոզե՛ք դատավորներին, որ ձեր դիրքորոշումն արդարացի է, իսկ ընդդիմախոսների փաստարկներն ընդունելի չեն:

Խոսնակները պատասխանում են միմյանց հարցերին:

- Ո՞ր երկրներում են մինչև օրս սահմանափակվում կանանց իրավունքները և ինչո՞ւ:
- Անհրաժե՞շտ է, թե անթույլատրելի է մարդու իրավունքների սահմանափակումը ստեղծագործաբար գործունեության մեջ և ինչո՞ւ:
- Գոյություն ո՞ւնի որևէ մասնագիտություն, որն արգելում է որևէ սեռի ներկայացուցիչներին զբաղվել այս գործունեությամբ:
- Ինչո՞ւմ և ինչո՞ւ են սահմանափակվում կին արվեստագետները:
- Ինչո՞ւ ես համաձայնում /չես համաձայնում այս դրույթին:

**Ծանոթություն.**
Անհրաժեշտ է բանավեճը ամփոփելու տեսքով ուսուցիչն անի եզրակացություն: Նա պետք է ընդգծի, որ այսօր մեր պետության մեջ կանանց մասնակցությունը կյանքի բոլոր բնագավառներում երաշխավորված է և պետք է պաշտպանված լինի:

**Հանձնարարականներ «Լուսանկարչական դիմանկար» նախագծի համար.** (զույգերով աշխատանք)

- Ընկերոջ օգնությամբ ստեղծի՛ր քո լուսանկարչական դիմանկարը, որը ցույց կտա քո անհատականությունը:
  Մտածված օգտագործի՛ր պատկերավորման տարրերն ու սկբունքները. գույն, ձև /դեֆորմացիա, գիծ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ֆոն, ռիթմ, մասշտաբ, համաչափություն / անհամաչափություն, հակադրություն և այլն:

- Վերանայի՛ր դասագրքում, գրքերում և համացանցում հայտնի արվեստագետների ինքնադիմանկարներ: Ընտրի՛ր դրանցից երկուսը, որոնք քո աշխատանքի համար գաղափար կտրամադրեն: Գրի՛ր, թե ինչպես են այս ինքնադիմանկարներում օգտագործված պատկերավորման տարրերն ու սկզբունքները, և ինչ էֆեկտի են հասնում արվեստագետները դրանց այս կերպ օգտագործմամբ: Ինչ կա այս ինքնանկարներում այնպիսի, որ նկատի կունենաս քո սեփական աշխատանքում:
- Մտավոր գրոհ. մտածի՛ր՝ ով ես, ինչպիսին ես, ինչն է քեզ հրապուրում, ինչն է ուրախացնում, ինչ ես սիրում, ինչն է քեզ նյարդայնացնում:
  «Ո՞վ եմ ես» ասոցիատիվ ցանցի կենտրոնական շրջանի՝ «Ես»-ի շուրջ, շրջանակներում գրի՛ր քո հատկանիշները: Դրանց շուրջը՝ փոքրիկ շրջանակներում գրի՛ր, թե որ պատկերավորման սկզբունքները կօգնեն քեզ այս հատկանիշների ավելի լավ ցուցադրելու հարցում:
  (Նկատի՛ ունեցիր, որ աշխատության մեջ քո շահերից և առանձնահատկություններից պետք է ընտրես ամենակարևորը:) Կցի՛ր ասոցիատիվ ցանցը նախորդ փուլի գրառմանը:
- Հասարակ մատիտով նկարի՛ր քո մտահղացման ուրվանկարը:
- Խնդրի՛ր ընկերոջդ մի քանի լուսանկար անել, ինչի համար հատուկ և մտածված կպատրաստես լուսավորություն, կընտրես կադր, կեցվածք, դեմքի արտահայտություն, հագուստ, գույներ:
- Ընտրի՛ր լուսանկարներից մեկը: Համացանցում ընտրի՛ր ֆոն (չեզոք, վերացական, բնապատկեր ...), որը համապատասխանում է քո մտահղացմանը: Այն վերբեռնի՛ր համակարգչային նկարչական ծրագրում:
- Բացի՛ր քո լուսանկարչական դիմանկարը և ընտրված ֆոնը: Նկարչական ծրագրով (Paint) քո լուսանկարչական դիմանկարից քո պատկերը կտրելու համար բացի՛ր ընտրելու գործառույթը (Select) և սեղմի՛ր ազատ ձևը նշելու գործառույթի (free form selection) գործիքը:
- Նշի՛ր պատկերի ուրվագծերը և մտապահի՛ր (copy) նշվածը:
- Համացանցում ընտրի՛ր ֆոն (չեզոք, վերացական, դիմանկար..), որը համապատասխանում է քո մտահղացմանը: Վերբեռնի՛ր այն համակարգչային նկարչության ծրագրի մեջ:
- Բացի՛ր քո ինքնադիմանկարը և ընտրված ֆոնը: Նկարչական ծրագրով (**Paint**) լուսանկարչական դիմանկարից քո պատկերը կտրել-հանելու համար բացի՛ր ընտրելու գործառույթը (**Select**) և սեղմի՛ր թափանցիկ ընտրություն գործառույթը (Transparent selection):
- Վերնագրի՛ր քո թվային դիմանկարը և մտապահի՛ր (Save):
- Վերբեռնի՛ր աշխատանքը քո բլոգում:
- Գրի՛ր, թե ինչ ես մտածում քո աշխատանքի մասին. - Որպես ինչպիսի՞ մարդ ես ներկայացնում քեզ: Կերպարվեստի ո՞ր գլուխգործոցը, տարրն ու սկզբունքը օգնեցին քեզ ստեղծել աշխատությունը և ցուցաբերել քո առանձնահատկությունները: Տարբերվո՞ւմ է արդյոք քո ինքնադիմանկարը մտահղացման սկզբնական տարբերակից և ինչո՞ւ: Ի՞նչ դժվարությունների ես հանդիպել դրա վրա աշխատելիս և ինչպե՞ս հաղթահարեցիր դրանք: Ի՞նչ կփոխեիր,

| | |
|---|---|
| եթե նորից կատարեիր այս առաջադրանքը:<br>▪ Խնդրի՛ր ընկերոջդ գրել իր տպավորությունը քո աշխատանքի վերաբերյալ (երեք բան, որ հավանում է քո աշխատության մեջ և երկու բան, ինչը խորհուրդ կտար փոխել):<br>▪ Օգնի՛ր ընկերոջդ ստեղծել իր դիմանկարը:<br><br>**Հանձնարարականներ «Ինքադիմանկար» համալիր առաջադրանքի համար.**<br>**Առաջադրանքի պայմանը.**<br>Նկարի՛ր ինքնադիմանկար: Աշխատություն ստեղծելիս փորձի՛ր օգտագործել այն գիտելիքն ու ունակությունները, որ ձեռք ես բերել թեման սովորելու ընթացքում:<br><br>**Նկատի՛ ունեցեք.**<br>Դեմքի արտահայտություն, կեցվածք, ժեստեր, հագուստ, աքսեսուարներ, ֆոն, լուսավորում:<br><br>**Պատկերավորման տարրեր.**<br>գիծ (նրբագիծ, ուրվագիծ), գույն, ձև, ծավալ, տոն, լուսաստվեր<br><br>**Պատկերավորման սկզբունքներ.**<br>համամասնություն, ռակուրս: | |
| **Ռեսուրսներ.**<br><br>Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012<br>https://bit.ly/2TZ3R3d<br><br>Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010:<br><br>Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպա), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթրեն, Թբ., 2018:<br><br>Google Arts & Culture:<br>https://artsandculture.google.com/<br><br>Պիտեր Պաուլ Ռուբենսի դիմանկարների պատկերասրահ.<br>https://www.liveinternet.ru/users/bolivarsm/post347975292/ | |

| | |
|---|---|
| **Բանավեճի մասին տեղեկություններ տե՛ս.**<br>1. Դասագիրք Living Democracy, IV tomi, Tavi. Մասնակցությունը ժողովրդավարական հասարակության մեջ.<br>https://www.living-democracy.ge/textbooks/volume-4/part-3/unit-8/lesson-1/<br><br>2. Բանավեճի կանոնները.<br>https://bit.ly/2BeRxVU<br><br>**Լրացուցիչ ցուցադրական նյութ.**<br>Հանս Հոլբայն, Հենրի VIII, 1537<br>https://bit.ly/2ZTkUYh<br><br>Պիտեր Պաուլ Ռուբենս, Մարիա Պալավիչինո, 1606<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Maria_Serra_Pallavicino.jpg<br><br>Դիեգո Վելասկես, Ֆիլիպ IV, 1632<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/2/2b/Felipe_IV_de_casta%C3%B1o_y_plata%2C_by_Diego_Vel%C3%A1zquez.jpg<br><br>Հ.Ռիգո, Լուի XIV, 1701<br>https://en.wikipedia.org/wiki/Portrait_of_Louis_XIV#/media/File:Louis_XIV_of_France.jpg<br><br>Ժակ Լուի Դավիդ, Նապոլեոն, 1812<br>https://bit.ly/3doGub5<br><br>Պիեռո դելլա Ֆրանչեսկա, Բատիստա Սֆորցան և Ֆեդերիգո դա Մոնտեֆելտրոն, 1472<br>https://en.wikipedia.org/wiki/The_Duke_and_Duchess_of_Urbino#/media/File:Piero_della_Francesca_044.jpg<br><br>Պիերո դել Պոլայոլո, Երիտասարդ կինը, 1496<br>https://fi.m.wikipedia.org/wiki/Tiedosto:Antonio_del_Pollaiuolo_-_Profile_Portrait_of_a_Young_Lady_-_Google_Art_Project.jpg<br><br>Սանդրո Բոտիչելլի, Մեդալիոնով տղամարդը, 1474<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Sandro_Botticelli_-_Portrait_of_a_Man_with_a_Medal_of_Cosimo_the_Elder.jpg<br><br>Յան վան Էյք, Կարմիր չալմայով տղամարդը, 1433<br>https://en.wikipedia.org/wiki/File:Portrait_of_a_Man_by_Jan_van_Eyck-small.jpg<br><br>Յան Վերմեեր, «Մարգարտե ականջողով աղջիկը», 1665<br>https://en.wikipedia.org/wiki/File:Meisje_met_de_parel.jpg | |

Դիեգո Վելասկես, «Դոն Սեբաստյան դե Մորա», 1645
https://en.wikipedia.org/wiki/File:Vel%C3%A1zquez_%E2%80%93_Buf%C3%B3n_don_Sebasti%C3%A1n_de_Morra_(Museo_del_Prado,_c._1645).jpg

Վելասկես, Գեղջկուհին, 1650
https://wikioo.org/paintings.php?refarticle=9H5TZC&titlepainting=Young%20peasant%20girl&artistname=Diego%20Velazquez

**Ենթադրյալ թեմաներ և ցուցադրական նյութ շնորհանդեսի համար.**
Պիեռո դելլա Ֆրանչեսկա, Բատիստա Սֆորցան և Ֆեդերիգո դա Մոնտեֆելտրոն, 1472
https://en.wikipedia.org/wiki/The_Duke_and_Duchess_of_Urbino#/media/File:Piero_della_Francesca_044.jpg

Ռաֆայել Սանտի, Անիոլո և Մադալենա Դոնի, 1506
https://en.wikipedia.org/wiki/Portrait_of_Agnolo_Doni#/media/File:Raffaello_Ritratto_di_Agnolo_Doni.jpg

https://en.wikipedia.org/wiki/Portrait_of_Maddalena_Doni#/media/File:Rafael_-_Retrato_de_Maddalena_Doni.jpg

Լուկաս Կրանախ Ավագ, Հենրիխ V Սաքսոնցի և Կատարինա ֆոն Մեքլենբուրգ,1514
https://commons.wikimedia.org/wiki/File:Lucas_Cranach_the_Elder_-_Duke_Henry_the_Pious_-_Google_Art_Project.jpg

https://commons.wikimedia.org/wiki/File:Lucas_Cranach_the_Elder_-_Duchess_Katharina_von_Mecklenburg_-_Google_Art_Project.jpg

Պիտեր Պաուլ Ռուբենս, Ինքնադիմանկար Իզաբելլա Բրանդտի հետ, 1610
https://bit.ly/2Aquwis

Ռեմբրանդտ վան Ռեյն, «Ինքնադիմանկար Սասկիայի հետ», 1635
https://museumsworld.ru/artniderland/g-rembrandt/36sask.php

Անտոնիս վան Դեյք, Վալիեր եղբայրների դիմանկարը, 1635
https://bit.ly/3cnEI8T

Վան Դեյք, Մարիա Ստյուարտը և Ուիլյամ II-ը
https://commons.wikimedia.org/wiki/Anthony_van_Dyck#/media/File:Anthonis_van_Dyck_036.jpg

Վան Դեյք, Ուորթոն քույրերը, 1640
https://bit.ly/2XKP39s

Ժակ Լուի Դավիդ, Քիմիկոս Լավուազյեն և նրա կինը, 1788
https://commons.wikimedia.org/wiki/File:Jacques-Louis_David_-_Portrait_of_Antoine-Laurent_and_Marie-Anne_Lavoisier_-_WGA06059.jpg

| | |
|---|---|
| Գրանտ Վուդ, «Ամերիկյան գոթիկա», 1930<br>https://en.wikipedia.org/wiki/American_Gothic#/media/File:Grant_Wood_-_American_Gothic_-_Google_Art_Project.jpg<br><br>**Ինքնադիմանկարների ցուցադրական նյութ.**<br>Ալբրեխտ Դյուրերի երեք ինքնադիմանկար:<br>1493 թ., 22 տարեկան հասակում<br>https://wikioo.org/paintings.php?refarticle=5ZKBDZ&titlepainting=Self-portrait%20at%2022&artistname=Albrecht%20Durer<br>1498 թ., 27 տարեկան հասակում<br>https://bit.ly/2TZ3dCl<br>1500 թ., 29 տարեկան հասակում<br>https://commons.wikimedia.org/wiki/File:D%C3%BCrer_self_portrait_28.jpg-<br>Պիետրո Պերուջինո, 1500 թ.<br>https://en.wikipedia.org/wiki/Pietro_Perugino#/media/File:Pietro_Perugino_031.jpg<br>Ռաֆայելի ինքնադիմանկարը ընկերների հետ, 1520 թ.<br>https://bit.ly/2BnvNaz<br>Ռաֆայել, 1506 թ.<br>https://en.wikipedia.org/wiki/Raphael#/media/File:Raffaello_Sanzio.jpg<br><br>Տիցիան, «Ինքնադիմանկար», 1562 թ.<br>https://en.wikipedia.org/wiki/Self-Portrait_(Titian,_Madrid)#/media/File:Self-portrait_of_Titian.jpg<br>և.<br>Տիցիան, «Ինքնադիմանկար», 1567 թ.<br>https://en.wikipedia.org/wiki/Self-Portrait_(Titian,_Madrid)#/media/File:Tizian_090.jpg<br><br>Ռուբենս, 1623 թ.<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Rubens_Self-portrait_1623.jpg<br><br>Ռեմբրանդտ, 1628 թ.<br>http://www.getty.edu/art/collection/objects/263156/rembrandt-harmensz-van-rijn-rembrandt-laughing-dutch-about-1628/<br><br>Ռեմբրանդտ, «Ինքնադիմանկար բերետով», 1630 թ.<br>https://artchive.ru/rembrandt/works/21749~Avtoportret_v_berete_i_s_vytaraschennymi_glazami<br><br>Ռեմբրանդտ, «Ինքնադիմանկար Սասկիայի հետ», 1635 թ.<br>https://bit.ly/3coABcC<br>Ռեմբրանդտ, «Ինքնադիմանկար Պողոս Առաքյալի հետ», 1661 թ.<br>https://bit.ly/2TVQaSM<br>Գուստավ Կուրբե, «Ինքնադիմանկար սև շան հետ», 1842 թ.<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/1/1a/Selbstbildnis_mit_schwarzem_Hund.jpg | |

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**
**Կերպարվեստի տեխնիկա.**

- Պատկերում է մարդուն համապատասխան պատկերավորման տարրերի և սկզբունքների (ծավալ, լուսաստվեր, տոնային աստիճանավորում, ֆակտուրա, համամասնություն, մանրամաս և այլ), տարբեր նյութերի և տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2):**
- Աշխատության մեջ (օրինակ՝ դիմանկարում) գաղափար ու տրամադրություն և զգացմունք փոխանցելու համար կիրառում է մեկ կամ մի քանի գեղարվեստական պատկերավորման տարրեր, սկզբունքներ (լուսաստվեր, տոնային աստիճանավորում, հակադրություն, կոմպոզիցիոն բաշխում, շեշտադրում, մանրամաս, կեցվածք, ժեստ, դիմախաղ և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1):**
- Վերլուծում է դիմանկարում օգտագործված գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները և դատողություն է անում, թե ինչ էր ցանկանում փոխանցել հեղինակը դրանց միջոցով (արտաքին, բնավորություն, սոցիալական կարգավիճակ և այլն) **(Կերպ.կիր.հիմն.3):**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**

- Աշխատության մեջ սեփական մտահղացումը, գաղափարը փոխանցելու համար ընտրում է կերպարվեստի բնագավառ, ժանր, գեղարվեստական սկզբունքներ, նյութ, տեխնիկա և դատողություն է անում կերպարվեստի, որպես ինքնարտահայտման միջոցի մասին **(Կերպ.կիր.հիմն.2,3):**
- Մեկ կամ մի քանի արվեստի նմուշի հիման վրա դատողություն է անում, թե ինչպես էին արտացոլում մարդկանց ներաշխարհը տարբեր ժամանակներում **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Քննարկում է դիմանկարի կամ կենցաղային ժանրի առաջացման պատճառները **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Վերլուծում է մի քանի արվեստագետների ստեղծագործություն և դատողություն է անում, թե արտացոլվել է արդյոք, և ինչ ձևով է արտացոլվել նրանց աշխատության մեջ այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Համեմատում է որևէ երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործություններ (դիմանկարի, կենցաղային ժանրի), դատողություն է անում նմանությունների, տարբերությունների, առանձնահատկությունների մասին **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքի գնահատման համար.**

**Բանավեճ** (Բանավեճի գնահատման ձևաթուղթը տե՛ս՝ հավելվածում:)
Հետազոտության ունակություն
Փաստարկված դատողության ունակություն
Բանավեճի կանոնների պահպանում:

**«Ինքնադիմանկար»** (առավ.՝ 10 միավոր)

- Աշակերտը կազմեց ասոցիատիվ ցանց «Ո՞վ եմ ես» (1 միավոր)։
- Աշխատությանը կցված է նախապես պատրաստված էսքիզ (կիրառել է մի քանի գեղարվեստական պատկերավորման տարր և սկզբունք (լուսաստվեր, տոն, գիծ, կեցվածք, ժեստ, դիմախաղ, համամասնություն)): (2 միավոր)
- Աշխատությունը ցուցաբերում է հեղինակի անհատականությունը։ (1 միավոր)
- Լուսանկարում գիտակցված է օգտագործված լուսավորումը, կոմպոզիցիան, կեցվածքը, դեմքի արտահայտությունը, հագուստը, կոնտրաստը և այլն։ (2 միավոր)
- Լուսանկարը մշակված է թվային ծրագրի միջոցով։ (2 միավոր)
- Աշխատությանը կցված է ռեֆլեքսիա (սեփական փորձի վերլուծություն) և ընկերոջ կողմից արված գնահատում։ (2 միավոր)

**Ինքնադիմանկար** (առավ.՝ 10 միավոր).
(Գնահատման ձևը տե՛ս հավելվածում։)

- Աշխատությանը կցված է նախապես պատրաստված էսքիզ (կիրառել է մի քանի գեղարվեստական պատկերավորման տարր և սկզբունք (լուսաստվեր, տոն, գիծ, համամասնություն)) (3 միավոր)։
- Աշխատության մեջ գիտակցված է օգտագործված լուսավորումը, կոմպոզիցիան, կեցվածքը, ժեստ, դիմախաղ, դեմքի արտահայտություն, հագուստ, կոնտրաստ և այլն։ (4 միավոր)
- Վերլուծում է մի քանի արվեստագետի ստեղծագործություն, դատողություն է անում ինչ ձևով է աշխատության մեջ արտացոլվել դրանց ազդեցությունը։ (3 միավոր)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/5

<table>
<tr><td colspan="3">Դաս 15 Թեմա. Մարդու կեցությունը (տնային ընթերցանության)</td></tr>
<tr><td>Հարց և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Բնագավառներ.<br>նկարչություն<br>Ժանրեր.<br>կենցաղային<br>Դարաշրջան.<br>Միջնադարյան չինական նկարչություն, Հյուսիսեվրոպական վերածնունդ, Բարոկկո, ռեալիզմ:</td><td>• Ի՞նչ է տեղեկացնում մեզ արվեստը մարդու կեցության մասին:<br>• Ինչպե՞ս էին արտացոլում տարբեր մշակույթների և դարաշրջանների արվեստում մարդու կեցությունը:<br>• Ի՞նչ կարող եմ իմանալ կենցաղային ժանրի ստեղծագործությունից:<br>• Ինչպե՞ս կարող ես արտացոլել քո կենցաղը:</td><td rowspan="2">Հետազոտություն և զեկուցման ներկայացում թեմայով՝ «Ինչպիսին էր մարդու կեցությունը XXX դարաշրջանում»</td></tr>
<tr><td colspan="2">• Կենցաղային ժանր<br>✓ Ի՞նչ է արտացոլում կենցաղային ժանրը:<br>Պատասխան. Մարդու ամենօրյա կենցաղը:<br>✓ Ի՞նչ է մեզ տեղեկացնում մարդու կենցաղի մասին:<br>Պատասխան. Արվեստը մեզ պատմում է, թե ինչպես էին մարդիկ ապրում տարբեր դարաշրջաններում:<br>✓ Ինչպե՞ս էին արտացոլում տարբեր դարաշրջանների արվեստում մարդու կենցաղը:<br>Պատասխան. Որոշ ստեղծագործություններ պարզապես պատմում են մարդու ամենօրյա կյանքի մասին: Որոշ ստեղծագործություններ փորձում են մեր մեջ կարեկցանք առաջացնել:<br>✓ Ի՞նչ կարող եմ իմանալ կենցաղային ժանրի ստեղծագործություններից:<br>Պատասխան. Կենցաղային ժանրի ստեղծագործությունից կարող ենք իմանալ, թե ինչպես էր ապրում այս կամ այն սոցիալական խավը, ինչպիսի իրեր ունեին, ինչպես էին հագնվում, ինչ էին ճաշակում, ինչ գործունեություն ծավալում, ինչպիսի ավանդույթներ ու սովորույթներ ունեին և այլն:<br>✓ Կերպարվեստի ո՞ր բնագավառներում են հանդիպում կենցաղային տեսարաններ: Բե՛ր օրինակներ:<br>Պատասխան. հաստոցային գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակ, լուսանկարչություն:<br>Գործնական աշխատանք (տնային առաջադրանք):<br>• Նկարի՛ր կենցաղային տեսարան քո ներկայիս կյանքից:<br>• Նկարի՛ր երևակայական կենցաղային տեսարան քո ապագայից: Ինչպիսի՞ն ես պատկերացնում քո ապագան՝ ընտանիքը, մասնագիտությունը, աշխատանքն ու ժամանցը: Պահի՛ր նկարը (ժամանակի պատիճի մեջ՝ քո հին սիրելի իրերի սնդուկի մեջ) և ապագայում համեմատի՛ր իրականության հետ: Հետաքրքիր է՝ կհամընկնի՞ արդյոք քո սպասումն իրականության հետ:</td></tr>
</table>

**Հանձնարարականներ՝ կապված համալիր առաջադրանքների հետ.**

**Հետազոտություն և զեկուցման ներկայացում թեմայով.** «Ինչպե՞ս էր ապրում մարդը»:

Ընտրի՛ր այն դարաշրջանը, որը հետաքրքրում է քեզ: Գտի՛ր այս դարաշրջանի կենցաղային ժանրի որևէ ստեղծագործություն: Գրքերում և համացանցում գտի՛ր դրա մասին տեղեկություններ: Դիտի՛ր շրջակա միջավայրը, հագուստը, առարկաները:

Նկարագրի՛ր և վերլուծի՛ր ստեղծագործության մեջ օգտագործված պատկերավորման սկզբունքներն ու տարրերը, պատմի՛ր ընկերներիդ, թե ինչ իմացար այս ստեղծագործությամբ այն ժամանակվա մարդկանց կյանքի մասին (սոցիալական վիճակ, պատմական իրավիճակ):

**Ռեսուրսներ.**

Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012
https://bit.ly/2TZ3R3d

Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010:

Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպա), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթրեն, Թբ., 2018:

Լրացուցիչ ցուցադրական էլ. ռեսուրսներ.
Պոմպեյ, Հացի փուռ, *I* դ.
https://www.wikidata.org/wiki/Q12900679#/media/File:Pompei_-_House_of_Julia_Felix_-_2_-_MAN.jpg

Չինական նկարչության ցուցադրական նյութ,
Գու Կայչժի, 3 մետրանոց գլանաձև ձեռագրի դետալ,
https://commons.wikimedia.org/wiki/File:Histoire_de_femme_Gu_Kai_Zhi.jpg
https://bit.ly/2XSJSWj
https://en.wikipedia.org/wiki/Gu_Kaizhi

Չժոու Ֆանգ, VIII դ.
https://ru.wikipedia.org/wiki/%D0%A7%D0%B6%D0%BE%D1%83_%D0%A4%D0%B0%D0%BD

| | |
|---|---|
| **Եվրոպական նկարչություն.**<br>Պիտեր Բրեյգել, «Գյուղական պար», 1568<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Peasant_dance,_by_Pieter_Bruegel_(I).jpg<br><br>Պիտեր Բրեյգել, «Բերքահավաք», 1565<br>https://www.metmuseum.org/es/art/collection/search/435809<br><br>Պիտեր Բրեյգել, «Ծուղակ», 1565<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Pieter_Bruegel_d._%C3%84._093.jpg<br><br>Պիտեր Բրեյգել, «Որսորդները ձյան վրա», 1565<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Pieter_Bruegel_the_Elder_-_Hunters_in_the_Snow_(Winter)_-_Google_Art_Project.jpg<br><br>Պետրուս Կրիստուս (Նիդերլանդներ), «Ոսկերչի մոտ», 1449<br>https://www.metmuseum.org/art/collection/search/459052<br><br>Քվենթին Մասիսի (Ֆլանդրիա), «Վաշխառուն և նրա կինը», 1514<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Quinten_Massijs_(I)_-_The_Moneylender_and_his_Wife_-_WGA14281.jpg<br><br>Մարինուս վան Ռայմերսվալ (Հոլանդիա), «Փող փոխանակողները», XVI դարի I կես<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Marinus_van_Reymerswale_-_The_Tax_Collectors_-_WGA19331.jpg<br><br>Վելասկես, «Նախաճաշ», 1615<br>https://en.wikipedia.org/wiki/The_Lunch_(Vel%C3%A1zquez)#/media/File:Diego_Vel%C3%A1zquez_016.jpg<br><br>Վելասկես,«Ձու տապակող կինը», 1618<br>https://bit.ly/37nlQ8Z<br><br>Յան Վերմեեր, «Կաթնավաճառուհին», 1660<br>https://www.wikiart.org/en/johannes-vermeer/the-milkmaid<br><br>Պիտեր դե Հոոխ, «Մայրը երեխայի հետ», 1660<br>https://en.wikipedia.org/wiki/A_Woman_with_a_Child_in_a_Pantry#/media/File:Pieter_de_Hooch_007.jpg | |

| | |
|---|---|
| Պիտեր դե Հոոխ, «Ննջասենյակ», 1690<br>https://www.wikidata.org/wiki/Q19961186#/media/File:Pieter_de_Hooch_-_The_Bedroom_-_WGA11695.jpg<br><br>Պիտեր դե Հոոխ, «Սպիտակեղենի պահարանի մոտ», 1663<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Pieter_de_Hooch_-_At_the_Linen_Closet_-_WGA11712.jpg<br><br>Յան Սթեն, «Ընտանիքը ուրախ շրջապատում», 1668<br>https://www.wikidata.org/wiki/Q17342250#/media/File:Jan_Havicksz._Steen_-_Het_vrolijke_huisgezin_-_Google_Art_Project.jpg<br><br>Յան Սթեն, «Սուրբ Նիկողայոսի տոնը», 1668<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/d/dc/Jan_Steen_-_The_Feast_of_St._Nicholas_-_WGA21722.jpg<br><br>Ժան Օնորե Ֆրագոնար (Ֆրանսիա), «Ճոճանակը», 1767<br>https://en.wikipedia.org/wiki/The_Swing_(painting)#/media/File:Fragonard,_The_Swing.jpg<br><br>Ժան Բատիստ Սիմեոն Շարդեն, «Աղոթք ճաշից առաջ», 1740<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Jean_Sim%C3%A9on_Chardin_-_The_Prayer_before_Meal_-_WGA04768.jpg<br><br>Գյուստավ Կուրբե, «Քարհատները», 1849<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/f/fc/Courbet_-_Kamieniarze.jpg<br><br>https://commons.wikimedia.org/wiki/File:Gustave_Courbet_018.jpg<br><br>Ժան Ֆրանսուա Միլլե, Հասկեր հավաքողները, 1857<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/6/64/Millet_Gleaners.jpg<br><br>Օնորե Դոմիե, «Լվացարարուհին», 1863<br>https://upload.wikimedia.org/wikipedia/commons/a/ae/Honor%C3%A9_Daumier_-_The_Washerwoman_-_WGA05957.jpg<br><br>Օնորե Դոմիե, «Երրորդ կարգի վագոն», 1864<br>https://bit.ly/2MNN2nQ<br><br>Էդգար Դեգա, «Արդուկող կանայք», 1884<br>https://commons.wikimedia.org/wiki/File:Edgar_Germain_Hilaire_Degas_084.jpg | |

**Գնահատման չափանիշներ.**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**

- Մեկ կամ մի քանի արվեստի նմուշի հիման վրա դատողություն է անում, թե ինչպես էին արտացոլում մարդկանց կենցաղը տարբեր ժամանակներում **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Քննարկում է կենցաղային ժանրի առաջացման պատճառները **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Վերլուծում է մի քանի արվեստագետների ստեղծագործություն և դատողություն է անում, թե արտացոլվել է արդյոք, և ինչ ձևով է արտացոլվել նրանց աշխատության մեջ այն մշակույթի ազդեցությունը, որի ներկայացուցիչներն են իրենք (**Կերպ.կիր.հիմն.3,4**):
- Համեմատում է որևէ երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործություններ (դիմանկարի, կենցաղային ժանրի), դատողություն է անում նմանությունների, տարբերությունների, առանձնահատկությունների մասին (**Կերպ.կիր.հիմն.4**):

**Հանձնարարականներ՝ կապված համալիր առաջադրանքների հետ**

Հետազոտություն և զեկուցման ներկայացում

Զեկուցման գնահատման սխեման տե՛ս հավելվածում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 2/6

| Դաս 16 **Թեմա. Ինչ է մեզ պատմում հագուստը** | | |
|---|---|---|
| **Հարց և ենթահասկացություններ** | **Հանգուցային հարց/հարցեր** | **Համալիր առաջադրանքներ** |
| **Տարրեր.**<br>գույն<br>կազմվածք<br><br>**Բնագավառներ.**<br>գեղանկարչություն<br><br>**Ժանրեր.**<br>դիմանկար<br>կենցաղային | • Ի՞նչ է մեզ պատմում հագուստը:<br>• Ի՞նչ նշաններով ենք իրարից տարբերակում տարբեր դարաշրջանների/մշակույթների մարդկանց:<br>• Ինչի՞ն է ծառայում նորաձևությունը:<br>• Հագուստի մոդելավորումն արդյոք արվե՞ստ է:<br>• Ինչո՞ւ է փոխվում նորաձևությունը:<br>• Ի՞նչն է պայմանավորում մարդու հագուստը:<br>• Ի՞նչ գործոններ են պայմանավորում փոփոխություններ զինվորական համազգեստում:<br>• Ժամանակակից արվեստագետին ինչո՞ւ է անհրաժեշտ նորաձևության պատմության իմացությունը: | <br>**1. Պատմական տարազով տիկնիկ պատրաստել**<br><br>**2. Ռեպորտաժ**<br>Համառոտ էսսե XX դարի երեխաների կենցաղի և հագուստի մասին |

<table>
<tr><td>Տեխնիկա.<br>նկարել<br>մոդելավորել<br><br><br>Դարաշրջան/մշակույթ/հոսանք/ոճ և համապատասխան արվեստի նմուշներ<br>տարբեր</td><td></td><td rowspan="2"></td></tr>
<tr><td colspan="2">

- **Քննարկում**
  - ✓ Ի՞նչ է մեզ պատմում հագուստը:

**Պատասխան.** Հագուստը մեզ պատմում է կերպարի ծագման, սոցիալական կարգավիճակի, գործունեության մասին:

- ✓ Ի՞նչ նշանով ենք իրարից տարբերում տարբեր դարաշրջանների/մշակույթների մարդկանց:

**Պատասխան.** Հագուստը մեզ պատմում է, թե որ մշակույթին է պատկանում կերպարը՝ ասիացի է, թե եվրոպացի, որ դարաշրջանում և որ երկրում էր ապրում և այլն:

- ✓ Ինչի՞ն է ծառայում նորաձևությունը:

**Պատասխան.** Նորաձևությունը ծառայում է մարդու կարիքների, նորությունների հաստատմանը, սոցիալական կարգավիճակի ցուցադրմանը, գեղեցկությանը, հարմարավետությանը և այլն:

- ✓ Հագուստի մոդելավորումն արդյոք արվե՞ստ է:
- ✓ Ինչո՞ւ է փոխվում նորաձևությունը:

**Պատասխան.** Նորաձևությունը փոխվում է ըստ նրա, թե ինչպես է փոխվում մարդկանց կենսակերպը: Օրինակ, կրինոլինով զգեստով չես կարող ավտոմեքենայով ուղևորվել, չես կարողանա ավտոբուս բարձրանալ և այլն:

- ✓ Ի՞նչն է պայմանավորում մարդու հագուստը:

**Պատասխան.** կլիման, ապրելակերպը, գործունեությունը, դավանանքը, նորաձևությունը, սոցիալական վիճակը և այլն:

- ✓ Ի՞նչ նշանակում ունի զինվորական համազգեստը:

**Պատասխան.** Զինվորական համազգեստը պետք է պաշտպանի մարմինը: Բացի այդ, ինչպես սպորտային թիմերն ենք իրարից տարբերում համազգեստով, այնպես էլ պետք է տարբերենք, թե որ զինվորական խմբավորմանն է պատկանում այս կամ այն մարտիկը:

- ✓ Ի՞նչ գործոններ են պայմանավորում փոփոխություններ զինվորական համազգեստի մեջ:

**Պատասխան.** Զինվորական համազգեստի փոփոխությունները պայմանավորում են մարտական տեխնիկայի և հանդերձավորման զարգացումը:
</td></tr>
</table>

✓ Ժամանակակից արվեստագետին ինչո՞ւ է անհրաժեշտ նորաձևության պատմության իմացությունը:

**Պատասխան**. Ժամանակակից արվեստագետը պետք է իմանա ոչ միայն նորաձևության պատմությունը, այլ նաև ընդհանրապես պատմություն, որպեսզի պահպանի պատմական ճշգրտությունը, օրինակ, թատերական ներկայացման, ֆիլմի, գրքի ձևավորման ժամանակ, նոր հագուստ ստեղծելու համար և այլն:

**Առաջադրանքներ.**

- **Թվային ալբոմ** (ինքնուրույն աշխատանք) (ուսուցչի ընտրությամբ)
  Համացանցում գտի՛ր տարբեր դարաշրջանների նկարչության նմուշներ երեխաների պատկերներով: Նկարները դասավորի՛ր ժամանակագրորեն և ստեղծի՛ր «Մանկության պատմությունը նկարչության մեջ» թվային ալբոմ: Գրի՛ր քո կարծիքը «Ի՞նչ է մեզ ասում նկարչությունը երեխաների կյանքի մասին» թեմայի շուրջ:

  Հիշի՛ր Դիեգո Վելասկեսի «Մենինները» նկարը:
  Գտի՛ր նույն նկարչի կողմից Ինֆանտա Մարգարիտայի տարբեր տարիքում ստեղծած դիմանկարներ և նկարագրի՛ր նրա հագուստը:

  Ինչպե՞ս է տարեցտարի փոխվում Ինֆանտայի հագուստը:
  Դիտի՛ր և նկարագրի՛ր, թե տարիքի հետ ինչպես է փոխվում դեմքի արտահայտությունը և կեցվածքը:

- Գտի՛ր տեղեկություններ որևէ դարաշրջանի զինվորական համազգեստի մասին:
  Իրար հետ համեմատի՛ր վրացական, եվրոպական և արևելյան մարտական համազգեստը:
  Ի՞նչ ունեն նրանք ընդհանուր:
  Ո՞րն եք ավելի հարմարավետ համարում:
  Ո՞րն է ավելի լավ պաշտպանում մարտիկին:

- Գտի՛ր և դիտարկի՛ր ժամանակակից իսլամական երկրների բնակչության հագուստի նմուշներ: Համեմատի՛ր միջնադարյան իսլամի նկարչության նմուշներում արտացոլված մարդկանց հագուստի հետ:
  Ի՞նչ է փոխվել: Ի՞նչն է մնացել անփոփոխ:
- **Գրական հերոսի միջավայր.** (տնային առաջադրանք, ինքնուրույն աշխատանք)
  Նկարի՛ր քո սիրելի գրական ստեղծագործության հերոսին:
  Մտածի՛ր, թե ինչպիսին է նրա միջավայրը: Ինչպիսի՞ հագուստ պետք է հագած լինի նա:

* Դասագրքում տրված հարցին՝ «Դիտի՛ր Գելաթիի որմնանկարում պատկերված մարդկանց հագուստը: Այսօր, XXI դարում ո՞վ է կրում նման հագուստ: **Պատասխան.** հոգևորականությունը:

**Հանձնարարականներ՝ կապված համալիր առաջադրանքների հետ.**

- **Պատմական հագուստով զգեստավորված տիկնիկ.**

Դիտի՛ր դասագրքում տրված նկարազարդումները, գտի՛ր տարբեր դարաշրջանների նկարչության նմուշներ, դիտի՛ր պատկերված հերոսների հագուստը:
Ընտրի՛ր որևէ մեկը, նկարի՛ր ուրվանկար և պատրաստի՛ր տիկնիկ՝ հագնված ըստ ընտրված դարաշրջանի/ երկրի և քո ուրվանկարի:
Ինքդ որոշի՛ր, թե ինչ նյութ և սկզբունք ես օգտագործելու տիկնիկը պատրաստելու համար:
Ստեղծագործությանը կցի՛ր հետազոտություն, որում կքննարկես քո ընտրած դարաշրջանի/երկրի տարազի առանձնահատկությունները, բնորոշ նշանները:
Նախքան թեման քննարկելը, կարող ես անցկացվել հակիրճ քննարկում՝ ունեցած նախնական գիտելիքները ակտիվացնելու համար, որի ժամանակ աշակերտները կվերհիշեն

- Ինչպե՞ս էին հագնվում Հին Եգիպտոսում և Հին Հունաստանում:
- Ինչպե՞ս էին մարդիկ պատկերված բյուզանդական ժամանակաշրջանի նկարչության մեջ:
- Ո՞րն է տարբերությունը միջնադարյան իսլամական և քրիստոնեական երկրների բնակչության հագուստի միջև, և ի՞նչն է դրա պատճառը:

**Պատասխան.**

Հագուստը որոշում են կլիման, կրոնական համոզմունքները, հասարակության մեջ տարածված նորաձևությունը, պետությունների միջև հաստատված մշակութային և առևտրային հարաբերությունները, մարդկանց սոցիալական ծագումը, կարգավիճակը և այլն: Միջնադարյան իսլամական և քրիստոնեական պետությունների բնակչության հագուստն առաջին հերթին սահմանում էին կլիման, կրոնական սահմանափակումները (որոնք, Եվրոպայի համեմատ, վաղուց (մինչ օրս) պահպանում էին իրենց ազդեցությունը Ասիայի երկրներում):
Ցանկալի է, որ աշակերտները վերանայեն դասագիրքը և դիտեն նկարներում պատկերված մարդկանց հագուստը:
Նախագիծը սկսելուց առաջ ուսուցիչը խնդրում է աշակերտներին, որպես տնային առաջադրանք, դասագրքի նկարազարդումներից տարբեր դարաշրջանների մի քանի տարազ արտանկարել:
Կախված աշակերտների հմտություններից՝ ուսուցիչը կարող է նրանց առաջարկել տիկնիկ պատրաստելու ավելի հեշտ տարբերակներ.

1. Ստվարաթղթի վրա նկարված և ձևված մարդու ուրվագիծը զգեստավորել:
2. Թղթե զլանի կառուցվածք. https://www.youtube.com/watch?v=EARM7BeMMEQ
3. Պարզ տիկնիկ պատրաստել. https://skillflair.com/diy-dolls/how-to-pake-paper-doll-easy-paper-doll-making-ideas

| | |
|---|---|
| Ինչպես նաև՝ աշակերտները կարող են զգեստավորել իրենց կողմից մինչ այս (մետաղալարի հիմնակմախքի վրա պլաստիլինից) պատրաստված մարդու ֆիգուրներ:<br><br>• **Ռեպորտաժ.**<br>XX-XXI դարի երեխաների կենցաղն ու նորաձևությունը:<br><br>Գրի՛ր կարճ շարադրություն XX դարի երեխաների կենցաղի և հագուստի մասին և կցի՛ր կարճ գրառումներ հարցազրույցի մասնակիցների հիշողություններից, լուսանկարներ և քո ուրվակարները: Ներկայացրո՛ւ քո աշխատանքը power point ծրագրի միջոցով.<br>• Տեղեկություններ գտի՛ր XX-XXI դարի 2-3 սերունդների մանկության մասին:<br>• Հարցրո՛ւ քո ընտանիքի անդամներին իրենց մանկության մասին: Տեղեկություններ հավաքի՛ր, թե ինչպիսին էր նրանց կյանքը, ինչ էին նրանք խաղում, ինչպես էին հագնվում և այլն:<br>• Գտի՛ր տեսողական նյութեր (ընտանեկան լուսանկարներ, հին ամսագրեր, գրքերի նկարազարդումներ):<br>• Գրի՛ր կարճ շարադրություն XX դարի երեխաների հագուստի մասին և դրան կցի՛ր կարճ գրառումներ հարցվածների հիշողություններից, գտած լուսանկարներ և քո ուրվանկարները:<br>• Փորձի՛ր բացատրել, թե ի՞նչ պատճառներ են պայմանավորել երեխաների նորաձևության փոփոխականություն:<br>• Ենթադրությո՛ւն արա, թե ինչպես կհագնվեն քո հասակակիցները 10-20 տարի հետո:<br>• Ներկայացրո՛ւ «Ապագայի նորաձևություն» ուրվանկար:<br>• Ներկայացրո՛ւ շնորհանդես power point ծրագրի միջոցով: | |
| **Ռեսուրսներ.**<br>Դիեգո Վելասկես.<br>https://bit.ly/2XOZqcn<br>Լուկաս Կրանախ.<br>https://bit.ly/2TYbC9o<br>Անտոնիս վան Դեյք.<br>https://bit.ly/2AtfzMJ<br>Ուշ միջնադարի տարազներ.<br>https://bit.ly/2XOZM2H<br><br>Օսկար Մերլինգ.<br>https://www.kvirispalitra.ge/photogallery.html?view=image&image=5135&lang=ka-GE<br>Մանկական նորաձևություն.<br>https://www.pinterest.com/svs2/historical-children-s-clothing/ | |

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները**

**Կերպարվեստի տեխնիկան**

- Պատկերում է մարդուն համապատասխան պատկերավորման տարրերի և սկզբունքների (ծավալ, կազմվածք, համամասնություն, մանրամաս և այլն), տարբեր նյութերի և տեխնիկայի օգտագործմամբ **(Կերպ.կիր.հիմն.1,2):**
- Աշխատության մեջ տրամադրություն և զգացմունք փոխանցելու համար կիրառում է մեկ կամ մի քանի գեղարվեստական պատկերավորման տարր, սկզբունք (շեշտադրում, մանրամաս և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1):**
- Վերլուծում է ստեղծագործության մեջ օգտագործված գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները և դատողություն է անում, թե ինչ էր ցանկանում փոխանցել հեղինակը դրանց միջոցով (սոցիալական կարգավիճակ և այլն) **(Կերպ.կիր.հիմն.3):**

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական բնութագրիչներ**

**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը**

- Մեկ կամ մի քանի արվեստի նմուշների հիման վրա դատողություն է անում, թե ինչպես էին արտացոլում մարդու սոցիալական վիճակը տարբեր ժամանակներում **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Վերլուծում է և իրար հետ համեմատում երկու դարաշրջանի, բնագավառի, ոճի, հոսանքի ստեղծագործությունները (դիմանկարներ), դատողություն է անում նմանություն-տարբերությունների և յուրօրինակության մասին **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Հանձնարարականներ՝ կապված համալիր առաջադրանքի հետ**

1. **Պատմական տարազով տիկնիկ** (առավ.՝ միավոր 10):

- Տիկնիկը համապատասխանում է ուրվանկարին և կոկիկ է կատարված: (2 միավոր)
- Տիկնիկի հագուստի ուրվանկարը և/կամ մանրամասերը համապատասխանում են ընտրված դարաշրջանին: (3 միավոր)
- Աշակերտը ներկայացրել է հետազոտության գրավոր արդյունքը ուրվանկարով և հայթայթված տեղեկություններով: (3 միավոր)
- Խոսում է աշխատության մասին և այն քննարկում պատմա-սոցիալական-կրոնական համատեքստում: (2 միավոր)

2. **Ռեպորտաժ** (առավ.՝ միավոր 10)**.**

- Աշակերտի կողմից հայթայթված տեղեկությունները համապատասխանում են առաջադրանքի պայմանին: (1 միավոր)
- Նյութը բազմազան է, կարգավորված, դասավորված՝ ըստ տրամաբանական համակարգի: (3 միավոր)
- Շնորհանդեսին կից տրված է լուսանկարչական նյութ և աշակերտի կատարած ուրվանկարները: (2 միավոր)
- Տեքստը գրված է սահուն լեզվով: (2 միավոր)
- Շնորհանդեսը ներկայացված է թվային փաստաթղթի տեսքով: (1 միավոր)
- Աշակերտը դրսևորում է լսարանի հետ շփման ունակություն: (1 միավոր)

## ԹԵՄԱՏԻԿ ՄԻԱՎՈՐ 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ (10+2 ԺԱՄ)

***Գլուխների հաջորդականությունն Աշակերտի գրքում.***


Ուսումնական թեմա. Աշխարհը մեր շուրջը ....................................................................261

1. Նատյուրմորտ կամ շրջակա միջավայր մոտ տեսարանով.............................................262
2. Բնանկար կամ շրջակա միջավայր հեռավոր տեսարանով.............................................269
3. Հեռանկար ........................................................................................................................274
4. Փրկությունը բնության մեջ է...........................................................................................280
5. Ճարտարապետություն ....................................................................................................284
6. Ճարտարապետությունը և շրջակա միջավայրը ...........................................................292
7. Կլիման և ճարտարապետությունը...................................................................................296
8. Ճարտարապետության գեղարվեստական լեզուն .........................................................300

Վերջաբան

Բառարան

**Թեմա.** Տիեզերքը մեր շուրջը **Ժամերի ենթադրյալ քանակ 10 + 2 ժամ**

**Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ.**

- Արտաքին աշխարհի արտացոլումը արվեստում տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր նպատակներ և գործառույթներ:
- Ժամանակի հետ մեկտեղ փոխվում էին արտաքին աշխարհին արտացոլելու ուղիները, նյութերն ու տեխնիկան:
- Արվեստագետները տարբեր գեղարվեստական սկզբունքներով մեզ պատմում են համաժամանակյա միջավայրի մասին:
- Աշխատության գեղարվեստական ձևի (ոճի, ընթացքի, կատարման եղանակի, գեղարվեստական պատկերավորման տարրերի, սկզբունքների, նյութերի ու տեխնիկայի) վրա ազդում են երկրի մշակույթը և ավանդույթները, պատմական և սոցիալական իրավիճակը, աշխարհագրական դիրքը:
- Շրջակա միջավայրի դիտարկումների արդյունքները և նրա նկատմամբ վերաբերմունքը ես կարող եմ փոխանցել գեղարվեստական պատկերավորման տարրերով և սկզբունքներով:
- Շրջակա միջավայրն ազդում է արվեստագետի ստեղծագործականության վրա, իսկ արվեստն ազդում է շրջակա միջավայրի վրա:
- Ճարտարապետությունը կարող է փոխել շրջակա միջավայրը և ազդել այդ միջավայրում գտնվող մարդկանց վրա:

**Թեմատիկ միավորի շրջանակներում մշակվելիք թեմաներ և ենթաթեմաներ.**

1. Նատյուրմորտ կամ շրջակա միջավայր մոտ տեսարանով
2. Բնանկար կամ շրջակա միջավայր հեռավոր տեսարանով
3. Ճարտարապետություն

| **Նպատակային հասկացություններ և դրանց հետ կապված կայուն պատկերացումներ.** | **Հարցեր և ենթահասկացություններ** | **Հանգուցային հարց/հարցեր** | **Համալիր առաջադրանքներ (տեսակներ).** |
|---|---|---|---|
| **Կերպարվեստի գեղարվեստական-պատկերավորման տարրերը և սկզբունքները.**<br>• Արվեստի գործ ստեղծելու համար մարդ օգտագործում է արվեստի լեզուն, այսինքն՝ կերպարվեստի տարրերը և սկզբունքները:<br>• Կերպարվեստի լեզուն մենք օգտագործում ենք ոչ միայն աշխատություն ստեղծելիս, այլև՝ արվեստի գործերի մասին տպավորություններ, գաղափարներ, կարծիքներ արտահայտելիս: | **Տարրեր.**<br>գույն,<br>տոն,<br>լուսաստվեր,<br>ֆոն,<br>ձև,<br>գիծ:<br><br>**Սկզբունքներ.**<br>ստատիկա/դինամիկա,<br>կոնտրաստ, | • Ինչպե՞ս է շրջակա միջավայրն ազդում արվեստի վրա:<br>• Ժամանակի ընթացքում ինչպե՞ս էին փոխվում շրջապատող աշխարհին արտացոլելու ուղիներն ու սկզբունքները:<br>• Ի՞նչ տեղեկություն է մեզ փոխանցում արվեստի ստեղծագործությունն իր համաժամանակյա միջավայրի մասին: | **Հետազոտություն**<br><br>**Վերլուծություն**<br><br>**Քննարկում**<br><br>**Գործնական աշխատանք.**<br><u>(ուսուցչի ընտրությամբ.).</u> |

<table>
<tr>
<td>Կերպարվեստի տեխնիկան.<br>• Արվեստագետը նյութը և տեխնիկան ընտրում է՝ ըստ գեղարվեստական մտահղացման:<br>• Մարդկության զարգացման հետ միասին զարգանում, փոփոխվում և առաջանում էին արվեստի նոր ձևեր, նյութեր և տեխնիկա:<br><br>Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.<br>• Արվեստն առօրյա կյանքում հանդիպում է տարբեր տեսքով:<br>• Արվեստի գործերը ստեղծվում են տարբեր նպատակով և նշանակումով:<br>• Արվեստի՝ բնագավառների բաժանումը պայմանավորում են օգտագործված նյութը, տեխնիկան կամ նպատակը:<br>• Յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է կերպարվեստի որևէ պատկերավորման միջոց կամ եղանակ:<br>• Կերպարվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության:<br><br>Տարբեր դարաշրջանների/մշակույթների /ուղղությունների/ոճերի արվեստին բնութագրական հատկություններ/ գեղարվեստական բնութագրիչներ.<br>• Բոլոր դարաշրջանների, ուղղությունների, ոճերի արվեստն ունի իր առանձնահատկությունները, որը պայմանավորում են տարբեր գործոններ:<br>• Արվեստի ընթացող փոփոխությունները (արվեստի նպատակը, նրա նկատմամբ վերաբերմունքը, գեղարվեստական-պատկերավորման տարրերը, սկզբունքները, տեխնիկան, նյութը, գործիքները, բնագավառները,</td>
<td>համաչափություն,<br>համաչափություն/ անհամաչափություն,<br>մասշտաբ,<br>համամասնություն,<br>հեռանկար,<br>շեշտադրում,<br>ռիթմ,<br>զարդանախշ:<br><br>Բնագավառներ.<br>հաստոցային գեղանկարչություն,<br>ճարտարապետություն<br><br>Տեխնիկա.<br>նկարչություն,<br>գեղանկարչություն,<br>կառուցքավորում<br><br>Դարաշրջան/մշակույթ/ հոսանք/ոճ և համապատասխան արվեստի նմուշներ.<br>տարբեր,<br>Բարոկկո,<br>կլասիցիզմ,<br>ռոմանտիզմ:</td>
<td>• Ինչպիսի՞ն է մեր շրջակա միջավայրը:<br>• Շրջակա միջավայրի ո՞ր գործոնները կարող են ազդել աշխատության գեղարվեստական ձևի վրա (ոճի, հոսանքի, կատարման եղանակի, գեղարվեստական պատկերավորման տարրերի, սկզբունքների, նյութի և տեխնիկայի վրա):<br>• Ի՞նչ գեղարվեստական պատկերավորման սկզբունքներ կարող եմ կիրառել շրջակա միջավայրի դիտարկման արդյունքները և սեփական վերաբերմունքը փոխանցելու համար:<br>• Ի՞նչ գեղարվեստական սկզբունքներով կարող եմ պատկերել իմ շրջակա միջավայրը:<br>• Արվեստի ո՞ր բնագավառն է ազդում շրջակա միջավայրի վրա և ինչպե՞ս:<br>• Ինչպե՞ս է փոխում մարդու ստեղծագործությունը շրջակա միջավայրը:</td>
<td>• Նատյուրմորտ դասավորել և լուսանկարահանել<br>• Ապլիկացիա<br>• Թղթային կոլաժ<br>• Վարժություններ գծային և օդային հեռանկարի մասին<br>• Գծել<br>• Կառուցքավորել<br><br>Համալիր նախագծեր.<br><br>• Նատյուրմորտ նկարել, գրաֆիկական և գեղանկարչական աշխատություն ստեղծել:<br>• Ուրբանային կամ քաղաքային բնանկար նկարել՝ գծային հեռանկարի սկզբունքների կիրառմամբ:<br>• Բնանկար նկարել՝ գծային և օդային հեռանկարի սկզբունքների կիրառմամբ, որում աշակերտն իր միջավայրը կամ հոգևոր վիճակն է արտացոլում:<br>• Տարվա ընթացքում ձեռք բերված գիտելիքի և ունակությունների ամփոփիչ թեստ:<br><br>Եզրափակիչ նախագիծ.<br>«Հանդուրժող քաղաք»:</td>
</tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| ձևերը և այլն) ուղղակիորեն առնչվում են մարդկության պատմության մեջ ընթացող փոփոխությունների հետ (աշխարհայացք, տեխնիկական առաջընթաց, համաշխարհայնացում և այլն):<br>• Տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստների ձևավորման մեջ մեծ դեր են կատարում փոխադարձ ազդեցությունը: Արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների և մշակույթների մասին կարելի է շատ բան իմանալ: | | | • Անհատական կամ զույգով, ըստ որևէ դարաշրջանի/ոճի, շենքի մանրակաղապարի պատրաստում:<br>• Ինքնուրույն ստեղծած մանրակաղապարներով քաղաքի համատեղ մանրակաղապարի պատրաստում: |

**Գնահատման չափանիշներ «Շրջակա միջավայրը» թեմատիկ միավորի համար.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**
**Կերպարվեստի տեխնիկա.**

- Դիտարկում է շրջակա միջավայրը և աշխատության մեջ ստեղծագործաբար արտացոլում դիտարկման արդյունքում հարուցված տպավորությունները, գաղափարները, հույզերը, զգացմունքները **(Կերպ.կիր.հիմն.1)**:
- Աշխատություն ստեղծելիս՝ ընտրում է մտահղացմանը համապատասխան նյութ ու տեխնիկա և կիրառում համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ (գծի, գույնի, բծի, ձևի պատկերավորման հնարավորություններ, հեռանկար, մասշտաբ, կոմպոզիցիոն բաշխում, հարաբերակցություն և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1,2)**:
- Գրավոր կամ բանավոր վերլուծում է սեփական/ուրիշի աշխատության մեջ կիրառած գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները (գծի, գույնի, բծի, ձևի պատկերավորման հնարավորություններ, հեռանկար, մասշտաբ, կոմպոզիցիոն բաշխում, հարաբերակցություն և այլն) և խոսում սեփական հույզերի մասին **(Կերպ.կիր.հիմն.3)**:

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**

- Խոսում է որոշ ժանրերի (բնանկար, նատյուրմորտ) առաջացման հնարավոր պատճառների մասին, բերում է մի քանի օրինակ և դատողություն անում, թե ինչպես էին ժամանակի հետ փոփխվում բնանկարի, նատյուրմորտի արտացոլման յուրահատկությունները **(Կերպ.կիր.հիմն.4)**:
- Վերլուծում է, թե ինչպես են կիրառված տարբեր ոճերի, հոսանքների, ժամանակների աշխատություններում պատկերավորման տարրերը, սկզբունքները, նյութը և տեխնիկան՝ մտահղացման իրականցման համար **(Կերպ.կիր.հիմն.3,4)**:
- Վերլուծում է, թե ինչպես էին փոխվում ժամանակի ընթացքում արտաքին աշխարհի արտացոլման ուղիները արվեստում **(Կերպ.կիր.հիմն.3,4)**:
- Համեմատում է տարբեր մշակույթների և դարաշրջանների արվեստի ստեղծագործությունները, դատողություն է անում նրանց գեղարվեստական բնութագրիչների մասին, արտահայտում սեփական վերաբերմունքը **(Կերպ.կիր.հիմն.4)**:
- Բառացիորեն և գրավոր դատողություն է անում արվեստի նմուշների վրա տարբեր համատեքստերի ազդեցության մասին **(Կերպ.կիր.հիմն.4)**:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 3/1

<table>
<tr><td colspan="3">Դասեր 1 - 4 Միավորող թեմա. Աշխարհը մեր շուրջը</td></tr>
<tr><td>Հարց և ենթահասկացություններ</td><td>Հանգուցային հարց/հարցեր</td><td>Համալիր առաջադրանքներ</td></tr>
<tr><td>Տարրեր.<br>գույն, ձև, ծավալ, լուսաստվեր, տոն, ֆոնի և պատկերի փոխհարաբերություն<br><br>Սկզբունքներ<br>հավասարակշռություն, համաչափություն/անհամաչափություն, դինամիկա/ստատիկա, համամասնություն, մասշտաբ, հեռանկար, շեշտադրում<br><br>Բնագավառներ.<br>հաստոցային գեղանկարչություն<br><br>Ժանրեր.<br>նատյուրմորտ, բնանկար<br><br>Կերպարվեստի տեխնիկա.<br>նկարչություն, գեղանկարչություն<br><br>Դարաշրջան, ոճ, հոսանք.<br>տարբեր</td><td>• Կարելի՞ է արդյոք նատյուրմորտի հիման վրա որոշել դարաշրջանը և երկիրը:<br><br>• Շրջակա միջավայրի ո՞ր գործոնները կարող են ազդել աշխատության գեղարվեստական ձևի (ոճի, հոսանքի, կատարման ձևի, գեղարվեստական պատկերավորման սկզբունքների, տարրերի) վրա:<br><br>• Կարո՞ղ ենք արդյոք ըստ նատյուրմորտի դատողություն անել, թե ինչ էր հետաքրքրում, ինչ էին սիրում, ինչ էին հավանում այն ժամանակվա մարդիկ:<br><br>• Ի՞նչ է հեռանկարը:<br>• Ի՞նչ էֆեկտ կտա հեռանկարի սկզբունքի կիրառումը բնանկար նկարելիս:<br><br>• Ի՞նչ տարբերություն կա ուղիղ և հակադարձ հեռանկարների միջև:<br>• Ի՞նչ տարբերություն կա գծային և օդային հեռանկարների միջև:<br>• Ի՞նչ սկզբունքներով կարելի է արտացոլել օդային հեռանկարը:</td><td rowspan="2">Նատյուրմորտ.<br>ա) հասարակ մատիտով<br>բ) գուաշով կամ ջրաներկով:<br><br>Բնանկար<br>գծային և օդային հեռանկարի օգտագործմամբ:</td></tr>
<tr><td colspan="2">Պատասխաններ հանգուցային հարցերին.<br>▪ Ըստ նատյուրմորտի՝ կարող ենք դատողություն անել, թե ինչպիսին էր այն կոնկրետ դարաշրջանի տարբեր սոցիալական խավերի մարդկանց ապրելակերպը, հետաքրքրությունները, ինչ էին հավանում և երբեմն նույնիսկ այն, թե որ երկրների հետ է առևտուր անում այն դարաշրջանում այն երկիրը:<br>▪ Հեռանկարը գեղարվեստական սկզբունք է, որը հնարավորություն է տալիս տարածության մեջ առարկաներն այնպես արտացոլել, ինչպես դրանք տեսնում ենք իրականում (աստիճանաբար հեռացում, փոքրացում, մշուշոտում):</td></tr>
</table>

- Գծային հեռանկարում զուգահեռ հորիզոնական գծերը համաքվում են մեկ կետում, երևակայական հորիզոնական գծի վրա: Համապատասխանաբար, բոլոր նկարներում արտացոլված օբյեկտը փոքրանում է դիտման կետի ուղղությամբ:
- Օդային հեռանկարի սկզբունքը, առարկաների աստիճանաբար բացացումով և մշուշոտումով, ստեղծում է հեռավորության իրական ընկալման պատրանք:

## 1 Նատյուրմորտ կամ շրջապատը մոտ տեսարանից

«Նատյուրմորտ» թեմայի նպատակն է աշակերտը գիտակցի, որ այս ժանրը միայն գեղեցիկ իրեր արտացոլող նկարների ամբողջություն չէ: Յուրաքանչյուր նատյուրմորտ որոշակի բովանդակություն կրող է: Հաճախ նկարիչները ակամա, երբեմն էլ նպատակաուղղված իրենց համար կարևոր ասելիքը և հույզերը հենց իրերի համադրությամբ են փոխանցում մեզ, որը գույնով, լուսավորումով և վրձնագծերով նույն կերպ են հարստացնում, ինչպես մենք հարստացնում ենք մեր արտաբերված բառերը արտահայտչականությամբ և ձայնի տեմբրով:

- **Հետազոտություն** (ինքնուրույն աշխատանք).

Գտնել տարբեր դարաշրջաններում ստեղծված նատյուրմորտներ և թեմատիկորեն տեսակավորել, կազմակերպել որպես թվային ալբոմ, պատրաստել զեկուցում և ներկայացնել:

- **Վերլուծություն.**

Նկարագրել դասագրքում տրված նկարազարդումները, համեմատական վերլուծություն.

Նկարազարդումները ներկայացնելիս աշակերտն ուշադրությունը պետք է կենտրոնացնի նատյուրմորտում պատկերված իրերին և դրանց արտացոլման սկզբունքներին, օրինակ՝ ռեալիստական/պայմանական, ծավալ, լուսաստվեր, գունային գամմա, տոնայնություն (սառը/տաք), կոլորիտ, կոմպոզիցիա, հեռանկար, համամասնություն, մասշտաբային հարաբերակցություն և այլն:

**Հարցեր նախապես ունեցած գիտելիքի ակտիվացման համար.**

- Ի՞նչ է մեզ պատմում նատյուրմորտը: Ի՞նչ տեղեկություն են փոխանցում առարկաները:
- Ինչպե՞ս են ժամանակի ընթացքում փոխվում արտաքին աշխարհին արտացոլելու ձևերն ու սկզբունքները:

**Պատասխաններ.**

- Ըստ նատյուրմորտում պատկերված առարկաների և դրանց պատկերման գեղարվեստական սկզբունքների մենք կարող ենք ճանաչել մշակույթը, երկիրը, դարաշրջանը, ժամանակաշրջանը:

- Տարբեր դարաշրջաններում նատյուրմորտը պատկերվում էր հարթ ու պայմանական կամ ծավալուն ու ռեալիստորեն:
- Նատյուրմորտը որևէ ժանրի նկարում օժանդակ գործառույթ է կատարում կամ ստեղծվում է որպես ինքնուրույն գործ:

**Քննարկման հարցեր.**

- Նատյուրմորտով կարո՞ղ ենք դատողություն անել, թե ինչպիսի միջավայր է եղել այդ ժամանակ, ինչպես էին ապրում, ինչով են հետաքրքրվել, ինչ էին սիրում, ինչ էին հավանում այն ժամանակվա մարդիկ:
- Շրջակա միջավայրի ի՞նչ գործոններ կարող են ազդել նատյուրմորտների գեղարվեստական ձևի (ոճի, հոսանքի, կատարման ոճի, գեղարվեստական պատկերավորման միջոցների, սկզբունքների) վրա:

**Ենթադրյալ պատասխաններ**.

- Տարբեր դարաշրջաններում մարդիկ ապրում էին տարբեր իրերի միջավայրում: Իրերը տարբերվում են դիզայնով, նյութով, նպատակներով ՝ կախված նրանից, թե որ դարաշրջանին կամ երկրին են պատկանում: Նկարում պատկերված իրերը ցույց են տալիս նաև մարդկանց սոցիալական վիճակը և կարգավիճակը: Դրանից ելնելով՝ մենք կարող ենք դատողություն անել, թե երբ և որտեղ է կատարված նատյուրմորտը:

**Գործնական աշխատանք**

**· Նատյուրմորտներ հավաքել և լուսանկարել (տնային առաջադրանքներ).**

<u>Նյութ.</u>

կենցաղային իրեր, աշակերտի անձնական իրեր,
թվային տեսախցիկ, համակարգիչ, ինտերնետի հասանելիություն:

<u>Առաջադրանքի պայմանները</u>.

Տեսակավորել երեք տարբեր նատյուրմորտներ.

- Միրված իրերից կազմված նատյուրմորտը, որը հարմարավետության տրամադրություն է ստեղծում:
- Տոնական նատյուրմորտ, որը ձեզ լավ տրամադրություն է հաղորդում:
- Նատյուրմորտ, որն «արթնացնում է» քաղցր հիշողություններ:

Յուրաքանչյուր նատյուրմորտ պետք է համապատասխան բովանդակություն ունենա, որպեսզի ավելի լավ ցուցաբերի հեղինակի բնավորությունը, հետաքրքրությունները:

Աշակերտները լուսանկարում են բոլոր երեք նատյուրմորտները և դրանք վերբեռնում դասարանի բլոգում:

| | |
|---|---|
| Որպես լրացուցիչ ակտիվություն՝ ուսուցիչը կարող է աշակերտներին առաջարկել՝ ըստ ներկայացված լուսանկարների, բացահայտել հեղինակին, նրա բնավորությունը կամ հետաքրքրությունները:<br><br>▪ **Ապլիկացիա** (ինքնուրույն աշխատանք)<br><u>Նյութ.</u><br>գունավոր թերթեր կամ ամսագրեր<br>սոսինձ<br>մկրատ<br><br>Ընտրի՛ր քո կողմից հավաքած կամ լուսանկարած նատյուրմորտներից որևէ մեկը և ստեղծի՛ր նույնպիսի աշխատանք ապլիկացիայի սկզբունքով:<br><br>**2 Բնանկար կամ միջավայրը հեռավոր տեսարանով**<br><br>Ի՞նչ է բնանկարը: Բնանկարը մեզ շրջապատող անծայրածիր աշխարհն է, որը երբեմն հիացնում է մեզ, իսկ երբեմն այն նույնիսկ չենք նկատում: Գեղեցիկ կամ տգեղ, մռայլ կամ հմայիչ, այն միշտ մեր շուրջն է, մենք այն տեսնում ենք ամենուր, ուր որ նայում ենք ...<br><br>Նկարչության մեջ բնանկարը և՛ անկախ ժանր է, և՛ որոշ այլ ժանրերի ուղեկցող ֆոն:<br>Տարբեր ժանրերի ստեղծագործություններում ֆոնային բնանկարը պատմությունը պատմելու մաս է կազմում: Այն հստակեցնում է իրավիճակը և սրում մեր տրամադրվածությունը:<br>Կարևոր է, որ աշակերտները ցուցադրական նյութը դիտելիս ուշադրություն դարձնեն նրան, թե ինչ ծանրաբեռնում է տալիս բնապատկերը նկարին, ինչ ապրում է առաջացնում նրանցից յուրաքանչյուրը և ինչու:<br>* Ցանկացած նկար դիտելիս՝ աշակերտը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ մանրամասներին.<br>▪ Բնանկարը և դրա պատկերման եղանակները. ինչպես են պատկերում լեռները, ցածրադիր վայրերը, ուրբանային (քաղաքային) կամ գյուղական տեսարանները՝ օդային կամ գծային հեռանկարով:<br>▪ Տարվա սեզոնը, եղանակը և դրանց պատկերման ձևերը (գունային գամմա, տոնայնություն (սառը/տաք), կոլորիտ, և այլն): Գրաֆիկական լանդշաֆտի դեպքում ուշադրություն է դարձվում գծերի, նրբագծերի բնույթին:<br><br>**Ակտիվություններ.**<br>▪ Դասագրքում գտի՛ր և նկարագրի՛ր (բանավոր կամ գրավոր) տարբեր ժանրերի ստեղծագործություններին ուղեկցող միջավայրը: | |

- Գտի՛ր Կանալետտոյի վենետիկյան բնանկարներ G Google Arts & Culture կայք-էջում: Ընտրի՛ր որևէ մեկը, խոշորացրո՛ւ և վայելի՛ր մանրամասները:
- Գտի՛ր դասագրքում տրված բնապատկերները G Google Arts & Culture կայք-էջում: Մեծացրո՛ւ պատկերը և դիտի՛ր վրձնագծերը:
- Դիտի՛ր Դավիթ Կակաբաձեի «Իմերեթի՛, մա՛յր իմ» նկարը: Ո՞ր ժանրին կհատկացնեիր այն՝ դիմանկարին, բնանկարին, թե՝ երկուսին էլ:

**Պատասխան**. Դավիթ Կակաբաձեի նկարը դիմանկար է բնանկարի ֆոնին:

- ***Թվային կոլաժ*** (տնային առաջադրանք):

- Ընտրի՛ր երկու նկար. մեկ ֆիգուրով կամ երկու ֆիգուրով կոմպոզիցիա և մեկ բնապատկեր:
- Երկուսն էլ հիշի՛ր համակարգչում:
- Բացի՛ր դրանք նկարչական ծրագրով (Paint):
- Ֆիգուրը կտրելու-հանելու համար ընտրի՛ր (Select) գործառույթը և սեղմի՛ր ազատ ձև նշելու (free form selection) գործիքը:
- Նուրբ նշի՛ր ֆիգուրի ուրվագծերը և (copy) գործառույթով մտապահի՛ր նշված հատվածը:
- Բացի՛ր բնապատկերի ֆայլը և (Paste) գործառույթով դի՛ր նշված ֆիգուրը բնապատկերի վրա:
- Ֆիգուրի համար գտի՛ր տեղ և չափ:
- Ֆիգուրի շուրջը սպիտակ ֆոնը հանելու համար, սեղմի՛ր թափանցիկ ընտրություն (Transparent selection) գործառույթը:
- Վերնագրի՛ր և մտապահի՛ր քո թվային աշխատությունը (Save):
- Վերբեռնի՛ր բնօրինակները և սեփական աշխատանքներդ քո ալբոմում կամ բլոգում:
- Ընկերներով դիտե՛ք միմյանց աշխատանքները և դատողությո՛ւն արեք, թե ինչն է փոխվել նկարում ֆոնի պատճառով:

## 3 Հեռանկար

Ակտիվություններ ուսուցչի ընտրությամբ (դասարանական/տնային)

- Վարժի՛ր ձեռք. դիտի՛ր դասագրքում տրված օրինակները հեռանկարի նմուշներով և փորձի՛ր նկարել նմանատիպ նկարներ:

* Առաջադրանքը հեշտացնելու համար աշակերտը կարող է նկարից պակասեցնել որոշ մանրամասներ (աթոռներ, պատուհաններ և այլն): Բավական է, որ նա ճիշտ նկարի հիմնական գծերի և դրանցով սահմանափակվող հարթությունների ուղղությունը:
<u>Օրինակներ գծային հեռանկար նկարելու վարժման համար</u>







- Նկարի՛ր քո սենյակը հասարակ մատիտով, օգտագործելով գծային հեռանկար, մեկ հավաքման կետով:
- Նկատի՛ ունեցիր. որպեսզի երկչափ նկարային հարթության վրա ստեղծես եռաչափ տարածության պատրանք, բոլոր ուղիղ գծերը, որոնք իրականության մեջ հորիզոնական են, նկարում պետք է ուղղես դեպի հավաքման կետ:
- Նկարի՛ր ուրբանային կամ քաղաքային բնանկար՝ օգտագործելով գծային հեռանկար:
- Գծային հեռանկարի վարժություն. դասագրքում բերված օրինակներից նմանատիպ նկարներ նկարել:
- Դիտի՛ր դասագրքում տրված նկարազարդումները: Գտի՛ր հակադարձ հեռանկարի օրինակով նկարներ և փորձի՛ր նկարել նմանատիպ կոմպոզիցիա՝ օգտագործելով ուղիղ հեռանկար:

* Ցանկալի է նկարել հասարակ մատիտով:
Աշակերտներից չի պահանջվում ճշգրիտ պատկերել նկարում պատկերված մարդկանց: Բավական է պայմանականորեն նշել դրանց ուրվանկարները և կոմպոզիցիայի այլ մանրամասներ:
Հավանական է, որ հակառակ հեռանկարում պատկերված մանրամասներն ուղիղ նկարելը փոխի պատկերի կոմպոզիցիան՝ հնարավոր է, որ ուղիղ նկարված առարկաները ծածկեն այլ մանրամասներ:

**4 Փրկությունը բնության մեջ է**

**Հետազոտություն** (ինքնուրույն աշխատանք):
- Գտի՛ր տարբեր դարաշրջաններում ստեղծված բնանկարների նմուշներ:
  Տեսակավորի՛ր բնանկարներն ըստ դարաշրջանի և վերբեռնի՛ր թվային ալբոմում:
  Կետերով ձևակերպի՛ր յուրաքանչյուր դարաշրջանին հատուկ գեղարվեստական տարրերն ու սկզբունքները:

- Դասագրքում գտի՛ր Վերածննդի դարաշրջանի նկարիչների նկարներ, որոնցում օգտագործված է օդային հեռանկար: Դիտի՛ր դրանք և T գծապատկերի վրա ձևակերպի՛ր օդային հեռանկարի գեղարվեստական նշաններ: Ձախ կողմում գրի՛ր այն նշանները, որոնք բնորոշ են մոտ տեսարանին, իսկ աջ կողմում՝ այն նշանները, որոնք ցույց են տալիս հեռավոր տեսարանը:
- Կազմի՛ր կլասիցիզմին և ռոմանտիզմին բնորոշ գեղարվեստական սկզբունքների համեմատական T սխեմա:

<u>Կլասիցիզմին և ռոմանտիզմի համեմատական T սխեմայի ենթադրյալ լրացված սխեմա.</u>

| Կլասիցիզմ | Ռոմանտիզմ |
|---|---|
| Կարգուկանոն կոմպոզիցիայում և կոլորիտում: Ստատիկա, հանգստություն, չափավորություն: | Դինամիկ, «փոթորկուն» կոմպոզիցիա, աշխույժ կոլորիտ: Հուզականություն, անսանձ, փոթորկուն կամք, բորբոքված կրքեր, կրքերի բախում, պայքար: |
| Թեմա. Հեռավոր հերոսական անցյալ, Դասական Հունաստանի և Հռոմի պատմությունը, Դիցաբանություն: | Թեմա. Երևակայություն, Հերոսություն, Էկզոտիկա, Լեգենդներ, Պայքար, Որսորդություն, Արդիականություն, Կոնֆլիկտ, Լավ եղանակ, Մարտահրավեր, Դիմակայություն ձանձրալի առօրյային: |
| Տեխնիկա. հարթ, չկա վրձնախազի հետք: Պատկերը քարացած է, ստատիկ, մինչև վերջ գծված մանրամասեր, ակադեմիական ձեռագիր: | Տեխնիկա. արագ վրձնախազ: Դրամատիկ, կոնտրաստային լուսավորում: Պատկերը շարժական է, դինամիկ: |
| Գիտակցության գերակայություն | Զգացմունքների գերակայություն |

<u>Օդային հեռանկարի բնութագրիչների T սխեմա.</u>

| Մոտ | Հեռու |
|---|---|
| Սուր<br>Մանրամասնեցված<br>Հստակ<br>Ջերմ կոլորիտ | Աղոտ<br>Ընդհանրացված<br>Մշուշապատ<br>Սառը կոլորիտ |

| | |
|---|---|
| **Գործնական աշխատանք.**<br>▪ Հասարակ մատիտով երևակայությամբ նկարի՛ր բնանկար՝ օդային հեռանկարի կիրառմամբ:<br>▪ Ջրաներկով երևակայությամբ նկարի՛ր բնանկար՝ օդային հեռանկարի կիրառմամբ<br>▪ Դիտի՛ր Դևիդ Հոկնի «Թղթախաղ խաղացողները»: Նկարի՛ր նույնպիսի նկար՝ գծային հեռանկարի օգտագործմամբ:<br><br>**Մեթոդական հանձնարարականներ համալիր առաջադրանքների համար.**<br><br>**Նատյուրմորտ.**<br><br><u>Նյութ.</u><br>Իրեր նատյուրմորտ հավաքելու համար<br>Նկարչության թերթեր<br>Հասարակ մատիտներ<br>Գուաշ կամ ջրաներկ<br><br><u>Առաջադրանքի պայմանը.</u><br><br>Դասավորի՛ր և նկարի՛ր նատյուրմորտ<br>ա) հասարակ մատիտով,<br>բ) գուաշով կամ ջրաներկով:<br><br>Նատյուրմորտը հավաքելիս որոշի՛ր, թե ինչպես լավագույնս բաշխել իրերը.<br>▪ Միմյանց մոտ, այնպես, որ միմյանց ծածկեն թե՝ իրարից հեռավորության վրա, այնպես, որ զգացվի տարածությունը:<br>▪ Որոշի՛ր, թե ինչպիսի կոմպոզիցիա կսազի իրերին՝ համաչափ, հավասարակշռված կամ անհամաչափ, մի կողմից «ծանրացած»:<br>▪ Որտեղի՞ց է նրանց լուսավորությունն ավելի լավ:<br>Ինչպիսի՞ ֆոն կսազի նատյուրմորտին: Անհրաժե՞շտ է արդյոք ծալազարդում և այլն:<br>▪ Բոլոր կողմերից դիտի՛ր նատյուրմորտը և ընտրի՛ր լավագույն տեսարանը:<br>▪ Նախքան նատյուրմորտ նկարել սկսելը, մտածի՛ր, թե ինչպիսի ռակուրս կընտրես նատյուրմորտ նկարելու համար:<br>▪ Ինչպե՞ս կտեղավորես կոմպոզիցիան թղթի վրա՝ ուղղահայաց, թե՞ հորիզոնական: | |

- Նատյուրմորտով կլցնե՞ս թերթը, թե՞ տարածություն կթողնես:
- Ի՞նչ սկզբունքով կկատարես աշխատությունը. կփորձե՞ս ռեալիստորեն արտացոլել իրերը, թե՞ պայմանական, հարթ լուծմանը նախապատվություն կշնորհես:
- Նկարելիս ուշադրություն դարձրո՛ւ առարկաների փոխադարձ դասավորությանը կոմպոզիցիայում, դրանց ձևին, կազմվածքին, լուսաստվերին, համամասնություններին, մասշտաբային հարաբերակցությանը, ֆոնին:
- Աչքով «չափի՛ր» յուրաքանչյուր առարկայի բարձրությունն ու լայնությունը և համեմատի՛ր այն հարևան իրերի հետ:
- Վերհիշի՛ր, թե ինչ սկզբունքով է ջրաներկով ձեռք բերվում տոնային աստիճանավորումը:
- Ինչպե՞ս է գուաշի ներկով ձեռք բերվում տոնային աստիճանավորումը:
- Գույնի աստիճանավորո՞ւմ կօգտագործես, թե՞ հակադիր գույներ:
- Աշխատանքն ավարտելուց հետո լրացրո՛ւ ռեֆլեքսիայի հարցաշարը:

**Բնանկար.**

Նկարի՛ր բնանկար, որը քո շրջակա միջավայրը կամ քո հոգևոր վիճակն է արտացոլում:

- Մտածի՛ր՝ ինչպիսի՞ն է քո ժամանակվա դիմանկարը: Ինչպիսի՞ն է քո շրջակա միջավայրը:
- Համեմատի՛ր ասոցիատիվ ցանցը: Գրի՛ր քո շրջակա միջավայրի բնութագրիչները.
  Յուրաքանչյուր բնութագրիչի կողքին գրի՛ր, թե ինչպիսի՞ գեղարվեստական սկզբունքներ և տարրեր են համապատասխանում դրա հատկանիշների ցուցաբերմանը:

- Մինչև կսկսես նկարել, մտածի՛ր՝ թերթի ինչպիսի՞ կողմնորոշում կհամապատասխանի քո մտահղացմանը՝ հորիզոնակա՞ն, թե՞ ուղղահայաց:
- Ի՞նչ սկզբունքներով ես գերադասում արտացոլել տարածությունը:
- Օգտագործի՛ր գծային և օդային հեռանկար: Մտածի՛ր՝ որտեղ կլինի գծերի հավաքման կետը: Մտածի՛ր ռակուրսի մասին, որտեղի՞ց ես ուզում մեզ ցույց տալ բնանկարը:

- Ինչպիսի՞ ուժգնության և մգության գույներ կօգտագործես մոտ և հեռավոր տեսարանում:
- Հիշի՛ր, թե ինչ սկզբունքով է ջրաներկով ձեռք բերվում տոնային աստիճանավորումը:
- Ի՞նչ սկզբունքով է գուաշի ներկով ձեռք բերվում տոնային աստիճանավորումը:
- Աշխատանքն ավարտելուց հետո լրացրո՛ւ ռեֆլեքսիայի հարցաշարը:

**Ռեսուրսներ.**

Էռնստ Գոմբրիխ, Արվեստի պատմություն, Լոգոս պրեսի, 2012 թ.
https://bit.ly/2TZ3R3d

Համաշխարհային արվեստը, Նանա Մաճարաշվիլի, Նինո Սիլագաձե, «Մերիդիանի», Թբ., 2010։

Արվեստի պատմություն (XVI-XVII դարերի Եվրոպան), (XVIII դարից մինչև օրս), Մերիլին Սթոքսթեդ, Մայքլ Վ.Քոթրեն, Թբ., 2018։

Լրացուցիչ ցուցադրական նյութ.
Հոլանդական նատյուրմորտներ.
Ֆրանս Սնեյդերս, 1640 (տեսակ՝ որսորդական)
https://vernisazh.ucoz.com/_ph/5/723495352.jpg

Կլարա Պետերս, 1630 (տեսակ՝ խոհանոց).
https://es.wikipedia.org/wiki/Archivo:Clara_Peeters_-_Still_Life_with_Crab,_Shrimps_and_Lobster_-_99.308_-_Museum_of_Fine_Arts.jpg

Աբրահամ վան Բեյերեն, 1660 (տեսակ՝ ձկներ)
https://commons.wikimedia.org/wiki/File:Abraham_van_Beijeren_-_Still_Life_of_Fish_on_the_Shore_at_Egmond_aan_Zee.jpg

Էդվարդ Կոլյեր, 1662 (տեսակ՝ վանիտաս կամ «բուսական նատյուրմորտ»)
https://commons.wikimedia.org/wiki/File:EDWAERT_COLLIER_VANITAS_STILL_LIFE.jpg

Էդվարդ Կոլյեր, 1698 (տեսակ՝ խաբկանք կամ պատրանքային հնարք)
https://commons.wikimedia.org/wiki/File:Edward_Collier_-_Letter_rack_-_Google_Art_Project.jpg

Ֆրանս Սնայդերս և Սիմոն դե Վոսի, XVII դ. I կես. (տեսակ՝ «վաճառասեղան»)
https://ru.wikipedia.org/wiki/%D0%A4%D0%B0%D0%B9%D0%BB:Frans_Snyders_-_Still_Life_with_Fruit_and_Vegetables.jpg

Հոլանդական նատյուրմորտներ.
https://www.gettyimages.ca/photos/dutch-still-life-painting?phrase=dutch%20still%20life%20painting&sort=mostpopular#license

Հեռանկարը սկսնակների համար
https://www.erikalancaster.com/art-blog/perspective-for-beginners-how-to-use-1-and-2-point-perspectives-to-create-great-artwork

https://xn----ptbdbgndbgtdm2excr.xn--p1ai/chertezh-2/chertezhi-komnaty-chertezh-komnaty-s-razmerami.html

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**
**Կերպարվեստի տեխնիկա.**

- Դիտում է շրջակա միջավայրը և աշխատության մեջ ստեղծագործաբար արտացոլում դիտելու արդյունքում հարուցված տպավորությունները, գաղափարները, հույզերը, զգացմունքները **(Կերպ.կիր.հիմն.1)**:
- Աշխատություն ստեղծելիս՝ ընտրում է մտահղացմանը համապատասխան նյութեր ու տեխնիկա և կիրառում համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ (գիծ, գույն, բիծ, ձև, պատկերավորման հնարավորություններ, հեռանկար, մասշտաբ, կոմպոզիցիոն բաշխում, հավասարակշռություն և այլն) **(Կերպ.կիր.հիմն.1,2)**:
- Գրավոր և բանավոր վերլուծում է իր/ուրիշի աշխատության մեջ կիրառած գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները (գույնի, բծի պատկերավորման հնարավորությունները, հեռանկար, մասշտաբ, կոմպոզիցիոն բաշխում, հարաբերակցություն և այլն) և խոսում է սեփական հույզերի մասին **(Կերպ.կիր.հիմն.3)**:

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**

- Խոսում է արվեստի որոշ ժանրերի (բնանկար, նատյուրմորտ) առաջացման հնարավոր պատճառների մասին, բերում է մի քանի օրինակ և դատողություն անում, թե ինչպես էին փոխվում բնանկարի, նատյուրմորտի արտացոլման յուրահատկությունները ժամանակի հետ **(Կերպ.կիր.հիմն.4)**:
- Վերլուծում է, թե ինչպես են կիրառված տարբեր ոճերի, հոսանքների, ժամանակների աշխատություններում պատկերավորման տարրերը, սկզբունքները, նյութը և տեխնիկան մտահղացման իրականացման համար **(Կերպ.կիր.հիմն.3,4)**:
- Վերլուծում է, թե ինչպես էին փոխվում ժամանակի ընթացքում արտաքին աշխարհի արտացոլման ուղիներն արվեստում **(Կերպ.կիր.հիմն.3,4)**:
- Համեմատում է տարբեր մշակույթների և դարաշրջանների արվեստի ստեղծագործությունները, դատողություն է անում նրանց գեղարվեստական բնութագրիչների մասին, արտահայտում սեփական վերաբերմունքը **(Կերպ.կիր.հիմն.4)**:
- Բառացիորեն և գրավոր դատողություն է անում արվեստի նմուշների վրա տարբեր համատեքստերի ազդեցության մասին **(Կերպ.կիր.հիմն.4)**:

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքի գնահատման մասին.**

**Մատիտով նկարած նատյուրմորտ.**

- Կոմպոզիցիան գիտակցված է, համապատասխանում է աշակերտի կողմից հավաքած նատյուրմորտին: (0–1 միավոր)
- Առարկայի ուրվագիծը համապատասխանում է նատյուրմորտի իրերի ձևին: (0–3 միավոր)
- Աշակերտը գիտակցված է փոխանցել ծավալը: (0–3 միավոր)
- Լուսաստվերը փոխանցված է լուսավորմանը համապատասխան: (0–3 միավոր)

**Գեղանկարչական նատյուրմորտ.**

- Թերթի կողմնորոշումը համապատասխանում է նատյուրմորտի բովանդակությանը: (0–1 միավոր)
- Պահպանված են առարկաների ձևը, համամասնությունները և մասշտաբային հարաբերակցությունը: (0–3 միավոր)
- Աշակերտը միտումնավոր է ընտրել պայմանական կամ ռեալիստական լուծում: (0–1 միավոր)
- Աշակերտը պատշաճ կերպով է կիրառել գեղարվեստական սկզբունքներ ու տարրեր: (0–3 միավոր)
- Աշակերտը տիրապետում է գուաշի կամ ջրաներկի տեխնիկաներին: (0–3 միավոր)

**Բնանկար.**

- Բնանկարը նկարված է գծային հեռանկարի կիրառմամբ: (0–1 միավոր)
- Աշակերտը նկար ստեղծելու համար կիրառել է օժանդակ գծեր, նշել է դիտման կետը: (0–3 միավոր)
- Շենքերի հորիզոնական հարթությունները հավաքվում են մեկ կետում: (0–3 միավոր)
- Բնանկարում պատկերված շենքերը չափով փոքրանում են հավաքման կետի ուղղությամբ: (0–3 միավոր)

Ասոցիատիվ ցանց.

- Աշակերտը կազմել է ասոցիատիվ ցանց:
- Թվարկված բնութագրերը համապատասխանում են շրջակա միջավայրի բնութագրերին:
- Անվանված գեղարվեստական սկզբունքներն ու տարրերը համապատասխանում են բնանկարում կիրառվելիք սկզբունքներին ու տարրերին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ 3/2

| **Դասեր 5 - 8** | **Միավորող թեմա.** Ճարտարապետությունը և շրջակա միջավայրը | |
|---|---|---|
| **Հարց և ենթահասկացություններ** | **Հանգուցային հարց/հարցեր** | **Համալիր առաջադրանքներ** |
| **Տարրեր.**<br>գույն, ձև<br><br>**Սկզբունքներ.**<br>ռիթմ, համաչափություն, համամասնություն, մասշտաբ, զարդանախշ, ներդաշնակություն<br><br>**Բնագավառներ.** ճարտարապետություն (պաշտամունքային, հասարակական, վարչական, տնտեսական, արտադրական, պաշտպանական, հուշային)<br><br>**Կերպարվեստի տեխնիկա.**<br>կառուցքավորում<br><br>**Դարաշրջան, ոճ, հոսանք.**<br>տարբեր դարաշրջանների և ոճի ճարտարապետության նմուշներ | • Շրջակա միջավայրի ի՞նչ գործոններ կարող են որոշել շենքի տեսքը:<br>• Ի՞նչ դեր ունի ճարտարապետությունը հասարակության կյանքում:<br>• Կարո՞ղ է արդյոք ճարտարապետը փոխել շրջակա միջավայրը և ինչպե՞ս:<br>• Ի՞նչ ազդեցություն ունի տեխնոլոգիաների զարգացումը ճարտարապետության վրա:<br>• Ինչո՞ւ պետք է նախատեսի ճարտարապետը կլիմայական պայմանները:<br>• Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են պետք ճարտարապետին ստեղծագործական գործունեության համար:<br>• Ի՞նչն է պայմանավորում ճարտարապետական ոճը, շենքի արտաքին տեսքը:<br>• Ի՞նչ է ճարտարապետության գեղարվեստական լեզու:<br>• Ի՞նչ նշաններով ենք շենքը վերագրում այս կամ այն դարաշրջանին:<br>• Ի՞նչ կարող ենք իմանալ տարբեր դարաշրջանների մասին՝ ըստ ճարտարապետական կառույցների: | **Տարվա ընթացքում ձեռք բերված գիտելիքի և ունակությունների ամփոփիչ թեստ:**<br>(Թեստի նմուշը տե՛ս մատրիցայից ներքև:)<br><br>**Ամփոփիչ նախագիծ. «Հանդուրժող քաղաք»**<br>(անհատական և խմբային աշխատանք)<br><br>Նախագծի խնդիրը՝ անցած նյութի հիման վրա աշակերտները պատրաստեն մանրակաղապար, որում մեկ «քաղաքում» կհավաքվեն տարբեր |
| **Պատասխաններ հանգուցային հարցերին.**<br>✓ Ճարտարապետական շինության տեսքը, դրա ոճը սահմանում են «բնական գործոնները»՝ աշխարհագրությունը, ռելիեֆը, լանդշաֆտը, կլիման, երկրի ավանդույթները, պատվիրատուի պահանջները, հասանելի շինանյութերն ու տեխնոլոգիաները, ճարտարապետական տաղանդն ու ճաշակը:<br>✓ Ճարտարապետական կառույցը իր ժամանակի հայելին է. շենքի արտաքին տեսքը մեզ պատմում է, թե ինչ քաղաքականություն էր վարում այն ժամանակվա պետությունը (օրինակ՝ պարսպապատված պալատներն ու | | |

<table>
<tr>
<td>
ամրոցները մեզ տեղեկացնում են, որ երկիրը պատրաստ էր հետ մղել թշնամուն, իսկ մոնղոլական վրանները խոսում են այդ ժողովրդի քոչվոր ապրելակերպի մասին), ինչպես նաև, մենք կարող ենք պարզել, թե ինչ տեխնոլոգիաներ կամ ռեսուրսներ ուներ պետությունը, ում ազդեցությունն էր կրում, որքանով էր հզոր նյութական առումով, ինչ պայմաններում էին ապրում այդ երկրի տարբեր խավերի ներկայացուցիչները:<br>
✓ Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան կամ երկիր ունի իր ուրույն գեղարվեստական ավանդույթները, ոճն ու ճաշակը: Այս առանձնահատկությունն արտահայտվում է ճարտարապետական ձևերի և դեկորի մեջ: Նման մանրամասներով է, որ մենք ճարտարապետական շենքում կարող ենք բացահայտել դրա ծագումը:<br><br>
1. Ճարտարապետություն<br>
«Ճարտարապետություն» թեմայի նպատակն է աշակերտներն անեն եզրահանգում, որ<br>
• Աշխարհագրական դիրքը, քաղաքական կարգը, կրոնական համոզմունքները, սոցիալական կարգավիճակը, ավանդույթները, կլիման և շատ այլ գործոններ ազդում են շենքի գեղարվեստական ձևի (ոճի, կատարման ձևի, գեղարվեստական պատկերավորման միջոցների, սկզբունքների, նյութերի և տեխնիկայի) վրա:<br>
• Ճարտարապետությունը երկրի քաղաքականության, կրոնի, հասարակության աշխարհայացքի և ավանդույթների հայելին է:<br>
• Պատմական դարաշրջանների փոփոխությունը փոխել է ճարտարապետության գեղարվեստական սկզբունքները, քանի որ ի հայտ են եկել նոր նյութեր, տեխնոլոգիաներ և ստեղծագործական գաղափարներ:<br>
• Շենքի արտաքին տեսքի որոշիչ գործոններից մեկը օգտագործված շինանյութն է:<br>
• Տարբեր ժամանակների հասարակությունների կողմից ստեղծված ճարտարապետական հուշարձանները միմյանցից տարբերվում են ըստ նրա, թե ինչն էր առավել կարևոր այդ կոնկրետ դարաշրջանում:<br>
• Հասարակության պահանջմունքները որոշում են ճարտարապետական շենքի տեսքը:<br>
• Ճարտարապետությունը կարևոր դեր ունի հասարակության կյանքում:<br>
• Մարդու ստեղծագործությունը կարող է ազդել շրջակա միջավայրի վրա՝ զարդարել կամ աղավաղել այն:<br>
• Ճարտարապետական միջավայրը որոշում է մարդու կյանքի շատ կողմեր:<br>
• Արվեստն ազդում է մարդկային աշխարհայացքի վրա:<br><br>
Քննարկում. (դասարանական ակտիվություն)<br>
Աշակերտները ծանոթանում են դասագրքի տեքստին (Ճարտարապետության համառոտ պատմությունը և նշանակությունը գլուխները), որից հետո դատողություն կանեն հետևյալ հարցերի մասին.<br>
✓ Ի՞նչ է ճարտարապետությունը:<br>
✓ Ինչի՞ն է ծառայում ճարտարապետական արվեստը:<br>
✓ Ի՞նչ նշանակության շինություններ գոյություն ունեն (պաշտպանական, վարչական, պաշտամունքային, հուշային, արտադրական, հասարակական, քաղաքացիական, լանդշաֆտային ...)
</td>
<td>
դարաշրջանների, երկրների և ոճերի շինությունների անհատապես պատրաստված նմուշներ:
</td>
</tr>
</table>

**2. Ճարտարապետությունը և շրջակա միջավայրը**

- **Հետազոտություն/վերլուծություն** (ինքնուրույն աշխատանք).
- Գտի՛ր տաճարի և թատրոնի հատակագծեր կամ ինտերիերի լուսանկարներ:
  Համեմատի՛ր այս երկու տեսակի շենքերի ներքին տարածքի պլանավորումը:

✓ Ի՞նչ նմանություն ու տարբերություն կա այս շենքերի նշանակության միջև:
✓ Ի՞նչ նմանություն ու տարբերություն կա այս շենքերի ներքին տարածությունների միջև:
✓ Ինչո՞վ է պայմանավորված այս նմանությունը կամ տարբերությունը:

**Ենթադրյալ պատասխան.**

| **Տաճար** | **Թատրոն** |
|---|---|
| **Պաշտամունքային** | **Հասարակական կամ հանրային** |
| Տաճարի պլանավորման մեջ առանձնացված է հատուկ տարածք՝ խորան, որտեղ կատարվում են կրոնական և պաշտամունքային ծեսերը: Այն բարձրացված է, որպեսզի բոլորի համար հեշտ տեսանելի լինի: | Թատրոնի պլանավորման մեջ առանձնացված է հատուկ տարածք՝ բեմ, որտեղ տեղի է ունենում ներկայացումը: Այն բարձրացված է, որպեսզի բոլորի համար հեշտ տեսանելի լինի: |
| Խորանի երկայնքով, տեղակայված են հոգևոր ծառայողների համար հատկացված օժանդակ սենյակները, որտեղ պահվում են երկրպագության իրերը՝ հագուստ, սպասք և այլ ատրիբուտներ: | Թատրոնի ետնաբեմն այն օժանդակ աշխատանքային տարածքն է, որտեղից բեմ են բարձրանում դերասանները, և որտեղ պահվում են բեմադրության համար անհրաժեշտ զգեստներն ու այլ ատրիբուտներ: |
| Ինտերիերի մեծոտ տարածքը նախատեսված է ժամասացություններին ներկա որոշ թվով ծխականների համար: | Բեմի դիմաց գտնվող մեծոտ դահլիճը ներկայացմանը ներկա գտնվող բազմաքանակ հանդիսատեսին տեղավորելու համար հատկացված տարածք է: |

### 3. Կլիմա և ճարտարապետություն

**Տվյալների հավաքում, հետազոտում, տեսակավորում** (ինքնուրույն աշխատանք).

- Գտի՛ր և նկարագրի՛ր, թե ինչ շինանյութերով են մարդիկ կառուցում ավանդական բնակելի տները աշխարհի տարբեր մասերում, տարբեր կլիմայական պայմաններում:
- Երկու տարբեր կլիմաների ավանդական բնակելի տների համեմատական վերլուծություն: Նմանություններն ու տարբերություններ գրել աղյուսակում կամ Վեննի դիագրամում:

<u>Նմանություն-տարբերության աղյուսակ լրացնելու նմուշ.</u>

| Երկիր | Անվանում | Կլիմա | Լանդշաֆտ | Շինանյութ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| Գրենլանդիա | իգլու | արկտիկական, ձյունոտ, քամոտ | ուղիղ ցածրավայր | ձյան մեծակտորն եր | Իգլուն կիսագնդի ձև ունի: Այն կառուցելու համար բավական է միայն սուր առարկա: |
| Արևմտյան Վրաստան | օդա | մերձարևադար ձային, խոնավ | տարբեր | փայտ | Խոնավությունից պաշտպանվելու համար կանգնած է քարե սյուների վրա: |

### 8. Ճարտարապետության գեղարվեստական լեզուն

- Գտի՛ր և իրսր հետ համեմատի՛ր տարբեր ոճերի շինությունները և լրացրո՛ւ նմանությունների-տարբերությունների աղյուսակ.

<u>Աղյուսակի օրինակ.</u>

| Դարաշրջան | Ոճ | Երկիր | Ծածկ | Դուռ/ պատուհան | Դեկոր (կամար, սյուն, որմնախորշ, պատշգամբ և այլն) | Քանդակագործ ական դեկոր |
|---|---|---|---|---|---|---|
| Միջնադար | Գոթիկա | Ֆրանսիա | Երկթեք տանիք, շպիլ՝ ծայրաձող | Նետաձև | + | + |
| XVII-XVIII դ. | Բարոկկո | Իտալիա | գմբեթ | ուղղանկյուն, կամարային | + | + |

| | |
|---|---|
| • Գտի՛ր ճարտարապետության յուրաքանչյուր գեղարվեստական սկզբունքի համապատասխան երկուական օրինակ: Պատրաստի՛ր թվային փաստաթուղթ, որում յուրաքանչյուր սկզբունքի անվանման երկայնքով կվերբեռնես համապատասխան օրինակներ:<br>Ցանկալի է, որոնման ժամանակ ուշադրություն դարձնես ոչ թե միանման, այլ միևնույն սկզբունքի տարբեր օրինակների վրա. օրինակ՝ երկու համաչափ շենքերի փոխարեն գտնես համաչափ և անհամաչափ շինության նմուշներ:<br><br>**Ինքնուրույն աշխատանք:**<br><br>• Պայմանական նշանների օգտագործմամբ սեփական բնակարանի կամ դասասենյակի հատակագիծ գծել/նկարել:<br><u>Առաջադրանքի պայմանը.</u><br>Նկարի՛ր քո բնակարանի հատակագիծը: Նկարագրի՛ր և քննարկի՛ր նրա դրական և բացասական գործոնները: Եթե դու ճարտարապետ լինես, ի՞նչը, ինչպե՞ս և ինչո՞ւ կփոխեիր:<br><br>Առաջադրանքը կատարելու համար ցանկալի է, որ աշակերտները նախօրոք ծանոթանան գծագրի պայմանական նշաններին: Պայմանական նշանները կարելի է նկարել գրատախտակի վրա, կամ տպել և բաժանել աշակերտներին:<br><br><u>Հատակագծի վրա պատերի, դռան, պատուհանների և այլ պայմանական նշումների նմուշ.</u><br>պատ<br>պատուհան<br>դուռ<br>դռան բացվածք<br>զուգարան<br>լոգարան<br>ցնցուղ<br>լվացարան | |




Պայմանական նշաններին ծանոթանալուց հետո ուսուցիչը կարող է աշակերտներին առաջարկել պարզ հատակագծի օրինակ և նրանց խնդրի կարդալ: Աշակերտները պետք է որոշեն գծագրի վրա նշված պատուհանները, դուռը: Երկրորդ՝ համեմատական բարդ հատակագծի վրա որոշեն պահոցների նշանակումը, գտնեն թաց կետերի տեղադրությունը, որոշեն, թե դեպի ուր է բացվում դուռը և այլն:





https://www.shutterstock.com/ru/image-illustration/building-flat-plan-furniture-isolated-on-1015385341

Գծագիր կատարելու կանոններին ծանոթանալուց հետո աշակերտներն ինքնուրույն կնկարեն և կգծեն իրենց բնակարանների հատակագծերը:

- Մարզական կառույցի հատակագիծ և մանրակաղապար՝ արտադասարանական (խմբային) աշխատանք.

Յուրաքանչյուր աշակերտ ընտրում է իր համար հետաքրքիր մարզաձև: Գտնում է անհրաժեշտ տեղեկություններ և մտածում այս մարզաձևին համապատասխան շենքի հատակագիծ:

Տարածքը պետք է պլանավորվի գրավոր՝ ինչ պահոցներ են անհրաժեշտ մարզիկների մարզվելու, հանգստանալու, գույքը պահելու, մրցույթ անցկացնելու, հանդիսատեսին տեղավորելու համար և այլն:

Ըստ գրված պլանի, ընտրված մարզաձևի համար կնկարվի կամ կգծվի շինության հատակագիծ:

Պլանի պարագծի և հատակագծի վրա նշված միջնապատերի համաձայն (ստվարաթղթե կտորները պարագծի և միջնապատերը նշող գծերի երկայնքով դասավորելով) կպատրաստվի մանրակաղապար (բաց, առանց ծածկի):

- **Շաքարի** կտորտանքով, դասագրքում տրված նմուշով կամարի մանրակաղապար պատրաստել (խմբային աշխատանք):





- **Բանավեճ թեմայով.** «Մեր շրջակա միջավայրը»:

Աշակերտները դատողություն կծավալեն, թե ինչ է իրենից ներկայացնում ժամանակակից ճարտարապետությունը:
Ուսուցիչն աշակերտների բանավեճը կուղղորդի հետևյալ հարցերով.

- ✓ Ի՞նչ արժեք են հանդիսանում, ինչո՞ւ պետք է հոգ տանել պատմական շենքերի մասին:
- ✓ Ի՞նչ է նշանակում պատմական հուշարձան:
- ✓ Ի՞նչ ենք թողնում սերունդներին: Նայելով ժամանակակից ճարտարապետությանը՝ ի՞նչ պատկերացում կկազմեն ապագա սերունդները XXI դարի մարդկանց մասին:
- ✓ Ապագայում ո՞ր ժամանակակից շենքը կարող է համարվել պատմական հուշարձան:

**Հանձնարարականներ՝ կապված համալիր առաջադրանքների հետ.**

· **Տարվա ընթացքում ձեռք բերված գիտելիքների և ունակությունների ամփոփիչ թեստ.** (Տե՛ս (թեստի նմուշը մատրիցայից ներքև):

Ուսուցիչը կպատրաստի քարտերը:

Յուրաքանչյուր քարտի վրա կգրի մի քանի հարց տարվա ընթացքում անցած նյութից:

Քարտի վրա պետք է գրվի մեկական հարց յուրաքանչյուր թեմայից (ընդհանուր առմամբ 10 հարց):

Ուսուցիչը հարցերի հետ կարող է ներառել հարց-առաջադրանք, որը ներառում է նաև մատիտով պարզ ուրվագծի պատրաստում: Օր.՝ բազիլիկի կառուցվածք, արաբեսկի կամ հեռանկարի օրինակի գրաֆիկական արտացոլում:

Ցանկալի է, որ ուսուցիչն օգտվի դասագրքում առկա հարցերից:

Աշակերտներն ընտրում են սեղանի վրա դրված քարտերից մեկը և գրավոր պատասխանում քարտի վրա գրված հարցերին:

* Սիու և հկկու աշակերտների համար, նրանց ունակությունների նախատեսմամբ, ուսուցիչը պետք է կազմի հատուկ քարտեր:

- **Ամփոփիչ նախագիծ «Հանդուրժող քաղաք» (անհատական և խմբային աշխատանք)**

Նախագծի խնդիրը.

Անցած նյութի հիման վրա աշակերտները կպատրաստեն համատեղ մանրակաղապար, որում մեկ «քաղաքում» կհավաքվեն տարբեր դարաշրջանների ու ոճերի շենքերի անհատականորեն պատրաստված նմուշներ:

Աշակերտները կպայմանավորվեն, թե ով որ դարաշրջանի, երկրի, ոճի կառույցի մանրակաղապար կստեղծի: Ինչպես նաև՝ կհամաձայնեցնեն ենթադրյալ չափերը, որպեսզի յուրաքանչյուր ինքնուրույն ստեղծած մանրակաղապարը հարմարվի ընդհանուր «քաղաքին»:
Կգտնեն համապատասխան դարաշրջանի կառույցների լուսանկարներ: Յուրաքանչյուր աշակերտ կպատրաստի ընտրված շինության նման մանրակաղապար, կամ/և զգեստավորված տիկնիկ:
Ե՛վ մանրակաղապարը, և՛ տիկնիկի հագուստը պետք է համապատասխանեն ընտրված պատմական դարաշրջանի/երկրի բնորոշ նշաններին.

- շինության արտաքին տեսքին,
- կոնստրուկցիայի տեսանելի էլեմենտների (տանիք, դուռ-պատուհան, պատշգամբներ) բնորոշ նշաններին,
- դարաշրջանին, ոճին, դեկորի բնութագրական տարրերին:

**Հանձնարարական.**

- Ընտրված պատմական ժամանակաշրջանի/երկրի համապատասխան հագուստով տիկնիկը կարող է լինել ինչպես ծավալային, այնպես էլ ստվարաթղթի վրա նկարված և կտրած-հանած:
- Ցանկալի է, որ յուրաքանչյուր «թաղամաս» սահմանազատվի պարսպով:

- Սիու աշակերտներին կարող է հանձնարարվել ստվարաթղթի կոնի հիմքի վրա կամ հարթ տիկնիկներ պատրաստել (տե՛ս՝ համալիր առաջադրանք «Պատմական հագուստով զգեստավորված տիկնիկ պատրաստել» առաջադրանքի մատրիցա 2-6, «Ի՞նչ է մեզ պատմում հագուստը»), կարելի է նաև պատրաստ խաղալիքը զգեստավորել:
- Ինչ վերաբերում է ինքնուրույն պատրաստվելիք մանրակաղապարներին, ստվարաթղթի տուփերի հիմքի վրա ստեղծված շինությունների պատուհանները, դուռը և այլ մանրամասեր կարող են լինել նկարված:

Պարզ տիկնիկ պատրաստելու մի եղանակ. https://skillflair.com/diy-dolls/how-to-pake-paper-doll-easy-paper-doll-making-ideas/

Անհատապես պատրաստած մանրակաղապարներով և տիկնիկներով աշակերտները հավաքում են քաղաքի համատեղ մանրակաղապար:

Աշակերտները միասին պլանավորում են համատեղ «քաղաքի» մանրակաղապարի վրա փողոցների և թաղամասերի դասավորությունը: Կձևավորեն թաղամասերը՝ շինությունների ծագմանը համապատասխան մանրամասներով (հրապարակ, պուրակ, քանդակ, շատրվան, ծառեր և այլն), ինչպես նաև՝ պատրաստված զգեստավորված կերպարներով:

Յուրաքանչյուր աշակերտ կպատրաստի կարճ զեկույց, որում կնկարագրի, թե ինչ դարաշրջան է ընտրել և ինչու, ինչ նյութ է գտել, ինչ է բնորոշ նրա կողմից ընտրված դարաշրջանի արվեստին, ինչ իմացավ նորը, ինչ է ներկայացնում նրա կողմից պատրաստված մանրակաղապարը և այլն:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր աշակերտ կլրացնի ռեֆլեքսիայի հարցաշար (տե՛ս հավելվածում):

**Ռեսուրսներ.**

**Ճարտարապետական ոճեր.**

https://www.archdaily.com/900027/the-characteristics-of-12-architectural-styles-from-antiquity-to-the-present-day

https://rehouz.info/arhitekturnye-stili/

https://www.facebook.com/pg/TheMuseumWithoutWalls/photos/?tab=album&album_id=412059012232807&__tn__=-UK-R

**Գնահատման չափանիշներ.**

**Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրեր և սկզբունքներ**

**Կերպարվեստի տեխնիկա.**

- Աշխատություն ստեղծելիս ընտրում է մտահղացմանը համապատասխան նյութեր ու տեխնիկա և կիրառում համապատասխան գեղարվեստական պատկերավորման տարրեր ու սկզբունքներ **(Կերպ.կիր.հիմն.1,2)**:
- Գրավոր և բանավոր վերլուծում է իր/ուրիշի աշխատության մեջ կիրառած գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները և խոսում է սեփական հույզերի մասին **(Կերպ.կիր.հիմն.3)**:

**Տարբեր դարաշրջանի/ուղղության/ոճի արվեստին բնորոշ նշաններ/գեղարվեստական առանձնահատկություններ**
**Կերպարվեստի բնագավառներն ու ժանրերը.**

- Խոսում է արվեստի որոշ ժանրերի (բնանկար, նատյուրմորտ) առաջացման հնարավոր պատճառների մասին, բերում է մի քանի օրինակ և դատողություն անում, թե ինչպես էին փոխվում ճարտարապետության յուրահատկությունները ժամանակի հետ **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Վերլուծում է, թե ինչպես են կիրառված տարբեր մշակույթների և դարաշրջանների ճարտարապետության մեջ ձևերը, սկզբունքները, տարրերը և տեխնիկան՝ մտահղացման իրականցման համար **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Վերլուծում է, թե ինչպես էին փոխվում ժամանակի ընթացքում արտաքին աշխարհի արտացոլման ուղիներն արվեստում **(Կերպ.կիր.հիմն.3,4):**
- Համեմատում է տարբեր մշակույթների և դարաշրջանների ճարտարապետության ստեղծագործությունները, դատողություն է անում նրանց գեղարվեստական բնութագրիչների մասին, արտահայտում սեփական վերաբերմունքը **(Կերպ.կիր.հիմն.4):**
- Բառացիորեն և գրավոր դատողություն է անում ճարտարապետության նմուշների վրա տարբեր համատեքստերի ազդեցության մասին **(Կերպ.կիր.հիմն.4):**

**Լրացուցիչ տեղեկություններ համալիր առաջադրանքների գնահատման մասին.**

**Թեստ** (Թեստը և նրա գնահատումը տե՛ս հավելվածում).

- Ուսուցիչը կգնահատի, թե քանի հարցի է պատասխանել աշակերտը:
- Որքանով ճիշտ և լիարժեք է պատասխանել աշակերտը հարցերին:

**Մանրակաղապար «Հանդուրժող քաղաք»** (առավ. միավոր՝ 10).

- Մանրակաղապարն ավարտված է և կատարված է կոկիկ: (0–1 միավոր)
- Շենքի տեսքը համապատասխանում է ընտրված դարաշրջանին և ոճին: (0–1 միավոր)
- Նախատեսված են դարաշրջանին/ոճին բնորոշ դեկորի տարրերը: (0–3 միավոր)
- Մանրակաղապարն ունի տիկնիկ՝ դարաշրջանին համապատասխան հագուստով: (0–1 միավոր)
- Աշակերտը նախատեսել է իր մանրակաղապարի չափի համապատասխանությունը ընդհանուր մանրակաղապարին: (0–1 միավոր)
- Աշակերտն ակտիվորեն ներգրավված էր համատեղ մանրակաղապարի պլանավորման և հավաքման գործընթացի մեջ: (0–1 միավոր)
- Զեկուցումը գրված է սահուն լեզվով, ունի նկարազարդումներ կամ ուրվանկարներ: (0 – 2 միավոր)

## VIII դասարանի կերպարվեստի և կիրառական արվեստի ամփոփիչ թեստ

Աշակերտ. -------------------------------------------------------------------------------- Ամսաթիվ, ամիս, տարեթիվ ---------------------------------

**1. Ի՞նչ նշանակության ճարտարապետական կառույցներ են ներկայացված նկարներում:**





ա. պաշտպանական,
բ. պաշտամունքային,
գ. հուշային,
դ. հասարակական:

**2. Նկարներում ներկայացված է շենքերի**
ա. ինտերիերը,
բ. էքստերիերը,
գ. պորտալը՝ առաստաղը,
դ. խորանը:

**3. Ո՞ր կրոնին է պատկանում առաջին նկարում ներկայացված շինությունը:**
ա. բուդդայականությանը,
բ. քրիստոնեությանը,
գ. իսլամին
դ. հուդայականությանը:

**4. Ի՞նչ առանձնահատկություն բնորոշ չէ առաջին շինությանը:**
ա. արաբեսկերով լեցուն ճակատամասեր,
բ. գմբեթ,
գ. մինարե,
դ. շպիլ՝ ծայրաձող:

**5. Ո՞ր ճարտարապետական տարրն է ընդհանուր երկու կառույցների համար:**
ա. նետաձև պատուհան,
բ. հենման մույթեր,
գ. արկբուտաններ՝ քարե կիսակամարներ,
դ. գունավոր ճակատամաս:

**6. Ո՞ր ոճին է պատկանում երկրորդ նկարի վրա ներկայացված կառույցը:**
ա. գոթիկային,
բ. բարոկկոյին,
գ. ռոմանականին,
դ. բյուզանդականին:

**7. Երկրորդ նկարի վրա ներկայացված շինությանը բնորոշ է.**
ա. նստած համամասնություններ,
բ. գմբեթավոր ծածկ,
գ. երկայնական և լայնական նավերի հատման մասում վեր խոյացված մինարե,
դ. թեթև, ուղղահայաց ձգված համամասնություններ:

**Ուղղի՛ր նախադասությունները**

8. Գելաթիի տաճարը կրոնական բնագավառի, խճանկարային ժանրի, մանրանկարչական նկարչությունն է զարդարում:

________________________________________

________________________________________

9. Արևելաքրիստոնեական արվեստում քանդակի ժանրը միայն կլոր քանդակի տեսքով զարգացավ:

________________________________________

________________________________________

10. Միջնադարյան արվեստի առաջատար ոճերն էին ճարտարապետությունը, որմնանկարը, խճանկարը, սրբանկարչությունը և մանրանկարը:

________________________________________

________________________________________

**Տեղադրի՛ր բաց թողնված բառը.**

11. Միջնադարյան նկարչության մեջ սրբերի և աստվածաշնչյան սյուժեի փոխանցման կանոնները սահմանում է - - - - - - - -:
12. Ճակատամարտ արտացոլող նկարները պատկանում են - - - - - - - - - - - ժանրին:
13. Ոտքի վրա կանգնած ֆիգուրի կեցվածքը, երբ ծանրությունը մեկ ոտքի վրա է տեղափոխված, իսկ մյուսը թույլ է, կոչվում է - - - - - - - - - - -:
14. Ձվի դեղնուցի հիմքով պատրաստված ներկը կոչվում է - - - - - - - - - - -:

**Դիտի՛ր տվյալ նկարազարդումը և պատասխանի՛ր հարցերին.**



15. Ի՞նչ տիպի հեռանկար է կիրառած տրված նկարում:

16. Բացատրի՛ր, թե ինչու են արվեստագետները նման հեռանկար մշակել:

**17. Համեմատի՛ր երկու աշխատությունները։ (2 միավոր յուրաքանչյուր կետի համար)**

ա. Նիզամիի պոեմի պարսկական մանրանկար, «Շիրինը նայում է Խոսրովի դիմանկարին», XVդ., Հերաթիի դպրոց։
բ. Պիտեր Պաուլ Ռուբենսի աշխատություն, «Հենրի IV-ին ցույց է տալիս Մարիա Մեդիչիի դիմանկարը», 1625 թ.





Գրավոր ձևակերպի՛ր.

- Որոշի՛ր երկու ստեղծագործությունների բնագավառը, ժանրը:
- Ինչպե՞ս են դրանցից յուրաքանչյուրում կիրառած կերպարվեստի տարրերն ու սկզբունքները:
- Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն է քեզ ավելի դուր գալիս: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

18. Նկարի՛ր պարզ նկարներ. (2 միավոր յուրաքանչյուր կետի համար)

| | |
|---|---|
| ա. Նկարի՛ր պարզ նատյուրմորտ, որում կկիրառես՝ լուսաստվեր, ծավալ, տոնային աստիճանավորում: | ա. Նկարի՛ր պարզ բնանկար, որում կկիրառես օդային և գծային հեռանկար: |

| | |
|---|---|
| գ. Նկարի՛ր մարդու ֆիգուր շարժման մեջ՝ համամասնությունների պահպանմամբ: | դ. Նկարի՛ր մարդու դեմք՝ համամասնությունների պահպանմամբ: Նրան շնորհի՛ր որևէ հույզ արտացոլող արտահայտություն: |

**VIII դասարանի ամփոփիչ թեստի ճիշտ պատասխաններ.**

1.-բ, 2.-բ, 3.-գ, 4.-դ, 5.-ա, 6.-ա, 7.-դ

**Ուղղի՛ր նախադասությունները**

8. Գելաթիի տաճարը մոնումենտալ նկարչության **բնագավառի** կրոնական **ժանրի** խճանկարն է զարդարում:
9. Արևելաքրիստոնեական արվեստում քանդակի **բնագավառը** միայն ռելիեֆի տեսքով զարգացավ:
10. Միջնադարյան արվեստի առաջատար բնագավառներն էին ճարտարապետությունը, կլոր քանդակը, որմնանկարը, խճանկարը, սրբանկարչությունը և մանրանկարը:

**Տեղադրի՛ր բաց թողնված բառը.**

11. սրբանկարչություն
12. մարտանկարչական
13. կոնտրապոստ
14. տեմպերա

**Դիտի՛ր տրված նկարազարդումը և պատասխանի՛ր հարցերին.**

15. հետադարձ հեռանկար
16. հետադարձ հեռանկարը ակնարկում է կոմպոզիցիայի բովանդակության աստվածային նշանակության մասին, նրա մասին, որ աստվածային աշխարհն անվերջանալի է, անձայրածիր, իսկ երկրայինը՝ ժամանակավոր, աննշան:

**17. Համեմատի՛ր երկու աշխատություններն իրար հետ (2 միավոր յուրաքանչյուր կետի համար)**

ա. Նիզամիի պոեմի պարսկական մանրանկար, «Շիրինը նայում է Խոսրովի դիմանկարին», XVդ., Հերաթի դպրոց:

բ. Պիտեր Պաուլ Ռուբենսի աշխատությունը, «Հենրի IV-ին ցույց է տալիս Մարիա Մեդիչիի դիմանկարը», 1625 թ.

- Երկուսն էլ պատկանում են պատմական ժանրի նկարչությանը: Առաջինը մանրանկար է, իսկ երկրորդը՝ հաստոցային գեղանկարչություն:
- Պարսկական մանրանկարում առաջատար է գիծը, ուրվագիծը, գունավոր տեղային բծերը, ձևերը փոխանցված են հարթային: Խախտված է հեռանկարը, պատկերների համամասնությունները, առարկաների միջև մասշտաբային հարաբերակցությունը: Անտեսված է լուսաստվերը: Նկարը դեկորատիվ է: Ռուբենսի ստեղծագործությունը կատարված է ռեալիստական պատկերավորման սկզբունքներով՝ օգտագործված է լուսաստվեր և տոնային աստիճանավորում, ինչը պատկերներին ծավալ է շնորհում: Պահպանված են համամասնությունները, առարկաների միջև մասշտաբային հարաբերակցությունը և հեռանկարը:
- Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ցանկացած պատասխան ընդունելի է, եթե աշակերտը հիմնավորում է սեփական վերաբերմունքը երկու ստեղծագործությունների գեղարվեստական լեզվի նկատմամբ:

**Աշակերտի յուրաքանչյուր նկար գնահատվում է 2 միավորով: (առավելագույն միավոր՝ 30)**

1-6 միավոր - SOLO 1. նախակառուցվածքային մակարդակ
7-12 միավոր - SOLO 2. ունիկառուցվածքային մակարդակ
13-18 միավոր - SOLO 3. մուլտիկառուցվածքային մակարդակ
19-24 միավոր - SOLO 4. հարաբերական մակարդակ
25-30 միավոր - SOLO 5. ընդլայնված վերացական մակարդակ

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՆՄՈՒՇԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դիտի՛ր, թե որ պատկերավորման սկզբունքներն ու տարրերն են սահմանում աշխատության առանձնահատկությունը:

Ուշադրությունը կենտրոնացրե՛ք միայն այն սկզբունքների և տարրերի վրա վրա, որոնք առաջատար են ստեղծագործության բնույթը ստեղծելու համար:

**ա) Կերպարվեստի տարրերը**

**Գիծ** (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, շեղ, հորիզոնական, ուղղահայաց, հաստ, բարակ ...).

**Գույն** (հիմնական, բաղադրյալ, հարակից, հակադիր, ախրոմատիկ, չեզոք, տաք, սառը, վառ, ինտենսիվ, հագեցած, մուգ/բաց, լուսավոր/մութ, հանգած և այլն, երանգ՝ դեղնավուն, կանաչ, կապտավուն կանաչ, կարմրավուն մանուշակագույն և այլն): Ո՞ր գույնն է օգտագործվում ավելի շատ, քան մյուսները: Ինչպիսի՞ն է պատկերի ընդհանուր գույնը կամ գամման (սառը /տաք, բաց/մութ, խունացած/պայծառ և այլն): Մոնոխրոմ (միագույն), թե պոլիխրոմ (բազմագույն):

**Տոն** (կիսատոներ, աստիճանավորում կամ աստիճանական անցում բաց գույնից մուգին): Ի՞նչն է ավելի առանձնացված բաց տոնով:

**Ձև** (հարթ կամ երկչափ- երկրաչափական, շրջան, ուղղանկյուն, եռանկյուն, բազմանկյուն, ռոմբ, ձվածրաձև, սուր, բութ, անհարթ, օրգանական՝ բուսական, բնական, խոշոր, փոքր, բարակ և այլն), ծավալային եռաչափ (գունդ, խորանարդ և այլն):

**Լուսաստվեր** (եռաչափի ձև տալու համար կիրառած ստվեր, կիսաստվեր, ընկած ստվեր և ցոլք):

**Ֆակտուրա.** ակտուալ՝ ռելիեֆային (պաստոզային վրձանխազերով ստացված, ուռուցիկ և այլն), կոշտ, խավոտ, թավշյա, հարթ, փայլուն և այլն: Պատրանքային (տարբեր նյութերի իմիտացիա՝ փայտ, քար, մետաղ, գործվածք (թավիշ, մետաքս, ժանյակ), կավ, մորթի, մազ, կաշի և այլն):

**Ֆոնի և պատկերի փոխհարաբերություն.** Ինչպես է յուրացված նկարի տարածությունը՝ դատարկ է, ծանրաբեռնված է, թե՝ չափավոր յուրացված, ինչպես են վերաբաշխված դրական (լրացված) և բացասական (դատարկ) տարածությունները:

**բ) Կերպարվեստի սկզբունքները.**

**Հավասարակշռություն.** Պատկերը հավասար է բաշխված նկարի հարթության վրա, անհամաչափ: Չի՞ գերակշռի արդյոք նկարի որևէ կողմը մյուսին:

**Շեշտադրում.** Ուշադրության կենտրոնացում նրան, ինչն առաջինն է աչք զարնում: Ինչպե՞ս կարողացավ նկարիչը մեր ուշադրությունը կենտրոնացնել գլխավորի վրա: Ինչո՞վ է տարբերվում այս մասը մնացածից (առջևի պլանում է, ամենամեծն է ու ամենախոշորը, գույնո՞վ է առանձնանում, թե՞ լուսավորումով և այլն): Այս նկարում կա՞ արդյոք կարևորությամբ հաջորդ պատկերը: Ինչո՞վ է առանձնանում և ինչո՞վ ես կռահում, որ այն երկրորդ շեշտադրումն է հանդիսանում:

**Ներդաշնակություն.** Ինչպե՞ս են իրար համապատասխանեցվում նկարի առանձին մասերը: Ներդաշնա՞կ են, թե՞ ընդհակառակը՝ դիմակայող/կոնֆլիկտային:

**Ամբողջականություն.** Ո՞ր գեղարվեստական սկզբունքով է ամբողջացնում և «կապում» նկարիչը նկարը, որպեսզի նրա առանձին մասեր չքանդվեն/չցրվեն (հավասարակշռություն, կոլորիտ, լուսավորում, այլ):

**Բազմազանություն.** Ի՞նչն է «կենդանացում» նկարը: Ի՞նչն է նրա մեջ այն կայծը, որպեսզի չդառնա ձանձրալի:

**Ստատիկա/դինամիկա.** Ի՞նչն է նկարում սահմանում ստատիկան (անշարժ, փայտացած, սառած, քարացած) կամ դինամիկան (շարժվող, անհանգիստ):

**Ռիթմ.** Նկարում կա՞ որևէ կրկնվող բան, ինչը ռիթմ է ստեղծում:

**Համաչափություն/անհամաչափություն.** Ինչպիսի՞ն է պատկերի առանձին մասերի չափերի համաչափությունը: Արդյոք հատուկ չի՞ կիրառում գլխավոր առարկայի անհամաչափությունը կամ դեֆորմացիան, և ի՞նչ էֆեկտի է ուզում հասնել այս սկզբունքով:

**Կոմպոզիցիա.** Ինչպե՞ս է կառուցված նկարը: Ի՞նչն է սահմանում նրա կառուցվածքը, կմախքը: Համաչափ է, թե՞ անհամաչափ, կայո՞ւն է, թե՞ անկայուն: Ի՞նչ էֆեկտի է ուզում հասնել նկարիչն այս սկզբունքով:

**Ռակուրս.** Որտե՞ղ է դիտման կետը: Ներքևի՞ց ենք տեսնում, վերևի՞ց, թե՞ ուղիղ: Մո՞տ կադր է, թե՞ հեռու: Չե՞ն շփոթած արդյոք դիտման կետերը: Եթե շփոթած են, ինչո՞ւ՝ տվյալ դարաշրջանում ոչ բավարար գիտելիքի՞ պատճառով, ուղղակի կարևո՞ր չէ, թե՞ նկարիչը հատուկ է դիմում այս սկզբունքին և անտեսում է կանոնները՝ որևէ էֆեկտի հասնելու համար: Արդյոք փո՞րձ չէ դա:

**Հեռանկար.** ա) Օդային հեռանկար՝ պահպանվա՞ծ են արդյոք օդային հեռանկարի կանոնները (առջևի պլանում, մոտիկ գտնվող առարկաները հստակ են, մանրամասնեցված, իսկ հեռավոր հեռանկարում գտնվողները՝ անգույն, խավար, ընդհանրացված), որպեսզի դիտողը զգա տարածությունը, խորությունը: բ) Գծային հեռանկարը (փոքրանում են առարկաները՝ ըստ հեռանալու՝ առջևի, մեջտեղի և ետին տեսարանում պատկերված առարկաները միևնո՞ւյն չափի են, թե՞ ընդհակառակը), մասշտաբները պահպանվա՞ծ են (առանձին պատկերների չափերի հարաբերակցությունը իրար նկատմամբ):

**Զարդանախշ.** Նկարում կա՞ն կրկնվող ձևեր: Որքանո՞վ կարևոր են դրանք, և պայմանավորում է արդյոք զարդանախշը նկարի դեկորատիվ բնույթ:

## Գեղարվեստական ստեղծագործության նկարագրման, վերլուծության, մենաբանման և գնահատման հարցաշար.

1. Տվյալներ
2. Նկարագրություն
3. Վերլուծություն (2 փուլով՝ պատկերավորման սկզբունքներ և տարրեր)
4. Մեկնաբանություն
5. Գնահատում

**Աստիճան I. Տվյալներ.**

- Արվեստագետի ինքնությունը (անուն, ազգանուն, որտեղացի է, որտեղ էր ստեղծագործում, որ դարաշրջանում (դար, տարիներ), եթե հայտնի է:
- Բնագավառը (նկարչություն (հաստոցային գեղանկարչություն, գրաֆիկա, մոնումենտալ, սրբանկարչություն, մանրանկար), քանդակ (կլոր, ռելիեֆ), ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական)):
- Ժանր (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար՝ քաղաքային, գյուղական, ծովանկար, կենցաղային, պատմական՝ մարտանկարչական, կրոնական, դիցաբանական, այլաբանական, անառարկա (աբստրակցիա), անիմալիստական, այլ:

- Ստեղծագործության վերնագիր, ինչ նյութով է կատարված (տեմպերա, յուղաներկ, գուաշ, ջրաներկ, մատիտ, թանաք, մոխիր, պաստել, կավ, փայտ, քար, մետաղ, բետոն, թել և այլն):
- Վայրը (երկիր, քաղաք, թանգարան, պատկերասրահ, մասնավոր հավաքածու և այլն):
- Պատմական/կրոնական/մշակութային/սոցիալական ենթատեքստ` ի՞նչ հանգամանքներում է ստեղծվել աշխատանքը: Ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ այն երկրում, որը կարող էր ազդել արվեստագետի վրա: Ստեղծագործությունը պատվե՞ր է, թե՞ ստեղծվել է արվեստագետի ցանկությամբ: Ի՞նչ նյութեր/տեխնիկա էին մատչելի և տարածված այդ շրջանում: Որո՞նք էին այդ դարաշրջանի գեղարվեստական առաջատար ուղղությունները: Ինչո՞վ էին հիմնականում հետաքրքրվում նկարիչներն այն ժամանակ:
- Ո՞ր հոսանքին, ոճին է պատկանում աշխատանքը: Էլ ո՞ր նկարիչներն են այս հոսանքի ներկայացուցիչները:

**Աստիճան II. Նկարագրություն.**

Նկարագրի՛ր այն, ինչ տեսնում ես: Սկսի՛ր նրանից, ինչն առաջին հերթին ուշադրություն է գրավում կամ ինչը գլխավորն է, ապա անցի՛ր երկրորդական, օժանդակ մանրամասների նկարագրությանը:

- Ինչպիսի՞ն է միջավայրը: Եթե դա բնանկար է, ապա ի՞նչ տեղ է. անապատ, օազիս (արմավենիներ, կակտուսներ), ծով (փոթորկուն), գետ, անտառ (սաղարթավոր/ փշատերև), թե՞ դաշտ (ինչպիսի՞ բույսեր են), քաղաք (մեգապոլիս, թե գավառական), եթե ինտերիեր է, դա պալատ է, տաճար, թե՝ տուն: Խրճի՞թ է, թե՞ քաղաքային տուն: Ինչպիսի՞ կահույք է: Ճքե՞ղ, թե՞ աղքատիկ: Ի՞նչն է հուշում այդ մասին: Ի՞նչ միջավայրում է տեղադրված ստեղծագործությունը:
- Ի՞նչ ժամանակ է (ցերեկ, գիշեր, տարվա ժամանակը, ժամանակակից ժամանակը կամ անցյալը):
- Ո՞վ է պատկերված (ինչ տարիքի, ինչ սոցիալական խավի, ինչ հագուստ են կրում): Ինչպիսի՞ կեցվածքով են: Ի՞նչ է պատկերված:
- Ի՞նչ է տեղի ունենում (ի՞նչ են անում հերոսները, ինչպիսի՞ տրամադրություն ունեն): Եթե կենդանիներ են պատկերված (ընտանի՞, թե՞ վայրի), ի՞նչ ատրիբուտներ (իրեր) ունեն: Եթե բնապատկեր է, հանգի՞ստ է, թե՞ հուզիչ:

**Աստիճան III. Վերլուծություն**

Դիտի՛ր, թե կերպարվեստի որ սկզբունքներն ու տարրերն են սահմանում աշխատության առանձնահատկությունը: Պարտադիր չէ, որ բոլոր կետերին պատասխանես: Ուշադրությունը կետրոնացրո՛ւ միայն այն տարրերի և սկզբունքների վրա, որոնք առաջատար են ստեղծագործության բնույթը ստեղծելու համար:

**ա) Կերպարվեստի տարրերը.**

- **Գիծ** (ուրվագիծ, նրբագիծ, ուղիղ, ալիքաձև, բեկյալ, շեղ, հորիզոնական, ուղղահայաց, հաստ, բարակ ...)
- **Գույն** (հիմնական, բաղադրյալ, հարակից, հակադիր, ախրոմատիկ, չեզոք, տաք, սառը, վառ, ինտենսիվ, հագեցած, մուգ/բաց, լուսավոր/մութ, հանգած և այլն, երանգ՝ դեղնավուն, կանաչ, կապտավուն կանաչ, կարմրավուն մանուշակագույն և այլն): Ո՞ր գույնն է օգտագործվում ավելի շատ, քան մյուսները: Ինչպիսի՞ն է պատկերի ընդհանուր գույնը կամ գամման (սառը/տաք, բաց/մութ, խունացած/պայծառ և այլն): Մոնոխրոմ (միագույն), թե պոլիխրոմ (բազմագույն):
- **Տոն** (կիսատոներ, աստիճանավորում կամ աստիճանական անցում բաց գույնից մուգին): Ի՞նչն է ավելի առանձնացված բաց տոնով:

- **Ձև** (հարթ կամ երկչափ՝ երկրաչափական՝ շրջան, ուղղանկյունի, եռանկյունի, բազմանկյունի, ռոմբ, ձվածրաձև, սուր, բութ, անհարթ, օրգանական՝ բուսական, բնական, խոշոր, փոքր, բարակ և այլն), ծավալային եռաչափ ձև (գունդ, խորանարդ, գլան, բնական ձևեր և եռաչափ ձևեր):
- **Լուսաստվեր.** Եռաչափի ձև տալու համար ինչպե՞ս է կիրառած ստվերը, կիսաստվերը, ընկած ստվերը և ցոլքը:
- **Ֆակտուրա** (ակտուալ՝ ռելիեֆային (պաստոզային վրձանխազերով ստացված, ուռուցիկ …), կոշտ, խավոտ, թավշյա, հարթ, փայլուն և այլն: Պատրանքային (տարբեր նյութերի իմիտացիա՝ փայտ, քար, մետաղ, գործվածք (թավիշ, մետաքս, ժանյակ), կավ, մորթի, մազ, կաշի, մաշկ և այլն):
- **Ֆոն** (ֆոնի և պատկերի փոխհարաբերություն). ինչպե՞ս է յուրացված նկարի տարածությունը՝ դատարկ է, ծանրաբեռնված է, թե՞ չափավոր յուրացված, ինչպե՞ս են վերաբաշխված դրական (լրացված) և բացասական (դատարկ) տարածքները: Ֆոնը չեզո՞ք է, թե՞ պատկերներով լրացված:

**բ) Կերպարվեստի սկզբունքները.**

- **Կոմպոզիցիա.** Ինչպե՞ս է կառուցված նկարը: Ի՞նչն է սահմանում նրա կառուցվածքը, կմախքը: Համաչա՞փ է, թե՞ անհամաչափ: Կայո՞ւն է, թե՞ անկայուն: Ի՞նչ էֆեկտի է ուզում հասնել նկարիչն այս սկզբունքով:
- Ներդաշնակություն/ամբողջականություն. Ո՞ր գեղարվեստական սկզբունքով է արվեստագետն ամբողջացնում և «կապում» ստեղծագործությունը, որպեսզի նրա առանձին մասեր չքանդվեն/չցրվեն (հավասարակշռություն, կոլորիտ, լուսավորում, այլ): Ինչպե՞ս են իրար համապատասխանեցվում նկարի առանձին մասերը: Ներդաշնա՞կ են, թե՞ ընդհակառակը՝ դիմակայող/կոնֆլիկտային:
- **Հավասարակշռություն.** Պատկերը հավասա՞ր է բաշխված նկարի հարթության վրա, թե՞ անհամաչափ: Չի՞ գերակշռի արդյոք նկարի որևէ կողմը մյուսին:
- **Բազմազանություն.** Ի՞նչն է «կենդանացում» նկարը: Ի՞նչն է նրա մեջ այն կայծը, որպեսզի չդառնա ձանձրալի:
- **Շեշտադրում.** Ուշադրության կենտրոնացնո՞ւմ է նրան, ինչն առաջինն է աչք զարնում: Ինչպե՞ս կարողացավ նկարիչը մեր ուշադրությունը կենտրոնացնել գլխավորի վրա: Ինչո՞վ է տարբերվում այս մասը մնացածից (առջևի պլանում է, ամենամեծն է ու ամենախոշորը, գույնո՞վ է առանձնանում, թե՞ լուսավորումով և այլն): Այս նկարում կա՞ արդյոք կարևորությամբ հաջորդ պատկերը: Ինչո՞վ է առանձնանում և ինչո՞վ ես կռահում, որ այն երկրորդ շեշտադրումն է հանդիսանում:
- **Հավասարակշռություն.** Պատկերները հավասա՞ր են բաշխված, թե՞ անհավասարաչափ: Ստեղծագործության մի կողմը չի՞ գերակշռի մյուսին:
- **Ստատիկա/դինամիկա.** Ի՞նչն է նկարում սահմանում ստատիկան (անշարժ, փայտացած, սառած, քարացած) կամ դինամիկան (շարժվող, անհանգիստ):
- **Ամբողջականություն.** Ո՞ր գեղարվեստական սկզբունքով է ամբողջացնում և «կապում» նկարիչը նկարը, որպեսզի նրա առանձին մասեր չքանդվեն/չցրվեն (հավասարակշռություն, կոլորիտ, լուսավորում, այլ):
- **Ռիթմ.** Նկարում կա՞ որևէ կրկնվող բան, ինչը ռիթմ է ստեղծում:
- **Համաչափություն/անհամաչափություն.** Ինչպիսի՞ն է պատկերի առանձին մասերի չափերի համաչափությունը: Արդյոք հատուկ չի՞ կիրառում գլխավոր առարկայի անհամաչափությունը կամ դեֆորմացիան, և ի՞նչ էֆեկտի է ուզում հասնել այս սկզբունքով:

- **Ռակուրս.** Որտե՞ղ է դիտման կետը: Ներքևից ենք տեսնում, վերևից, թե՞ ուղիղ: Մոտ կադր է, թե՞ հեռու: Չե՞ն շփոթած արդյոք դիտման կետերը: Եթե շփոթած են, ինչո՞ւ` տվյալ դարաշրջանում ոչ բավարար գիտելիքի՞ պատճառով, ուղղակի կարևո՞ր չէ, թե՞ նկարիչը հատուկ է դիմում այս սկզբունքին և անտեսում է կանոնները` որևէ էֆեկտի հասնելու համար: Արդյոք փո՞րձ չէ դա:
- **Հեռանկար.** ա) **Օդային հեռանկար`** պահպանվա՞ծ են արդյոք օդային հեռանկարի կանոնները (առջևի պլանում, մոտիկ գտնվող առարկաները հստակ են, մանրամասնեցված, իսկ հեռավոր հեռանկարում գտնվողները` անգույն, խավար, ընդհանրացված), որպեսզի դիտողը զգա տարածությունը, խորությունը: բ) **Գծային հեռանկար** (փոքրանո՞ւմ են առարկաները` ըստ հեռանալու` առջևի, մեջտեղի և ետին տեսարանում պատկերված առարկաները միևնո՞ւյն չափի են, թե՞ ընդհակառակը: Մասշտաբը պահպանվա՞ծ է (առանձին պատկերների չափերի հարաբերակցությունը իրար նկատմամբ):
- **Զարդանախշ.** նկարում կա՞ն կրկնվող ձևեր: Որքանո՞վ կարևոր են դրանք, և պայմանավորո՞ւմ է արդյոք զարդանախշը նկարի դեկորատիվ բնույթ:

**Աստիճան IV. Մեկնաբանություն**

**Արտահայտի՛ր քո վերաբերմունքը. Ի՞նչ եք մտածում այս ստեղծագործության մասին:**

- **Ի՞նչ էր ուզում ասել արվեստագետը:** Ո՞րն էր նրա նպատակը. որևէ անհատի կամ որևէ պատմական իրադարձության նկատմամբ արտահայտել վերաբերմունք, գաղափար, սեփական դիրքորոշում, տպավորություն կամ տրամադրություն, կամ հույզ:
- **Դարաշրջանի արվեստի ո՞ր հիմնական առանձնահատկություններն ես տեսնում այս ստեղծագործության մեջ:** Տրված դարաշրջանին բնորոշ գեղարվեստական ո՞ր սկզբունքները, նյութերը, տեխնիկան է օգտագործել արվեստագետը: Ինչո՞ւմ է դրսևորվել դա նրա աշխատանքում:
- **Ի՞նչ էֆեկտի հասավ արվեստագետը`** նյութերը, տեխնիկան, պատկերավորման սկզբունքներն ու տարրերն այս եղանակով օգտագործելով:
- **Ի՞նչ բնույթի է ստեղծագործությունը** (ռեալիստական, պայմանական, աբստրակտ, խորհրդանշական, բարոյախոսական, պատմողական, հանդիսավոր, հանգիստ, հարմարավետ, քնարական, հովվերգական, ուրախ, թախծոտ, ողբերգական, դրամատիկ, լարված, արտահայտիչ, հեգնական, դեկորատիվ, գրոտեսկային, վավերագրական):

**Աստիճան V. Գնահատում.**

- Նախորդ դարաշրջանների ի՞նչ նշաններ է կրում այս ստեղծագործությունը. Ի՞նչը կարող էր ազդել դրա վրա նախորդ դարաշրջանների արվեստից: Ինչո՞ւմ է այս ազդեցությունն արտահայտվել:
- Ի՞նչն է բնօրինակ դրանում. Ի՞նչն է նոր` համեմատած նախորդ դարաշրջանի գործերի հետ: Ինչո՞վ է այս աշխատանքը տարբերվում իր նախորդից:
- Այս ստեղծագործությունն արդյոք ազդե՞լ է համաժամանակյա կամ ուշ շրջանի արվեստի վրա: Մասնավորապես ո՞ր արվեստագետների/ստեղծագործության ոգեշնչման աղբյուրի է վերածվել: Ինչո՞ւմ է արտահայտվել այս ազդեցությունը:
- Ինչո՞վ է այս աշխատանքը տարբերվում հեղինակի մյուս գործերից:
- Քեզ դո՞ւր է գալիս այս աշխատանքը, թե` ոչ: Ինչո՞ւ: Ինչ եք կարծում, այն արժանի՞ է գլուխգործոցի կոչման: Ինչու՞ է ցանկալի, որ մարդիկ դա տեսնեն: Հիմնավորի՛ր քո կարծիքը:

## Հարցարաններ

**Ռեֆլեքսիայի հարցարան.**

**Հարցեր, որոնք պետք է տալ նախքան աշխատանքը սկսելը**

- Երբևէ նման աշխատանք կատարե՞լ ես: Ի՞նչ փորձ ես ձեռք բերել այդ ժամանակ:
- Ինչո՞ւմ է կայանում քո մտահղացումը: Ի՞նչ ես պատրաստվում անել:
- Նախապես մտածի՛ր, թե որ նյութն առավել կհամապատասխանի քո մտահղացմանը:
- Ինչպե՞ս կօգտագործես կերպարվեստի սկզբունքներն ու տարրերը ցանկալի արդյունքի հասնելու համար:
- Ի՞նչ գիտելիքներ են անհրաժեշտ այս աշխատության վրա աշխատելու համար:
- Ի՞նչ հմտություններ են անհրաժեշտ այս աշխատանքի վրա աշխատելու համար:

**Հարցեր, որոնք պետք է տրվեն աշխատանքի գործընթացում**

- Կա՞ որևէ բան, որը դեռ կարող ես դեպի լավը փոխել քո աշխատանքում:
- Արդարացնու՞մ են քո կողմից ընտրված նյութերը, պատկերավորման սկզբունքներն ու տարրերը:
- Աշխատության ո՞ր կողմնորոշումն ես ընտրել (հորիզոնական թե ուղղահայաց) և ինչո՞ւ:

**Հարցեր, որոնք պետք է տալ աշխատանքն ավարտելուց հետո**

- Այս աշխատանքի հետ կապված՝ ի՞նչ էիր մտադիր անել: Ի՞նչ սպասելիքներ ունեիր:
- Ստացվե՞ց այն, ինչ պատրաստվում էիր անել:
- Աշխատանքային գործընթացում ինչ-որ բան փոխե՞լ ես:
- Գեղարվեստական ստեղծագործության ստեղծման ո՞ր փուլն ես առավել շատ վայելում՝ ընթա՞ցքը, թե՞ արդյունքը: Ինչո՞ւ:
- Ի՞նչ գիտելիքներ ես ձեռք բերել աշխատանքի ավարտին:
- Ի՞նչ հմտություններ ես ձեռք բերել և զարգացրել այս աշխատության վրա աշխատելիս:
- Ի՞նչ գնահատական կնշանակեիր այս ստեղծագործությանը, եթե ուսուցիչ լինեիր:
- Ի՞նչն էր աշխատելու ժամանակ ամենադժվարը: Հե՞շտը:
- Ի՞նչն է լավ ստացվել քեզ մոտ:
- Որքա՞ն է փոխվել քո աշխատանքը՝ նախատեսվածից մինչև պատրաստի արդյունքը: Ի՞նչը փոխեցիր և ինչո՞ւ:
- Եթե հիմա նորից անեիր, ի՞նչը կփոխեիր:
- Ի՞նչ են մտածում քո հասակակիցներն ու ավագները քո աշխատանքի մասին: Նկատի ունեցե՞լ ես նրանց կարծիքը:
- Որքա՞ն ժամանակ ես տրամադրել աշխատանքին:
- Ի՞նչ իմացար քո մասին՝ այս աշխատանքի վրա աշխատելու արդյունքում:
- Ի՞նչ ավելացրեց քո ստեղծագործական փորձին այս աշխատության ստեղծումը:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ սեփական ստեղծագործական թույլ կողմերը և աշխատել դրանց բարելավման ուղղությամբ:
- Ո՞ւմ հետ ես նախընտրում խոսել քո աշխատանքի մասին՝ ընկերոջ, ծնողի, թե՞ ուսուցչի:
- Քո կարծիքով, ո՞վ կլինի քո ստեղծագործությունը դիտողը:

**Մտածողական հարցեր.**

**Կերպարվեստի մասին**

- Ինչպիսի՞ն կլիներ աշխարհն առանց արվեստի:
- Արվեստը հասարակության համար շքեղությո՞ւն է, թե՞ անհրաժեշտություն:
- Անձամբ քեզ համար արվեստը շքեղությո՞ւն է, թե՞ անհրաժեշտություն:
- Կարո՞ղ է արվեստը դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա, սթափեցնել նրան, բուժել:
- Ի՞նչ է մեզ պատմում արվեստը աշխարհի մասին:
- Ինչո՞ւ է արվեստը տարբեր ժամանակներում/երկրներում/մշակույթներում այդքան տարբեր: Ինչի՞ց է դա կախված:
- Ի՞նչ է մեզ պատմում գեղարվեստական ստեղծագործությունը այն պատմական ժամանակաշրջանի մասին, որում ստեղծվել է:
- Ի՞նչ ես զգում, երբ նայում ես արվեստի գործի:
- Կարո՞ղ է արվեստը փոխել մարդու մտածողությունը:
- Ինչպե՞ս է գիտելիքը փոխում արվեստը: Օրինակ բե՛ր:
- Ինչպե՞ս է արվեստը փոխում գիտելիքը: Օրինակ բե՛ր:
- Ինչպե՞ս է արվեստը փոխում միջավայրը: Օրինակ բե՛ր:
- Ինչո՞ւմ է արվեստը օգնում հասարակությանը: Առանձի՞ն մարդուն: Օրինակ բե՛ր:
- Ինչպե՞ս կարող ենք արվեստի միջոցով բարելավել շրջակա միջավայրը (սենյակ, շենք, թաղամաս, քաղաք):
- Արվեստի գործն ազդո՞ւմ է այն միջավայրի վրա, որում այն տեղակայված է:
- Արդյոք շրջակա միջավայրն ունի՞ նշանակություն գեղարվեստական ստեղծագործության շահավետ ընկալման համար:
- Կարո՞ղ է միջավայրը նվազեցնել դրա մեջ տեղադրված արվեստի գործի արժանիքը և արժեզրկել այն:
- Մտածե՞լ ես այն մասին, թե ինչպիսի միջավայրում ես նախընտրում ցուցադրել քո աշխատանքը:
- Ինչու՞ գոյություն ունեն արվեստի թանգարաններ, պատկերասրահներ, ցուցասրահներ:
- Ինչո՞ւ են մարդիկ ճամփորդում օտար երկրներում՝ արվեստի հուշարձաններ տեսնելու:
- Արվեստի ո՞ր ոլորտն է քեզ ամենից շատ հետաքրքրում: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս ենք գնահատում արվեստի գործը:
- Ո՞վ է որոշում ՝ ստեղծագործությունը արվեստի գործ է, թե՝ ոչ:
- Եթե արվեստի գործը տհաճ զգացողություն է առաջացնում (տխրություն, ցավ, զայրույթ, զզվանք), այն դեռ արվե՞ստ է, թե՝ ոչ: Կարո՞ղ ես օրինակ բերել:
- Արվեստը պետք է արտացոլի միայն գեղեցկությունը, թե՞ տգեղությունը նույնպես:
- Ի՞նչ են մեզ պատմում մարդու հագուստը, զարդերը, սանրվածքը նրա մշակույթի և ազգային պատկանելության մասին:
- Եթե ժամանակի մեքենա գոյություն ունենար, ո՞ր դարաշրջանում կճանապարհորդեիր և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության վերաբերմունքը արվեստի նկատմամբ:
- Ինչպե՞ս է փոխվում հասարակության վերաբերմունքը արվեստի նկատմամբ:
- Ինչո՞վ են տարբեր կուլտուրական և ոչ կուլտուրական մարդիկ:
- Կարո՞ղ է արվեստը փոխել մարդու վերաբերմունքն ու վարքագիծը:

**Արվեստագետի մասին.**

- Ի՞նչ է նշանակում ստեղծագործականություն:
- Ո՞ր հմտություններն են առավել կարևոր արվեստի համար: Ո՞ր մասնագիտությանը պետք չեն այդ հմտությունները:
- Ի՞նչ է նշանակում լինել արվեստագետ:
- Ի՞նչ են պատմում արվեստագետի գործերը նրա անհատականության մասին:
- Ձեր կարծիքով ինչո՞ւ են մարդիկ հորինում և ստեղծագործում:
- Ձեր կարծիքով, որտեղի՞ց են ոգեշնչվում մարդիկ:
- Որտեղի՞ց է գալիս ձեր ներշնչանքը:
- Արվեստի ո՞ր բնագավառներին է պետք նկարչի մասնագիտությունը:
- Ո՞ր ոչ արվեստի ոլորտներին է պետք նկարչի մասնագիտությունը:
- Ի՞նչ է արտացոլում արվեստագետն իր ստեղծագործություններում:
- Արվեստով զբաղվող անձը աշխատո՞ւմ է, թե՞ զվարճանում:
- Ովքե՞ր են մեր ժամանակի առաջատար արվեստագետները: Ի՞նչ են նրանք ստեղծում:
- Ինչպե՞ս է մարդը դառնում արվեստագետ:
- Եթե ժամանակի մեքենա գոյություն ունենար, ո՞ր արվեստագետի հետ կհանդիպեիր: Ինչո՞ւ: Ի՞նչ հարց կտայիր նրա ստեղծագործության մասին: Ի՞նչ խորհուրդ կխնդրեիր նրանից: Ի՞նչ կասեիր քո սեփական ստեղծագործության մասին: Ի՞նչ խորհուրդ կտայիր նրան:
- Ի՞նչ դեր ունեն արվեստագետները մեր ներկայիս միջավայրը ստեղծելու գործում:
- Կարո՞ղ ես քո արվեստով փոխել դպրոցական միջավայրը:
- Ի՞նչ և ինչպե՞ս կփոխեիր քո միջավայրում (դպրոց, դասասենյակ, տուն) արվեստի միջոցով:
- Ի՞նչ դեր ունի բնությունը արվեստագետին ոգեշնչելու գործում:
- Ինչպե՞ս են միջավայրն ու հասարակությունն ազդում արվեստի ստեղծագործության վրա:
- Ինչպե՞ս են շրջապատն ու հասարակությունն ազդում քո ստեղծագործության վրա:
- Ի՞նչ կարգավիճակ ունեն արվեստագետները հասարակության մեջ:
- Ինչո՞ւմ է դրսևորվում հասարակության վերաբերմունքը արվեստագետի նկատմամբ:
- Ինչպե՞ս է փոխվում հասարակության վերաբերմունքը արվեստագետի նկատմամբ:
- Ինչպե՞ս են նկարիչները փոխանցում գաղափարներ, ապրումներ, հույզեր:
- Ինչպե՞ս կարող ես արվեստի միջոցով արտահայտել քո գաղափարները, զգացմունքները, հույզերը:
- Ինչո՞վ են տարբերվում կուլտուրական և ոչ կուլտուրական մարդիկ:
- Ինչպե՞ս է օգնում քեզ ուրիշի աշխատանքը գնահատելը սեփական աշխատության ուժեղ և թույլ կողմերը տեսնելու մեջ:
- Ի՞նչ է տալիս քեզ սեփական աշխատանքի և դրա ստեղծման գործընթացի վերլուծությունը:
- Ինչպե՞ս է արվեստը օգնում քեզ այլ առարկաներ սովորելու մեջ:
- Ինչպե՞ս են այլ առարկաներից ստացված գիտելիքները, հմտություններն ու փորձն օգնում քեզ սովորելու արվեստ:

**Դասի գնահատում.**

- Ի՞նչ սովորեցիր այսօրվա դասին:
- Քեզ հետաքրքրե՞ց դասի թեման:
- Ի՞նչ տեղեկություններ ունեիր մինչ այդ:
- Ի՞նչ սովորեցիր նորը:
- Էլ ի՞նչ է քեզ հետաքրքրում այդ մասին:
- Ո՞վ է համաձայն այս տեսակետի հետ: Ո՞վ ունի այլ կարծիք:
- Կարո՞ղ ենք այս խնդրին այլ տեսանկյունից նայել:
- Որևէ մեկը ինչ-որ բան կավելացնի՞:
- Ի՞նչն օգնեց ձեզ մտապահել/սովորել:
- Ես նկատեցի, որ ... դուք ի՞նչ նկատեցիք:
- Ինձ հետաքրքրում է ... Ձեզ ի՞նչն է հետաքրքրում:
- Լրացուցիչ հարցեր ունե՞ք:

**Դարաշրջանների համեմատական T սխեմաներ**
*Աշակերտներն աստիճանաբար կավելացնեն սխեմայի մեջ նոր կետեր:
Աշակերտների կողմից կազմվելիք սխեմաների նմուշներ.

**1. Հնագույն դարաշրջան/Միջնադար**

| Հնագույն դարաշրջանի արվեստը | Միջնադարյան քրիստոնեական արվեստը |
|---|---|
| Պոլիթեիզմ կամ բազմաստվածություն | Մոնոթեիզմ կամ միաստվածություն |
| Հոգու և մարմնի հավասար կարևորություն | Հոգևորության գերազանցություն երկրայինի նկատմամբ |
| Հիմնականում աշխարհիկ | Հիմնականում կրոնական |
| Արվեստի ստեղծագործության պատվիրատուն հիմնականում անվանիների խավն է: | Արվեստի գործերի պատվիրատուն հիմնականում եկեղեցին է: |
| Երկրային, մարմնավոր | Երկնային, աստվածային |
| Իրականությունն արտացոլող ռեալիստական պատկերավորման սկզբունքներ.<br>• Լուսաստվեր, տոնային աստիճանավորումով փոխանցված ծավալային ձևեր<br>• Իրական ֆոն<br>• Ճիշտ համամասնություններ<br>• Ճիշտ մասշտաբային հավասարակշռություն մարդկանց պատկերների և ճարտարապետական և բնական ֆոնի միջև<br>• Գծային հեռանկարի նշաններ | Սրբանկարչությամբ սահմանված խորհրդանշական, պայմանական պատկերավորման լեզու.<br>• Գծերով փոխանցված հարթ ձևեր<br>• Պայմանական ֆոն (հաճախ ոսկեգույն)<br>• Խախտված համամասնություններ<br>• Մարդկանց պատկերների միջև խախտված մասշտաբները աստվածային հիերարխիա են փոխանցում: Ֆոնի վրա կառույցներն ու բնապատկերը պայմանական են:<br>• Հետադարձ հեռանկար |
| Կլոր քանդակների առատություն | Կլոր քանդակ ստեղծվում է միայն արևմտաքրիստոնեական երկրներում: IX դարից արևելաքրիստոնեական երկրներում քանդակը միայն ռելիեֆի տեսքով է շարունակում գոյությունը պահպանել: |
| Հռոմում խճանկարը հատակի (հազվադեպ՝ պատի) փոքր տարածքներ էր զբաղեցնում: | Բյուզանդիայում խճանկարը տաճարների ինտերիերի ամենանշանակալի խորհրդանշական տեղերն է զբաղեցնում և մոնումենտալ պաշտամունքային արվեստի է վերածվում: |

**2. Ռոմանական/գոթական ժամանակաշրջաններ**

| Ռոմանական արվեստ | Գոթիկա |
|---|---|
| Շարունակում է Հին Հռոմի ճարտարապետական ավանդույթները: | Ստեղծում է նոր, մինչև այդ պահը անհայտ գեղագիտություն: |
| Հողանցված համամասնություններ | Ուղղահայաց երկարեցված համամասնություններ |
| **Ճարտարապետության մեջ՝** զանգվածային, ծանր, պինդ չմասնատված պատ, մեջընդմեջ միայն ճարտարապետական դեկորով (պատուհան, որմնախորշ, կամար...) | Ճակատամաս, որի թեթև, ժանյականման քանդակային դեկորի այն կողմում որմը չի երևում: |
| Երբեմն օգտագործվում են կոպիտ համամասնություններ ունեցող որմնահեցեր: | Բարձր որմնահեցերը զարդարված են արկբուտաններով՝ քարե կիսակամարներով («թռչող կամարներով»): |
| Ճարտարապետական մասերը հստակ առանձնացված են: | Ճարտարապետական մասերը «խճճվում են» իրար մեջ: |
| Կիսաշրջանաձև կամար | Նետաձև կամար (հնարավոր է, արաբական ազդեցություն) |
| Կիսաշրջանաձև պորտալ (առաստաղ) | Նետաձև պորտալ, ուղղաձիգ ճակտոնով |
| Քիչ քանակությամբ փոքր չափի պատուհաններով թույլ լուսավորված ինտերիերը վախեցնում է աստվածային պատժով: | Շատ լայն, բարձր վիտրաժով պատուհաններ, առատորեն լուսավորված ինտերիերը հույս տվող, թողություն տվող միջավայր է ստեղծում: |
| Պորտալի գլխին՝ փոքրիկ շրջանաձև պատուհան, այսպես կոչված «վարդակ» | Պորտալի գլխին՝ իսկայական շրջանաձև «վարդակ» |
| Խիստ, խոժոռադեմ, ծանրաշարժ | «Պչրասեր», «Ճախրող», «շարժուն» |
| Ստատիկ | Դինամիկ |
| Ֆիգուրները՝ «անմարմին», փայտացած, անհամաչափ, երկարեցված, հարթ, պայմանական | Ֆիգուրներն աստիճանաբար դառնում են ավելի ռեալիստական, «մարմին ունեցող», երկրային, ուղղվում են համամասնությունները: |
| Ֆիգուրների միջև խախտված մասշտաբներն արտահայտում են երկնային հիերարխիան: | Ֆիգուրների միջև մասշտաբը կրկին խախտված է: |

**3.Միջնադար/Վերածնունդ**

| Միջնադարյան քրիստոնեական արվեստ | Վերածննդյան դարաշրջան |
|---|---|
| Արվեստը զարգանում է եկեղեցիների ու վանքերի ընդերքում և ծառայում է կրոնական գաղափարների հաստատմանը: | Արվեստը զարգանում է մասնավոր մեցենատների պալատներում: Եկեղեցին արվեստի պատվիրատուներից մեկն է: |
| Դոգմատիկ | Հումանիստական, գիտական |
| Հոգևորի առավելություն մարմնականի նկատմամբ: | Հավատք՝ մարդու մտավոր, ստեղծագործական և ֆիզիկական հնարավորություններում: |
| Երկրային կյանքի իմաստը գայթակղությունների դեմ պայքարն է: | Երկրային կյանքի իմաստը անձնական կատարելագործումն է հնագույն գիտության ուսումնասիրման ճանապարհով: |
| Մարդը մեղավոր է: | Մարդն արժանապատիվ, ինքնավստահ հետազոտող է և արարող: |
| Սրբանկարչությամբ օրինականացված խորհրդանշական, պայմանական պատկերավորման լեզու: | Երկրային աշխարհի ռեալիստորեն արտացոլման սկզբունքներ: |
| Պայմանական ֆոն (հաճախ ոսկեգույն): Ֆոնի վրա կառույցներն ու բնապատկերը նույնպես պայմանական են: | Ռեալիստական ֆոն (քաղաքի կամ բնական բնանկար): |
| Մարդկանց պատկերների միջև խախտված մասշտաբները փոխանցում են աստվածային հիերարխիան: | Պահպանված է ճիշտ մասշտաբային համաչափությունը մարդկանց պատկերների և ճարտարապետական կամ բնական ֆոների միջև: |
| Խախտված են համամասնությունները: | Ճիշտ համամասնություններ: |
| Ֆիգուրներն անատոմիական առումով մշակված չեն: | Ֆիգուրները անատոմիական առումով մշակված են: |
| Կեցվածքները փայտացած են: | Կեցվածքները բնական են: Օգտագործվում է հնագույն կոնտրապոստը՝ հակադիրքը: |
| Ձևերը հարթ են, փոխանցված են գծերով: Լուսաստվերը և տոնային աստիճանավորումն անտեսված է: | Եռաչափ ծավալները փոխանցված են լուսաստվերի և տոնային աստիճանավորման միջոցով: |
| Օգտագործված է հետադարձ հեռանկարը և խախտվում է ռակուրսը (դիտակետը): | Օգտագործվում է գծային և օդային հեռանկար: |
| Ուրվապատկերում փակված տեղային գունավոր բծեր: Գույներին տրվում է խորհրդանշական ծանրաբեռնում: | Կոմպոզիցիայում հավասար բաշխված գունավոր բծեր՝ հարստացված տոնային աստիճանավորմամբ: |
| Արվեստագետն անանուն է: | Արվեստագետների անունները հայտնի են: |
| Նյութը՝ մոմանկարչություն, տեմպերա, փայտ: | Տեմպերա, յուղաներկ, կտավ, փայտ: |

**4. Վերածնունդ/Բարոկկո**

| Վերածննդի դարաշրջան | Բարոկկո |
|---|---|
| Մարդը սեփական ճակատագիրը և քաղաքի/երկրի պատմությունը առաջնորդողն է: | Ոչինչը կայուն չէ: Մարդը չի կարող վերահսկել և չի կարող վճռել ոչինչ: Ամեն ինչ փոփոխական է: Ժամանակն անողոք է: |
| Հանգստություն, ներդաշնակություն, հավասարակշռություն, հաստատունություն | Փոթորկուն, կրքերի բորբոքում, պայքար, հակամարտություն |
| Եռանկյուն կամ փրիզաձև համաչափ կոմպոզիցիա | Անկյունագծային, անհամաչափ կոմպոզիցիա |
| Ստատիկա | Դինամիկա |
| Հավասար լուսավորում | Հակադիր լուսավորում |
| Հանգիստ կեցվածք, հակադիրք | Բարդ կեցվածքներ |
| Առանց զգացմունք դեմքի արտահայտություն | Հուզական դեմքի արտահայտություններ |
| Պատկերի անատոմիական ճիշտ կառուցում, դասական սկզբունքներ | Չափազանցված, մեծ չափի մկանուտ մարմիններ |

**5. Կլասիցիզմ/ռոմանտիզմ**

| Կլասիցիզմ | Ռոմանտիզմ |
|---|---|
| Կարգուկանոն կոմպոզիցիայում և կոլորիտում: Ստատիկա, հանգստություն, չափավորություն: | Դինամիկ, «փոթորկուն» կոմպոզիցիա, աշխույժ կոլորիտ: Հուզականություն, անսանձ, փոթորկուն կամք, բորբոքված կրքեր, կրքերի բախում, պայքար: |
| Թեմա. Հեռավոր հերոսական անցյալ, Դասական Հունաստանի և Հռոմի պատմությունը, Դիցաբանություն: | Թեմա. Երևակայություն, Հերոսություն, Էկզոտիկա, Լեգենդներ, Պայքար, Որսորդություն, Արդիականություն, Կոնֆլիկտ, Լավ եղանակ, Մարտահրավեր, Դիմակայություն ձանձրալի առօրյայի հետ: |
| Տեխնիկա. հարթ, չկա վրձնախազի հետք: Պատկերը քարացած է, ստատիկ, մինչև վերջ գծված մանրամասեր, ակադեմիական ձեռագիր: | Տեխնիկա. արագ վրձնախազ: Դրամատիկ, կոնտրաստային լուսավորում: Պատկերը շարժական է, դինամիկ: |
| Գիտակցության գերակայություն | Զգացմունքների գերակայություն |
| Խրատ, բարձր բարոյական, քաղաքացիական վարքագծի կոչ | Հերոսական պայքար, կռիվ վայրի կենդանիների հետ, ձանձրալի առօրյայի հետ դիմակայություն |

**Ստեղծագործության վերլուծության ձևաթղթեր.**

**Ստեղծագործությունների համեմատական վերլուծություն 1.** (տպվի գունավոր)

<table>
<tr><td>Դասարան VIII</td><td>Աշակերտ</td><td>Ամիս, ամսաթիվ, տարեթիվ</td></tr>
<tr><td colspan="3">Առաջադրանք.<br>Օգտվելով տրված նկարազարդումներից՝ կատարի՛ր առաջադրանքը՝ ըստ 4 կետերի: Համեմատի՛ր տրված ստեղծագործությունները:<br><br>1. Արվեստի ո՞ր բնագավառի ու ժանրի նմուշներ են ներկայացված: Ի՞նչ ընդհանուր և  տարբերակիչ գեղարվեստական հատկանիշներ ունեն: Ո՞ր պատկերավորման սկզբունքներն ու տարրերն են դրանցում օգտագործված՝ իմաստն ու գաղափարը փոխանցելու համար:<br>2. Դրանցից ո՞րն է կատարվում ըստ սրբանկարչական կանոնագրի, և որն է ռեալիստական ձևերով:<br>3. Դատողություն արա, թե  ինչն է պայմանավորել տարբերությունը նմուշների միջև: Հիմնավորի՛ր քո կարծիքը:<br>4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն  ես  ավելի շատ հավանում և ինչո՞ւ:<br><br>«Եգիպտոսի կարոտը»<br>Սյուժեն. Հովսեփին հայտնվում է մի հրեշտակ և զգուշացնում նրան, որ Հերովդես թագավորից նորածին Հիսուսին վտանգ է սպառնում: Ուստի, նրանք անհապաղ պետք է փախչեին Եգիպտոս, ժամանակավորապես, մինչև վտանգն անցներ: Հովսեփն այդպես էլ վարվեց: Ընտանիքը մեկնեց Եգիպտոս: Երբ նրանք հասան Եգիպտոս, հեթանոսական տաճարներում կուռքերը ընկան:</td></tr>
<tr><td colspan="2">Դուչանո, Կոսովո (Սերբիա), XIV դարի որմնանկար<br><br></td><td>Վիտտորե Կարպաչչո, հաստոցային գեղանկարչություն, 1515 թ.<br><br></td></tr>
</table>

**Ստեղծագործությունների համեմատական վերլուծություն 2.** (տպվի գունավոր)

| **Դասարան VIII** | **Աշակերտ** | **Ամիս, ամսաթիվ, տարեթիվ** |
|---|---|---|

Առաջադրանք.
Օգտվելով տրված նկարազարդումներից՝ կատարի՛ր առաջադրանքը՝ ըստ 4 կետերի: Համեմատի՛ր տրված ստեղծագործությունները:

1. Արվեստի ո՞ր բնագավառի ու ժանրի նմուշներ են ներկայացված: Ի՞նչ ընդհանուր և տարբերակիչ գեղարվեստական հատկանիշներ ունեն: Ո՞ր պատկերավորման սկզբունքներն ու տարրերն են դրանցում օգտագործված՝ իմաստն ու գաղափարը փոխանցելու համար:
2. Դրանցից ո՞րն է կատարվում ըստ սրբանկարչական կանոնագրի, և որն է ռեալիստական ձևերով:
3. Դատողություն արա, թե ինչն է պայմանավորել տարբերությունը նմուշների միջև: Հիմնավորի՛ր քո կարծիքը:
4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն ես ավելի շատ հավանում և ինչո՞ւ:

«Մուտքը Երուսաղեմ»
Սյուժեն. Հիսուս Քրիստոսը հաճախ քայլում էր Երուսաղեմում, բայց Ղազարոսի Հարությունից հետո, որպես մահը պարտության մատնողի, մարդիկ Նրան դիմավորեցին հանդիսավոր բացականչություններով և երգերով: Նրա ոտքերի առջև ծառի ճյուղեր էին փռում, հանում իրենց զգեստներն ու նրա ոտքերի տաք փռում:

| Խճանկար, Պալատինա կապելլա, Պալերմո, Սիցիլիա, XII դ. | Հանս Հոլբեյն (Ավագ), 1501 թ. |
|---|---|
|  |  |

**Ստեղծագործության վերլուծության գնահատման ձևաթղթեր.**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | |
|---|---|
| Ստեղծագործության վերլուծություն.<br><br>Դասարան. VIII Աշակերտ. ——————————— Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.————————<br><br>Առաջադրանքի պայմանը.<br>Քննարկի՛ր ստեղծագործությունը՝ համաձայն հետևյալ կետերի.<br>1. Վերլուծություն (ինչպես են ստեղծագործության մեջ կիրառած պատկերավորման սկզբունքներն ու տարրերը)<br>2. Մեկնաբանություն (ինչում է ստեղծագործության հիմնական գաղափարը)<br>3. Գնահատում (ինչու է այս ստեղծագործությունն արժեքավոր)<br>4. Սեփական վերաբերմունքի փաստարկում<br><br>Ընդհանուր առավելագույն միավորը՝ 10: | |
| 8-10 միավոր | Դատողությունը սպառիչ է, տրամաբանորեն հիմնավորված, երևում է հարցի գիտակցված և կատարյալ իմացություն: Տերմինները ամենուր համարժեքորեն են օգտագործված: |
| 5-7 միավոր | Դատողությունը քիչ թե շատ սպառիչ է, պարունակում է որոշ անճշտություններ կամ փոքր ինչ շեղված է առաջ քաշված խնդրից: Տերմինները հաճախ համարժեք են օգտագործված: |
| 2-4 միավոր | Հարցը մասամբ է գիտակցված, չի պատասխանում պայմանի մեջ տրված բոլոր հարցերին, աշակերտը դժվարանում է վերլուծել արվեստի գործը: Պատասխանը թույլ է, սակայն դատողությունից երևում է, որ աշակերտը հասկանում է պայմանի մեջ դրված հարցի էությունը: Տերմինները հազվադեպ են համարժեք օգտագործված: |
| 0-1 միավոր | Աշակերտը չի կարող զարգացնել դատողությունը: Դատողություն է անում անորոշ, ոչ հետևողական, ոչ համապատասխան և զգալի սխալներ է թույլ տալիս: Չի երևում տերմինների իմացություն: |

**Համեմատական վերլուծության գնահատման ձևաթղթեր.**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

Համեմատական վերլուծություն.

Դասարան. VIII Աշակերտ. —————————— Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.——————

Առաջադրանքի պայմանը.
Օգտագործի՛ր տրված նկարազարդումները և ըստ 4 կետերի կատարի՛ր առաջադրանքը: Միտքդ ձևակերպի՛ր պարզ, հստակ և հիմնավորված:

Առաջադրանք.
Օգտվելով տրված նկարազարդումներից՝ կատարի՛ր առաջադրանքը՝ ըստ 4 կետերի: Համեմատի՛ր տրված ստեղծագործությունները:

1. Արվեստի ո՞ր բնագավառի ու ժանրի նմուշներ են ներկայացված: Ի՞նչ ընդհանուր և տարբերակիչ գեղարվեստական հատկանիշներ ունեն: Ո՞ր պատկերավորման սկզբունքներն ու տարրերն են դրանցում օգտագործված՝ իմաստն ու գաղափարը փոխանցելու համար (3 միավոր):
2. Ըստ ոճական բնութագրիչների՝ հատկացրո՛ւ նմուշները արվեստի պատմության որոշակի ժամանակաշրջանի: Հիմնավորի՛ր քո կարծիքը (3 միավոր):
3. Վերլուծի՛ր ստեղծագործությունը պատմական/կրոնական/սոցիալական/մշակութային համատեքստում: Դատողությո՛ւն արա, թե ինչն է պայմանավորել տարբերությունը նմուշների միջև: Հիմնավորի՛ր քո կարծիքը (3 միավոր):
4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն ես ավելի շատ հավանում և ինչո՞ւ (3 միավոր):

Յուրաքանչյուր կետի համար առավելագույն միավորը՝ 3, ընդհանուր միավորների գումարը՝ 12:

| | |
|---|---|
| 3 միավոր | Դատողությունը սպառիչ է, տրամաբանորեն հիմնավորված, երևում է հարցի գիտակցված և կատարյալ իմացություն: Տերմինները ամենուր համարժեքորեն են օգտագործված: |
| 2 միավոր | Դատողությունը պարունակում է որոշ անճշտություններ կամ փոքր ինչ շեղված է առաջ քաշված խնդրից: Տերմինները հաճախ համարժեք են օգտագործված: |
| 1 միավոր | Հարցը մասամբ է գիտակցված, չի պատասխանում պայմանի մեջ տրված բոլոր հարցերին, աշակերտը դժվարանում է արվեստի գործի համեմատական վերլուծություն կատարել: Պատասխանը թույլ է, սակայն դատողությունից երևում է, որ աշակերտը հասկանում է պայմանի մեջ դրված հարցի էությունը: Տերմինները հազվադեպ են համարժեք օգտագործված: |
| 0 միավոր | Աշակերտը չի կարող զարգացնել դատողությունը: Դատողություն է անում անորոշ, ոչ հետևողական, ոչ համապատասխան և զգալի սխալներ է թույլ տալիս: Չի կիրառում տերմիններ: |

**Համեմատական վերլուծության գնահատման ընդհանուր սխեմա**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | |
|---|---|
| Գնահատման սխեմա.<br>Յուրաքանչյուր կետի համար առավելագույն միավորը՝ 3<br>Ընդհանուր առավելագույն միավորը՝ 12 | |
| 3 միավոր | Համեմատական վերլուծությունը սպառիչ է, դատողությունը տրամաբանորեն հիմնավորված, երևում է հարցի գիտակցված և կատարյալ իմացություն: Տերմինները ամենուր համարժեքորեն են օգտագործված: |
| 2 միավոր | Արվեստի նմուշի համեմատական վերլուծությունը այս կամ այն չափով լրիվ է: Դատողությունը պարունակում է որոշ անճշտություններ կամ փոքր ինչ շեղված է առաջ քաշված խնդրից: Տերմինները հաճախ համարժեք են օգտագործված: |
| 1 միավոր | Հարցը մասամբ է գիտակցված, չի պատասխանում պայմանի մեջ տրված բոլոր հարցերին, աշակերտը դժվարանում է արվեստի գործի համեմատական վերլուծություն կատարել: Պատասխանը թույլ է, սակայն դատողությունից երևում է, որ աշակերտը հասկանում է պայմանի մեջ դրված հարցի էությունը: Տերմինները հազվադեպ են համարժեք օգտագործված: |
| 0 միավոր | Աշակերտը չի կարող զարգացնել դատողությունը: Դատողություն է անում անորոշ, ոչ հետևողական, ոչ համապատասխան և զգալի սխալներ է թույլ տալիս: Չի կիրառում տերմիններ: |

**Պաստառի գնահատման ձևաթուղթ**

SOLO տաքսոնոմիա

Նախակառուցվածքային մակարդակ՝ 0-2 միավոր

Ունիկառուցվածքային մակարդակ՝ 3-4 միավոր

Մուլտիկառուցվածքային մակարդակ՝ 5-6 միավոր

Հարաբերական մակարդակ՝ 7-8 միավոր

Ընդլայնված վերացական մակարդակ՝ 9-10 միավոր:

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

<table>
<tr><td colspan="2">Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ.</td><td>Ուսուցիչ.<br><br>Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.</td></tr>
<tr><td colspan="3">Առաջադրանքի պայմանը.<br>Ստեղծի՛ր պաստառ թեմայով.</td></tr>
<tr><td>Գնահատման խորագրեր</td><td>Միավոր</td><td>Մեկնաբանություն</td></tr>
<tr><td>Աշխատության մեջ օգտագործված է.<br>• Աշխատության մեջ երևում է ստեղծագործական մոտեցում և բնօրինակ մտածողություն: (2 միավոր)<br>• Պատկերավորման սկզբունքներն ու տարրերն ընտրված են ըստ մտահղացման (վառ, հակադիր, ինտենսիվ գույներ, խոշոր տառատեսակ և այլն) և հասնում է ցանկալի արդյունքի: (2 միավոր)<br>• Պահպանված է տեքստի, պատկերի և դատարկ տարածության հարաբերակցությունը: (1 միավոր)<br>• Նյութն ընտրված է ըստ մտահղացման: (1 միավոր)<br>• Գաղափարը ներկայացված է հստակ և հակիրճ: (1 միավոր)<br>• Ծախսված է առավելագույն ջանք: (2 միավոր)<br>• Պահպանված է ժամանակի սահմանաչափը: (1 միավոր)</td><td></td><td></td></tr>
<tr><td>Միավորների գումարը՝ ___________________</td><td></td><td></td></tr>
</table>

**Թվային աշխատության գնահատման ձևաթուղթ**

SOLO տաքսոնոմիա.

Նախակառուցվածքային մակարդակ՝ 0-2 միավոր

Ունիկառուցվածքային մակարդակ՝ 3-4 միավոր

Մուլտիկառուցվածքային մակարդակ՝ 5-6 միավոր

Հարաբերական մակարդակ՝ 7-8 միավոր

Ընդլայնված վերացական մակարդակ՝ 9-10 միավոր:

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեթոդաբանություն:

| | |
|---|---|
| Թվային աշխատություն<br>Դասարան. VIII Աշակերտ ——————----------- Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.<br>Առաջադրանքի պայմանը.<br>Ստեղծի՛ր աշխատություն թվային մեդիայի օգտագործմամբ:<br>Ընդհանուր առավելագույն միավորը՝ 10: | |
| Ստեղծագործականություն | Աշխատանքը կատարվել է ըստ ինքնուրույն, ինքնատիպ մտահղացման:Հասնում է ցանկալի արդյունքի, լիովին պատասխանում է առաջադրանքի պայմանին՝ 4 միավոր:<br>Աշխատանքը գրեթե հասնում է ցանկալի արդյունքի՝ առավելապես պատասխանում է առաջադրանքի պայմանին՝ 2 միավոր:<br>Աշխատանքն աղոտ կերպով է հասնում ցանկալի արդյունքի, վրիպել է առաջադրանքի պայմանից՝ 1 միավոր:<br>Չի բավարարում պահանջները՝ 0 միավոր: |
| Կատարում | Կատարված է կոկիկ՝3 միավոր:<br>Կատարված է աննշան անճշտություններով՝2 միավոր:<br>Կատարված է անփույթ՝ 1 միավոր:<br>Չի բավարարում պահանջները՝ 0 միավոր: |
| Կազմակերպվածություն | Աշակերտը պահպանել է ժամկետները, աշխատանքը վերբեռնել է իր բլոգում, կիսվել է իր դասընկերների և ուսուցչի հետ, աշխատանքին կցված է մանրակրկիտ գրված ռեֆլեքսիա՝ 3 միավոր:<br>Աշակերտը պահպանել է ժամկետները, աշխատանքը վերբեռնել է իր բլոգում, բայց չի կիսվել դասընկերների և ուսուցչի հետ, աշխատանքին կցված է մակերեսային ռեֆլեքսիա՝ 2 միավոր:<br>Աշակերտը պահպանել է ժամկետները, բայց աշխատանքը չի վերբեռնել իր բլոգում, չի կիսվել դասընկերների և ուսուցչի հետ, աշխատանքին չի կցված ռեֆլեքսիա՝ 1 միավոր:<br>Չի բավարարում պահանջները՝ 0 միավոր: |

**Ամփոփիչ գրավորի տպելու ձևաթուղթ.** *Կարող է լինել սև-սպիտակ

<table>
<tr><td colspan="2">Համեմատական վերլուծություն<br>Դասարան. VIII Աշակերտ. —————————— Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.——————<br>Առաջադրանքի պայմանը.<br>Օգտագործի՛ր տրված նկարազարդումները և ըստ 4 կետերի համեմատի՛ր տրված ստեղծագործությունները:<br>1. Արվեստի ո՞ր բնագավառի ու ժանրի նմուշներ են ներկայացված: Ի՞նչ ընդհանուր և տարբերակիչ գեղարվեստական հատկանիշներ ունեն: Ո՞ր պատկերավորման սկզբունքներն ու տարրերն են դրանցում օգտագործված (3 միավոր):<br>2. Ըստ բնութագրիչների՝ հատկացրո՛ւ նմուշները արվեստի պատմության որոշակի ժամանակաշրջանի: Հիմնավորի՛ր քո կարծիքը (3 միավոր):<br>3. Դատողությո՛ւն արա, թե ինչն է պայմանավորել նմուշների միջև ոճական տարբերությունը: Հիմնավորի՛ր քո կարծիքը (3 միավոր):<br>4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը՝ ո՞րն ես ավելի շատ հավանում և ինչո՞ւ (3 միավոր):<br>Յուրաքանչյուր կետի համար առավելագույն միավորը՝ 3:<br>Ընդհանուր միավորների գումարը՝ 12:</td></tr>
<tr><td><br>ք. Շարտրի Նոտր Դամի մայր տաճար, Ֆրանսիա, XII դարի միջին թթ.</td><td><br>ք. Նաումբուրգի մայր տաճար, Գերմանիա, XIII դարի միջին թթ.</td></tr>
</table>

**Ծավալային պատկերը մատիտով նկարելու գնահատման ձևաթուղթ**

| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ. | | Ուսուցիչ.<br><br>Ամսաթիվ, ամիս, տարեթիվ. |
|---|---|---|
| Առաջադրանքի պայմանը.<br>Նկարի՛ր նկար, որում կփոխանցես լուսաստվեր և ծավալ | | |
| Որոշող գնահատման չափանիշներ | Միավոր | Մեկնաբանություն |
| Օգտագործված են ուրվագիծ, նրբագծեր: (1 միավոր)<br>Նշված է ստվերը: (2 միավոր)<br>Նշված է ընկած ստվերը: (1 միավոր)<br>Նշված է ցոլքը և/կամ ռեֆլեքսը: (1 միավոր)<br>Օգտագործված են կիսատոներ: (2 միավոր)<br>Լուսաստվերը համապատասխանում է լույսի աղբյուրին: (1 միավոր) | | |
| Առաջընթաց. աշխատությունը ցուցաբերում է աշակերտի՝ նախորդ աշխատության համեմատ ձեռքբերված առաջընթաց: (2 միավոր) | | |

**Ծավալային պատկերը ներկերով նկարելու գնահատման ձևաթուղթ**

| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ. | | Ուսուցիչ.<br><br>Ամսաթիվ, ամիս, տարեթիվ. |
|---|---|---|
| Առաջադրանքի պայմանը.<br>Նկարի՛ր նկար, որում կփոխանցես լուսաստվեր և ծավալ | | |
| Որոշող գնահատման չափանիշներ | Միավոր | Մեկնաբանություն |
| Օգտագործված է տոնային աստիճանավորումը: (3 միավոր)<br>Նշված է ընկած ստվերը: (1 միավոր)<br>Նշված է ցոլքը և/կամ ռեֆլեքսը: (1 միավոր)<br>Լուսաստվերը համապատասխանում է լույսի աղբյուրին: (1 միավոր)<br>Նշված է ֆոնը: (1 միավոր)<br>Տիրապետում է ջրաներկով/գուաշով աշխատելու տեխնիկային: (2 միավոր) | | |
| Առաջընթաց՝ աշխատությունը ցուցաբերում է աշակերտի՝ նախորդ աշխատության համեմատ ձեռքբերված առաջընթաց (2 միավոր) | | |

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

**Բանավեճի գնահատման սխեմա**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեթոդաբանություն:

| Դասարան. VIII Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.<br>Բանավեճի թեման. Կին արվեստագետները պետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչպիսի իրավունքներից տղամարդիկ: | | | | |
|---|---|---|---|---|
| Գնահատում | Հաջողակ | Զարգացող | Սկսնակ | 0 |
| **Կազմակերպ-վածություն.** | **Միշտ** պահպանում էր ժամանակի սահմանաչափը, բանավեճի կանոնները, ակտիվորեն ներգրավված էր բանավեճի ընթացքի բոլոր փուլերում: | **Հաճախ** պահպանում էր ժամանակի սահմանաչափը, բանավեճի կանոնները, ակտիվորեն ներգրավված էր բանավեճի ընթացքի փուլերի մեծ մասում: | **Հազվադեպ** էր պահպանում ժամանակի սահմանաչափը, բանավեճի կանոնները, ներգրավված էր բանավեճի ընթացքի որոշ փուլերում: | Չէր զգացվում աշակերտի ներգրավվածությունը |
| **Փաստարկում. օրինակներ, վիճակագրական տվյալներ, փաստեր** | Հիմնավորումը միշտ պատշաճ էր, համոզիչ, ձեռք բերված վստահելի աղբյուրներից (գիրք, հանրագիտարան, պաշտոնական կայքէջեր): | Հիմնավորումն առավելապես պատշաճ էր, համոզիչ, ձեռք բերված ոչ վստահելի աղբյուրներից (օրինակ՝ Վիկիփեդիա): | Հիմնավորումը հազվադեպ էր պատշաճ, համոզիչ, հաճախ միակողմանի, նվազագույն: | |
| **Ճարտարա-խոսություն. կարծիքի հստակ ձևակերպում, ժեստեր, աչքերով կապ** | Միտքը միշտ ձևակերպում էր հստակ, հասկանալի, միշտ կիրառում էր համապատասխան ժեստեր, լսարանի հետ աչքերով կապ էր հաստատում, միշտ ինքնավստահություն էր դրսևորում: | Միտքը հաճախ ձևակերպում էր հստակ, հասկանալի, կիրառում էր համապատասխան ժեստեր, լսարանի հետ աչքերով կապ էր հաստատում, երբեմն ինքնավստահություն էր դրսևորում: | Միտքը հազվադեպ էր ձևակերպում հստակ, հասկանալի, հազվադեպ էր կիրառում համապատասխան ժեստեր, լսարանի հետ հազվադեպ էր աչքերով կապ հաստատում և ինքնավստահություն դրսևորում: | |
| **Կոռեկտություն. խոսելու տոնը, բառապաշարը** | Խոսում էր հանգիստ, բառապաշարը միշտ կոռեկտ էր, զգացվում էր հակառակ կարծիք արտահայտողների նկատմամբ հարգանք, սպասում էր մինչև ուրիշն իր միտքն արտահայտեր, նրանց լսում էր ուշադիր: | Խոսելիս մի քանի անգամ բարձրացրեց ձայնի տոնը, բառապաշարը կոռեկտ էր, զգացվում էր հակառակ կարծիք արտահայտողների նկատմամբ հարգանք, սպասում էր մինչև ուրիշն իր միտքն արտահայտեր, նրանց լսում էր ուշադիր: | Խոսելիս բարձրացնում էր ձայնի տոնը, բառապաշարը հազվադեպ էր կոռեկտ, չէր զգացվում հակառակ կարծիք արտահայտողների նկատմամբ հարգանք, չէր սպասում մինչև ուրիշն իր միտքն արտահայտեր, նրանց հազվադեպ էր լսում ուշադիր: | |

**Համալիր առաջադրանք «Դիմանկար»** **Առավելագույնը՝ 30 միավոր**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեթոդաբանություն:

| |
|---|
| **Կազմակերպվածություն** (առավ.՝ 10 միավոր) |
| Աշակերտը պահպանել է բոլոր ժամկետները: 1 միավոր<br>Աշխատությանը կցված է բոլոր փուլերը արտացոլող նյութ (ուրվագիծ, մտավոր գրոհի և ասոցիատիվ ցանցի գրաֆիկական սխեմաներ, ռեֆլեքսիայի լրացված հարցաթերթիկ և այլն): 4 միավոր<br>Ներկայացված է անվանի արվեստագետների դիմանկարների նախապես անցկացված հետազոտություն: Աշակերտը վերլուծել է դրանց գեղարվեստական լեզուն և այն կապել իր իսկ նպատակների հետ: 4 միավոր<br>Ստեղծագործությունը վերբեռնված է բլոգում: 1 միավոր |
| **Ստեղծագործականություն** (առավելագույնը 5 միավոր) |
| Կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն օգտագործվում են մտածված, ինքնատիպ ձևով և ստեղծագործաբար: Դրանց միջոցով աշակերտը լիովին հասել է իր առջև դրված նպատակին/ցանկալի էֆեկտի: 5 միավոր |
| **Ջանք և կատարում** (առավելագույնը 5 միավոր) |
| Երևում է աշակերտի աշխատասիրությունը, հետևողականությունը, ջանքերը: 2 միավոր<br>Աշխատությունը հասցվել է եզրափակիչ փուլ: 1 միավոր<br>Աշխատությունը կանոնավոր է: 1 միավոր<br>Երևում է առաջընթաց՝ համեմատած աշակերտի նախորդ աշխատությունների հետ: 1 միավոր |
| **Ներկայացում** (առավել. 5 միավոր) |
| Աշխատության ներկայացումը հետաքրքիր է ընթացել: Աշակերտը խոսում էր հստակ և ինքնավստահ: 2 միավոր<br>Աշակերտը համարժեքորեն էր օգտագործում հատուկ տերմինները: 1 միավոր<br>Աշակերտը անմիջական կապ հաստատեց լսարանի հետ: 1 միավոր<br>Աշակերտը պատասխանեց բարձրացված հարցերին: 1 միավոր |
| **Ռեֆլեքսիա** (առավել. 5 միավոր) |
| Աշակերտը մանրակրկիտ վերլուծեց առաջադրանքի պայմանները: 1 միավոր<br>Վերլուծեց ստեղծագործական գործընթացի բոլոր փուլերը: 1 միավոր<br>Գիտակցեց աշխատության ուժեղ և թույլ կողմերը: 1 միավոր<br>Սահմանեց համարժեք ապագա նպատակներ: 1 միավոր<br>Նախանշեց ապագա նպատակներին հասնելու ուղիներ: 1 միավոր |

**Նատյուրմորտի գնահատման սխեմա**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեթոդաբանություն:

| Աշակերտ | Գնահատման չափանիշներ<br>SOLO տաքսոնոմիա<br>Նախակառուցվածքային մակարդակ` 0-2 միավոր<br>Ունիկառուցվածքային մակարդակ` 3-4 միավոր<br>Մուլտիկառուցվածքային մակարդակ` 5-6 միավոր<br>Հարաբերական մակարդակ` 7-8 միավոր<br>Ընդլայնված վերացական մակարդակ` 9-10 միավոր: | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կոմպոզիցիա | Ձև/ծավալ | Գույն | Ֆակտուրա | Տարածություն | Ամփոփիչ միավոր |
| | Հաջողեցնում է նկարելու օբյեկտները նկարի հարթության վրա կոմպոզիցիոն բաշխել, (հավասարակշռությունը պահպանել, փոխհարաբերակցությունը փոխանցել): 0-2 միավոր | Ըստ ցանկության պահպանում է առարկայի համամասնությունները և կարողանում է փոխանցել դրանց ծավալը լուսաստվերի միջոցով: 0-2 միավոր | Լույսի խնդիրը աշխատության մեջ լուծված է ստեղծագործաբար: 0-2 միավոր | Կարողանում է փոխանցել նկարելու առարկայի (իրերի, ծալազարդման (գործվածքի) ֆակտուրան): 0-2 միավոր | Կարողանում է տարածության էֆեկտ ստեղծել (առջևի տեսարան, միջին տեսարան, ետին տեսարան (ֆոն)): 0-2 միավոր | Միավորների առավելագույն քանակը` 10 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

**Բնանկարի գնահատման սխեմա**

*Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| Աշակերտ | Գնահատման չափանիշներ<br>SOLO տաքսոնոմիա<br>Նախակառուցվածքային մակարդակ՝ 0-2 միավոր<br>Ունիկառուցվածքային մակարդակ՝ 3-4 միավոր<br>Մուլտիկառուցվածքային մակարդակ՝ 5-6 միավոր<br>Հարաբերական մակարդակ՝ 7-8 միավոր<br>Ընդլայնված վերացական մակարդակ՝ 9-10 միավոր: | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կոմպոզիցիա | Գույն | Օդային հեռանկար | Հեռանկար | Մասշտաբ | Ամփոփիչ միավոր |
| | Հաջողեցնում է նկարելու օբյեկտները նկարի հարթության վրա կոմպոզիցիոն բաշխել, (հավասարակշռությունը պահպանել, փոխհարաբերակցությունը փոխանցել):<br>0-2 միավոր | Գույնի խնդիրն աշխատության մեջ ստեղծագործաբար է լուծված:<br>0-2 միավոր | Փոխանցում է տարածություն՝ օդային հեռանկարի միջոցով:<br>0-2 միավոր | Փոխանցում է տարածություն՝ գծային հեռանկարի միջոցով:<br>0-2 միավոր | Տարբեր տեսադաշտերում պատկերված առարկաների միջև պահպանված է մասշտաբային հարաբերակցությունը:<br>0-2 միավոր | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

**Եռաչափ մանրակաղապարի գնահատման ձևաթուղթ**

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

Դասարան. VIII
Թեմատիկ միավոր. ___________________________
Աշակերտ ___________________________

| 0 | 1-2 | 3-4 | 5-6 | 7-8 | 9-10 |
|---|---|---|---|---|---|
| Աշխատությունը պատասխանում է չափորոշչին | **Էսքիզ** | | | | |
| | Մանրակա-ղապարի էսքիզը մակերեսային տվյալներ է տալիս: | Մանրակաղա-պարի էսքիզը ընդհանուր տվյալներ է տալիս, առանց մանրամասների: | Մանրակաղա-պարի էսքիզը ընդհանուր տվյալներ է տալիս, և մանրամասներ: | Մանրակա-ղապարի էսքիզը տալիս է հիմնական տվյալներ և մանրամասներ: | Մանրակաղապարը նախատեսում է բոլոր մանրամասն տվյալները (չափ, ձև, նյութ, տեխնիկա): |
| | **Ստեղծագործականություն** | | | | |
| | Երևում է մակերեսային վերաբերմունք: | Ստեղծագոր-ծությանը պակասում է ստեղծագոր-ծական մոտեցումը: | Ստեղծա-գործության մեջ թույլ է երևում ստեղծագոր-ծական մոտեցումը: | Ստեղծա-գործության մեջ երևում է ստեղծա-գործական մոտեցումը: | Ստեղծա-գործության մեջ երևում է հարցի ինքնօրինակ գիտակցում: |
| | **Մանրակաղապարի տեխնիկական կողմը** | | | | |
| | Ընտրված նյութն անհամա-պատասխան է, աշխատությունը մաքուր չէ: Մանրակա-ղապարին պակասում է ամրությունը: | Նյութի մի մասն ընտրված է խնդրին համա-պատասխան: Մանրակաղա-պարին պակասում է կոկիկությունը և ամրությունը: | Նյութի մեծ մասն ընտրված է համապա-տասխան: Մանրակա-ղապարին պակասում է կոկիկությունը և ամրությունը: | Նյութն ընտրված է համապա-տասխան: Աշխա-տությունն առավելապես կոկիկ է և ամուր: | Բոլոր նյութերն ընտրված են խնդրին համապատասխան: Աշխատությունը կոկիկ է և ամուր: |
| | **Կազմակերպվածություն** | | | | |
| | Աշխատության վրա նվազագույն ջանք է ծախսված: Ժամկետներն ու ժամանակի սահմանաչափը չեն պահպանված: | Աշխատության վրա մի փոքր ջանք է ծախսված: Ժամկետներն ու ժամանակի սահմանաչափը չեն պահպանված: | Աշխատության վրա աննշան ջանք է ծախսված: Ժամկետներն ու ժամանակի սահմանաչափը պահպանված են: | Աշխատության վրա նշանա-կալի ջանք է ծախսված: Ժամկետներն ու ժամանակի սահմանաչափը պահպանված են: | Աշխատության վրա առավելագույն ջանք է ծախսված: Ժամկետներն ու ժամանակի սահմանաչափը պահպանված են: |

**Էքսկուրսիայի ժամանակ լրացվելիք ձևաթուղթ** (ցանկալի է, ուրվանկարներ անելու վանդակները մինչև տպելը մեծացվեն)

| Դասարան. VIII Աշակերտ Ամսաթիվ, ամիս, տարեթիվ.<br><br>Էքսկուրսիա (տաճարի/եկեղեցու գտնվելու վայրը, անվանումը) | |
|---|---|
| Կառուցման տարեթիվը | |
| Զարդանկարման տարեթիվը | |
| Ի՞նչ վիճակում է տաճարը: | |
| Ի՞նչ վիճակում են որմնանկարները: | |
| Ո՞ր որմնանկարների սյուժեն ճանաչեցիր: | |
| Ընտրի՛ր որմնանկարներից մեկը և նկարագրի՛ր բանավոր: | |
| Կատարի՛ր էքստերիերի ուրվանկար: | |
| Կատարի՛ր որևէ որմնանկարի կամ նրա դրվագի ուրվանկար: | |

## ԱՆԻՄԱՑԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

Դասարան. VIII
Թեմատիկ միավոր. Մարդը արվեստում
Նախագծի վրա աշխատող խմբի անդամներ.

**Առաջադրանքի պայմանը.** Թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ խմբում ստեղծե՛ք 1-2 րոպեանոց անիմացիա «Շարժվող մարդուկ» թեմայով: Վերբեռնե՛ք աշխատությունը անձնական և դասարանի բլոգներում: Լրացրե՛ք ռեֆլեքսիայի հարցաշարը:

| **Որոշող գնահատման չափանիշներ** | Միավոր | Մեկնաբանություն |
|---|---|---|
| **Ստեղծագործականություն և փորձառություն.**<br>• Խումբը առաջադրանքի համար ընտրել է համապատասխան նյութեր, տեխնիկա և գեղարվեստական արտահայտչականության տարրեր: Պատկերը համապատասխանում է առաջադրանքի պայմանին, կոկիկ է կատարված, շարժումը հետևողական է, միտքը հասկանալի է փոխանցված **(1 միավոր)**:<br>• Աշխատության վրա ծախսված է առավելագույն ստեղծագործական ջանք: Արդյունքը գերազանցել է սպասումները **(1 միավոր)**: | | |
| **Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում.**<br>• Աշխատությունը կատարված է անիմացիոն համակարգչային ծրագրի օգտագործմամբ **(1 միավոր)**:<br>• Աշխատությունը տեղադրված է կայքում/բլոգում **(1 միավոր)**: | | |
| **Կազմակերպվածություն (գնահատվում է` դիտարկելով խմբային աշխատանքի ընթացքը և յուրաքանչյուր աշակերտի անհատական ռեֆլեքսիայի հիման վրա)**<br>• Խումբը նախապես սահմանել էր`առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար պահանջվող գիտելիքներն ու հմտությունները **(1 միավոր)**:<br>• Խումբը նախապես որոշել է կատարվելիք աշխատանքների փուլերը **(1 միավոր)**:<br>• Խումբն արդյունավետորեն օգտագործեց հատկացված ժամանակը և պահպանեց ժամկետները **(1 միավոր)**: | | |
| Համագործակցություն **(գնահատվում է` դիտարկելով խմբային աշխատանքի ընթացքը և յուրաքանչյուր աշակերտի անհատական ռեֆլեքսիայի հիման վրա)**<br>• Խմբի անդամները հավասար, ողջամիտ և արդյունավետ բաշխեցին կատարվելիք աշխատանքը **(1 միավոր)**:<br>• Խմբի անդամները պատասխանատվությամբ մոտեցան իրենց հանձնարարված գործին **(1 միավոր)**:<br>• Խմբի անդամները էթիկայի նորմերի պահպանմամբ, կառուցողական էին քննարկում տարբեր գաղափարներ, տեսակետներ, կիսվում էին միմյանց հետ ռեսուրսներով, գաղափարներով և գիտելիքներով` խնդիրների լուծման, որոշումների համատեղ ընդունման համար **(1 միավոր)**: | | |

Ընդհանուր միավորներ ____________
Ուսուցիչ _______________ Ամսաթիվ _________

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎԱԹՈՒՂԹ

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | | |
|---|---|---|
| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ. | | |
| Առաջադրանքի պայմանը.<br>Ստեղծի՛ր աշխատություն<br>Թեմա ______ Տեխնիկա. ______ Նյութ. ______ | | |
| Որոշող գնահատման չափանիշներ | Միավոր | Մեկնաբանություն |
| **Ստեղծագործականություն.**<br><br>Աշակերտը կարող է աշխատություն ստեղծել ինքնարտահայտման համար՝ նպատակին համապատասխան ռազմավարությունների, գեղարվեստական պատկերավորման սկզբունքների, նյութի և տեխնիկայի գիտակցաբար և ստեղծագործաբար կիրառմամբ (**4 միավոր**):<br>Աշխատություն ստեղծելիս՝ աշակերտը կարող է ինքը նախանշել և լուծել ստեղծագործական խնդիր. նպատակին համապատասխան ընտրել գեղարվեստական պատկերավորման սկզբունքներ, նյութեր, տեխնիկա, գեղարվեստական ոճ (**4 միավոր**): | | |
| **Առաջընթաց**<br>Աշխատությունը բացահայտում է աշակերտի կողմից նախորդ աշխատանքներում դրսևորված թույլ կողմերը, սեփական խնդիրների հաղթահարումն ու առաջընթացը (**2 միավոր**): | | |

Ընդհանուր միավորներ ____________

Ուսուցիչ _______________ Ամսաթիվ _________

## ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎԱԹՈՒՂԹ

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | |
|---|---|
| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ. | |
| Առաջադրանքի պայմանը. Նկարի՛ր աշխատություն՝ գծային հեռանկարի օգտագործմամբ. | |
| Որոշող գնահատման չափանիշներ | **Միավոր** |
| **9-10 միավոր.** Աշխատության մեջ արտացոլված բոլոր առարկաներն, ըստ հեռավորության, չափով փոքրանում են: Բացի մեծ ձևերից, մանրամասները նույնպես ներկայացված են գծային հեռանկարով: Բոլոր գծերը հավաքվում են հավաքման կետում: Բոլոր ուղղահայացները ճիշտ են կառուցված: Աշխատության մեջ ակնհայտորեն երևում է ստեղծագործական մոտեցում և ինքնօրինակ մտահղացում: Աշխատությունը կոկիկ է: Բոլոր օժանդակ գծերը ջնջված են: Երևում են աշխատանքի վրա ծախսված ջանքերը: | |
| **8-7 միավոր.** Աշխատության մեջ արտացոլված մի քանի առարկաներ, ըստ հեռավորության, չափով փոքրանում են: Բացի մեծ ձևերից, մի քանի մանրամասներ նույնպես ներկայացված են գծային հեռանկարով: Գրեթե բոլոր գծերը հավաքվում են հավաքման մեկ կետում: Գրեթե բոլոր ուղղահայացները ճիշտ են կառուցված: Աշխատությունը կոկիկ է: Օժանդակ գծերի մեծ մասը ջնջված է: Որոշ չափով երևում են աշխատանքի վրա ծախսված ջանքերը: | |
| **5-6 միավոր.** Աշխատության մեջ արտացոլված մի քանի առարկաներ չափով փոքրանում են: Աշխատության մեջ կան միայն խոշոր առարկաներ, առանց մանրամասների: Մի երկու գիծ հավաքվում են հավաքման մեկ կետում: Մի քանի ուղղահայաց ճիշտ են կառուցված: Աշխատությունը մասամբ կոկիկ է: Աշխատանքի վրա ծախսված ջանքերը թույլ են երևում: | |
| **3-4 միավոր.** Ստեղծագործությունը պատկերում է մեկ առարկա առանց մանրամասների, որը խորության մեջ նվազում է գծային հեռանկարի մեթոդի օգտագործմամբ: Մի երկու գիծ հավաքվում են հավաքման կետում: Որոշ ուղղահայացներ թեքված են: Աշխատանքի մեջ չի երևում կոկիկություն և գործադրած ջանք: | |
| **1-2 միավոր.** Աշխատանքն անավարտ է, պատկերում է մեկ առարկա՝ առանց մանրամասների: Խորքում նվազումը շեղված է հեռանկարի գծերից: Բոլոր ուղղահայացները թեքված են: Աշխատանքի մեջ չի երևում ստեղծագործական մոտեցում և գործադրած ջանք, աշխատանքը մաքուր չէ: | |
| **0 միավոր.** Աշխատանքը չի համապատասխանում որևէ պահանջի: | |

Ընդհանուր միավորներ ____________

Ուսուցիչ _______________ Ամսաթիվ _________

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | | |
|---|---|---|
| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր.<br>Աշակերտ. | | |
| Առաջադրանքի պայմանը.<br>Անցկացրո՛ւ հետազոտություն, գտի՛ր տեղեկություննեն և թեմայի վերաբերյալ ——————————<br>Կատարի՛ր ------- րոպեանոց զեկուցում դասարանի ներկայությամբ | | |
| Որոշող գնահատման չափանիշներ | Միավոր | Մեկնաբանություն |
| **Հետազոտություն**<br>• Տեղեկություններ գտնելու համար աշակերտը ընտրեց, օգտագործեց և մատնանշեց բազմազան և հուսալի աղբյուրներ և համապատասխան ռեսուրսներ **(2 միավոր)**:<br>• Զեկույցը ներկայացնում է հարցի վերլուծություն, մեկնաբանություն և գնահատում (1 միավոր): Աշակերտը հետազոտությունը ներկայացրեց կազմակերպված ձևով **(1 միավոր)**: | | |
| **Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում**<br>• Հետազոտությունն իրականացվել է ցանցային որոնման միջոցով **(1 միավոր):** | | |
| **Գրագիտություն**<br>• Աշակերտը դրսևորում է բանավոր արտահայտվելու միջոցով, համապատասխան նկարազարդումների օգնությամբ տեղեկատվության ներկայացման և դրանցով կիսվելու ունակություններ **(1 միավոր)**: | | |
| **Կազմակերպվածություն**<br>• Աշակերտը պահպանեց զեկույցը պատրաստելու համար սահմանված ժամկետը **(1 միավոր)**:<br>• Աշակերտը պահպանեց զեկույցի համար սահմանված ժամանակի սահմանաչափը **(1 միավոր)**: | | |
| **Առաջընթաց**<br>• Ստեղծագործությունը բացահայտում է աշակերտի կողմից նախորդ աշխատանքներում դրսևորված թուլությունները, սեփական խնդիրների հաղթահարումը և ձեռքբերված առաջխաղացումը **(2 միավոր)**: | | |

Ընդհանուր միավորներ ____________

Ուսուցիչ _______________ Ամսաթիվ _________

## Power Point ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

| |
|---|
| Դասարան. VIII<br>Թեմատիկ միավոր. ___________________________________<br>Աշակերտ. __________________________________ |
| Առաջադրանքի պայմանը.<br>Պատրաստի՛ր Power Point շնորհանդես թեմայով ______________________________<br>Վերբեռնի՛ր համացանցում: Հղումը հրապարակի՛ր քո բլոգում |
| **9-10 միավոր.** Երևում է թվային տեխնոլոգիա օգտագործելու ունակությունը: Տեքստը սահուն է և լակոնիկ: Տառատեսակը պարզ է և ոչ մի տեղ չի ծածկում նկարազարդման հիմնական մանրամասները: Օգտագործվել են շրջանակ, ֆոն, սլայդերի անցման էֆեկտներ: Պատմությունը պարզ է և հասկանալի: Շնորհանդեսը վերբեռնված է համացանցում: Հղումը հրապարակված է անհատական բլոգում: Շնորհանդեսին կցված է վերնագիր, հեղինակի ինքնությունը և օգտագործված ռեսուրսների ցանկ: Նկատվում է ունակությունների զարգացման մեծ առաջընթաց: |
| **7-8 միավոր.** Երևում է թվային տեխնոլոգիա օգտագործելու ունակությունը: Տեքստը լակոնիկ է: Բացառությամբ մի քանի սխալների, սահուն է: Տառատեսակը պարզ է և գրեթե ոչ մի տեղ չի ծածկում նկարազարդման հիմնական մանրամասները: Շատ սլայդերում օգտագործվել են շրջանակ, ֆոն, սլայդերի անցման էֆեկտներ: Պատմությունը պարզ է և հասկանալի: Շնորհանդեսը վերբեռնված է համացանցում: Հղումը հրապարակված է անհատական բլոգում: Շնորհանդեսին կցված է վերնագիր, հեղինակի ինքնությունը և օգտագործված ռեսուրսների ցանկ: Նկատվում է ունակությունների զարգացման առաջընթաց: |
| **5-6 միավոր.** Երևում է թվային տեխնոլոգիա օգտագործելու միջին ունակությունը: Ցանկալի է, որ տեքստն ավելի խոշոր տառատեսակով լինի հավաքած: Որոշ սլայդերի տեքստը պետք է համառոտվի: Մի քանի նշանակալի սխալների բացառությամբ, տեքստը սահուն է: Տեքստը որոշ սլայդերում ծածկում է նկարազարդման հիմնական մանրամասները: Որոշ սլայդերում օգտագործվել են շրջանակի, ֆոնի, սլայդերի անցման էֆեկտներ: Շնորհանդեսը որոշ չափով ոչ հստակ է: Շնորհանդեսը վերբեռնված է համացանցում: Հղումը հրապարակված է անհատական բլոգում: Շնորհանդեսին կցված է վերնագիր, հեղինակի ինքնությունը, բայց պակասում է օգտագործված ռեսուրսների ցանկը: Նկատվում է ունակությունների զարգացման միջին առաջընթաց: |
| **3-4 միավոր.** Երևում է թվային տեխնոլոգիա օգտագործելու միջին սկզբնական ունակություն: Ցանկալի է, որ տեքստը խոշոր տառատեսակով լինի հավաքած: Տեքստը պետք է կրճատվի: Տեքստի մեջ շատ սխալներ են թույլ տրված: Սլայդերի հաջորդականությանը պակասում է կազմակերպվածություն: Տեքստը հաճախ ծածկում է նկարազարդման հիմնական մանրամասները: Շնորհանդեսը որոշ չափով անորոշ է: Շնորհանդեսը պետք է վերբեռնվի համացանցում: Հղումը պետք է տեղադրվի անձնական բլոգում: Շնորհանդեսին կցված է վերնագիր, բայց պակասում են հեղինակի ինքնությունը և օգտագործված ռեսուրսների ցանկը: Նկատվում է ունակությունների զարգացման մի փոքր առաջընթաց: |
| **1-2 միավոր.** Չի երևում թվային տեխնոլոգիա օգտագործելու ունակություն: Տեքստը ծավալուն է, ամենուր թույլ են տրված սխալներ: Սլայդերի հաջորդականությունը չունի կազմակերպվածություն: Չի պահպանված տեքստի և նկարազարդման հավասարակշռությունը: Տեքստը մանր է մուտքագրված՝ ծածկում է նկարազարդման հիմնական մանրամասները: Չեն օգտագործված էֆեկտներ: Շնորհանդեսն անորոշ է: Շնորհանդեսը պետք է վերբեռնվի համացանցում: Հղումը պետք է տեղադրվի անձնական բլոգում: Շնորհանդեսին կցված է վերնագիր, բայց պակասում են հեղինակի ինքնությունը և օգտագործված ռեսուրսների ցանկը: Նկատվում է ունակությունների զարգացման թույլ առաջընթաց: |
| **0 միավոր.** Աշխատանքը չի համապատասխանում չափորոշչին: |
| Միավոր ___________<br>Ուսուցիչ ____________________<br>Ամսաթիվը ___________ |

## ԷՍՍԵԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեթոդաբանություն:

| |
|---|
| Թեմատիկ միավոր. ______________________________<br>Դասարան. VIII |
| Առաջադրանքի պայմանը.<br>Գրի՛ր էսսե թեմայով ______________________________<br>Վերբեռնի՛ր բլոգում/կայէջում<br>Հղումը հրապարակի՛ր քո բլոգում |
| Որոշող գնահաման խորագրեր |
| **9-10 միավոր.**<br>Հանձնարարության պայմանը համարժեքորեն է հասկացվել: Երևում է ինքնուրույն մտածելու ունակությունը: Դատողությունը հետևողական է: Մասերի միջև անցումները տրամաբանական են: Փաստարկները համոզիչ են, ամրապնդված օրինակներով: Օրինակների ընտրությունը միշտ խելամիտ է: Սպեցիֆիկ տերմինները միշտ համարժեք են օգտագործված: Հմտությունների զարգացման մեծ առաջընթաց է նկատվում: |
| **7-8 միավոր.**<br>Հանձնարարության պայմանը գրեթե համարժեքորեն է հասկացվել: Երևում է ինքնուրույն մտածելու ունակությունը: Առավելապես, դատողությունը հետևողական է: Մասերի միջև անցումները տրամաբանական են: Փաստարկները հաճախ համոզիչ են, ամրապնդված օրինակներով: Օրինակների մեծ մասի ընտրությունը խելամիտ է: Սպեցիֆիկ տերմիններն առավելապես համարժեք են օգտագործված: Հմտությունների զարգացման մեծ առաջընթաց է նկատվում: |
| **5-6 միավոր.**<br>Հանձնարարության պայմանը մասամբ համարժեքորեն է հասկացվել: Դատողությունը մասամբ հետևողական է: Որոշ մասերի միջև անցումը տրամաբանական է: Փաստարկները մասամբ համոզիչ են, երբեմն հիմնավորված են օրինակներով: Օրինակների ընտրությունը երբեմն ողջամիտ է: Հատուկ տերմինները երբեմն համարժեք են օգտագործվում: Հմտությունների զարգացման մեջ միջին առաջընթաց է նկատվում: |
| **3-4 միավոր.**<br>Հանձնարարության պայմանը մասամբ համարժեքորեն է հասկացվել: Դատողությունը հազվադեպ է հետևողական: Մասերի միջև անցումները զուրկ են տրամաբանությունից: Մի երկու փաստարկ համոզիչ է, հազվադեպ է ամրապնդված օրինակներով: Օրինակների ընտրությունը մակերեսային է: Սպեցիֆիկ տերմինները հազվադեպ են համարժեք օգտագործված: Հմտությունների զարգացման թույլ առաջընթաց է նկատվում: |
| **1-2 միավոր.**<br>Հանձնարարության պայմանը ոչ համարժեքորեն է հասկացվել: Դատողությունը ոչ հետևողական է: Մասերի միջև անցումներն անտրամաբանական են: Փաստարկները մակերեսային են, չեն ամրապնդված օրինակներով: Օրինակների ընտրությունը պատահական է: Սպեցիֆիկ տերմիններ չեն օգտագործված: Չի նկատվում հմտությունների զարգացման առաջընթաց: |
| 0 միավոր. Աշխատանքը չի համապատասխանում չափորոշչին: |
| Միավոր ____________<br>Ուսուցիչ _______________________ Ամսաթիվ ___________ |

## ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

* Ուսուցիչը կարող է խորագրերի հանգուցային բառերի դեմքի նշանը փոխել և կիրառել, որպես զարգացնող գնահատման մեկնաբանություն:

| | |
|---|---|
| Թեմատիկ միավոր. ______________________________<br>Դասարան. VIII | |
| **Առաջադրանքի պայմանը.**<br><br>Վերբեռնի՛ր բլոգում: Լրացրո՛ւ ռեֆլեքսիայի հարցարանը: | Միավոր<br>0-2 |
| **Հետազոտություն.**<br>Աշակերտը փայլուն/միջին/մակերեսորեն անցկացրեց հետազոտությունը (գրքի, ինտերնետի, մասնագետի հետ զրույցի միջոցով), արձանագրեց և տեսակավորեց աղբյուրներն ու տվյալները, համապատասխանաբար եզրակացություններ արեց: Երևում է գրագիտության փայլուն/միջին/ թույլ ունակություն: | |
| **Կազմակերպում.**<br>Աշխատանքը փայլուն/չափավոր/մակերեսորեն պլանավորվեց փուլերով: Աշխատանքին կցված է մանրամասն/ընդհանուր/ոչ հստակ էսքիզ: Ժամանակն օգտագործված է առավելագույն/մասնակի/նվազագույն արդյունավետորեն: Երևում է նախագծի վրա ծախսված մեծ/միջին/թույլ ջանք: Երևում է ունակությունների զարգացման ուժեղ/միջին/թույլ առաջընթաց: Ստեղծագործությունը վերբեռնված է բլոգում:<br>Ռեֆլեքսիայի հարցաթերթիկը լցված է սպառիչ/կարճ/մակերեսային պատասխաններով: | |
| **Աշխատություն.**<br>Աշխատության մեջ երևում է օրիգինալ/ոչ օրիգինալ/մակերեսային ստեղծագործական մոտեցում (նյութի, տեխնիկայի, պատկերավորման սկզբունքների ու տարրերի ընտրություն և օգտագործում): Աշխատությունը փայլուն/մասամբ/թույլ է համապատասխանում առաջադրանքի պայմանին, ավարտված է և կարգավորված: | |
| **Շնորհանդես.**<br>Աշխատության ներկայացումը շատ/միջին/պակաս արդյունավետ էր: Շփումը հանդիսատեսի հետ, խոսքը և շարժումը՝ պատշաճ: Պատշաճ/ոչ պատշաճ են օգտագործվել շատ/ մի քանի/մի քիչ հատուկ տերմիններ: Ճիշտ/մասամբ/չի կարողացել տեղավորվել ժամանակի սահմանաչափում: | |
| **Ռեֆլեքսիա.**<br>Ստեղծագործական գործընթացի փուլերը (գաղափարից մինչև պատրաստի մթերք) մտածված են մանրամասն/ընդհանուր առմամբ/մակերեսորեն: Երևում է թույլ և ուժեղ կողմերի օբյեկտիվ/ոչ օբյեկտիվ գնահատելու ունակություն: Նախանշված են բարելավման բազմազան/ընդհանուր / մակերեսային ուղիները: | |

Միավոր. ____________

Ուսուցիչ. __________________

Ամսաթիվ. _________

# ԲԱՌԱՐԱՆ

### Ա

**Աբստրակցիա՝ վերացարկում** – ընդհանրացված անառարկա արվեստ:

**Ագիտացիա** – բանավոր, տպագիր կամ կերպարվեստի միջոցով հասարակության քաղաքական գիտակցության վրա ազդելու, ագիտատորի օգտին նրանց համոզելու փորձ:

**Ամպիր** – ուշ կլասիցիզմ, առաջացել է Ֆրանսիայում, Նապոլեոն I-ի կառավարման ժամանակ:

**Այլաբանություն** – անուղղակի կերպով, ենթատեքստով, ակնարկով ասելիքը փոխանցելու գեղարվեստական միջոց:

**Անֆաս, դեմուղիղ** – դիմահայաց, մարդու պատկերը դեմից:

**Արկբուտան** – օդում կախված քարե կիսակամար, որով գոթական տաճարում հենման մույթերը հենվում են պատին:

### Բ

**Բազիլիկ** – սյունաշարերով ներքուստ երեք կամ հինգ երկայնական մասերի՝ այսպես կոչված նավերի բաժանված անգմբեթ կառույց:

**Բապտիստերիում** – մկրտարան:

**Բարձրաքանդակ** – բարձր ռելիեֆ:

**Բարոկկո** – XVII-XVIII դարերի դարաշրջան և ոճ եվրոպական արվեստում:

**Բյուրգեր** – ունևոր քաղաքացի:

**Բոդեգոն** – նկարներ էժանագին պանդոկների տեսարաններով:

### Գ

**Գաղափարախոսություն** – արժեքներ և պատկերացումներ, որոնք սահմանում են մարդկանց վերաբերմունքն իրականության և միմյանց նկատմամբ:

**Գեղագիր** – գիրք արտագրող:

**Գեղագրություն** – գեղեցիկ գրելու արվեստ:

**Գլխագիր** – պարբերության առաջին, մեծ չափի, զարդանկարներով ձևավորված տառ:

**Գծային հեռանկար** – հարթության վրա տարածության եռաչափ պատրանքով փոխանցման գեղարվեստական մեթոդ: Գծային հեռանկարի գիտական հետազոտություններում առանձնահատուկ ներդրում ունեն Վերածննդի դարաշրջանի ճարտարապետներ Ֆիլիպո Բրունելեսկին և Լեոն Բատիստա Ալբերտը:

**Գրոտեսկ** – չափազանցելու գեղարվեստական միջոց, որի նպատակն է արատավորությունը ցույց տալ կոմիկական եղանակով:

**Գրչատուն՝ սկրիպտորիում** – արտագրողների արվեստանոց:

### Դ

**Դիպտիկոն** – երկու մասից բաղկացած սրբապատկեր:

**Դոգմա** – չհիմնավորված դրույթ, որն անսասան ճշմարտություն է համարվում:

**Դուչենտո, տրեչենտո և այլն** – չենտո իտալերեն 100 է նշանակում: Դուչետո 1200-ական, տրեչենտոն – 1300-ական, կվատրոչենտոն – 1400-ական, իսկ չինկվեչենտոն – 1500-ական թվականներ:

### Ե

**Երգիծանք** – արատավոր իրականության բացահայտում ծաղրանքի ձևով:

### Է

**Էնկաուստիկա (մոմանկարչություն)** – տաք մոմի մեջ խառնած ներկերով նկարչություն:

### Ի

**Ինիցիալ** – անվան և ազգանվան առաջին տառերը:

**Ինկվիզիցիա** – կաթոլիկ եկեղեցում XIII-XIX դարերում գործող դատական տրիբունալ, որը բացահայտում էր և պատժում եկեղեցու դեմ գործողության մեջ կասկածվող անձանց:

**Իրան** – մարդու մարմինը մեջքից մինչև պարանոց, առանց ձեռքերի:

## Լ

**Լիգատուրա** – կցագիր, փակագիր:

**Լուստր** – ջնարակի վրա եռակցած մետաղյա միացությունների շատ բարակ թաղանթ, որը կավե արտադրանքին փայլ է շնորհում:

## Խ

**Խառնվածք** – մարդու բնավորության հատկանիշների ամբողջություն:

## Ծ

**Ծալազարդում** – գործվածքի ծալքեր:

**Ծաղրանկար** – կանխամտածված ծաղրական գծերով, տգեղ ձևով արտացոլում:

**Ծովանկարչական՝ մարինիստական բնանկար** – նույն «մարինա» ծովի տեսարան:

## Կ

**Կապելլա** – փոքր չափի աղոթարան, մատուռ:

**Կարարա** – մարմարի քարահատարան Իտալիայում:

**Կարգախոս** – կոչ, լակոնիկ, հեշտ մտապահվող արտահայտություն:

**Կարկաս, հիմնակմախք** – շենքի կամ կառույցի կմախք:

**Կարկոլ** – տաճարի ջրհորդան խողովակի դեկոր:

**Կիսադեմք, պրոֆիլ** – մարդու պատկեր կիսադեմքով:

**Կլասիցիզմ** – XVII-XIX դարասկզբի ուղղություն գրականության մեջ, որը կիրառում է հնագույն արվեստի գեղարվեստական կանոնները և սյուժեներ:

**Կոդեքս** – այստեղ՝ գիրք:

**Կոնդոտիեր** – վարձու ջոկատի առաջնորդ:

**Կոնտրապոստ, հակադիրք** – ոտքի վրա կանգնած մարմնի դիրք, երբ ծանրությունը մեկ ոտքի վրա է տեղափոխված, իսկ երկրորդը՝ ավելի թույլ դիրքում է: Հետևաբար՝ մի ուսը վեր է բարձրացած, մյուսը՝ իջած է:

**Կոնք** – եկեղեցու խորանի քառակոնք ծածկի մաս:

**Կորսետ** – զգեստի տակ հագնելու, երկաթյա թիթեղներով ամրացված լայն գոտի գոտկատեղը նեղացնելու համար:

**Կրինոլին** – զգեստի տակ հագնելու, շրջանաձև մետաղալարով ամրացված լայն կիսաշրջազգեստ:

**Կրկնագիր, պալիմպսեստ** – իրար վրայից մի քանի շերտով արտագրված տեքստ:

## Հ

**Հապավում** – մի քանի բառերի առաջին տառերով ստացված արտահայտություն:

**Հենման մույթ** – պատին ամրություն հաղորդող որմնահեց, լրացուցիչ ամրություն:

**Հումանիզմ** – հայացքների համակարգ XIV-XVI դարերի Իտալիայում, ըստ որի՝ մարդու բնավորությունը կարելի է կատարելագործել հնագույն մշակույթի ուսումնասիրության միջոցով: Հումանիստները հավասարապես հետաքրքրվեցին մարդու հոգևոր ու մարմնավոր կարիքներով:

## Մ

**Մայր տաճար** – տաճար, որտեղ միայն բարձրաստիճան եպիսկոպոսներ են ծառայում:

**Մանրանկար** – ձեռագիր գրքի նկարազարդում (այսօր տերմինը կիրառվում է՝ կապված արվեստի փոքր չափի աշխատության հետ):

**Մավրիտանական ոճ** – Իսպանիայում և Պորտուգալիայում տարածված իսլամական ճարտարապետական ոճ:

**Մարտանկարչական ժանր** – պատմական ժանրի ենթատեսակ, որն արտացոլում է մարտական տեսարան:

**Մոդեռն** – նույն Ար նուվո (Art Nouveau XIX-XX դարերի սահմանագիծ), ոճ, որը բնութագրվում է դեկորատիվությամբ, բուսական մոտիվների և ծուռ դինամիկ գծերի առատությամբ:

**Մոնոխրոմ** – մոնո – մեկ, խրոմ – գույն (հուն.) – միապաղաղ:

**Մոնումենտալ** – հսկայական, մեծ չափի:

## Ն

**Նետաձև** – սրված ծայր ունեցող:

## Ծ

**Ծպիլ՝ ծայրածող** – կառույցի վերնամասն ավարտող բրգաձև կամ կոնաձև սրածայր շինվածք:

## Ո

**Որմնանկար** – մոնումենտալ նկարչական տեխնիկա, թաց ծեփի վրա կատարված գեղանկարչություն:

## Չ

**Չափազանցում** – ուռճացում, գերազանցում:

## Պ

**Պլաֆոն** – առաստաղ:

**Պոստիմպրեսիոնիզմ** – ուղղություն XIX դարի եվրոպական նկարչության մեջ:

**Պորտալ** – դեկորատիվ ձևավորված հանդիսավոր դարպաս:

## Ռ

**Ռեալիզմ** – ուղղություն XIX դարի միջին շրջանի եվրոպական արվեստում, որն իրականությունը գեղեցկացված է փոխանցում:

**Ռեֆորմացիա** – վերափոխում: XVI դարի Արևմտյան Եվրոպայում կաթոլիկ եկեղեցու դեմ սկսված սոցիալ-քաղաքական շարժում:

**Ռոկոկո** – Բարոկկոյին հաջորդող դարաշրջան արվեստում:

## Ս

**Սեղանատուն** – վանքի ճաշարան:

**Սֆումատո** – (իտալ. ՝ մառախուղ) Լեոնարդո դա Վինչիի կողմից ներմուծված գեղարվեստական միջոց, որով գեղանկարչության մեջ պատկերի եզրագծերը անորոշ են փոխանցվում: Սֆումատոն զգացնել է տալիս փափուկ լուսավորության էֆեկտ:

## Վ

**Վանիտաս (ունայնություն)** – նատյուրմորտի տեսակ, որն ակնարկում է կյանքի անցողիկության մասին:

**Վեդուտա** – ուրբանային կամ քաղաքային բնանկարի տեսակ: Հատկապես հանրահայտ էր XVIII դարի Վենետիկում:

**Վիտրաժ** – մոնումենտալ նկարչության ենթաոլորտ, գունավոր ապակով կատարված պատկեր:

## Տ

**Տոնային աստիճանավորում** – աստիճանաբար գույնի բացացում, մգեցում:

## Ք

**Քարոզչություն** – հասարակության հայացքների վրա բառացիորեն, կարգախոսով, կերպարվեստի միջոցներով գաղափարական ճնշում: Քարոզչությունը հանրությանը տրամադրում է միայն քաղաքականորեն շահավետ, թերի տեղեկատվություն:

## Օ

**Օդային հեռանկար** – գեղարվեստական միջոց, որով գեղանկարչության մեջ խորություն է փոխանցվում: Եթե առջևի տեսարանում պատկերները հստակ են, վառ, մանրամասնեցված, ապա ետին պլանում դրանք գունատ են, խավար և ավելի ընդհանրացված, առանց մանրամասների են փոխանցված:

## Ֆ

**Ֆակտուրա** – առարկայի մակերևույթի բնութագրիչներ – փայլուն, հարթ, խավոտ, ջղոտ, թավշյա, կոպիտ և այլն: Կերպարվեստի տարր, որը առարկայի մակերևույթի առանձնահատկությունը շոշափելիորեն կամ պատրանքով է արտացոլում: